

Լեռ, քո Սասնոյ...

Պրի՜ Սասուն, — քո աղջիկներ,
Ես — [illegible]
[illegible]
[illegible]...
[illegible]
[illegible]
[illegible]...

ՊԱՐՈՒՅՐ

ԵՐԿԵՐ

ԵՐԵՔ

ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

1

ՍԵՎԱԿ



ԳՄԴ 84.2Ռ
Ս 411

Կազմեց Հ. Հ. ՖԵԼԵՔՅԱՆԸ

Սևակ, Պ. Ռ.
Ս411 Երկերի ժողովածու 3 հատորով (Կազմ. Հ. Հ. Ֆելեքյան),— Եր.: Սովետ. գրող, 1982. Հ. 1,— . . 672 էջ.
Հատորն ամփոփում է ականավոր գրողի բանաստեղծական ընտրանին:

Ս 4702080200 (874) / 705 (01) 82 — 82 «Տ»

ԳՄԴ 84 Հ7
Ար 2

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու և ձևավորման համար, 1982

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Պարույր Սևակի երկերի սույն ընտրանին, որի հրատարակությունն իրականացվում է մեծ գրողի և մտածողի ծննդյան 60-ամյակի առթիվ, բաղկացած է երեք հատորից. առաջինում ամփոփված են բանաստեղծությունները, երկրորդում՝ պոեմներ, երրորդում՝ հրապարակախոսական, քննադատական հոդվածներն ու նամակները:

Պ. Սևակը շարքերով, ավելին՝ գրքերով մտածող և ստեղծագործող բանաստեղծ էր, ինչպես, ասենք, Եղիշե Չարենցը: Այստեղից էլ՝ նման բանաստեղծների ընտրանին կազմելու դժվարությունը:

Պ. Սևակը հրատարակել է բանաստեղծական հինգ ժողովածու («Անմահները հրամայում են», «Սիրո ճանապարհ», «Նորից քեզ հետ», «Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս»), որոնք ընդգրկում են հետևյալ շարքերը՝ «Անմահները հրամայում են», «Մեր բախտը», «Սպիներ», «Մոսկվայից», «Սովետական իմ Հայաստան», «Սիրո ճանապարհը», «Ծիսանի ծուխ», «Նույն ճամփով», «Ութնյակներ», «Նույն հասցեով», «Թռուցիկ երգեր», «Մարդը ափի մեջ», «Ականջդ բեր ասեմ», «Հարկ հոգեկան», «Եղիցի լույս», «Դիմակներ», «Դարակեսի պարգևները», «Ողջույնի քմայքները», «Նորից չեն սիրում, սիրում են կրկին», «Աստծու քարտուղարը»:

Այս շարքերը ամբողջությամբ մեկ հատորի մեջ ներկայացնելու անհնարինությունը թելադրեց կատարել, այսպես ասած, թեմատիկ որոշ խմբավո-

րում (մոտավորապես այդ կերպ է վարվել ինքը՝ Պ. Սևակը Ե. Չարենցի հատընտիրը կազմելիս). առավել նպատակահարմար թվաց տարբեր գրքերում գետեղված, ասենք, սիրային շարքերը դնել դրանցից մեկի խորագրի ներքո՝ «Նորից չեն սիրում, սիրում են կրկին», հայրենասիրականները՝ «Հարկ հոգեկան», բանաստեղծի կոչմանն ու բախտին նվիրված գործերը՝ «Աստծու քարտուղարը» խորագրի տակ և այլն: Մի քանի շարքեր պահպանել ենք նույնությամբ՝ առանձին-առանձին («Եղիցի լույս», «Ականջդ բեր ասեմ» և այլն):

Տարբեր ժամանակներում մամուլում հրապարակված, բայց հեղինակի կենդանության օրոք ոչ մի ժողովածուի մեջ չմտած, ինչպես և անտիպ բանաստեղծությունները մուծված են համապատասխան շարքերի մեջ՝ «Շարքերից դուրս բանաստեղծություններ» նշումով: Վերոհիշյալ գործերից առանձնացրել ենք «Իմ կտակը» շարքերի մեջ դրել ենք նաև տարբեր շարքերից քաղվածները՝ «Ու եթե հայր եմ...», «Ամենից առաջ ես հայր եմ» և «Որդուս» բանաստեղծությունները:

Պարույր Սևակի եռհատորյակի հիմքում դրված են նրա կենդանության օրոք լույս տեսած գրքերը, ինչպես և ետմահու հրատարակված երկերի ժողովածուն (6 հատոր, 1972—1976 թթ.), որը կազմել և ծանոթագրել է վաղամեռիկ տաղանդավոր քննադատ-գրականագետ, բանաստեղծի մերձավոր բարեկամ ու ընկեր, բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Երիստակեսյանը:

ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ



«ՄԵՐ ԲԱԽՏԸ» շարքից

ՄԱՍԻՍՆԵՐԸ

Զրույց ռուս ճակատային բարեկամիս հետ

I

Հիշո՞ւմ ես,
Մարտերի և արյան մեջ մեր իսկ,
Երբ մենք մեր հողն էինք
Զենքով, ատամներով ու արյամբ պաշտպանում,
Հիշո՞ւմ ես,
Կարճատև այն պահերին,
Ռակմադաշտն էր երբ գեթ մի վայրկյան լռում
Ահեղ գոտեմարտի աղմուկներից դաժան,
Գտնում էի պահեր, որ քեզ պատմեմ նորից
Իմ աշխարհի մասին արևաշատ...

Սա՛ է իմ քաղաքը— երիտասարդ և ծեր—
Որ ծնվել է թեպետ ձիգ դարերի հեռվում,
Բայց հասակ է առել, հասունացել ինձ հետ,
Հասունացել ինձ հետ՝
Լոկ մի քառորդ դարում:

Սա՛ է Աբովյանը,
Այն փողոցը ահա,
Ուր ամեն սալաքար
Եվ ասֆալտի փոշու յուրաքանչյուր հատիկ

Հավար գաղտնիք ունի իր շերտերում պահած:
Այո՛,
Թեկուզ մաշված այս քարաշեն պատից
Դու կարող ես քաղել պատմությունը մեր ողջ՝
Ընթնշաղից անտիկ
Մինչև այս օրերը հարատևող...
Նայի՛ր, ահավասիկ,
Տե՛ս— նա՛, որի մասին
Պատմել եմ քեզ այնքան ստեպ։երում անլեռ...
Սա՛, այս լեռը մթար,
Որին մենք կոչում ենք Արարատ կամ Մասիս,
Սա, որ երկփեղկված է, ճեղքված երկու մասի...
Խորհրդանշանն է սա մեր գոյության,
Եվ ոչ թե սոսկական ձևունոտ մի լեռ.—
Այսպես երկու մասի
Ճեղքված էր մեր սիրտը և հայրենիքը մեր...

II

Մենք հայ էինք ծնվել այս երկնի տակ, այստե՛ղ,
Մինչդեռ երկնքի տակ հայրենիքը հայի
Ամեն ծնվողի հետ ստանում էր նոր տեսք,
Փոփոխվում էր ընդմիշտ նա ամեհի
Այն թշնամու ձեռքով դաժան ու բակմադեմք,
Որ մերթ մի արքա էր ասորական
Եվ սեպի պես մեր սիրտն էր մխրճվում,
Կրծում մեր քարերն իսկ՝ սեպագրով...
Մերթ մի հույն էր անտիկ—
Մագաղաթի ետև թաքցրած իր թրով,
Մերթ փղերով վինված կրակապաշտ պարսիկ,
Որը քանի՛ անգամ ջանաց մոխրացընել
Մեր ինքնության հուրը իր ատրուշաններով...

Դարեր ի վեր այդպես բզկտեցին նրանք,
Խլեցին մեր հողը, մեր հայրենին,
Առան մեր օջախից անձողներ ու կրակ,
Այրեցին մեր տունը նույն այդ հրով,

Եվ նույն հրդեհների— որպես կուռքի առաջ—
Գլխատեցին նրանք մեր հայրերին,
Երկիրը դարձնելով մի անտերունչ այրի...
Բկկտված ու բոկոտ, ծվատված ու վհատ—
Արյուն էր ծործրում նրա ամեն քայլից,
Արյո՛ւն, որ իր հետքը, իր դրոշմն է թողել
Մեր անցյալի՛, անվա՛ն, մեր պատմությա՛ն,
Եվ արնագույն մեր այս տուֆ քարերի վրա...

Բայց վերջում էր բախտը պահել սարսափելին.

Վերջում արևելյան մի բռնակալ
Բավական չէ նրա բարիքները տիրեց,
Բավական չէ նրա բորբ արյունը հագա[illegible]
Իբրև սուլթանական բորբ ծիրանի,—
Մի գիշեր էլ հանկարծ՝
Ննջող ներքինու պես կեսգիշերին վարդ[illegible]
Օշարակի, օ՜, ո՛չ— ալ արյան ծարավից,—
Ուզեց մորթել ողջին, ջարդել և սպանել...

Ո՞վ է հարցնում՝ ինչո՞ւ.—

Որովհետև նրան, այդ սուլթանին,
Տերությունը իր ողջ —
Բալկաններից Աթենք և Աթենքից Հալեպ,
Եվ Հալեպից Մասիս— թվում էր մի հարեմ.
Ուր կարող էր շրջել կեղտոտ ու տարփա[illegible]
Ուր կարող էր տիրել և սպանել...

Այդպես մի խոլ գիշեր
Նրա կնքահայրը— գերմանական արքան,
Իր մուսուլման սանին հասկացրեց,
Որ Հայաստանն, իբր, վեհափառ սուլթանին
Կամեցել է... մտքով դավաճանել
(Ակնարկել էր արքան ռուս ցարին):

Կյանքո՞ւմ, թե մտքի մեջ— միևնույն էր արդեն,
Եվ որոշվեց նրան,

Ի շահ Վիլհելմ կայզեր, ի շահ մեծ սուլթանի,
Յաթաղանով մորթել...

... Այդ մե՛նք էինք, ընկե՛ր, այդ ժողովուրդն էր իմ,
Որին իր իսկ տան մեջ, իր սեփական հողում
Մորթում էին մի խաչ և մի կիսատ լուսին,
Մինչ միևնույն պահին ամբողջ Եվրոպայում
Դիվանագետները, «ի փառս Հիսուսի»,
«Հայկական հարցն» էին— իբրև մեծ պաս՝
Անլուծելի պահում...

Այդ մեկն էր Մասիսի կույգ կեսերից...

Մյուս կեսը սակայն—
Նույնքան անուժ, անհույս և վտանգված նույնքան,
Ապաստանեց Կարմիր Հոկտեմբերին:
Ի՞նչ իմանամ— գուցե հենց քո հայրը, ընկե՛ր,
Իր լայնարձակ ապատ ստեպներից
Եկավ և իմ հորը, որ մեռնում էր, փրկեց...

Սակայն նայիր հիմա
Նրան, որ իջնում է հանդիպակաց մայթից:—

Նա վավակն է նրա,
Այն խեղճ հայի որդին,
Որին սպանեցին իր անկողնում և կամ
Խաչեցին սեփական իր տան պատին,
Թաղեցին իր հերկած
Գարնանային ցանքսի ակոսի մեջ դեռ տաք...

Իսկ սա— հանձնվեց իր անօգնական բախտին,
(Ինչ որ նրա մի կույգ ոտներն էին վտիտ),
Եվ— մինչդեռ ես այստեղ
Նորից հայ հողն էի հերկում արդար խոփով
Եվ ակոսին հանձնում վաղվա հունձքը մեր թանկ,—
Օտար և տոթակեզ երկնքի տակ
Անհույս պանդխտելով տարիներ ու դարեր,
Ջայլամի պես նա իր ձուն էր դնում

Օտար անապատի ավազներում,
Ավազներում և՛ տաք,
Ե՛վ... անարև:

Մինչդեռ ես մա՛րդ էի, քաղաքացի և հա՛յ,
Նա մարդ չէր, այլ պանդուխտ—
Մի բառ, որ չեմ կարող
Քո մայրենի լեզվով ճիշտ թարգմանել...

Պանդուխտ էր նա երեկ:—
Այդ՝ Մասիսն էր ճեղքված,
Այդ՝ մեր բախտի աղետն էր դարավոր,
Երբ ժողովուրդը մեր
Ամենուր էր թեկուզ, ամենուրեք սակայն
Ժողովուրդ չէր, այլ հայ, որ ահավոր
Տառապանքի, վշտի ծանրությունը սրտում,
Լոկ մի երազ ուներ անմարելի—
Վերադառնալ ի տո՛ւն:
Ի հայրենի՛ք...

Իսկ հայրենիքը մեր— նոր հայրենիքը մեր,
Որ փռված է ապատ այս երկնի տակ,
Որ փրկված է ընդմիշտ, որ փրկված է հավետ
Բոլոր ոսոխներից և սրերից մթար,—
Ընդունեց իր կորած, իր հալածված որդուն.
Հողը՝ խնդությունից համրացած մի մոր պես,
Իսկ ջրերը խայտող,—
Եվ փոխարեն նրա՛, և իրե՛նց տեղ նույնպես,—
Կարկաչներով ուրախ և ինքնագոհ ցայտով...

Այժմ հաշտ են թվում
Մեր հոգն ու երկինքը, մեր բախտն ու ապագան
Մեր նոր և մեր միակ Հայաստանում.
Եվ ձուլված է թվում ճեղքված Մասիսն անգամ
Խնդությունից այս խոր ու բարձրանուն:

Այժմ քա՞ղցր է շրջել, մարտի ընկե՛ր, քեզ հետ,
Շրջել իմ հայրենի այս աշխարհի վրա,

Եվ հացի հետ նաև քեզ հետ սիրով կիսել
Խնդությունն այս վարար...

Շրջել խնդությունից շիկնած Երևանում,
Այգիներում մեր ճոխ, մեր արտերում անափ՝
Գալիք սպասումի երազներով հարուստ
Ու հույսերով կանաչ:

Շրջել Մասիսների հայացքի տակ հողե,
Այս ներգաղթած հայի աչքի առաջ,
Որ փրկված է ընդմիշտ արհավիրքի հողմից,
Եվ, ընկե՛ր իմ, քեզ հետ Ռուսիային հղել
Երախտապարտ խոսքեր՝
Ծաղկած Հայաստանի, փրկված հայի
Եվ մտախոհ մեր այս Մասիսների կողմից...

28. XII. 46
Երևան

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» շարքից

Իմ հա՛յ ժողովուրդ, դու փոքր ես եղել,
Աղբյո՛ւր ես եղել և ո՛չ թե հեղեղ:

Դու փոքր ես եղել, եղել ես մի բուռ,
Բայց մեծ է եղել ափդ լիաբուռ:

Դու փոքր ես եղել այն մուրճի՛ նման,
Որ ձև է տվել ժայռերին համառ:

Փո՛քրը, բայց նման այն կշռաքարին,
Որ միշտ դրվել է բարու նժարին

Եվ այդ նժարը ներքև է տարել...
Եկել են դարեր, անցել են դարեր,

Քեզ մատնել սրի, ավերի, գաղթի:
Բայց տիրացել ես այսօր մի բախտի,

Որ մեծ է քո հին վշտերի՛ց անգամ:
Եվ լա՛վ է որքան, ինչ քա՛ղցրը է վգալ,

Որ այսօր, երբ որ աշխարհը համայն
Կշեռքի երկու թաթի է նման,

Դու քո պատմության դասերով բոլոր,
Քո երջանկությամբ ու բախտով քո նոր,

Քո հին անունով, կյանքով դժվարին՝
Ծանր կանգնած ես այն մեծ նժարին,

Որ ծանր է կշռում ո՛չ թե արկերով,
Ո՛չ թե վառոդի, վենքի հակերով,

Ո՛չ թե ավերման կրքով կատաղի,
Ո՛չ թե մայրերի արցունքով աղի,

Այլ երջանկության մշտավառ հրով,
Խաղաղ ծերությամբ, շիկնանքով սիրո,

Հպարտ մայրությամբ, ծիծաղով մանկան,
Ձեռքի սեղմումով բարեկամական...

Այն մեծ նժարին, որտեղ ապագան
Ու պատմությունն են դարձել կշռաքար:

1950, նոյեմբեր
Երևան

Դու քո խաղողի նման ես եղել.
Կոտրատել են քեզ, հողի մեջ թաղել,
Բայց երբ անցել են ցրտերը ձմռան,
Հողի մեջ թաղված վակերիդ նման,
Դու նոր մի ուժով նորից ընձյուղել,
Կորված ճյուղերդ ես վերստին ուղղել.
Եվ եթե կրկին կորվել ես՝ արդեն
Ողկույզների տակ այն ադամանդե,
Որ ճաքճքել են քո քաղցրությունից
Մինչ դառնությունդ... դարձել է գինի..

[1950]
Երևան

«ԾԽԱՆԻ ԾՈՒԽ» շարքից

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՜ւն,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ տառապա՜ծ,
Իմ փառապա՜նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խչմարված վակ,
Վշտերդդ՝ ջուր, ինքդդ ավակ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Զվարթնոց— ավեր տաճար,
Կոմիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նե՜տ, նիպա՜կ, մկո՜ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՜ր վեպ, դու՝ Սասնա ծո՜ւռ...

Իմ փառապա՛նծ,
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ քաղցրանո՛ւն:
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվայլյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սևաչ.
Դու՝ Սևանի վառվող կոհակ,
Երևանի այուն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի.
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան—
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

11. XI. 50
Երևան

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Զարմանքով եմ ես միշտ նայում քո անցյալին,
Քո անցյալին և՛ տանջալից, և՛ պանծալի:

Ինչպե՞ս ես դու կտրել այդքան երկար ճամփա,
Երբ նա՝ խճոտ, ու երկինքդ է եղել ամպած:

Ինչպե՞ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից
Նեկտար քաղել, մեղրը քամել դառնությունից՝

Պանդխտության քո կսկիծը դարձրել «Կոունկ»
Եվ «Հորովել» դարձրել վերքդ, ցավը խորունկ:

Երբ հեղեղներն անց են կացել հոխորտալով,
Ինչպե՞ս ես դու քո աղբյուրի մի բաժ ջրով

Միշտ շեն պահել շրադացը ձորի խորքում.
Նոր կյանք տվել ծեծված արտին, ջարդված այգուն:

Հապար անգամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,
Ո՞նց ապրեցիր՝ հապար անգամ երբ դու մեռար:

Ի՞նչ հրաշքով չմարեցիր, ինչպես նրանք,
Որ մե՛ծ էին, հրդե՛հ էին, իսկ դու՝ կրա՛կ:

Բայց գիշերվա մթության մեջ ահապարհուր
Դու այնպիսի կրակ էիր, այնպիսի հուր,

Որ վառվում էր պաղած քարին գրակալի,
Շինականի ցուրտ հյուղակին կրակ տալիս.

Որ վառվում էր քո դուստրերի մութ աչքերում,
Արյուն դառնում որդիներիդ երակներում.

Որ օջախ էր, խաղաղ կյանքում խաղաղ օջախ՝
Թոնրի կրակ, ծխանի ծուխ, կերոն ու ջահ,

Բայց վրեժի ահեղ բոց էր ահեղ մարտում
Եվ հրախաղ, որ հաղթանակ էր ավետում...

Եվ չի մարել նա դարերում մահամնա,
Մնացել է, որովհետև մի հուր էր նա,

Որ չի մարում օտար հողմից, այլ արծարծվում,
Եվ ավերիչ հրդեհի պես չի տարածվում...

14. XI. 50
Երևան

ԴՈՒ ԱՅՍՊԵՍ ԵՍ ԵՂԵԼ

Քո արյան և քո շինարար մուրճի
Հետքերն է կրում այստեղ ամեն քար:
Զուլալ ջրերդ նման են խղճիդ.
Քեզ քաջ են կոչել, կոչել են տկար,
Բայց ոչ... տիրակալ:

Դու մերթ կարկվել ես, մերթ կարկել չարին,
Քեզ մերթ գերել են, նվիրել իրար:
Դու մերթ եղել ես անհաղթ ու արի,
Մերթ դաժան եղել, մերթ մեղմ ու բարի,
Բայց ոչ... անիրավ:

Քեզ այսպե՛ս գիտի թշնամիդ անգամ.
Մի ձեռքիդ՝ սուսեր, մի ձեռքիդ՝ մանգաղ,
Մերթ ճարտար գրիչ, մերթ՝ փորագրիչ,
Մերթ՝ օրինապահ, մերթ՝ աղանդավոր,
Միշտ՝ տաղանդավոր...

14. XI. 50
Երևան

ՀՊԱՐՏ ԵՄ ԵՍ

Հպարտ եմ ես նրա համար,
Որ փառահեղ՝ պատմությունը,
Եվ անունը այնքան հին է:
Հպարտ եմ ես նրա համար,
Որ փլվել է թեպետ տունը,
Բայց չի խախտվել նրա հիմը:

Հպարտ եմ ես, որ քեզ համար
Որդիները դարեր ընկան,
Որ սուրբ պահեն քո անունը:
Հպարտ եմ ես, որ քեզ համար
Թանկ է եղել թանաքն այնքան,
Որքան կարմիր քո արյունը:

Հպարտ եմ ես քո մատների
Ճարտարությամբ անհատնելի,
Քեզ թարգմանող քո գրքերով:
Հպարտ եմ ես անվամբ քո սուրբ,
Լեզվով, որով երբ չես խոսում՝
Նույնն ես ասում քո երգերով:

Հպարտ եմ ես քո անցյալի
Մաքառումով ու պայքարով,
Տոկունությամբ, կամքով համառ:
Հպարտ եմ ես քո պանծալի,
Քո լուսավոր այս ներկայով,
Որ... գալիք է այլոց համար:

3. VII. 51
Երևան

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Քունը չի տանում,
Դու էլ մի քնիր,
Հետս էլ կրկնիր,
Որ Հայաստանում
Հիմա գարունը
Բացվել է արդեն.
Թողած հին հունը՝
Գետերը հորդել,
Պղտոր ու խելառ
Դես-դեն են խփում:
Կանաչից հարբած՝
Գառներ ու հորթեր
Լեռնալանջերին
Խայտում են, ծփում:
Մոշու թփեր են
Չորս բոլոր աճել:
Մի մոլոր գառնուկ
Պճեղն է դաջել
Ոլոր կածանի
Կիսաթաց հողին:
Խապալի վրա
Մի բուռ հին կաղին
Տվել է իրեն
Լո՜ւռ արևկողի:
Կոճղը դարձրած
Իր համար սեղան՝
Պսակ է գործում

Մի պուճուր տղա
Ու գցում վկին
Իր Ծիրան եկի:
Իսկ մա՛յրը տղի...
Պառավն անտեղի՛,
Զո՞ւր է տեղ գցել
Քնելու համար.
Նա, ինձ պես, գուցե
Չի քնել հիմա,
Նա՛, որին դեմքով
Ես շա՞տ եմ նման...

...Քունքս չի տանում,
Դու էլ մի քնիր,
Հետս էլ կրկնիր,
Թե ի՞նչ եմ անում,
Ես ի՞նչ եմ անում
Ոչ Հայաստանում...

10—11. XI. 56
Մոսկվա

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Իմ քաղաքում հիմա գարնան իրիկունն է իջնում շքեղ:
Հանդիպակաց բոլոր տանիքների վրա
Մի վիթխարի, բայց անվտանգ հրդեհ են բորբոքել
Մարող վերջալույսի ճառագայթները հուրհրան:

Փողոցներում հիմա հանկարծ վարթնած քամին խաղում է խենթացած
Կանաչ սաղարթների, կանանց վգեստների մետաքսի հետ:
Զբոսանքի եկած աղջիկների ծիծաղն արծաթաձայն,
Ճիչը մանուկների, պուրակների շունչը բուրումնավետ

Բաց պատուհաններից ներխուժում են իմ սիրտն ու իմ տունը
Եվ լցնում են հոգիս մի բանաստեղծությամբ, երգով մի վեհ,
Որի համար չափ է երջանկությամբ լեցուն սրտի տրոփյունը
Եվ որը հանգ ունի—ծիծաղի պես:

...Եվ մտածել, որ դո՞ւ, դո՞ւ, որ բանաստեղծ ես և սիրահար լույսի,
Բանտի նկուղներում լույսը մթից հիմա չես տարբերում,
Որ արյան մեջ ներկված յաթաղանի նման մի կեռ կիսալուսին
Երկրիդ և քեզ վրա, Նապի՛մ, իր պաղ լույսն է արևի տեղ փոռում.

Որ դու լոկ մտքով ես զբոսանքի ելնում գերված Ստամբուլում,
Ուր քո մայրն է շրջում՝ սպիտակած վշտից, կորչած՝
տանջանքի տակ,

Որ քո սիրած մարդկանց միայն քնի մեջ ես դու համբուրում
Եվ արյա՜մբ ես գրում բանտիդ «Նամակները»՝ արյա՜մբ
քո տաք...

Իմ տան պատուհանից երևում են ահա մթնում իրիկնային
Գերված Մասիսները, որոնք մի ժամանակ կոչվում էին
«Ապատ»:

Նրանք իմաստալից ինձ աչքով են անում:
Անցնո՜ւմ եմ սահմանից.
Բանաստեղծի համար սահմանը միշտ բաց է—
երգն է նրա վիզա՜ն:
Իսկ ես բանաստեղծ եմ: Հայոց երկնի տակ եմ իմ կյանքն
անցկացրել...
Նույն աստղերի լույսն է ներս թափանցել ձեր ու մեր
երդիկից,
Մեր Տիգրիսի ջուրը մեր այգիների հետ ձեր մարգերն է ջրել...
Մենք լոկ գրչակիցներ, պոետներ չենք միայն.
այլև հայրենակի՜ց:

Ստամբուլը որքան քո քաղաքն է, նույնքան իմն է նաև.
Դեռ հին Բյուզանդիոնից այնտեղ փայլն է մնում
մեր հանճարի...
Այնտեղ Պարոնյանն է Պոլսո թաղերի մեջ մի օր
պտույտ արել՝
Իր ծիծաղի խեղդող սահանքի մեջ առած մեր ջոջերին:

Այնտեղ ամփոփված է Պետրոս Դուրյանը մեր՝
մեր պաշտելի՜ն.
Ո՞վ է ձեր թրքուհուն ավելի լավ երգել ողջ աշխարհում:
Այնտեղ է գեղգեղել Միսաք Մեծարենցի իրիկնային շվին,
Հանճարն Ադամյանի Պոլսո թաղերից է սկիզբ առնում:

Այնտեղ Կոմիտասն էր — մեր դարավոր երգի մեմբրա՜նը
թրթռուն,
Նա՜, որ օտարներին մեր լեփլեցուն հոգին թարգմանում էր
տաղով.

Այնտեղ Վարուժանը իր եղեգնյա գրչով ցասման խոսք էր
կռում,
Կարմիր մեր արյունն էր Սիամանթոն երգում իր
սպիտակ տողով...

Այնտեղ... Նույն այն ձեռքը, որ տասներկու տարի
քեզ պահում էր բանտում,
Մորթեց մի ժողովուրդ, որ ի՜ր հողի վրա, և ի՜ր երկնքի տակ
Երեք հազարամյակ օտար ձեռքով քանդվող իր բույնն էր
կարկատում,
Աշխատում էր, երգում ու կոթողներ կերտում երեք
հազարամյակ:

...Կրած վշտերի չափ լայն՝ու մեծ է սիրտը
իմ հայ ժողովրդի.
Ներողամի՜տ է նա, բարի՜, անհիշաչա՜ր,
Սակայն ապաքինված, փակված վերքից չէ՞ որ միշտ մնում է
սպի,
Իսկ դարավոր վերքի փակված սպին արդեն մորմոքում է
հաճա՜խ:

Ուրեմն իմ ծեր հորը, որի գերդաստանից ինքն է միայն մնում,
Որի համար է հենց կարծես գրված «Կռունկն» ու
«Անտունին»,—
Ինչպե՞ս հանդիմանել, երբ «օսմանցին» հաճախ
նրա լեքսիկոնում
Միայն չար թշնամո՜ւ, միայն արնախումի՜ իմաստ ունի:

Եվ իմ պառավ մորը, որ ոչ մեկը չունի յոթ եղբորից,
Ինչպե՞ս հարկադրել, որ «Համիդ» լսելիս չհասկանա հրեշ...
Մեր վոհերի արյան հատուցումն է անցնում որդուն հորից,
Այդ թվերին ծնված հազարավոր որբեր վո՜ւր չեն կոչվել
«Վրեժ»:

Սակայն հատուցումը, ահեղ վրեժն անգամ պարզ է հիշում
հասյենս
Թափված արյան հետքը ամեն տեսակ փոստից անխափան է
գործում:
Թափված արյան հետքը, որ հորդ անձրևներն իսկ չեն լվացել,
Նրա՜նց դուռն է տանում, ովքեր բանաստեղծիդ սպանել են
փորձում:

Եվ լալիս է մայրս քո մոր ծանր վշտից: Նրա համար, Նապի՜մ,
Կորած եղբայրներից կրտսերագույնն ես դու և կամ
ավագ որդի:
Հայրս, կարծես մտքով նորից կնդան ընկած՝ ետ ու առաջ
քայլում,
Քայլում է լո՜ւռ, խոժո՜ռ, ապա մռլտում է.
«Շո՜ւն շան որդիք»

...Փչում է կով քամին մի հեռավոր ծանոթ նվագի պես,
Ասես քո երգն է դա, որ սահմանն է անցել առանց վիզա:
Զբոսանքից հիմա վերադառնում ենք տուն՝ մտերմուհիս ու ես:
Մեր սիրտն այնպես լիքն է, և մեր քայլերն այնպես
թեթևասահ:

Նա քեզ անգիր գիտի:— «Սիրել փո՜քր ինչ ավել և
փո՜քր ինչ լավ»,—
Երգիդ սիրած տողը արտասանում է նա և քեզ հիշում.
— Տեսնես ինչպե՞ս է նա, տեսնես այս ամենը
ինչո՞վ կվերջանա,—
Վախո՜վ հարցնում է նա, հարցնում է նա հույսո՜վ և
սպասում:

Իսկ ես գիտեմ՝ ինչո՜վ: Մենք նստում ենք գարնան
կիսախոնավ հողին,
Ու ես երազում եմ.
— Այդ կլինի՜, բայց ո՞ւր՝ Ստամբուլո՞ւմ, Վանո՞ւմ:

Եթե Վանո՜ւմ՝ ապա խնձորենու ներքո, եթե Ստամբուլո՜ւմ՝
ափին ծովի
Իրար հանդիպում ենք, հյուրընկալում իրար, օթևանում:

Չկա ո՜չ մի սահման, ատելությո՜ւն չկա ու բա՜նտ չկա
կյանքում,
Լոկ գրքերն են հիշում կոտորածի՜, մահվա՜ն, բանտի՜ մասին:
Սպիտակ Տո՜ւն չկա, չկա Սեյմ ու Մեջլի՜ս, կա երկրագո՜ւնդ՝
Ապատ, միասնական, բոնի չբաժանված հպարտ մասի...

1950 թ. մայիս
Երևան

ԿԱՐՈՏ

Կա մի աշխարհ մեր աշխարհում՝ ինձ հարազատ,
ձեզ անծանոթ:
Ուր էլ լինեմ՝ կանչում է նա հազար ձայնով ու սրտագին,
Ապրում է նա իմ հոգու մեջ իբրև անբառ, համր կարոտ,
Իբրև լեգենդ դեռ չգրված, իբրև մի երգ անսրբագիր:

Այդ աշխարհում կան սեգ լեռներ, որ վիթխարի բուրգերի պես
Բարձրանում են ու մխրճվում սմպերի մեջ հրակարմիր,
Եվ քարափներ, որոնց վրա հին օրերի կուռքերի պես
Մութ ժայռերն են արձանանում՝ ցլագլուխ-ձիամարմին:

Այնտեղ լեռան լերկ լանջերին, սալ քարերի արանքներում
Արեգակն է փշրում իրեն ծիածանվող հայելու պես.
Գարնանային մոլուցքի մեջ՝ գետն այլևս չի հավբերում,
Եվ այոկելով արմատներից հին բարդենուն խաղաղ ու վեհ,
Գերեվարած դրոշի պես ցույց է տալիս իր ափերում:

Ամպերն այնտեղ ոլորվում են այնպես դանդա՛ղ,
հանդիսավո՛ր,
Այնքա՛ն նման հորովելին, որ հնչում է երբ անլեզու,
Վերհիշում ես աշնան յուրտը՝ զուրկ հոտերից, առանց
սարվոր,
Երբ ինչպես հոտն աղաքարը՝ մառախուղն է հողը լիզում...

Եվ գարուն կա այնտեղ շքեղ, որ բացվում է հանկարծակի,
Ինչպես հանկարծ նորահարսի կուրծքն է բացվում քամուց
լեռան:

Խարույկներ կան գիշերներում՝ սերված ասես այն կայծակից,
Որ ճայթելով շփոթում է գառան հոտը լեռան վրա:

Կա մի բուրմունք խոտերի մեջ, շաղոտ-ցողոտ թփուտներում,
Բուրմունք, որից և՛ քաղցում ես, և՛ հագենում՝ միանգամից.
Կան աղբյուրներ, որ դնչիկով վայրի այծերն են պղտորում,
Ինչպես հոգին բանաստեղծի պղտորվում է երգի ժամին:

Եվ անտառ կա այնտեղ մթին, խառնագիսա՛կ, ծածկաբերա՛ն,
Եվ այգիներ, այդ անտառից մոլորվելո՛վ վատված կարծես,
Եվ ամենից գողտրիկ ու թանկ՝ լեռնալանջին մի հին պարտեզ,
Որ մասրենու չափար ունի, եղեգնահյուս դռնակ վրան,
Ուր մի տուն կա, տան մեջ մի մայր...
և ուր մի օր ծնվել եմ ես...

Ամե՛ն, ամե՛ն ինչ կա այնտեղ: Փորձես եթե ասել «չկա»,
Ընդոստ «կա՛, կա՛» կարձագանքեն ժայռերն անգամ
համր ու հլու:
Կան թանկ հուշեր, որ սիրո պես ուռճանում են լո՛ւռ,
աննկա՛տ,
Եվ բացվում են միանգամից՝ ինչպես վարդը մի գիշերում,
Ինչպես հուզմունքն իմ այս պահի— սպասված ու անակնկալ:

* * *

Ինձ թվում է՝ մեր անտառում, վրա հասնող ձմռան շեմին,
Հարավ չվող մի բիլ թռչուն իր թռչնական պարզ նախանձով
Վերջին անգամ կտցեց հիմա աշնանահաս մի վառ խնձոր,
Եվ նա՝ հասո՛ւն, փխրո՛ւն արդեն՝ կամա՛ց կաթեց թաց
խաշամին,
Փխրո՛ւն՝ ինչպես սիրտս այս ժամին:

22. XI. 46.
Երևան

ՄՈՐ ՁԵՌՔԵՐԸ

Այս ձեռքերը՝ մո՞ր ձեռքերը,
Հինավուրց ու նո՞ր ձեռքերը...

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝
Ի՞նչ նպանքով,
Երպանքո՞վ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնվել,
Նրա արդար կաթով սնվել:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լռությա՞մբ,
Համբերությա՞մբ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Երկինք պարկված այուն են դառել այս ձեռքերը,
Որ չփլվի իր տան այունը՝
Որդին կռվից դառնա տունը:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...
Ինչե՞ր, ինչե՞ր, ինչե՞ր չարժեն այս ձեռքերը՝
Նո՞ւրբ ձեռքերը,
Սո՞ւրբ ձեռքերը:

...Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեկ աշխարհում ծնած-սնած,
Մեկ աշխարհում շահած-պահած,
Մեկնից երբեք չկշտացած,
Փոշի սրբող, լվացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող
Ա՛յս ձեռքերը,
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեկ հաժար մետաքսի պես
Խա՞ս ձեռքերը...

30. X. 55
Մոսկվա

ԲԱԼԼԱԴ ԼՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ

Իրիկունը մոսկովյան թանձրանում է ահա, տե՛ս,
Հյուսիսային օրը կարճ աղոտանում է, մարում:
Եվ մի ինչ-որ կախարդ ձեռք և՛ աննկատ, և՛ անտես
Այս վիթխարի քաղաքի բոլոր լույսերն է վառում:
Լույս է շուրջը ամենուր՝ փողոցներու՛մ, տներո՛ւմ,
Լույս է վերում՝ շենքերի ճակատների՛ն, կատարի՛ն,
Երկինք միտվող տների մարմարակերպ պատերին,
Լույս է անգամ գետնի տակ՝ մարմարակերտ թունելո՛ւմ:
Ու թվում է, թե անգամ անբավ ձյունը հյուսիսի
Ինչ-որ ձևով խտացած անհուն պաշար է լույսի...

* * *

Կարող էինք մենք անգամ չհավատալ այս փաստին,
Թե չլիներ մեր ձեռքին ահա գիրքն այս հավաստի:
Քսանմե՛կ թիվ:
Դեկտեմբե՛ր:
Մերձմոսկովյան իրիկո՛ւն:
Վլադիմիր Իլյիչը աշխատում է սենյակում:
Գորկան լռել է ցրտից:
Շուրջը լուռ է ու խավար:
Շրջապատում Իլյիչի համեստ լույսն է միայն վառ:
Աշխատում է Իլյիչը խորասուզված ու տարված:

Հանկարծ շշուկ ու թակոց:
— Խնդրե՛մ, մտե՛ք:
— Ներեցե՛ք...
Երկու մուժիկ՝ դռներում:
— Խնդրե՛մ, խնդրե՛մ, համեցե՛ք:
Երևում է, թե որքան շփոթված են գյուղացիք.
— Խանգարեցինք...
Բայց բարի այս ժպի՛տը Իլյիչի,
Որ ընդհատում է նրանց «ներողությունը» իսկույն:
Պավլովսկոյե գյուղի պատվիրակներն են երկու:
Վաղը հավաք կա այնտեղ: Շատ է ուզում գյուղացին
Ականջ դնել մի անգամ Վլադիմիր Իլյիչին:
Իսկ Իլյի՛չը: Նա նույնիսկ մի վայրկյան չի հապաղում.
— Խնդրե՛մ: Բայց ե՞րբ: Ի՞նչ, վաղը ցերեկո՞վ եք մտադիր...
Բթամատերն Իլյիչի թևքերի մեջ ժիլետի
Ուշանում են մի՛ վայրկյան, երկո՛ւ վայրկյան, տասներկո՛ւ:
Վլադիմիր Իլյիչը լուռ քայլում է սենյակում:
Դուք չե՞ք տեսնում՝
Ակնհայտ վատ է զգում ձեր առաջ
Ինքը Լենինը ահա. նա չի՛ կարող, ի՞նչ արած:
— Երեկոյան հավաքվենք, ինչո՞վ է վատ: Գեղեցի՞կ:
Իլյիչի դեմ այս անգամ վատ են զգում գյուղացիք.
Ինչպե՞ս ասեն: Բայց, ասենք, ինչո՞ւ չասել, հը՞, ինչի՞...
Չի կարելի՝ օտարին, կարելի է Իլյիչին:
— Երեկոյան ավելի լավ կլիներ, խոսք չկա,
Բայց...
— Էլ ի՞նչ «բայց»:
—Բայց գյուղում լո՛ւյս չես ճարի:
— Նավթ չկա...
Հիմա արդեն այս փաստին շատ դժվար է հավատալ,
Թեկուզ կարող ես սևով ճերմակ թղթին դու կարդալ:

...Բթամատերն Իլյիչի բաճկոնակն են քրքրում:
Վլադիմիր Իլյիչը, խորասուզված մտքերում,
Մտածո՞ւմ է, մտածո՞ւմ, հեռո գրում մի բացիկ,
Որ... ինչ-որ տեղ մի լիտրը նավթ ստանան գյուղացիք...

Ու հավաքն է կայանում:
Այնտեղ Իլյիչն է խոսում:
Ի՞նչ է խոսում,— այդ մասին գիրքն այս ոչինչ չի ասում:
Բայց ո՞վ մեկնից չգիտի, թե մեր ձեռքը չհասած
Իր ելույթում Իլյիչը այդ հավաքում ի՞նչ ասաց:
Կսխալվե՞մ միթե ես, եթե ասեմ.
ցերեկով
Նա չգնաց հավաքի և նախընտրեց երեկոն,
Որովհետև ԳՈԷԼՌՈ-ն սպասում էր Իլյիչին,
Սպասում էր Իլյիչի լույսեր ծնող գրիչին...

* * *

Զարմանալի բան չկա, երբ Պետրովկան ու Գորկան,
Որ ձեվանից, մոսկովցի՛ք, շատ էլ հեռու չեն այնքան,
Այսօր իրենց լույսերով խառնըվում են Մոսկվային:
Սակայն գյո՞ւղն իմ հայրենի...
Զուր քարտեզին մի՛ նայիր:
Ոչ մի քարտեզ չի կարող նրա մասին այն ասել,
Ինչ հեռավոր այդ գյուղում ես եմ ապրել ու տեսել:
Բայց դա նյութ է պոեմի...
Այսքանն ասեմ այս անգամ.
Այն հեռավո՞ր-հեռավո՞ր իմ գյուղակում հայկական
Օրեր առաջ, երբ նորից տարեդարձն էր Իլյիչի,
Մի պահ հուզված նայելով հսկայական դահլիճին՝
Դասընկերն իմ երբեմնի (նա էր այդօր կեկուցում)
Էլեկտրական լույսերից իր աչքերը կկոցում
Ու չէր պատմում այն մասին, որ և իրե՛նց կոլխոզում
Տներից կալ և աղաց լույսի հեղեղ է հոսում:
Ինչո՞ւ պատմել այն մասին, ինչ տեսնում ես, ինչ որ կա
Ու հայտնի է բոլորին կեկուցողից ոչ պակաս...

Եվ ինչպես ես՝ երգն իմ այս, նա իր խոսքը տարածում,
Այս նույն փաստի վրա է կեկուցումն իր կառուցում՝
Եղելությունն է պատմում, որ նման է բալլադի—
Անիրակա՞ն է այնքան, այնքա՞ն հեռու հավատից:
Նա պատմում է պարզապես, ոչի՞նչ նա չի հավելում,
Եզրակացնել, ամփոփել ավելորդ է համարում:

Ինչ ավելորդ է թվում կեկուցման մեջ հարակից՝
Բանաստեղծի երգի մեջ ավելորդ է կրկնակի:

9. I. 53
Մոսկվա

Նորից երգում, մորմոքում է
Աստվածային Կոմիտասը,
Կախարդում է ու մոգում է
Աստվածային Կոմիտասը...
Ամենամե՛ծ դու նահատակ,
Ամենահա՛յր, ամենահա՛յ,
Գինու կարասն՝ ուրիշներին,
Մեկ հերիք է քո մի թասը...

18. III. 56
Մոսկվա

«ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ»

ԵՐԳ ԵՌԱՁԱՅՆ

ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Իմ ամբողջ կյանքում լեկուդ եմ սերտում
Եվ չեմ սովորել անսխալ խոսել.
Անսխալ խոսել քո մասին քեզ հետ.
Շփոթվում եմ միշտ անանց հուզմունքից...

Երբ վաղ գարնանը կկուդ է կկվում,
Ինձ ամեն անգամ այնպես է թվում,
Թե թարգմանում է իր թվատ լեկվով
Շնորհավորման իմ խոսքը կակաղ.
Նա քո գարունն է շնորհավորում
Եվ ի՛մ փոխարեն...

Քո ամառային ստվերներն անգամ
Իրենց լռությամբ ինձ են թարգմանում՝
Երգելով հիմնը արևիդ լույսի.
Ելևէջում են յուրահատկորեն՝
Երկարանալով ու կարճանալով
Սև բոցերի պես:

Աշնան կաթուկը այգիներիդ մեջ.
Բերք ու բարիքիդ օրհներգումն է իմ՝
Համաշխարհային — մատչելի լեզվով...
Եվ նույնիսկ այնժամ,
Երբ խոսում եմ ես քո մասին քեզ հետ,
Մինչևի՛սկ այնժամ
Այլ բան չեմ անում,
Քան թե խոսքերով չափում եմ միայն իմ լռությո՛ւնը,
Որպեսզի կրկի՛ն հասկանամ ցավո՛վ,
Թե այդ լռության համեմատությամբ
Խոսքերն այդ որքա՛ն փոքր են ու չնչին...

Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Դու՝
Հպարտանա՛ իմ ազգանո՛ւնը,
Ես —
այնպե՛ս ապրել կարողանայի,
Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար
Դու երբևիցե անհարմար չզգաս...

Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:
Ա՛խ, երանի՛ թե ես այնպե՛ս մեռնեմ,
Որ դու... ինձ սգաս:

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Ես ոչի՛նչ, ոչի՛նչ քեզ տալ չեմ կարող.
Ինչ էլ տամ՝ կրկին տվածդ եմ տալիս:

Մինչևիսկ չունեմ պարտքի զգացում.
Ես ոտից գլո՛ւխ քո պարտքն եմ որ կամ:

Հավաստիացման խոսք նա է ասում,
Ով ուզում է, որ հավատան իրեն:

Իսկ ես միտք չունեմ հավատացնելու,
Ես հավատն եմ քո,
Քայլո՛ղ հավատը...

Ա՛խ, իմ հայրենի՛ք...
Ինձ կոչ են անում կյանքդ ճանաչել,—
Ավելո՛ղ ձգտում.
Ես մասն եմ կյանքիդ:

Ես քո մամուռն եմ՝
Հինավուրց ու նոր քո կամուրջների քարերի վրա,
Քո աղբյուրների գուռերի կողին:

Եվ քո մրմուռն եմ,
Որ չի թարգմանվում ուրիշ մի լեզվի...

Ծուխն եմ երեկվա քո երդիկների
Եվ քո այսօրվա ծխնելույզների ծուխն եմ միմիայն՝
Քո թեժ կրակից թնրևբս անուաս,
Բայց ծնված այդ նույն կրակից քո թեժ:
Քո ծուխն եմ միայն,
Եվ մթնոլորտին քո շունչն եմ խառնում՝
Այդ ծխի տեսքով:
Քո ծուխն եմ միայն.
Խոսել չեմ կարող,
Բայց նկարում եմ կենդանությունդ՝
Երկնի կտավին...

Քո հավերժական ու մշտափոփոխ բնանկարի
Երանգներից եմ այնպե՛ս ներկոտված,
Ինչպես երկինքդ՝ արևոտցին:

Ձեռքիդ հետքերից դաջված եմ այնպե՞ս,
Ինչպես գիշերվա երկինքդ՝ աստղերով...

Ա՛խ, իմ հայրենի՞ք...

Ես կյանքիդ համար կյանքըս չեմ տվել՝
Ես չեմ մասնակցել և ո՛չ մի մարտիդ,
Բայց կես քայլ անգամ չեմ արել կյանքում,
Որ քեզ չբերի.
Քեզնից սկսվում ու քեզ եմ հանգում՝
Շրջագծի պես...

Վերևից ցած են ջրերըդ հոսում,
Իսկ ես իմ ցածից
Լուռ մագլցում եմ դեպի բարձունքըդ՝
Քո ջոգի՛ նման...

Ու երբ գարունդ է նորից կրկնվում,
Մի հրաշալի էպիգոնությամբ,
Չոր ցողունիդ պես ծաղկում է իմ մեջ
Նույն միտքը միայն.
— Թեկուզ անանուն՝
Ինչպես խոտերըդ սարերիդ լանջին,
Եթե ես օգնեմ կանաչությանըդ,
Կարող եմ ասել.
«Ե՞ս էլ ապրեցի»...

ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՞ք...

Ես խոսքեր ունեմ քեզ համար պահված,
Որ չի գտնելու ո՛չ մեկն աշխարհում,
Եվ որ առայժմ ինքս էլ չեմ գտել:

Խոսքերն այդ իմ մեջ և՛ կան, և՛ չկան՝
Ստորերկրյա քո ջրերի պես:
Կարող են այրվել, նաև այրում են՝
Ինչպես խաղողիդ անխառըն օղին:

Մոտիկ են նրանք, բայց նաև անհաս,
Ինչպես այն լեռը,
Որ գերբդ է դարձել...

3. I. 60
Թիֆլիս

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու մեր մեծ երթի գավազանակիր
Եվ մեր պատմության մեծագո՛ւյն դիվան,
Մեր ակնվության գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան:
Անցյալին պարկված դու մեր լսափող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված:
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու յուղված:

Դաժան դարերի ամե՛ն մի ժամին
Շա՛տ բան է խլել մեկնից թշնամին:

Բարդելով վերքին վերք ու անարգանք,
Հեծության վրա մի նոր հեծություն՝
Խլել է մեկնից հանգիստ ու հարգանք,
Խլել է մեկնից փառք ու մեծություն,
Խլել կյա՛նքը մեր և... կյանքի՛ց էլ թանկ՝
Մեր հո՛ղը, հո՛ղը,
Մեր սուրբ հայրենի՛ն:

Շա՛տ բանից է մեկ կրկել վայրենին:
Մեր կերած հացին քսել է նա ժա՛նգ,
Բայց և... դարավոր բնիկ վայրերի
Կորըստի լեղի կարո՛տն է քսել,
Մեր խումին խառնել մեր սուրբ մայրերի
Արցո՛ւնքը, սակայն... և արյո՛ւնը սև,

Բայց մենք չենք կրկվել... մեր բերնի համից.
— Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,
Մեր հայրենահամ անուշ բարբառով:

Շա՛տ բանից է մեկ կրկել թշնամին:
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,
Հատել է ականջ ու ոտնաթաթեր,
Աչքեր է հանել դաշույնով իր սուր,
Կտրել է նաև արմատից լեզուն,
Եվ սակայն... իզո՛ւր.
Չի՛ հատվել լեզուն,
Մնացել է նա՝ հատվելո՛վ անգամ...

Քե՛զ՝ մեր հայկական և արամական,
Չկարողացան քեզ խլել մեկնից
Ո՛չ խարդավանքով արամեական,
Ո՛չ բյուզանդական սիրով անակնիվ,
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Քրիստոսի մարդ-չմարդությամբ,
Ո՛չ Մուհամեդի ճմլիչ ոտերով.
Ո՛չ ճշմարտությամբ,
Ո՛չ էլ ստերով:

Չկարողացա՛ն քեզ մեկնից խլել:
Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ,
Որ չե՛ն էլ կարող քեզ մեկնից խլել,
Ինչպես չեն կարող խլել մի դրոշ,
Որ հպարտանա դաժան մարտերում
Փողփողացել է միշտ էլ... սրտերո՛ւմ:

Ո՛չ, քեզ ո՛չ մեկը կուլ տալ չի՛ կարող.
Ազահ կոկորդում դու խոր ես խրվում:
Ո՛չ, քեզ ո՛չ մեկը փուլ տալ չի՛ կարող,
Ինչպես երկինքը երբեք չի փլվում:

Չե՞ս խլվի երբեք,
Չե՞ս փլվի երբեք,
Ինչպես արյունից գո՛ւյնը չի խլվում...

Եվ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի,
Որ քեզ կամենա գողանալ մեկնից
(Մի՛ ասա «մեկնից», աշխարհի՛ց» ասա).
Չէ՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու,
Այլև մասո՛ւնք ես,
Մասո՛ւնք ես մի սուրբ,
Անկողոպտելի մասո՛ւնք սրբական՝
Դարերի խորքից դարերին հասած:

Մասո՞ւնք: Ինչպե՞ս թե: Մասունքըս ո՞րն է:
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:
Իսկ դու՝ դարավոր, բայց և առույգ ես,
Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես,
Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես,
Շատերի մեջ ես, բայց պետական ես,
Եվ դրանով իսկ դու պետքական ես
Այն պետությանը, որ վաղը պիտի
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...

29. I. 62
Երևան

ԽՈՍՔ ՀԱՎԱՍՏԻՔԻ

Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ:

«Ոչ միայն որ գործենն պարտական են,
այլև որ յանձն առնուն»:

Ա

Քեզ հետ այս պահին կրուցել էր պետք
Միայն նախդրիվ-ոսկեղենիկով
Եվ պետք էր գրել այն երկաթագիր տառերով միայն,
Որոնց կերպը դու առել ես գուցե
Հին գործիքներից մեր դարբինների
Եվ այն կեռերից ամենատարբեր,
Որոնցից կեն ու կարդ էին կախում...

Բայց Գյուտարարիդ համեմատությամբ
Ես՝ Դանիելյան թերատ այբուբեն,
Զուրկ յոթնադողանջ ձայնավորներից,
Չեմ կարող կնգալ
Ու չեմ էլ կնգում,
Այլ պիտի հիմա լոկ բաղաձայնեմ,
Թե պե՞տք է արդյոք, որ Քո անունով
Մտքի մի օջախ կամ մի մայրուղի կոչվի աշխարհում,
Եթե Քո անվամբ մի ամբո՛ղջ ազգ է կոչում ինքն իրեն,
Ա՛զգ,
Որ ապրելու մտադրությամբ մեռել է հաճախ,
Սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել երբե՞ք՝
Թեկուզև մի օր...

Եվ պե՞տք է արդյոք,
Որ արձանները հառնեն աստ ու անդ,
Եթե Ինքդ Քեզ — քանի՞ դար արդեն—
Քանդակում ես միշտ
Մեր մանկաշխարհի պարզ հոգիներին
Երեսունվեց կերպերով անքանդ:

Պե՞տք է ուրեմն...
Ու պետք է եթե՝
Քե՛զ... պետք չէ բնա՞վ,
Պետք է... միայն մե՛զ:

Բ

Դո՛ւ, որ անվարան բնաբարձեցիր կռապաշտներին,
Վերաքննությամբ պիտի մեզ ներես,
Եթե խոսում ենք քանդակ-արձանից,
Չի կան արձաններ, որ կուռք չեն դառնում,
Եվ միաստվածներ կան նոր ու նորեկ,
Որ չեն տարբերվում կռապաշտներից:
Եվ ա՛յն պատճառով պիտի մեզ ներես,
Որ հնուց անտի սովոր լինելով
Հարկի և տուրքի,
Բաժի և սակի
Ու վճարելով միշտ ճարահատյալ,
Մենք հոգով լոկ մե՛կ հարկ ենք ընդունել՝
Հարկը հոգեկա՞ն:
Եվ Դու՝ եկակի մի հարկահավաք,
Որ ընտրված է— ոչ նշանակված,
Ա՛ռ ու մթերի՞ր,
Ա՛ռ ու պաշարի՞ր
Տասնվեցդարյա հարկը մեր հոգու,
Որպեսզի կրկին վերաբաժանես՝
Մեր նեղ օրերին,

Բայց... իբրև նպաստ
Եվ ոչ մուրացող ողորմաբաժին...

Գ

Աշխարհկրոսիդ համեմատությամբ
Ես, մինչև անգամ Արաքս չտեսած տնաբնակը,
Ի լրո՛ գիտեմ,
Որ քեզ ծին տված բնիկ գավառում
Կար մի մենաստան՝
«Սուրբն Կարապետ»,
Որի դռները փակ էին ընդմիշտ կանանց սեռի դեմ:

Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Սակայն անօրեն մի նոր օրենքով
Փակ է մեր առջև
Ո՛չ միայն դուռն ու գավիթը վանքի,
Այլ գավա՞ռն ամբողջ
Եվ ո՞ղջ մի երկիր,
Որի անունից զրկված է նույնիսկ քարտեզը հիմա:

Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Եվ ընդդեմ այս բաց անարդարության
Առայժմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,
Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ ստացվում է դրանից... բռունցք:

Ուստի իսուր է խոսքը երդումի:
Բնիկ գավառդ հենց որ ոտք դնենք՝

Քո Հացեկացը կպեղենք բրչով,
Եվ տարոնական պարկած երկնի տակ
Սրբատաշ վեմը սուրբ թանգարանի ձևակերսյ կառնի,
Եվ դա կդառնա Նո՛ր Էջմիածին...

Դ

Սակայն... Եվ սակայն
Կա սուրբ Օշական,
Որ ապգի համար մի շատ վաղեմի՝
Հավասար է նոր Երուսաղեմի:

Աշուն է հիմա:
Եվ սրբատեղի տանող ծուռումուռ ճանապարհներին
Խաղողի վակն է իր տերևները փռել ամենուր,
Իր տերևները, որ շատ են նման
Անհայտ ձիերի սմբակից պոկված ժանգոտ պայտերի:

Այս հողի վրա օտար սմբակներ չեն դոփում հիմա:
Եվ եթե կաղնու անտառն է սակավ այս հողի վրա,
Ապա խաղողի և կաղնու տերևն իսկապես անչափ նման
են իրար:

Գաղտնասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ օշականյան բանուկ այս ճամփով քայլող ամեն ոք
Անխոս-լռելյայն երդում է տալիս
Մի՛շտ կուգաշավիղ ընթանալ Քեզ հետ:
Անձնադատորեն նա հանձն է առնում
Արդյունավորվել մի՛միայն այնպես,
Որ հողագնդի բյուր լեկուներից
Անարտաքսելի մնա հավիտյան
Մեր այն բարբառը,
Որի գրերից կարելի է սուր եղաններ կռել,

Բայց մեխե՛ր նան՝
Գամելու համար հին ու նորօրյա պիղատոսներին:

Կանխասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ սրբատեղի տանող այս ճամփով քայլող ամեն ոք
Եվ վա՛ղը պիտի դառնա մասնակից
Քո անկշռելի որքանությանը,
Իր հոգում կգա Քո մշտակայուն ներկայությունը,
Քո իսկության հետ ինքն իրեն ձուլի՝
Փոխելով քայլն իր մոլորագընաց,
Բեռնակիր դառնա մեր բեռ ու բարձին,
Դասալիք լինի բանակից վարձու:
Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք
Ավանդակորույս իրենց վարքի դեմ
Վերստին պիտի աչքերը բանան:
Հայոց աշխարհի այրերից նրանք,
Ովքեր հուլաբար ճամփա են ընկել
Ու դեռ ծուլաբար դեգերում են լուռ՝
Օտար հովերի ապտակին հլու,
Պիտի դառնորեն դարձի գան դարձյալ՝
Խորհե՛ն հայերեն,
Ապրե՛ն հայօրեն...

Ե

Հոռետեսության համար չեմ ծնվել
Եվ դեմ եմ հիմար լավատեսության,
Սակայն շատերից մեկն էլ ես՝ գիտե՛մ.
Դու էիր, որ մեկ անըստգյուտ գյուտովդ ուսուցանեցիր,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար:
Ուստի հավատա, ո՛վ Հնարավոր,
Որ եթե մի օր— աստվա՛ծ չարասցե—
Գտած հնարքդ դառնա գործալուրկ,

Ասպարեզ կիջնի մեկն էլ, անկասկած,
Որ սկիզբ կտա մի նո՛ր սխրանքի:

Թե ճիշտ է, որ Դու հայր ունենալով՝
Չունեցար որդի,
Ճիշտ է առավել,
Որ կավակի տեղ ժառանգներ ունես՝
Սերո՛ւնդ ու սերո՛ւցք,
Որոնք անընտելուտ գյուտովդ գիտեն,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար...

Ինչի՛ ուրեմն սուրբ շիրիմիդ տակ,
Քանզի արթուն ես մեր հոգիներում:

Չէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծդ
Հավասարվում ենք, դառնում աջակից.
— Դու... գործն ես արել,
Մենք... հանձն ենք առել...

12. IX, 17. IX. 61
Երևան

ԾԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԽՈՐԱԳԻՐ

...Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,
Խոհերի անտես մակույկին նստած՝
Չգիտեմ, արդյոք կլինի՞ քամի,
Որ առաջ մղի իմ առագաստը,
Թե ինքս պիտի շապիկն իմ՝ կայմին
Առագաստ շինեմ, նոր լինեմ վստահ,
Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի
Պիտի ընթանա օվկիանոսներն ի վեր
Եվ փոթորկածուփ ծովերում անծիր,
Որպես գալիքի անմարմին նվեր,
Պիտի շնչով իր անանձնապատկան
Վառվի որպես վեհ, սրբալան պատգամ...

Մեր երկրի վրա կախվել են ահեղ
Օրեր՝ մառ ու մութ և դաժան կարի,
Ցանկալով մահվան թույնով վրդովել
Հանգիստը երկրի մեր չնաշխարհիկ...
Եվ ելել ենք մենք մեր այգաբացով,
Մեր ուժով համակ, վաստակով արդար,
Ընջելու չարիքն այդ արյունացոլք,
Կոտրելու վերջին այդ կեռը խարդախ,
Վերջին տերերին այն ժանտաբարո
Եվ իշխաններին բոլոր այն արբշիռ
Խեղդելու իրենց իսկ արնակարոտ
Հատուցման ծովում— անտես, անկշիռ...

Արդ ժամն է հասել, գնում եմ ես էլ
Դեպ մարտնչող մեր այն բակմագունդը,
Ուր մահը անվախ սրտեր է տեսել,
Ուր ուռճանում է հաղթության հունդը...
Գիտեմ, որ մահը շռայլ է այնտեղ
Իր դառնապատիր գգվանքների մեջ,
Եվ տևողությամբ մի ակնթարթ է,
Շատ կարելի է գտնել մահվամբ վերջ...
Ուրեմն գունատվի՞ հերոսությունն իմ,
Եվ գոյությունն իմ դառնա մի առա՞նցք,
Վախկոտության հին մակութով յուղված...
Ուրեմն դալկանա՞ մահվան պաղ շնչից
Արհամարհանքն իմ՝ սին մահվան հանդեպ,
Եվ մոլեգնական վրնջող իմ ձին
Դառնա նապաստակ— վախկոտ ու անդե՞մ...
Օ՜, ո՜չ... թող լինեմ Կապլան էսէռական—
Իմ առաջնորդի կյանքի դեմ դավող,
Եթե առկա է երգիս շեփորին
Այսօր կեղծիքի շպար կամ օքսիդ,
Եթե անապակ երգիս սափորին
Կաթում է անջինջ, պղտորող մի շիթ...

Գնում եմ այնտեղ և սարսում չունեմ
Ես մահվան հանդեպ— մոլի և անգութ...
Իմ անվախության սրտերն աճում են
Իրար հաջորդող օրերի հանգույն:
Գունատվիր, ով մա՜հ... Չարագույժ ագռավ,
Դու աներևույթ, անտես բորենի,
Անգոյության հուր— աննյութ, անկրակ,
Դու թունոտ անչար, տեսքով ցորենի...
Դու, որ անտես ես, դու, որ աննկատ,
Դու, որ անձն ես չար կատաղի պես,
Խանդի պես սնվող— անստինք, անկաթ,
Վրեժի նման անվրեպ այնպես...
Դու, որ կասկածի, վրեժի, խանդի
Նման շարժվում ես աննկատ, անկանգ,

Սակայն նրանց պես, կաս հնուց անտի,
Որպես սրտերի փորձության փականք:
Գունատվիր, ուրեմն, դալկացիր, սողա
Խլուրդի նման կամ ինչպես սողուն,
Եվ իմ (օ՜, ո՜չ, մեր) շնչից դողդողա,
Մալարիայից են ինչպես դողդողում...
Դու, որ գոյության բյուր հապար կանթեղ
Մարել ես դաժան քո սառը շնչից,
Դու, որ եղել ես հաղթական, քան թե
Քո որդին— կյանքը՝ քո հանդեպ չնչին,
Արդ պիտի փոխենք հին դերերը մենք
Ներդաշնակությամբ օրինածնիչ,
Եվ պիտի դողաս ինձանից, ով նենգ,
Ինչպես կանթեղը սառն ածխածնից:

Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ՝
Հոգուս մեջ ծիծաղ, բաքոսյան խնջույք,
Մի վակխանալիա, մի ուրախ հանդես,
Մի աստվածային խրախճահաճույք...
Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ՝
Գիտցած լինելով ինչո՞ւ եմ հագնում
Քո քղանցքը սև և իրանապիրկ,
Ինչո՞ւ եմ այսքան շատ վաղ հավաքում
Դեռ նոր բաց արած ծիրանահագի
Առագաստը իմ այս ուրախ կյանքում...
Գնում եմ ես էլ ցանեմ մի հատիկ
Այն գալիքնահունձ լայն մարգագետնում,
Որ չընդառնա մեր աստղը մահատիպ,
Ժանտաժանտ, դժնի աշխարհի մթնում,
Որ անծիր երկնում մեր բակմաստեղ
Օտար մի թռչուն խենթ չսավառնի,
Որ կարմիր ոգուն մեր չընպատվաստեն
Ոչ մի գոսական ճյուղ, ոստ եղեռնի,
Որ կապուտաչյա ջրերում մեր ջինջ,
Օվկիանոսներում անգամ սառցանիստ

Ոչ մի խորթ մակուկ, առագաստ ոչ մի
Չըլողա, այնտեղ չգտնի հանգիստ,
Որ հայրենիքիս արդարավաստակ
Հողը մի օտար ոտք չըտրորի,
Որ այնտեղ մարդը՝ հոգով անկաշկանդ
Գալիքի հավար հույսեր օրորի,
Որ ցուցամատը մեծ առաջնորդի
Նորից ու նորից մնա ուղենիշ,
Որ միշտ ժպիտով ճանապարհորդի
Մեկ դեպի կարմիր հաղթության ֆինիշ...

22—23. VII. 41
Նավչալու

ԿՈՄԻՏԱՍԻ ԴԻՄԱՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

Քո աչքե՞րը...
Այս աչքերը՝
Վանա ծովի մութ հատակ,
Նարեկացու հոգու պես խոր ու անտակ:
Այս աչքերը՝
Բուրգի ակնատ ու դղյակի լուսամուտ,
Սևանի պես երերածուփ,
Արաքսի պես հոսանուտ:
Այս աչքերը՝
Դեռ կենդանի՝ նահատակ,
Այս աչքերը՝
Մարմին առած պաղատանք:

Այս աչքերը՝
Պոռթկուն երա՞կ, դժվար կարո՞տ,
Ծանրը ե՞լք,
Մորմոքուն վե՞րք,
Ծովացած խե՞լք,
Ծորուն ե՞րգ...

Ու բերա՞նը...
Անբառ-անխոս այս բերանին նայելիս
Մեր տաճարներն ես վերհիշում,
Անին՝ թափուր գահերից,
Եվ ծյուրումն է կարծես հոսում
Կերոնների, ջահերի,
Ու սարսափն է կարծես խոտում
Կորուստների, ահերի:
Մեր կարոտի՛, մորմոքների՛, մահերի՛,
Ուրախության, սիրո, հույսի՝
Ամե՞ն տեսակ պահերի

Վառված խոսքն է այս բերանին միշտ թառել:
Այս բերանն է վաղակատա՛ր,
անկատա՛ր
և ապառնի՞
Ամե՞ն տեսակ բայերի
Խոնարհումը հույս-հավատով կատարել...

Իսկ ճակա՞տը...

Քո ճակատը
Մագաղաթի հին պատառիկ է ասես,
Մարմարոնյա մի ափ բեկոր-հուշարձան,
Կնճիռներդ՝ հնադարյան հին խապեր՝
Քեկնից առաջ-քեկնից հետո անվերծան·

Քո ճակա՞տը...
Սրբի ճակատ և հերոսի ասպարեզ,
Հարսանքատան ուրախ տանիք,
Ուր հնչում են նապպարեր:
Քո ճակա՞տը՝
Քրտնող մշակ ու գիտունի կինարան,
Մասունքների խորունկ խորան
Եվ ճգնողի մենարան:
Քո ճակա՞տը՝
Համբուրելի սուրբ խաչքար,
Թոնրի տաք խուփ
Եվ գեղջուկի թեղած կալ...

Եվ ակա՞նջը...

Քո ակա՞նջը՝
Մեղեդու դեմ՝ դրոնբաց,
Աղմուկի դեմ՝ միշտ կայուն.
Մեր նունուֆար ծաղկի պես
Բացվող-փակվող՝ կգայուն...

Քո ակա՞նջը՝
Կախարդական ձայնամաղ,
Եվ դրանով դու մեր հոգին,
Մեր դարերը մաղեցիր,
Թեփ-ժխորը անջատելով թողեցիր.
Իսկ մեղեդին՝
Նմո՞ւշ-նմո՞ւշ, մատնընտի՞ր,
Քո տաք հույզով ցողեցիր,
Անտակ հույսով հոդեցիր,
Որ մենք քաղենք մեկին տար·

Քո ակա՞նջը, Կոմիտա՞ս,
Քո ակա՞նջը՝
Պատարագվող եկեղեցի՞ սրբական,
Քո ակա՞նջը՝
Շքեղ խեցի՞ ձայնալուր...
Ինչ վսեմ էր ու գեղեցիկ հայաբար,
Թե չարքերը խոր թաղեցին մինչևիսկ,
Աստծու նման դու պեղեցիր մեր հոգում,
Դու պեղեցիր ու կեղեցիր աշխարհում...
Անթեղեցիր դու մեր հուրը ցիրուցան,
Կանթեղեցիր մեր կրակը մթան մեջ...
Ինչ խեղեցին օտարները դարեդար՝
Դարմանեցիր ու դեղեցիր հրաշքով...
Թե նեղեցին ու շեղեցին մեր ուղուց՝
Ուղիղ ճամփի դո՛ւ մղեցիր մեկ անվերջ...
Դո՛ւ դարավոր երգի ցանքը քաղեցիր,
Մեր ծով բերքը դո՛ւ թեղեցիր մեր սրտում
Ու թխեցիր՝ հաց դարձրիր հոգևոր...

Քո ակա՞նջը, Կոմիտա՞ս,
Քո ականջը— մագնիսի պես—
Եղանակ էր հավաքում:
Ինչ ականջդ հավաքում՝
Մատներդ էին նվագում:

Քո մատնե՛րը...
Քո մատնե՛րը՝
Դարմանի մեջ սրսուռ ցորեն ջոկջոկող,
Կարճատես ու թույլ աչքերից
Վարագույր ու փառ պոկող,
Մթնած մտքի ու փակ հոգու դուռ թակող,
Տնավերին ու պանդուխտին ողոքող,
Սիրած յարին սիրած յարից
Զատողի դեմ բողոքող,
Ցավ ու կսկիծ ամոքող,
Սեր ու կարոտ նվագող,
Բեկված շողեր,
Վճիտ ցոդեր,
Սրտի դաղեր
Ու դողեր,
Գեղգեղանքի թրթիռներ,
Ելևէջի հրթիռներ,—
Հոսուն բոցեր
Ու տաք մոխիր հավաքող:

Քո մատները, Կոմիտա՛ս,
Վառվող ծոցին՝ կովարար,
Խորունկ խոցին՝ դեղատուր,
Լաց ու կոծին՝ սփոփանք,
Մանկան ճոճին՝ օրորում:

Քո մատների կարկի տակ
Մեր սրտերը՝ պաղ ստեղ,
Մեր սրտերը՝ անգիտակ,
Քո մատները՝ տաղաստեղծ:

Քո մատները՝ երգահան,
Տասնահատո՛ր երգարան...

12, 15. IX. 57
Մոսկվա

Մինչև անգամ մեր ձկները՝
Մեր սևանյան կարմրախա՛յտը,
Մեր իշխա՛նը,
Մեր բախտա՛կը,
Կաթիլներն են կրում կարծես
Մեր դարավոր առատ արյան,
Որ հեղվել է,
Հեղեղվել է
Ու ներծծվել Հայոց երկրում:
Եվ մեր ջուրը բալմադարյան,
Որ դարավոր մեր խղճի պես
Անապակ է
Ու հստակ է,
Ա,դ բծերը լվանո՛ւմ է,
Լվանո՛ւմ է
Ու... չի մաքրում:

19. IV. 59
Մոսկվա

ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ

Մենք քիչ ենք, սակայն մեկ հայ են ասում:

Մենք մեկ ո՛չ ոքից չենք գերադասում:
Պարկապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարկապես Դավիթն այստեղ է կռվել:
Պարկապես Նարեկն այստեղ է գրվել:
Պարկապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ձուկ, և թռչուն՝ կավից,
Ուսուցմա՛ն համար և աշակերտե՛լ
Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն,
Վսեմի՛ն,
Լավի՛ն...

Մենք քիչ ենք, սակայն մեկ հայ են ասում:

Մենք մեկ ոչ մեկից չենք գերադասում:
Պարկապես մեր բախտն ուրիշ է եղել,—
Պարկապես շատ ենք մենք արյուն հեղել.
Պարկապես մենք մեր դարավոր կյանքում,
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն,

Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Ո՛չ ոք չի տուժել կարկից մեր բակի:
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով.
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով...
Պարկապես մահն էր մեկ սիրահարվել,
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել:
Ու երբ ճարահատ մեր հողն ենք թողել՝
Ո՛ւր էլ որ հասել, որտեղ էլ եղել,
Ջանացել ենք մենք ամենքի՛ համար.
Շինել ենք կամուրջ,
Կապել ենք կամար,
Ամե՛ն տեղ հերկել,
Հասցրել բերքեր,
Ամենքի՛ն տվել մի՛տք, առա՛ծ, երգե՛ր՝
Պաշտպանել նրանց հոգևոր ցրտից,—
Ամե՛ն տեղ թողել մեր աչքից՝ ցոլանք,
Մեր հոգուց՝ մասունք,
Եվ նշխար՝ սրտից...

Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ—
Գիտենք դեռ չանցած վերքերից տնքալ,
Բայց նոր խնդությամբ ցնծալ ու հրճվել.
Գիտենք թշնամու կողը մխրճվել
Ու բարեկամին դառնալ աջակից.
Դուրս գալ մեկ արված բարության տակից՝
Մեկի փոխարեն տասն հատուցելով...
Հօգուտ արդարի և արեգակի
Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...
Բայց թե կամենան մեկ բռնի վառել՝
Մենք գիտենք մխա՛լ— և կրա՛կ մարել.
Իսկ եթե պետք է խավարը ցրել՝

Գիտենք մոխրանալ որպես վառ կերոն.
Եվ գիտենք նաև մեկ կրքոտ սիրել,
Բայց ուրիշներին մի՞շտ էլ հարգելով...

Մենք մեկ ոչ մեկից չենք գերադասում,
Բայց մեկ էլ գիտենք—
Մեկ հա՛յ են ասում:
Եվ ինչո՞ւ պիտի չհայարտանանք....

Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ— շատանա՛նք:

19, 25. I. 61
Երևան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

«Զքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ»

Պահածոյացած՝ քո մեջ ես պահում
Արևագալի նշողումը շեկ,
Մեր երդիկների նշուլումը շեղ,
Շինականների խոփի շառայլը հառավելների անկյունադարձին,
Մանգաղի շողքի արծաթ բանվածքը արտի ոսկու մեջ,
Խույրի երթևեկ ցոլափոխանքը ակնաշլացիկ,
Զինվորագրյալ քաջերի կենքի ճառագայթումը արփալույտի տակ,
Ատրուշանների բացխուփ բոցերի մարկանք-մրցումը բոլորանվեր,
Խաչերի ցոլքը ցնորաբերող,
Գրակալներին ծաղկող մոմերի պլպլոցը պաղ,
Եվ փա՛յլը, նաև շառավիղո՛ւմը մեր տխուր-կվարթ ճաճանչող աչքի...

Դու քո մեջ ունես գայիսոնի շեշտ
Եվ գավգանի ուղղաձիգ սլացք,
Սկիհի բոլորք,
Կածանի ոլորք,
Ծամթելի հանգույց
Եվ ճարմանդի կեռ:

Հայոց աշխարհի փափկասուն կանայք
Քո մեջ են թողել նրբությունն իրենց,

Մամիկներն՝ իրենց գորովը ծփուն,
Ռամիկներն՝ իրենց կոպտությունն առողջ,
Ռազմիկներն՝ իրենց կորովը բակի,
Եվ սեպուհները՝ կանչը մարտական:

Մեր մեհյանների և տաճարների
Խորաններին ես սիրով այարտական
Վեհության համար քո անկողոպուտ,
Որով այլևս օծված ես այնպես,
Ինչպես սարյակը իր ա՛յն ինքնաքամ օծանելիքով.
Որի գաղտնիքը, ձագուկից բացի, աստծո՛ւն չի հայտնում՝
Նման խուփբերան մեր վարպետներին ու ճարտարներին:
Սրանց հմայակ հմտություններն էլ քո մեջ են խայտում,
Ինչպես ջրերը ստորերկրյա՝ նստվածքների մեջ:

Վառ Վարդավառի ջրցան կա քո մեջ
Եվ երբեք չանցնող սարսուռ-տամկություն,
Նավասարդական տոնախմբության ցնծում ու հափրանք,
Համբարձման ճախրանք երկնահրավեր,
Եվ ծառապարդի խորունկ խլրտում:
Հաշտից տեղերի հաշտարար խորհուրդ քրիստոսատիպ
Եվ գավիթների խում ու խրախճանք հեթանոսական...

Մեր դյուցազներգակ ու վահագնապաշտ գոռոզ գուսանաց
Բամբ բամբիռների և թինդ թմբուկի ձայների թվով,
Մեր սիրախռով տաղերգու արանց, կանանց, կուսանաց.
Անհայտ ու հայտնի բույլքի համեմատ,
Հայրեններ կանչող մեր սիրախորով կտրիճ լաճերի,
Եվ եղերամոր լայլաց երգերի միջև տատանվող
Բոյո՛ր անհամար ելևէջներին և անցումներին
համապատասխան
Թրթիռներ ունես թավ ու թովչական, թախծոտ ու թավշե:
Մինչ կաքավները թողել են «կղա» և տոտիկ կարմիր՝
Կաքավողների դաշնն ձներն են քանդակվել քո մեջ,

Նրանց շղարշիկ շորի շրշյունն է, որ քեզ համակել
Ու տոգորել է շշուկ-շշունջի շատությամբ շռայլ,
Նրանց ըզգլխիչ հոտերն են հագել
Նրբերանգներիդ հանդերձը հարուստ,
Նրանց հագուստի հոտերն ըզգլխիչ,
Բայց և բույրերը այն բարձրապահյալ բժժանք-բույսերի,
Որ տիկնանց տիկին Սաթինկան տենչի տերն էին դառնում...

Արտաշիսական հարսանիքներում վերից տեղացող
Դահեկանների հնչում կա քո մեջ
Եվ փոխարինվող չիր ու չամիչի,
Ընկույզ-փշատի բալմաձևություն,
Տանիքներ ճոճող շուրջպար-դարձպարի
Եվ ճապուկ-ճարպիկ լարախաղացի
Գունագեղություն և կշռույթ ու չափ:

Սոխակի սիրանք ունես դու քո մեջ,
Դղիրդ աղացի
Եվ թարմ այուրի տաքուկ փափկություն,
Դու քո մեջ ունես նոր դալարիքի
Եվ աղջիկների մեջքի ճապկություն,
Ճախարակների և սանդերքների ձայներ անշփոթ,
Ծեր գպրարների ու սպգմանների երգեցիկ կարկեր՝
Մի արարչական նվագ, որի տակ
Աստծու բեղ-մորուքն իջնում էր ամպից
Ու դառնում գուլպա, թաղիք ու կարպետ...

Եվ ունես քո մեջ Եփրատի ծփում,
Երապ Երասխի,
Վանա-Սևանա տուրևառություն,
Լեռնաղբյուրային մի ջինջ սառնություն,
Որից անցնում է լեղի վարունգի դառնությունն անդա՛ր,
Եվ երկրի երես բարձրացող ջերմուկ,
Որ դրկիցության ելումուտ ունի
Երկրամիջուկյան հրահեղուկի ոլորտների մեջ:
Եվ ունես քո մեջ շամբի երերմունք,
Անսպասելի արարմունք ամպի,

Սոսյաց անտառի սաղարթի սոսափ,
Որի սաստկությամբ կամ հանդարտությամբ
Բախտ էին բանում նախնիները մեր.
— Ամենի՛ բախտը՝ անստո՛ւյգ ու սո՛ւտ,
Եվ միայն քո՛նը՝ հիրավի՛ պայծառ...

Խորվիրապական տառապանքների թելադրանքով,
Մարտիրոսների, նահատակների
Ու վկաների տաժանքի հուշմամբ
Եվ մեռելոցի անանց կսկիծի պահանջով ապդու՝
Հոմանիշների մի ամբո՛ղջ վտառ վխտում է քո մեջ,
Գոմշաձագերից սնություն առած,
Եվ անտակություն՝ Մասյաց վիհերից...

Եվ ունես խոսքեր ո՛չ միայն հայցի, այլև հատուցմա՛ն,
Ո՛չ միայն հոժար և անհիշաչար ձեռքի մատուցման,
Այլև հին քենի ու նոր վրեժի դժվարի՛ն խոսքեր,
Որ արջի նման խոր քուն են մտնում,
Բայց և արջի պես վարթնում են մի օր,
Երբ ծայր է առնում եռոցքը արյան՝
Կապկելով հոսքը ելման ջրերի:

Սակայն ավելի հպարտ ես ու շեն
Անխարդախ սիրո և մտերմության,
Բարու գեղեցկի, հավատարմության,
Խանդաղատանքի և փաղաքշանքի,
Կերտման-կառուցման, ձգտումի-ջանքի,
Երասիկ վաղվա,
Հարաձիգ հուսո
Խոսքերով խորունկ, ցոլացիկ ու պարզ,—
Յուրաքանչյուրից՝ մի ողկո՛ւյզ, մի խո՛ւրձ,
Յուրաքանչյուրից՝ մի երա՛մ, մի պա՛րս...
Դու այսպիսի՛ն ես,
Այսպիսի՛ն ես դու:

Եվ երջանիկ է՝ ով քեզ կարող է կոչել ՄԱՅՐԵՆԻ,
Երանելի է՝ ով քեզանով է խոսում ու դատում...
Դու՝ իմ մայրենի՛,
Այսպիսի՛ն ես դու:
Եվ ես՝ երջանիկս ու երանելիս,
Ե՛ս չեմ, այդ ե՛ս չեմ քեզ տիրապետում:
Դո՛ւ ես, այդ դո՛ւ ես ինձ տիրապետում—
Հավիտյա՛ն և մի՛շտ,
Եվ ա՛յժմ նաև՝
Քեզանով իսկ քե՛զ փառաբանելիս...

29, 31. I. 62
Երևան

ՎԱՀԱԳՆԻՆ

«Ով աստվածն իմ հայրերուս»...

Դ. Վարուժան

Աստվածն էիր իմ հայրերի
Եվ սակայն
Հիմա արդեն որդի՛ ես դու, հայորդի՛,
Ու կարող է, որ կոչվում ես Ժակ կամ Ժան,
Ու կարող է, որ վատ գիտես հայերեն:
Եվ ես հիմա քեզ եմ դիմում՝ եղբո՛ր պես,
Ավա՛գ եղբոր կամ, թե կուզես, հո՛ր նման:
Չե՛մ աղոթում, այլ պահանջո՛ւմ սաստումով,
Զո՛հ չեմ բերում, այլև կո՛հ եմ պահանջում՝
Իրավունքով այն չգրված, բայց անջինջ,
Որ իմ ու քո նախնիներն են տվել ինձ
Եվ այլևս չեն կարենում ետ առնել...

Վահա՛գն,
Վահա՛գն,
Իմ հարսվա՛տ անծանոթ,
Աստվա՛ծ գիտե, թե ո՞ւր նետված ու միտված.
Իմ երակին կպած երակ հեռավոր,
Իմ բազուկից կուգաձյուղված դու բազուկ,
Դու կիսագունդ իմ իսկ արյան գնդիկի,
Իմ մոր որդի և հոր կավակ տնեդուրս:
Մի՞թե պիտի ուրախացնենք թշնամուն՝
Քո կորըստով,
Քո հալում ու ձուլումով՝
Այդ նորօրյա-այլափոխված կուլումով:
Մի՞թե պիտի ուրախացնենք թշնամուն,
Ա՛յն թշնամուն, որ քո հողից քեզ կրկեց,

Սակայն հողը քեզնից պիտի չկրկվի՛,
Եվ չի՛ կրկվի, քանի դու չես կամենում...

Վահա՛գն,
Դու թոռ Վիշապաքաղ Վահագնի,
Մի՞թե պապիդ արյունը ջուր է դարձել
Քո այն բանուկ երակներում, որոնց մեջ
Արյան փոխվեց ճերմակ կաթը Աստղիկի:
Մի՞թե ամեն հարկի ներքո հայկական
Լուսադեմին էլ սիրո մեջ չեն երկնում
Երկիր, երկին, ապա թե ծով ծիրանի,
Որ դուք կարմրիկ եղեգնիկի ծոց-բոցից
Վապեք հուրհեր, ու բոցմորուք, ու բոցբեղ,
Վապեք դեպի ա՛յն վիշապը, որ միայն
Ձևն է փոխում, իսկ էությունը՝ երբեք:
Ա՛յն վիշապը, որ իր մարմնով ճաքճաքուն
Բոլորակ է քաշել հողիդ հայրական՝
Պոչի վրա դրած գլուխն իր արնոտ,
Եվ ուր որ է պիտի իր պոչն իսկ խածի:
Բա,ց չի՛ խածի իր պոչը նա, եթե դու
Չընդդիմանաս, չդիմանաս ու կորչես:
Բայց չի՛ խածի իր պոչը նա, եթե դու
Ձապի միջով Գողթան փանդիռ չընորսաս:
Եվ չի՛ խածի իր պոչը նա, եթե դու՝
Ինքդդ գուցե արդեն մի Ժակ կամ Ժուլետ,
Ձավակներիդ վաղը անսուտ կղջումով
Ձմկրտես նորից Վահագն ու Աստղիկ:
Եվ չի՛ խածի, լա՛վ իմացիր, չի՛ խածի,
Ինքն իր պոչը չի՛ խածի նա, եթե դու
Ձհասկանաս արք-արարքը պապիկիդ՝
Ա՛յն Վահագնի, որ քայլ քայլեց երկնքով՝
Հարդագողի ճամփան իբրև հետք թողած
Ստիպված էր նա գնալու, ինչպես դու:
Բայց նա գնաց ու... ե՛տ դարձավ: Ձմնա՛ց:
Մենք երկնքում մեր ոտնահետքն ենք թողել,
Որ կոչվում է Հարդագողի ճանապարհ,

Եվ բա՜վ է դա, մեկ բա՜վ է դա, սիրելի՜ս:
Հարդագողի հետքե՞ր թողնել վերստին
Եվ այս անգամ երկրի՞ վրա, աշխարհի՞,
Նրա լայնքին ու երկայնքի՞ն... խաչի՜ պես:
Շա՞տ չէ արդյոք,
Վա՞տ չէ արդյոք, սիրելի՜ս.
Հարդագողի ճամփա թողնել... խաչի՜ պես,
Ճիշտ ա՜ն խաչի, որ տարել ենք դարեդար
Ու տանում ենք, ու դեռ չենք էլ հասկանում՝
Մե՞նք ենք արդյոք նրան տանում, թե՞՝ նա մեկ...

Վահա՜գն,
Վահա՜գն,
Եղբա՜յր, որդի՜, հարապա՜տ,
Իմ երակին կպած երակ հեռավոր,
Իմ բակուկից կուգաճյուղված դու բակուկ,
Դու կիսագունդ իմ իսկ արյան գնդիկի,
Իմ մոր որդի և հոր կավակ տնեդուրս.
Մենք,
Որ անցանք Հրո Երկրի ցուրտ-պաղից,
Բարեհուսո Հրվանդանի դեմ-դիմաց
Ինչպե՞ս, ինչո՞ւ պիտի իրար կորցընենք:
Թող որ կորչի մեր թշնամի՜ն, մենք ինչո՞ւ.
Հերթը նրա՜ն, ո՜չ թե մերն է, սիրելի՜ս:

Ուրեմն արի՜, իսկ քանի դեռ չես եկել,
Վահա՜գն մնա,
Եվ Աստղիկը՝ հարսը իմ,
Թո՜ղ պարգևի նոր-նոր ուստրեր ու դուստրեր՝
Ամեն մեկը՝ մի նոր Վահագն ու Աստղիկ,
Մայերն իրենց, դրոշի պես, բաց արած
Բարեհուսո Հրվանդանի հովերին,
Իմ օդային պագի պես տաք հովերին:

27. XI. 62
Երևան

ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ

Լոկ ի՜րենց հպտուկ բյուր անուններից
Գալիս է բույրը հին-հին դարերի,
Անգին քարերի,
Պարտեզի, շոգի ու խոնավության,
Երկնքի, հողի ու խոնարհության,
Մինչդեռ փեշերից՝
Բույրը թարմ հացի,
Հոտը խնձորի կամ սերկեվիլի,
Որ քուն են առնում նրանց փոթերի ու դարսերի մեջ՝
Հայրական տնից բերած սնդուկում...

Ու մեր ճաշերը նախ նրանց տաքուկ շնչով են եփվում:
Իսկ եթե նրանց գլխաշորերից դեղ-դարման սարքվեր՝
Անպարկեշտություն կոչված ախտը հին կբուժվեր իսպառ...

Բարեխառն գոտուց հեռու ապրելով՝
Մենք միշտ բարեխառն օդ ենք ներշնչում մեր տների մեջ՝
Շնորհիվ... նրանց հավատարմության:
Եվ ամեն անգամ նրանք մտնում են անկողինն իրենց,
Ինչպես մտնում են սրբացած տաճար,
Իսկ եթե նրանց այդ նույն բանն ասես,
Կխաչակնքեն երկյուղածորեն՝
Այդ համարելով սրբապղծություն...

Ու երիտասարդ նրանց ձեռքերը նուրբ են առավել,
Քան իրենց սրտի թաղանթը նույնիսկ,
Մինչդեռ մայրական ու մամիկական ձեռքերը նրանց
Գնալով անվերջ փոխվում են-փոխվո՜ւմ
Ու նմանվում են... երկրի կեղևի՜ն.
Սարե՜ր կան այնտեղ, ձորե՜ր, անդունդնե՜ր՝
Կոշտուկի՜ տեսքով,
Կնճիռի՜ տեսքով,
Տեսքով խորշոմի՜...

Խորանի նման լեցուն են նրանք տաք մասունքներով,
Որ միշտ կարող են գավիթ դուրս բերվել ինն ամիսը մեկ
Ու կոչվել «կավակ» կամ «խաչ», ինչ նրանք
Սիրով են կրում բովանդակ կյանքում...

Անցնելով փշոտ ճանապարհները առի և փախի՝
Բոբիկ ոտքերին կծկել են նրանք
Իրենց հայրենի գետակն ու առուն,
Ցավից մշուշված իրենց աչքերում
Տարել են իրենց ծուխը ծիանի
Եվ իրենց հոգնած շալակին առել
Ոչ միայն մանչին կամ մի մագաղաթ,
Այլ մի բովանդակ... բնիկ հայրենի՛ք,
Մի ծա՜նը, ծա՜նը, ծանը՜ր հայրենիք՝
Իրենց կանացի թիկունքին կպած
Ա՛յն կուպի նման կամ ա՛յն սապատի,
Որ շտկվում է լոկ գերեզմանում...

Ինչե՜ր չեն տեսել նրանք այս վերջին հազարամյակում...

Հաճախ են նրանք իրենց պաշտպանել
Տաք խաչերկաթով
Կամ եռման կաթով:
Նրանց հայրենի անխիղճ ու բարի քարափներն անտակ
Ու կամուրջները չար ու ողորմած
Մեկ անգամ չէ, որ նրանց փրկել են անպատվությունից,
Որպեսզի ապրած դժոխքից հետո
Մարտիրոսացած մտնեն դռներից ա՛յն Արքայության,
Որ եթե չկա ու չի էլ եղել,
Ապա անպատճառ ստեղծվեր ա՛յնտի
Հենց սրա՜նց համար:

Իսկ եթե մահը եղել է անգութ
Ու ժամանակին չի տարել նրանց,
Ու եթե նրանք ընկել են հարեմ՝
Առևանգիչի, լկոզի համար ծնել են նրանք
Միայն... ապուշնե՜ր և կամ... դահիճնե՜ր...

28. XII. 62
Երևան

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ



ՆՈՐՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՜տ եմ վախենում
Բյուրավոր ու բո՜ւթ հավատացյալից,
Բյուրատեսք ու սո՜ւտ հավատացյալից:
Եթե աստված եք՝
Փչեցե՜ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՜ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգցրե՜ք նրանց ջահերն այլական,
Որ... եղիցի լո՜ւյս:
Եվ ո՜չ մի գավթում մի՜ ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Մերժեցեք նրանց կո՜հն էլ խոստացյալ,
Որ... կոհ չգնա ինքը հավատը՝
Մաքո՜ւր-վսե՜մը,
Անկե՜ղծ-անսո՜ւտը:
Ու թե աստված եք՝
Ամուր փակեցեք ձեր ականջնե՜րն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց՝
Անգի՜ր-ինքնահո՜ս-հաշվեկշռվա՜ծ այն աղոթքների,
Որով խաբում են ո՜չ իրենց,
Այլ ձե՜կ:
Եվ — բավակա՜ն է — հասկացե՜ք ընդմիշտ,
Որ աստծուն նո՜ւյնիսկ հայհոյողները
Շա՜տ ավելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է **ինքը հավատը՝**

Խոցվա՜ծ-արյունո՜տ,
Այրվո՜ղ-ապտակվա՜ծ,
Ցավա՜ծ-ճչացո՜ղ,
Մանո՜ւկ հավատը,
Որ հայր դառնալու համար է ծնվել:
Ու եթե հայր եք՝
Մի՜ թողեք,
Որ սուտ հավատացյալներն սպանեն նրան:
— Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է ավելի...

9. XI. 65
Չանախչի

ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ

Առավոտ լուսո՜,
Առավոտ մի ջի՜նջ,
Ջի՜նջ, ինչպես... ոչի՜նչ,
Ջի՜նջ, սակայն դեռ պա՜ղ։

Ու ես անհապաղ
Անջատում եմ ինձ
Աշխարհից ծանոթ
Ու պարպում եմ ինձ,
Դարձնում մի անոթ,
Որ լոկ դատարկ չէ,
Այլ նաև անօդ։
Եվ... նո՜ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթե ոչ ձեվ բոլորիդ,
Ապա գոնե ի՜նձ, միայն ի՜նձ համար,
Որպեսզի նախ ե՜ս
Եվ հենց ի՜նձ վրա
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթե լինի այս անգամ սարքին՝
Նո՜ր միայն վստահ հանձնեմ ձե՜վ նաև,
Եվ ապրեք այնտեղ դուք մարդավայել։

Ես՝ պատրանապերծ,
Բայց և հուսապեն,
Այս դեռ անվավեր ու նոր աշխարհում
Էլ չե՜մ կբաղվում ու չե՜մ կբաղվի
Ձեղածի վրա եղածի թերին խզո՜ւր քննելով,
Երապի վրա երեխայաբար անո՜ւրջ դնելով,
Կեղծված դրամով կեղծ բան գնելով,
Ոչ էլ ճարահատ ու միտումնորեն
Մահանալու պես անվերջ քնելով։

Ես՝ կարթնած արդեն,
Բայց դեռ անկվա,
Հեղուկով մի կուց,
Որ պարգևում է ձնհալն անխուսափ,
Նախ կովացնում եմ դեմքն իմ՝ հիվանդի՜,
Իսկ հետո՝ ամե՜ն տեսակ հիվանդի՝
Մա՞րդ լինի, երկի՞ր, թե՞ հավատ.— մե՜կ է։
Զովացնում նրանց ամենքի դեմքը՝
Իմ ամենաբուժ մատների հետքը
Անջինջ թողնելով սրա ու նրա
Դեռ գոց կոպերի,
Դեռ փակ շուրթերի,
Տակավին քնկոտ երեսի վրա։

Ու բոլորի՜դ մեջ,
Անխտիր բոլո՜ր-բոլո՜ր-բոլորի՜դ,
Ինչ-որ սիրելի մի բան եմ գտնում,
Սիրելու ինչ-որ արժանի մի բան,
Որ հավանաբար
Ա՜յն ժամանակ է ստեղծվել արդեն,
Երբ հին չորս ոտքից երկուսը
Անդարձ
Մենք կորցրեցինք...

Եվ վեհ բարձունքից անսերողության
Ես, քարի նման, վար եմ թավալվում՝
Հասնելով փափուկ ա՜յն ստորոտին,
Որից քիչ անդին
Ճահիճն է ապրում
Իր հավերժական ինքնածին կյանքով,
Եվ, քարի լեզվով, ասում եմ. «Այբ, Բեն»,
Այսինքն՝ «Արեգակ»,
Կամ՝ «Եղիցի լույս»...

16. III. 67
Արվնի

ԼՈՒՅՍ ՁՎԱՐԹ

Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ...
Եվ ո՛չ թե լույս երեկոյի,
Ի մտանել արեգական,
Այլ լույս կվարթ արդար գոյի՝
Շաղառտըն առավոտի...

...Ծնրադրյալ Բնությունն է ելնում ոտի.
Գիշերային ժամերգությունն է վերջանում:
Եվ Լուսաբացն է մոտենում դանդաղորեն,
Իբրև հսկիչ մի Լուսարար՝
Մարելով ու հանգցընելով
Ամեն տեսակ լապտեր ու լամպ:
Եվ Արեգակն է բարձրանում
Քրմապետի վսեմությամբ:
Եվ ծույլ փռված ստվերները մարմնամսեղ
Սկսում են կարծես իրենք իրենց մարսել՝
Մսաթափվում-նիհարում են,
Հետզհետե դառնալով ձիգ
Ու սլացիկ՝
Պարուհու պես մի թխամորթ:
Արշալույսն է շարունակում ածել փողը իր ծիրանի,
Որի բոլոր նեղ ծակերից լայն շաղվում է
Ինքը Արդար Արեգակը,
Եվ հնչում է ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
«Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ»...

Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ,
Լույս կվա՛րթ ու գերապանցի՛կ,
Լույս երգեցի՛կ ու նվագո՛ւն:
Դու՝ առաքյալ ամենօրյա,
Որ բերում է միայն հավատ,
Բայց ի դերն հանում-վանում
Եվ քողածածկ ծպտյալ հույսեր:
Դու՝ սուրհանդակ, բայց և կավատ,
Դու՝ հետախույզ, բայց և մատնիչ,
Բայց ամենից առաջ՝ միշտ սե՛ր
Եվ ամենից հետո՝ միշտ սե՛ր
Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ,
Անձրևի պես
Տեղա այնպե՛ս,
Որ աշխարհում
Լոկ մի՛-միա՛կ ստվեր մնա,
Այն էլ միայն երկնի՛ վրա՝
Լոկ անձրևի՛ ստվերը նոր՝
Ծիածա՛նը...

Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ,
Այնպե՛ս գործիր,
Որ նկարիչ քո մատներով
Վառեկներն իսկ, գունապարդված,
Դառնան կարծես աքաղաղներ
Ու վերերգեն յուրատեսակ՝ ծուղրուղուով՝
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ,
«Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ»...

Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ,
Շաղվի՛ր,
Մաղվի՛ր,
Թաղվիր այնպե՛ս և այնքան խո՛ր,
Որ մենք չապրենք՝ ինչպես ձուկը
Իր մշտամութ անլուսամուտ պետության մեջ,

Որ քո հմուտ-ամենամուտ շողերի տակ
Ծաղկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ-հստակ,
Եվ անաղմուկ քո կարկերից ու քո տաքից
Չթրծված ամեն երակ իսկույն ճաքի,
Ու վերերգվի մինչև անգամ ա՛յդ ճաքոցով
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
«Լո՛ւյս, լո՛ւյս կվարթ»...

19. III. 67
Արվնի

ՁԱՅՆԻՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՌ ՏԵՐ ԿԱՐԴԱՄ

Թողություն տուր, Տե՛ր, ծանրը Խավարին,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Թող ծառե՛րն անգամ (առանց և քամու)
Հարգանքով Նրա առջև կեռանան,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք պահանջ չունենք,
Մենք գոհ ենք նույնիսկ,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք խոստանում ենք,
Եվ մենք իսկապե՛ս
Նրան չե՛նք կարող ու չե՛նք մոռանա,
Միայն թե թող Նա թողնի հեռանա...

Իսկ թե հա՛րկ լինի, նամանավանդ պետք,
Ես Խավարի հետ կմեկնեմ Ինքըս՝
Դառնալով Նրա թագավորության
Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝
Անդարձ կմեկնեմ Խավարի հետ Ես,
Միայն թե մեր այդ մեկնումից հետո
Ժամանի ինքը Արշալո՛ւյսը,
Գա՛,
Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,
Բայց մի քիչ հետո
Եվ ուրախանա՛, որ իմ կորստով
Կորել է նաև ինքը Խավարը...

Արշալո՛ւյսը գա,
Եվ իր կտրված պորտից պոկվելով՝

Նորածին օրը ալ-Կարմիր շնչի
Եվ ինքն էլ կգա,
Որ իր այդ շնչով խոնավ ու տաքուկ
Այնպե՞ս է լցվում աշխարհը կրկին,
Ինչպես տկճորը՝ արնագույն գինով,
Եվ այդ լցումի թրթիռը հսկա
Մանրիկ անցնում է մեր իսկ ներքինով՝
Իբրև մի սարսուռ,
Որ մեկ կապում է անտես կապերով
Աստվածների հետ,
Դարձնում նրանց հետ մեկ հարաբերող.
Բայց և առնչում մեկ օվկիանոներին,
Որոնց անվախճան ու տարուբերող
Մակընթացություն-տեղատվությունն
Այլ բան չէ արդեն,
Քան թե աննշան մեր կարկերակի
Նշանակալից արձագանքը մեծ
Մեկնից սկսվող տարածության մեջ...

17. III. 67
Արվնի

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԳԻՏԵՄ ԻՆՉԸ

Շա՞տ սպասելով.
Զո՞ւր սպասելով հարմար պաշտոնի՝
Ես ինքս եմ ահա ինձ նշանակում
Լուսավորության նախարա՞ր ասեմ,
Թե՞ կատարածու լուսավորության,
Այսինքքն՝ լույսի,
Լամպերի,
Ջահի,
Որպեսզի... նույնիսկ կույր քարանձավի
Խուլ մթությունը դահլիճ դարձընեմ
Կա՛մ համերգային,
Կա՛մ հարսանեկան...
Սեղմե՞մ մի կոճակ՝
Եվ մարդկանց հոգում
Ծաղիկների պես լույսերը ծաղկեն...
Հո՞ւպ տամ մի կոճակ՝
Եվ ստվերները
Դառնան ցայտաղբյուր ճառագայթների...
Աջ կամ ձախ պտտե՞մ մի երրորդ կոճակ՝
Եվ մութը իսկույն
Հին չարքի նման
Չքվի-չքանա,
Ու թե մութ մնա,
Մնա ի՛մ կամքով,
Ու մնա միայն իբրև վարագույր
Համբույրի համար սիրահարների,

Իբրև ծածկատեղ փակ կրծքի բացման
Եվ իբրև պայման մանկահղացման...
Ու եթե լինի՞,
Հենց այսպե՞ս լինի,
Իկուր չե՞մ գոչի ես. «Եղիցի լո՞ւյս»,
Ա՛յլ կշշնջամ արդեն. «Եվ եղև՛»:

Եվ լինի՞,
Լինի՞...

15. II. 62
Երևան
17. III. 67
Արկնի

ՎԱՌԵՑԵՔ ԼՈՒՅՍԵՐԸ

Երապել է տալիս մութը,
Իսկ երապել մենք չենք ուզում:

Մենք ուզում ենք
Սին երապի երկար կապը քաշե՞լ-քաշե՞լ
(Ինչպես երկար թել ունեցող փուչիկների
Թելն են քաշում մանուկները).
Սին երապի կապը քաշե՞լ
Ու ձգելով բերել նրան
Նստեցընել մեր ծնկներին՝
Սեր խաղացող աղջկա պես,
Եվ նայելով
Նրա լպիրշ ու խլրտուն աչքերի մեջ՝
Համբերահատ և բարկացած արուի պես նրան բիբել.
— Խո՞սքդ ասա. այո՞ կամ ո՞չ...

Որովհետև չունենք այսքան հանդգնություն,
Որովհետև համբերահատ ու բարկացած արուներ չենք.
Որովհետև սեր խաղացող աղջկան մենք
Չե՞նք կորելու նստեցընել մեր ծնկներին.
Որովհետև երկար թելով փուչիկ ունեն
Մանուկնե՞րը, բայց ո՞չ թե մենք.
Որովհետև երապել է տալիս մութը,
Իսկ երապել մենք չենք ուզում.
— Շո՞ւտ, վառեցե՞ք լույսերն ամեն...

3. XI. 63
Երևան

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՊԱՏԻ ՀԵՏ

Եւ բարությա՛ն պապակից եմ մխում հիմա...
Ու վերստին կանգնած եմ ես ինքս իմ դիմաց
Ինքնադժգո՛հ,
Ինքնապարսա՛վ
Ու խռովո՛ւն:

(Բարությունն այս ինձ խեղդում է կամա՛ց-կամա՛ց)...

Կեղծի՛ք ու տե՛ր,
Ճի՛շտ ու ծառա՛,—
Դուք չե՞ք հոգնել այս խոսքերից գոռ ու գոռան,
Որ չեն մեխվում՝ ապգանվան պես՝ ամեն դռան,
Բայց դարձել են ճակատագիր
Ա՛յն համագանգ-համաճակատ մոլորակին,
Որ կվվել է այս խոսքերի արձագանքից՝
Սրտախառնուք վգալո՛ւ չափ,
Եվ դրանից է պտտվում՝
Այդ կվվանքի՛ց:
Պտտվում է ու պտտվո՛ւմ:
Դե եկ ու մի՛ խղճա նրան...

(Բարությունն այս ճվմում է ինձ, ճխլում է ինձ
Իր կանացի գաղջ գրկի մեջ ու շոգ բռան)...

Ես նախկինն եմ, բա՛ն չի փոխվել.
Առաջվա պես ուժն եմ սիրում,
Նախ և առաջ՝ ո՛ւժը,
Հետո՝ ո՛ւժը կրկին,
Բայց այս անգամ արդեն ո՛չ ձեր հասկացածը.
Կարեկցանքի՛
Եվ բարությա՛ն ուժն ահարկու,
Որ կորեղ է, ինչպես... հացը,
Հկոր, ինչպես... մանկան լացը,—

Կարեկցանքի՛
Եվ բարությա՛ն ուժն ահարկու:

(Եվ հաղթում է նա ինձ հիմա՝
Հայրենիքի՛ կանչի նման)...

Համարյա թե պարտված արդեն՝
Ես թեկնել եմ ահա քարին,
Եվ իրար հետ ջերմություն ենք փոխանակում
Ես ու քարը՝
Անգամ առանց սակարկության,
Ու մինչև իսկ չնայելով՝
Դարձյա՛լ նայում մեր դեմ փռված-ծռված գետին
Որ շարունակ
Իր ափերի կա-չկան է գույքագրում,
Որպես անխիղճ և անհոգի մի հարկահան:

(Բարությունն ինձ գերի տանում հարկի դիմաց
Ու կես գնով վաճառքի է հանում հիմա)...

Ինչքա՛ն կուզեն,
Այս գետի պես թո՛ղ ինձ անվերջ գույքագրեն.
Իմ կա-չկան այս է որ կա՝
Այս ահարկու բարությո՛ւնը,
Իմ թշնամի՛ն,
Ոխերի՛մը,
Որ ուզում է խեղճիս խեղդել
Ցավով թաքուն, բաց պայքարով,
Բայց... չի՛ կարող,
Որովհետև գետն ինչքան էլ ահեղ լինի՝
Ափերն էլի շա՛տ ավելի կորավոր են,
Ինչպես որ կյանքն է կորավոր բարությունից:

(Բարությունը, վերջ ի վերջո, ես կխեղդե՛մ.
Թե չարացնող կյա՛նքն էլ չօգնի՝
Խեղդվելիս... մե՛ջը կխեղդեմ)...

29. X. 65
Չանախչի

ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՍՊԻՆԵՐԸ

Ա՜խ, այս աշխարհի հին սպիները...

Մեր նույնիսկ առո՛ղջ մսերի մեջ էլ նրանք են նվում
Եվ տառապանքով հարստացնում են մեկ ու մեր կյանքը,
Որ անհամեմատ աղքատ կլիներ,
Եթե ամենքս լինեինք առողջ,
Ինչպես արջառը
Կամ անանուխը:
Էլ ինչո՞ւ եք դուք, սիրելինե՛րս, այսպես վախենում
Հին սպիների կապդուրիչ ցավից:

Եվ այդ ո՞ւմ է պետք
Պատգամախոսի մեր ծիծաղելի վստահությունը,
Եթե օրենսդիրն այն ցավն է միայն,
Որի ծնունդն ենք:
Ու կնճիռների վայրիվերումը
Բնավ էլ պա՛ր չէ,
Այլ մի այնպիսի՛ արարողություն,
Որով ամեն օր սրբագործվում է ինքը ճակատը:
Ուրեմն էլ ինչո՞ւ, սիրելինե՛րս, ինչո՞ւ խուսափել
Հին սպիների հարուցած ցավի սրբագործումից:

Եվ ցա՞վն է արդյոք վտանգավորը,
Թե՞ հենց այն դեղը,
Որով ձգտում ենք ցավը դարմանել,—
Այս տափակ հարցին
Ո՞վ պիտի իր սուր սյատասխանը տա,

Այդ ո՞ր հիմարը:
Եվ ո՞վ կարող է ցավի հետ վիճել,
Այդ ո՞ր հիմարը,
Եթե ցավի հետ վիճելը նույնն է,
Ինչ ծովի վեճը աղաջրի հետ:
Ուրեմն՝ էլ ինչպե՞ս, սիրելինե՛րս,
Մենք ինչպե՞ս պոկվենք ինքներս մեկնից
Եվ ինչո՞ւ պոկվենք:

Ուր որ է կրկին կիջնի գիշերը
Եվ մեր վրայով կանցնի ծանրորեն՝
Մամլիչի՞ նման,
Եվ մեկ համարյա իրո՛ք կսպանի՝
Մի յոթ-ութ ժամով:
Բայց չե՞նք մեռնի մենք.
Մեր ապրած մահը և վերապրումը
Կմամլենք կյանքի երեսի վրա՝
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերով
Եվ ցավի՛... երբե՛ք չբարեփոխվող ուղղագրությամբ,
Որ մանուկ օրը, աշակերտի պես,
Սկսի հեգել գրերը կյանքի՝
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերը
Ցավի չփոխվո՛ղ ուղղագրությամբ,—
Մի հի՛ն դասագիրք, սիրելինե՛րս,
Որ ինչո՞ւ վառենք՝ քարածըխի տեղ...

Ուրեմն ի՞նչ անենք, սիրելինե՛րս:
Այսուհետև էլ գոհությա՛մբ կրենք
Եվ դեռ ավելի՛ն՝
Հոչակենք օրե՛նք
Մեր ցա՛վը՝
Լա՛վը...

4. XII. 64
Երևան
9. XI. 65
Ջանախչի

ԽԱՐՈՒՅԿ ՍԱՌՈՒՅՑԻ ՎՐԱ

Թողե՛ք,
Որ ձեզ էլ մասնակից դարձնեմ
Անմեկին հույսի ձեր չհամտեսած անուշությանը:
Եվ ճաշակեցեք ու թաթախվեցեք
Հավատացյալի երեխայական միամտությամբ,
Որովհետև մեր հարստությունը վշտե՛րը չեն լոկ,
Ու միայն տանջանք-տվայտա՛նքը չէ մեր պահուստը փուկ.
Եվ որովհետև մտահոգությունն այլ բան չէ,
Քան թե ելքի փնտրտուք.
Եվ որովհետև կյանքն— ի՞նչ էլ լինի— ընդլայնում է մեզ,
Ինչպես լեռների կատարներն են միշտ հեռացնում կրկին
Ա՛յն հորիզոնը,
Որ փակ է թվում լեռան ոտքի տակ.
Եվ որովհետև ես սիրում եմ ձեզ,
Բոլորի՛դ սիրում,
Ու բոլորիցըդ ոմանք՝ նաև ի՛նձ...

Ուրեմըն թողե՛ք,
Թողե՛ք,
Որ ձեզ էլ դարձնեմ մասնակից
Ա՛յն նախածանոթ հույսի համտեսված անուշությանը,
Որ մեր երեկվա
Ու մեր այսօրվա անուժությանը
Ասում է. «Կա՛նգ առ»՝
Ավշավորելով ո՞վ գիտի ի՞նչով,
Ու մեր մարմնական անարմատ ծառի
Անհասկանալի աշխատանքը մութ

Տալիս է իր պարզ պտուղը՝.
Ծիծա՛ղ,
Ժպի՛տ,
Գոհությո՛ւն
Եվ «փա՛ռք աստրծու» գոչելու կարիք...

Եվ փա՛ռք աստրծու,
Որ մեր աչքերը
Լոկ թխսավայր չեն բու-ագռավների,
Այլ նաև փեթակ՝ լցված շողերով,
Եվ ականջները՝
Մարդաձև ծառի մեր փչակը կույգ,
Դամբարաններ չեն լոկ սրտնեղության,
Այլ նաև խոր բույն՝
Լի՛ ամեն տեսակ տաք ձայնեղությամբ:

Եվ փա՛ռք աստրծու,
Որ մենք կարող ենք մեկ մաքրել այնպե՛ս,
Ինչպես օվկիանն է ինքն իրեն մաքրում:

Եվ փա՛ռք աստրծու,
Որ աղմուկների հասունացումից
Թագադրվում է ո՛չ թե գիշերը,
Այլ օ՛րն է ծնվում:

Եվ փա՛ռք աստրծու,
Որ մեր հոգու մեջ
Եթե կա ամիս տերևաթափի,
Ապա կան օրեր և աստղաթափի՛,
Եվ աստղաթափի՛...

Հապա՛ր բերան փառք:

28—29. X. 65
Չանախչի

ԱՇԽԱՐՀԻՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Աշխարհին, այո՛, մաքրությո՛ւն է պետք՝
Ա՛յն հերոսների տխրունակ տեսքով,
Որոնք մեռնում են... անգործությունից...
Նաև ա՛յն կանանց, որոնք մինչև մահ
Ճանաչում են լոկ մե՛կ տղամարդու...
Եվ կերպարանքով ա՛յն տղամարդկանց,
Որոնք քայլում են գլխսհակ թեպետ
Ու միայն իրենց ոտքի տակ նայում,
Բայց իրենց միտքը, անկախ իրենցից,
Իրենց լքելով՝
Թռչում է վերև,
Իսկ երբ հոգնում է՝ գալիս, ճայի պես,
Թառում է մարդու ախտի և բախտի
Համաշխարհային օվկիանի վրա...

Մաքրություն է պետք՝ ժպիտի՛ ձևով,
Որ մտնենք նրա տաք քաղցրության մեջ,
Ինչպես մեղուն է փեթակն իր մտնում:

Մաքրություն է պետք՝ ծիծաղի՛ ձևով
Որ ժայթքի մեր շուրջ,
Մեկ չհարցնելով՝
Կոհակ առ կոհակ գա, մեկ լվանա
Առանց օճառի և առանց ջրի...

Մաքրություն է պետք՝ տեսքով մեխակի՛,
Որ հողը մեխի հոդին՝ իրենով,
Եվ իր բուրմունքով սոսնձի նաև
Ոդը հոդի հետ ու մեկ էլ՝ նրանց...
Մաքրություն է պետք՝ տեսքով սոխակի՛,
Որ միայն իրե՛ն,

Լո՛կ իրեն ծանոթ մի այբուբենով
Միշտ էլ երկրային ապդանշաններ հղի տիեզերք
Եվ պատասխաններ թերևս ստանա,
Մեկ համար անհա՛յտ, լո՛ւրջ պատասխաններ...

Մաքրություն է պետք
Եվ կերպարանքով, տե՛ս, ա՛յն թռչունի,
Գլխարկը կարմիր— ինքը սև համակ
Հենց ա՛յն թռչունի,
Որ իր կտուցը երկինք է ցցել
Եվ աղոթում է
Անփարախ-անհոտ կարդինալի պես
Ո՛չ թե մեր հոգու,
Այլ այս աշխարհի մաքրությա՛ն համար...

Մաքրությո՛ւն է պետք...

Մաքրություն է պե՛տք,
Որ քարերն անգամ
Ներքնապես կգան
Իրենց երբեմնի հեղուկ վիճակում,
Որ արտաշնչեն բույսերն էլ... արև՛
Եվ ո՛չ թե միայն անտես թթվածին,
Որ մարդն էլ իրեն լավ կգա այնպես,
Ինչպես մեղեդին՝ վսեմ տաճարում,
Գույնը՝ հանճարեղ կտավի վրա,
Եվ խաղալիքը՝ մանկան ձեռներին...

Աշխարհին... մանկա՛ն մաքրություն է պետք,
Եվ հենց ա՛յն մանկան,
Որին ամեն օր աշխարհ են բերում
Նաև աշխարհի... անմաքուրները,
Մինչևիսկ նրա՛նք՝ անմաքուրնե՛րը,
Քանզի... աշխարհին մաքրությո՛ւն է պետք...

27 և 31. X. 65
Չանախչի

ԱՄՊՈՏ ԵՂԱՆԱԿ

Խելքըս հալվում է ոսկորներիս մեջ,
Հալվում ու հոսում արյան պես անգույն՝
Իմ ոսկորները դարձնելով ասես սպիտակ երակ:
Ու ես դառնում եմ... համատարած սիրտ.
Շարժումներս ամեն՝ սրտի բաբախում,
Բոլոր ձևերըս՝ շարժումներ սրտի...

Տե՜ր աստված, դու բարի՛ն կատարես...

Իսկ դրսում ցուրտ է,
Դրսում՝ ամպ ու կամպ,
Իսկ դրսում հիմա տարանցիկ քամին
Տոմսակ է փոխում ա՛յն կայարանում,
Որ ո՜չ մի տեսակ ցուցանակ չունի:
Եվ խշրտուքը անօգ ծառերի՝
Ենչառությա՛ն պես,
Հնոցի՜ նման՝
Խուժում է սրտիս համատարածը,
Խուժում, գրավում ու նստում ծանրը՝
Չինգիզ խանի՛ պես,
Լենկ Թեմուրի՛ պես
Ու թուրքի՛ նման:

Տե՜ր աստված, դու բարի՛ն կատարես...

Անվավեր սիրո հորձանուտի մեջ
Գլուխ եմ հանում ես՝ լոտոսի պես.
Մինչև կվակըս արդեն ջրասույզ՝

Չեմ խեղդվում դարձյալ:
Իսկ հետամնաց արփին, վերջապես,
Ծագում է դրսում,
Ծագում կեսօրին,
Աշխարհը ներկում ծաղր ու ծանակով:
Տարանցիկ քամին մեկնում է հեռու,
Ամպերը մատնում-դավում են իրար,
Ու խշրտուքը մրսող ծառերի
Հրդեհում է ինձ, կրակի մատնում՝
Չինգիզ խանի՛ պես,
Լենկ Թեմուրի՛ պես
Ու թուրքի՜ նման:

Տե՜ր աստված, դու բարի՛ն կատարես...

Իգությունն օդի սիրտս է խռովում,
Սիրտըս, որի մեջ, արյան հետ մեկտեղ,
Հոսում է նաև իմ խելքը հալված:
Ու վերջանում է ահեղ անձրևով
Ինքնամատնությունն անարգ ամպերի:
Սևերես երկինքն ինքնաբավորեն
Դառնում է իսկույն պարզերես կրկին
Ու մթնոլորտը՝ արդեն լուսոլորտ:
Եվ ժամանակն է կախվում օդի մեջ՝
Նո՜ւյն Չինգիզ խանի հորդայի նման,
Նո՜ւյն Լենկ Թեմուրի բանակի հանգույն,
Ու մորեխի պես միևնույն թուրքի՜:

Տե՜ր աստված, դու բարի՛ն կատարես...

Սառչում են դանդաղ
Երակներս ամեն ու ոսկորներըս.
Ո՜չ հալած խելքի,
Եվ ո՜չ էլ արյան հոսք ու ընթացում:
Ու վավերացված սիրո ճանկերից
Մնում է միայն մի սիրտ բզկտված՝

Արդեն ավերվա՛ծ,
Ավերվա՛ծ արդեն,
Որպես երբեմնի մի քաղաքամայր,
Որով անցել է տարանցիկ քամին՝
Նո՛ւյն Չինգիզ խանը,
Նո՛ւյն Լենկ Թեմուրը,
Միևնույն թո՛ւրքը:

Տե՛ր աստված, փառքըդ շա՛տ լինի.

19. XII. 62
Երևան

ԹԱԽԾԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քայլում եմ այնպե՛ս,
Ոտներըս կարծես լինեն ուրիշին,
Այնպե՛ս կանգ առնում,
Ուրիշն է կարծես կանգ առնում այստե՛ղ՝
Այս քաղաքային լճակի առաջ,
Ու նայում այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում:
Եվ այս վիճակը տևում է այնքան,
Մինչև որ հանկարծ
Մի ժանիքավոր-գիշատիչ քամի
Վրա է ընկնում
Ու քաղաքային այս խեղճ լճակն է հոշոտում քինով:
Եվ ջուրը կարծես չի՛ լալիս անձայն.
Ջուրը տենդո՛ւմ է...

Մի ժանիքավոր թախիծ էլ հիմա
Մխվել է իմ մեջ, ինչպես անձավում,
Եվ հոշոտում է իմ էությունը:

Ա՛խ, փախստական իմ էությունը պետք է ե՛տ բերել,
Մի կերպ ե՛տ բերել, թեկուզ խաբելո՛վ,
Թե չէ դատարկված իմ քարանձավում
Ամայությունն է կկրտում անվերջ,
Թե չէ արթնացած իմ չղջիկներն են աչքերիս կարկվում,
Իրենց լպրծուն թևերով կախվում իմ թարթափներից,
Իբրև գորշ կաթիլ հոգու արցունքի՝
Ա՛յն համաչափված կաթոցքի ձևով,
Որ ընդամենը լոկ քա՛ր չի ծակում,

Այլ համբր և խուլ վայրկյաններին էլ պարգևում է ձա՛յն
Եվ դրանով իսկ կետադրում է անտրրոհ օրը.
—Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ...

Ու եթե կետն ու գիծը միացնենք,
Դու ի՞նչ ես կարծում,
Մ;՛թե պլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա,
Որպեսզի... կրկի՛ն եղածը լինի
Ու ներկայանա անցյա՛լը դարձյալ:
Մի՞թե այս «միթե»-ն
Չի ծլարձակվում ո՛չ մի բարությամբ:

Չէ՛,
Երապախաբ լինելուց երբեք կավակ չի՞ ծնվում...

— Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ,—
Օտար մի ձեռք է կարծես միացնում կետն ու գիծն իրար
Եվ դրանով իսկ չափում է մի կերպ
Զսպանակաձև թախծի... մոտավո՛ր երկարությունը...

Ու ես զգում եմ ճառագայթների ճնշումն ինձ վրա
Եվ ծանրությունը՝ բիբերիս խորքում:

Ու ետ դառնալով քայլում եմ այնպե՛ս,
Ոտներս կարծես լինեն ուրիշին.
Նայում եմ այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում.
Ու եթե թախծում՝
Ուրիշի՞ սրտով...

Նույն ժանիքավոր-գիշատիչ քամին՝
Հոշոտված լճի դիակը լքած,
Իր մագիլներն է խրում գլխիս մեջ,
Նաև թիկունքիս,
Եվ չի՛ հասկանում,

Որ իմ գլուխը իմը չէ բնավ,
Եվ ուրիշինն է թիկունքը նաև...

Մանուկներն այստեղ խաղում են գնդակ,
Մանուկներն այնտեղ գնում են դպրոց,
Մանուկներն անվերջ երթն են խանգարում
Նախրի պես անցնող մեքենաների
Եվ մի մոլորվա՛ծ-շվարա՛ծ քեռու,
Որ քայլ է փոխում ուրիշի՛ ոտքով,
Եթե նայում է՝ ուրիշի՛ աչքով,
Եվ մտածելով գլխո՛վ ուրիշի՝
Առայժմ այն է հասկացել միայն,
Որ երապախաբ լինելուց երբեք կավակ չի՞ ծնվում...

16—17. II. 64
Երևան

ԳԻՇԵՐԱՄՈՒՏ

Ինքնաշարժերը,
Որ մինչև հիմա ասես կույր էին
Կատվի նորածին ձագերի նման,
Իրար ետևից աչքերն են բացում:

Ու լռությունը
Արդեն ամեն ինչ հրմշտորում է,
Որ իրեն համար կարգին տեղ բացի.
Եվ այդ տևական հրմշտոցից է,
Որ հեռացած են թվում լեռները:

Գինովանում է մենակությունը՝ խայամի նման,
Գինովանում ու հայհոյում... աստծուն:
Բարի շների հաչոցն էլ հիմա
Հաչոց չէ կարծես,
Աղոթք է՝ հղված հայհոյված աստծուն,
Որ հայհոյողին գթաբար ների:

Մութը դառնում է գրատախտակի ջնջոց սպունգե,
Մինչդեռ երկինքը·
Դանդա՛ղ պատվում է աստղաեղյամով:

Եվ սկսում են մարդիկ քիչ խոսել
Եվ ցածր խոսել,
Քանի որ լույսերն ու լապտերները
Ավելի լավ են խոսում-կրուցում:
Եվ ամեն մի տուն

Ապդանշան է ճամփում տիեզերք՝
Մանկական լացով.
Կանչով մայրական,
Մեքենաների,
Անասունների
Ասես կետգծված շչակ-բառաչով
Եվ, ամենից շատ, լույսերով այս նույն,
Որ մարում-վառվում-թարթվում են անվերջ,
Կարծես թե ինչ-որ մի նո՛ր Մորզեի
Նո՛ր այբուբենի համապատասխան:
Իսկ հետո,
Երբ որ մարում են արդեն ձայներն այս բոլոր
Ու լույսերն այս նույն,
Երևի նաև հասնում է պահը
Տիեզերական պատասխանների,
Որ ընդունում են մարդիկ... քնի մեջ՝
Մղձավանջի կամ երապի տեսքով:

Բարի երապը՝ ձե՛զ, սիրելինե՛ր,
Ու ձեր մղձավանջն՝ ի՛նձ, ձեր սիրելո՛ւն...

Նոյեմբեր, 1965
Ջանախչի

ՆԱՄԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Դու ինչ ես ուզո՞ւմ:
Դու շա՜տ բան կուզես,
Բայց ես-որտեղի՞ց քո ուզածը տամ:

Չե՜ս ուզում արև մի քառակուսի
Ու եռանկյունի մի լուսին, գիտե՜մ:

Դու ապառնիից մահու չափ հոգնել
Եվ ապառիկ ես ընդամենն ուզում
(Պատմություն կոչված անբերրությունի՞ց):
Իսկ ես քեզ ինչպե՞ս ապառիկն այդ տամ,
Երբ ի՜նքս եմ ուզում ապառիկ ուզել
(Իմ մեծահարուստ... համբերությունի՜ց):
Բայց դու մի՜ նայիր ինձ այդպես՝ ցաված.
Ես չեմ մերժում քեզ,
Ես նա եմ, հենց նա՜,
Ով մարդկանց մերժել չի՜ կարողանում...

Տե՜ս, գունափոխված ծառերը բոլոր
Իրենց սաղարթի ձուլածո ոսկին
Առանց կնգոցի մանրում են անվերջ,
Վերածում էժան թղթադրամի՝
Գնելով իրենց հանգիստ քնելու իրավունքը թանկ:
Ես թոռն եմ աշնան ու կտակառուն
Ու թույլ եմ տալիս, որ դու տեր դառնաս
Մի ամբո՜ղջ խտիտ թղթադրամի.
Բարո՜վ վայելես:

Կտրուկ քարափով վերջացող լանջը
Իր հնադարյան խվարով քարե,
Տե՜ս,
Համառում է կտրել երկնքի կապտաջիղ կողը:
Ու ես էլ ահա
Մեկնած մատների իմ աղեղնաձև-անմաշ սղոցով
Ջանում եմ կտրել մի պատառ աշուն.
Ա՜ռ, որ ձմռանը ցրտում չտխրես:

Քամին ավազից ու փխրուն հողից
Երեխայական լեռնապարեր է սարքում անընդհատ
Եվ դժգոհելով՝ երեխայի պես,
Հենց տեղն ու տեղն էլ սարքածն է քանդում՝
Քանդածը կրկին վերաշինելու նո՜ր ախորժակով:
Լիապորված եմ ես քամու կողմից,
Ու եթե կուզես՝ մի վայրկյան հետո
Սարքեմ ու տամ քեզ մի ո՜ղջ լեռնաշխարհ.
Քեզ համար ապրի՜ր
Եվ շնորհակալ մի՜ լինիր բնավ,—
Դրանով դու ինձ կվիրավորե՜ս:

Էլ ի՞նչ ես ուզում:

Իսկ թե հոգնել ես դու ապառնիից
Եվ ապառիկի հույս ունես դարձյալ,
Ոչի՜նչ չես շահի ինքդ դրանով,
Իսկ ես դրանից շա՜տ եմ վնասվում,
Քանի որ ցավով տեսնում եմ կրկին,
Որ մարդկանց առաջ կո՜ւր է բացվելիս,
Դաշտի պես փռվել ու տարածվելիս,
Դարձյա՜լ չեն տեսնում ու չեն ճանաչում,
Թաքստոցներ են փնտրում կանաչում...

Թե քեզ չես խղճում՝ ինձ խղճա գոնե
Ու խոսքիս վերջին նվազը լսիր.

Երբ որ աստղերը
Արդեն հոգնում են անշարժությունից,
Վերևից իրենց նետում են ջուրը,
Որ բարի քամին ման ածի իրենց:
Դո՛ւ,
Որ հոգնել ես քեզ միշտ պատեպատ խփելուց,
Արի՛,
Ապրիր հոգուս մեջ,
Որ չունի պատեր. որոնց դու խփվես:
Ապրի՛ր հոգուս մեջ,
Ուր չես դեգերի նաև մտովին,
Ուր դու կնստես ու կիշխե՞ս անգամ
Ա՛յն կարմանալի առատության հետ,
Որ այնտեղ տե՞ր է, արքայից արքա՛:

Ի՛նքդ հասկացիր
Եվ ուրիշների՛ն դու լավ հասկացրու
Որ ոչի՞նչ-ոչի՞նչ ձեզ տալ չեմ կարող.
Ես լոկ կարող եմ ձեզ սիրե՞լ... այսքա՛ն

12. II. 64
Երևան

ՊԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Չգիտեմ՝ ի՞նչ անեմ:
Պատեպատ եմ վարկվում:
Հապար բան եմ տնսողում՝ կրայի նման,
Ու հասկացած նրա ինչ-ինչոցը՝ կրկին
Պատեպատ եմ վարկվում:
Չգիտեմ՝ ի՞նչ անեմ:
Լավ է ելնեմ-գնամ, տամ փողոցին տուրքը
Կամ հավաքես հարկը նույն այդ փողոցներից:
Սակայն ինչի՞ գնամ, եթե կարիք չունեմ:
Եվ իմ տասը մատով իմ կույգ աչքի համար
Բանտի ճաղերի պես ինչ-որ բան եմ սարքում՝
Ճակատը սեղմելով մտածում եմ,
Թե ի՞նչ անեմ հիմա: Եվ բանտային
Ճաղի արանքներից լուռ հածում է
Իմ հայացքը տարտամ: Ջղայնացած հպում,
Աչքերս ապատում եմ ճաղից տասնամատ՝ցա.
Թո՛ղ որ ապրեն ապատ,
Ո՞ւմ են վնաս տվել:
Եվ աչքերս էլ իսկույն շան պես վապում,
Դեմ-դիմացիս պատ ու ցանկապատին
Փակցրված հայտերը և ապդերը բապում
Հոտոտում են, շան պես, որ ինձ օգնեն
Իմ երեկոն մի տեղ վաճառելու համար՝
Մի թատրոնի
Կամ թե
Մի համերգի տոմսով...

«Երբ ժամանակ լինի» ասելով չէ՞ր,
Որ անցավ մեր կյանքը,
Մինչդեռ այս վայրկյանիս՝
Ժամանակի վիժվա՜ծք և գործի սո՜վ...
Եվ իմ ներսի ձայնը
Խաղաղությամբ մի բութ
Սկսում է ճնշել ու մամլել ինձ այնպե՜ս,
Որ ես քիչ է մնում «հե՛յ-հե՛յ» գոռամ՝
Նախրապանի նման կամ հովվի պես.
Թո՜ղ իմ հոտ ու նախրի մտքովն անգամ չանցնի,
Թե անտեր են իրենք:
«Հե՛յ-հե՛յ» կանչելն, անշո՜ւշտ,
Նո՛ւյնպես գործ է:
Բայց ես հո չեմ կարող
Անվերջ «հե՛յ-հե՛յ» կանչել:
Ուրի՛շ գործ եմ ուզում:
Իսկ ի՞նչ:
Այդ էլ գուցե աստվա՜ծ գիտի...

Պատացել է մութը արդեն վաղուց:
Ես հայացքով կարկվում նրա խավար պատին՝
«Լույս կվարթ» եմ երգում իմ մտքի մեջ
Եվ «Առավոտ լուսո»:
Սա էլ գործ է, հարկա՜վ,
Սակայն շատ լո՜ւրջ մի գործ,
Իմ ուժից վե՜ր մի գործ:
Եվ իմ ձեռքով, ահա՜, խմբավարի նման,
Կեղծ նոտայի վրա ինքս եմ ինձ ընդհատում,
Եվ այդ ինքնասաստման սուր շարժումից
Ձեռքերս սկսում են լուռ մտածել...

Ձեռքերս սկսում են լուռ մտածել,
Որ ձեռքերը (իրե՜նք) ունեն կյանքում
Շա՜տ ավելի գաղտնիք, քան թե սիրտը՝
Այդ ինքնագոհ-գոռոզ-մեծամիտը...
Ու ձեռքերս հիմա չեն թվում ինձ

Ինչ-որ հավելվածներ անհարկավոր:
Ես իրար եմ կարկում նրանց ամուր
Ու թողնում եմ այդպես.
Թող կո՛խ բռնեն
Կամ աղոթե՛ն գուցե,— ի՜նչ կամենան:
Իսկ ոտներդս,
Խանդո՜տ այս ոտներդս,
Ինձ հանում են տեղից և ստիպում քայլել՝
Հավանաբար, թաքուն մտածելով,
Թե դրանից աչքիս կբարձրանա
Նաև իրե՜նց հարգը...

Նո՛ւյն վայրկյանին
Ես հիշեցի հանկարծ, որ առավոտ կանուխ
Բեռնամեքենայով ձիեր էին տանում.
Հասկանո՞ւմ եք, այո՜,
Չե՞ք հասկանում:
Այո՜, ձիե՜ր՝
Նրա՜նց,
Որ բյուրավոր դարեր
Իրենց մեջք ու թամբով ամե՜ն ինչ են տարել,
Ողջ մարդկային ցեղի պատմությունը կրե՜լ,
Իրենց սմբակներով պատմությունն այդ գրե՜լ,
Նրա փոշին սրբել իրենց պոչո՜վ:
Ահա նրանք, այո՜, բեռ են դարձել հիմա
Այս քո փոշտացող մեքենայի համար,
Որ և այսօր, խնդրե՜մ, քո դարավոր
Փոխադրականդ է փոխադրրում...

Բեռնամեքենայի թափքում ձիե՜ր,
Վախից կծի՜կ դարձած, դողդողացո՜ղ ձիեր,
Ամեն շրջադարձի ու կեռմանի վրա
Մե՜կ պես (մարդո՜ւ նման) ճկվո՜ղ-թեքվո՜ղ,
Մե՜կ պես (և ավելի՜) կգուշացո՜ղ ձիեր...
Ես ձեզ այդ վիճակից ինչպե՞ս հանեմ, ձիե՜ր:
Լացը կսպեմ ու ձեր... ցա՜վը տանեմ, ձիե՜ր...

Եվ իմ ներսում,
Որտեղ պարապությունն արդեն
Իր պյուռոսյան տխուր հաղթանակն էր տոնում՝
Տեսնելով իր գլխին մի կեղծ դափնեպսակ,
Իսկ իր չորսբոլորքում՝ ստույգ դիեր,—
Նո՛ւյն իմ ներսում հիմա, այս վայրկյանից,
Վրնջում են ձիե՛ր,
Խրխնջում են ձիե՛ր,
Դոփո՛ւմ,
Բերաններից կրա՛կ թափում
Ձիե՛ր...
Ձիե՛ր,
Այսքան ձիե՛ր...

Եվ ոտներս, իբրև յուրատեսակ «մեղա»,
Ինձ կտրում են փափուկ մահճակալից,
Տանում-նստեցնում են ա՛յն աթոռին չորուկ,
Որի առաջ կա մի... տանջված գրասեղան:
Տանում-նստեցնում են այդ աթոռին չորուկ,
Որպեսզի... ե՛ս հիմա ձիեր տեղափոխեմ,
Ձիեր տեղափոխեմ ի՛մ միջոցով— ձե՛ր մեջ,
Որ խրխնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Որ վրնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Դոփո՛ղ,
Բերաններից կրա՛կ թափող
Ձիե՛ր...

31. X. 65
Ջանախչի

ԴՐՄԱԿՆԵՐ



ՄԻԱՉՔԱՆԻՆ

Մի աչքով եմ նայում կյանքին:
(Երկրորդ աչքը ապակուց է):
Եվ մի հատիկ իմ այս աչքով
Շատ եմ տեսնում,
Իսկ երկրորդով՝ ավելի շատ,
Որովհետև
Առողջ աչքով ես տեսնում եմ,
Իսկ կույր աչքով... մի՞շտ երապում...

14. XI. 63
Երևան

ՄԻՈՏՆԱՆԻՆ

Մի ոտ չունեմ,
Ուստի և ձեր երկուսի տեղ
Երեքն ունեմ:
Երկու ոտով,
Ինչ դուք չունեք և հեշտ կոչում եք «հենակներ»,
Ես մայթերն եմ կետադրում,
Որ մարդկային կյանքի վեպը դյուրին կարդա
Մայթագրեր ընթերցելու ընդունակը,
Իսկ երրորդով,
Որի համար ինձ կոչում են միոտնանի,
Երրորդով էլ տնտեսում եմ տան ծախսերը՝
Ձեր կույգի տեղ միշտ կենտ կոշիկ պատվիրելով:

Ձե՞ք նախանձում...

[1963]
Երևան

ՀԱՐԲԵՑՈՂԸ

Նա հենվել է հին սեղանին արմունկներով
Ու ճոճվո՜ւմ է —ու ճոճվո՜ւմ է
Արդեն դատարկ գավի վրա,
Ինչպես... ահեղ մի անդունդի...

Անթարթ փայլը
Իր աչքերի ճմոթոր-ված բոլորակի
Ասես լինի արտացոլքը մի հեռավոր մոլորակի,
Որ չունի լույսն իր սեփական...

Եվ իր գլխով,
Ուր փլված է միջնորմ ամեն
Ու ջարդված է ամեն փական,
Պտտվելով դեգերում է այն քառսը,
Որ եղել է ծնող մայրը
Այդ միևնույն մոլորակի...

Իր դեմ-դիմաց տնկված շիշը
Պատրաստ է, տե՜ս,
Կարծես երկինք սլանալու՝
Մի նորօրյա հրթիռի պես,
Որ վառելիք չունի սակայն...

Կրծած-թողած դեղին մեջքը աղաձկան
Շա՜տ է նման սղոցաձև լեռնապարի,
Որ սրա պիշ-չոված աչքում
Մեծանում է վայրկենապես
Ու... ճոճվո՜ւմ է,
Իսկ փուլ գալիս
Սրան՝ հերթով՝ կախ է տալիս
Սղոցաձև ատամների կեռ-կատարից,

Կախ է տալիս,
Բայց չի խեղդում,
Որովհետև փոխարկվում է նորից ձկան...

Իսկ իր դիմաց հաց իսկ չկա,
Այլ փշրանքներ չոր ու ցրիվ
Հին սփռոցի ամպած-վամպած դեմքի վրա՝
Աստղերի պես...

Դեռ թեքված է
Ու ճոճվում է վարտ՜ւց դատարկ գավի վրա,
Ինչպես... ահեղ մի անդունդի:
Եվ գավի մեջ
Նա թերևս պարզ տեսնում է
Մի ցամաքած հատակ... ծովի,
Հենց ա՜յն ծովի, որ կստացվեր,
Եթե կյանքում իր կոնծածը
Կուտակեին մի տեղ հանկարծ:
Մինչդեռ հիմա՝ դատա՜րկ մի շիշ,
Որ սեղանը դարձրել է
Հրթիռարկման հրապարակ,
Եվ մի դատա՜րկ գավաթ ցմփոր,
Որի վրա,
Ինչպես ահեղ մի անդունդի,
Ինքը թեքվել ու ճոճվում է:

Ու ճոճվում է... լոկ կե՜նտ մի գավ բան խմելուց...
Եվ ինքն անգամ չիմանալով՝
Երազում է... հրապետի մի կե՜նտ գնդակ,
Որով իր դեմ տնկված շիշը, ինքն էլ մեջը,
Վեր կսուրար դեպի երկինք
Ու կտանե՜ր-կիասցրնե՜ր
Իր իսկական... հայրենիքը՝
Քառսային միգամածը...

30. III. 67.
Արվնի

ԽԵՂԿԱՏԱԿԸ

— Որտե՞ղ են ապրում քամիները:
— Պալատների մեջ:
Եվ, անշո՛ւշտ, մեր իսկ ռունգերում:

— Որտե՞ղ է մեռնում լռությունը:
— Քարոզների մեջ:
Եվ բռնադատված մեր իսկ ունկերում:

—Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք:
— Մեր հին թշնամու եղունգների տակ,
Մկրատի՞ կարոտ կեռ եղունգներում:

— Որտե՞ղ են մեռնում բոլոր կուռքերը:
— Ծափ ու ծնծղայի ծանրության ներքո,
Նաև խունկերում:

— Իսկ վորանում է մեր խելքը որտե՞ղ:
— Ո՛չ գանգում,
Այլ մեր վերքերո՞ւմ:

— Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը:
— Մե՛ր,
Եվ, ավա՛ղ, ո՛չ մեր ձեռքերում...

25. X. 62
Երևան

ԾԱՂՐԱԾՈՒՆ

Վճռել եմ այսօր ձեզ վվարճացնել...

Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեմ
Կամ կոպ տամ դաշույն
Ու կլլածիս տեղ
Բերնիցս հանեմ թաշկինակ կամ ծիտ,
Ինչպես անում են
Շատ սովորական ձեռնածուները:

Եվ գլխիս վրա չպիտի դնեմ
Մի հսկայական երկաթե գերան
Ու կախ տամ վրան
Ճութ-ճութ կիսամերկ կանայք միրունիկ,
Ինչպես անուս են, գիտե՛ք, կրկեսում:

Եվ ո՛չ էլ պիտի ես արջ պար ածեմ
Մի կույգ շնիկի հաչոց-նվագով...

Կարող եմ նաև դդումից սարքել
Արև՝ թե կուպեք, թե կուպեք՝ գլուխ...
Սատուռնից սարքել լայնեկր գլխարկ
Եվ տեղն ու տեղն էլ նվիրել սիրով
Ծխախոտագործ մի ընկերուհու...
Իսկ գլխարկից էլ կարդինալ սարքել
Կամ մարշալ
Եվ կամ...
Ախար, բարեկա՛մ,
Ախար ինձ համար ո՛չ մի բան չարժի

Փայտին տալ, ասենք, ուղեղի ծալքեր,
Ուղեղից... հավի համեղ կուտ սարքել,
Կուտից՝ կերակուր հասարակական...

Հույս ունեմ, որ դուք
Ինձ հավատացիք,
Ուստի թույլ տվեք՝ շարունակելով՝
Ձե՛կ հավատացնել— ի՛նձ վիատեցնել,
Որ ճշմարտություն իսկույն ասելը
Դարձել է մի բան՝ այնքա՛ն հասարակ,
Որքան... Ներեցե՛ք... որքան... միպելը:
Ուստի ասե՛մ ձեզ՝ բարեկամների՛ս,
Որ այսու և ետ բացառված հաշվեք
Հիվանդությունը երիկամների՝
Կա՞պ կոչվի, թե՞ մապ,
Քա՞ր կոչվի, թե՞ մար,
Մեկ չէ՞ ձեզ համար...
Ուստի ո՞նց չասեմ բարեկամներիս,
Որ այսու և ետ պետք չէ սուտ ծախել,
Այլ, ինչպես ինքըս, մեջքիս պոչ կախել
Ու... քշե՛լ կծող ճանճերին բոլոր՝
Դրանք կոչվեն մի՞տք, մտատանջությո՞ւն,
Թե՞ հոգետագնապ,—
Մի՞թե նույնը չէ...

Եվ ես,
Վերջապե՛ս,
Էլ ինչպե՞ս, ինչպե՞ս
Ձե՛կ վիատեցնեմ— ի՛նձ հավատացնեմ,
Որ ահա այսպե՛ս,
Ճի՛շտ ու ճի՛շտ այսպես
Մ՛յն դեղին ցուրը,
Որ ուզում էի աշնանը գնել,
Կերավ ա՛յն կանաչ բանջարեղենը,
Որ ուզում էի գարնանը ցանել:

Ի՞նչ չտեսություն,
Ի՞նչ չտեսություն...

Ուրիշ ի՞նչ:
Ոչի՞նչ:
Ոչինչն էլ՝ քո պինչ,
Քո պինչն էլ՝ իմ պոչ
Եվ... ցտեսությո՞ւն...

15 և 20. III. 67
Արվնի

ԽԱՂԱԼԻՔ ՍԱՐՔՈՂԸ

Ես կարող էի ամեն տեղ լինել
Եվ ամեն տեղ էլ ես կարող էի ճչալ.
«Չե՛մ ուզում» և կամ «Ուզում եմ»:
Բայց ես ամեն տեղ չեմ եղել բնավ
Ու չեմ էլ լինում,
Իսկ ուր լինում եմ՝
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»:
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»
Եվ իմ չասածը թողնում ամենքին,
Որ նրանք հետո տնտղե՛ն-շոշափե՛ն:
Ու երբ հասկանան,
Թե ինչ են իրենք տնտղել-շոշափել՝
Այլևս չասել չեմ կարողանա
Ու կասեմ.
— Գիտե՞ք,
Վաճռել եմ դառնալ խաղալիք սարքող
Եվ, հավատացե՛ք, իրո՛ք կդառնամ:

...Աշնան պաղ քամուց ծառերն են շարժվում,
Ինչպես որ մարդու գլխում շարժվում է
Միտքը ճյուղավոր,
Եվ ցերեկային ամպած երկնքից
Ներքև են թափվում
Աստղերի պաղ-պաղ կաղապարները,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»:
Ես խաղալիքներ կձուլեմ այդ պաղ կաղապարներով:
Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուռ կասեմ. «Չասե՛ս»,

Իսկ ի պատասխան հարցնողի հարցի
Ես կասեմ. «Ողջո՛ւյն»:
Չգիտեմ, թե նա իմ մասին արդյոք ի՞նչ կմտածի,
Իսկ նույն այդ պահին չեմ կարողանա ես չմտածել,
Որ կար մի աղջիկ...
Եթե ես ասեմ, որ մոռացել եմ անունը նրա,
Ինձ հավատացեք այնքան, որքան որ
Յուրաքանչյուրդ է հաստատ հավատում
Աշխարհի տարբեր լրագրերին:
Եվ ամեն անգամ, երբ ես ուզում եմ
Աշխարհին հայտնել անունը նրա,
Ինքս ինձ դարձյալ ասում եմ. «Չասե՛ս»:
Իսկ այդ աղջիկը, գիտե՞ք ասում էր.
«Երբ Բեթհովեն եմ լսում՝ թվում է,
Թե ես քայլում եմ ծովի վրայով»...
Ես ունեմ նաև ճի՛շտ կաղապարը և այդ աղջկա:
Տա՛ք կաղապարը:
Ու խաղալիքներ ես պիտի ձուլեմ ա՛յդ կաղապարով,
Տա՛ք կաղապարով:

Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուռ կասեմ. «Ասա՛»:
«Դատա՛րկ բան,— կասեմ,—
Ընդամե՛նն արժի մի... անցած մի կյա՛նք»...

Այսպես՝ կարող եմ ամե՛ն բան սարքել.
Այդ իմպեսների մասին են ասում,
Թե մարդու տղան ոսկի ձեռք ունի:

Եվ ամեն անգամ,
Երբ ես նայում եմ իմ այս ձեռքերին,
Իմ ձեռքերը միշտ ինձ ասում են. «Հը՞»,
Որ հա՛րց չէ բնավ,
Այլ պատասխան է իմ լռին հարցին:
Իսկ ամեն անգամ
Ես էլ ձեռքերիս նայում եմ այնպես,

Ինչպես նոր պեղած իրին է նայում հնաբանն անփորձ,
Եվ ասում եմ. «Հա՛»,
Որ պատասխա՛ն չէ, այլ հարց է շրջված։
Եվ իմ ձեռքերը գլուխ թափ տալիս,
Իսկ իմ գլուխը ձեռքով է անում,
Ու... հասկանում եմ, որ ես չե՞մ կարող
(Եվ աշխարհումըս ո՛չ ոք չի կարող)
Լոկ մի՛ բան սարքել՝
Ա՛յն միայն,
Ինչին ճշմարտություն են կոչել աշխարհում։
Լոկ ա՛յդ չի սարքվում,
Թեպետ և անվե՛րջ, դարե՛ր շարունակ
Ջանում են սարքել
Անունով աստծո՛ւ,
Տիրակալների հրամաններո՛վ,
Պարանո՛վ,
Որ լոկ իր պնդությունն է որոշում
Մարդկանց պարանոցներին.
Ջենքո՛վ,
Որ մարդկանց կրծքերի վրա
Ուսուցանում է կետադրություն։
Սարքո՛ւմ են այսպես։
Դարե՛ր շարունակ։
Անդուլ սարքում ա՛յն, ինչ որ չի՛ սարքվում,
Ուրեմըն նաև չի՛ կարող քանդվել։
Սարքո՛ւմ են։
Իսկ ես ումի՞ց եմ պակաս։
Եվ... վճռվա՛ծ է.
Ե՛ս էլ այսուհետ
Ճշմարտություն եմ սարքելու, և շա՛տ։

Ու պիտի ծախե՛մ,
Ծախեմ ամենո՛ւր՝
Ուր կամենում են թե չեն կամենում.
Խաչմերուկներո՛ւմ
Ու խոնարհների դռների՛ առջև,

Մայթերի՛ վրա
Եվ արձանների պատվանդանների՛ն,
Թե՛ գրքերի մեջ,
Թե՛ ամբիոններից։
Ու երբ ինձ մարդիկ հարցնեն. «Ի՞նչ արժի»,
Կպատասխանեմ արդեն ո՛չ թե ես,
Այլ այն խաղալիք աղջիկը։
Եվ նա
Կասի ոչ այլ ինչ,
Քան հենց իր գինը.
«Դատա՛րկ բան,— կասի,—
Ընդամե՛նն արժի մի... անցած մի կյա՛նք»...

...Ու պիտի որ ես, ինքնե՛րդ էլ գիտեք,
Շա՛տ հարստանամ իմ առևտրով։
Եվ այնքա՛ն պիտի ես հարստանամ,
Որ... համերգի տոմս առնեմ ու...
...գնամ Բեթհովեն լսեմ,
Եվ ինձ էլ թվա,
Թե ես քայլում եմ ծովի վրայով...
Իսկ թե այդ պահին
Գարո՞ւն թե աշուն կլինի-դրսում,
Մի՞թե նույնը չէ։ Եվ ի՞նչ բանն է իմ։
Մի՞թե նույնը չէ և ի՞նչ բանն է իմ,
Թե քամուց պիտի ծառերը շարժվե՞ն,
Ինչպես որ մարդու
Գլխում շարժվում է միտքը ճյուղավոր.
Եվ ցերեկային ամպա՞ծ թե չամպած
Երկնքից պիտի թափվե՞ն-չթափվեն
Գունեղ աստղերի պաղ կաղապարներ,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»...

Ու տուն գնալիս
Եթե ինձ հանկարծ մեկն ասի. «Բա՛րև»,
Ես ի պատասխան կասեմ. «Ի՞նչ արժի»։
Թե պատասխանիս վրա ծիծաղեն ինչ-որ աղջիկներ,

Որոնց անունը չգիտեմ իրոք,
Իբրև պատասխան ես կասեմ.
«Չունե՞մ ձեր կաղապարը»:

Եվ կխոնարվեն սրանք իմ շուրջը.
Մարդիկ սիրում են միշտ խոսեցընել նրանց,
Ում իրենք խելառ են հաշվում:
Եվ կկամենան իմանալ իմ ո՞վ կամ ի՞նչ լինելը:
Ձեռները նորի՛ց ինձ կասեն. «Ձասե՞ս»:
Ես ի՛նքս էլ, ի՛նքս էլ ինձ կասեմ. «Ձասե՞ս»:
Սակայն խաղալիք սարքող վարպետը
Ի՛մ իսկ բերանից,
Ի՛մ իսկ բերանով
Արդեն կբռռա՞ ու կկրկնի՛
Հնավաճառի ելևէջումով.
«Ձշմարտությո՞ւն եմ ծախում, սարքովի՛»...

24. X. 62
Երևան

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍԻ ԳԼԽԱՎՈՐԸ

Լսո՞ւմ եք ինձ:
Բավակա՞ն է,
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Հանեցե՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարոտած օդն ապտակի
Ձեր իսկական դեմքը տխեղծ,
Եվ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դեմքը խեղճ,
Որի ծանոթ նմանությամբ են հորինված
(Մի՞ մոռացեք) աստվածները (մի՛ մոռացեք)...

Ամաչեցե՛ք աստվածներից
Եվ հանեցե՛ք դիմակներդ,
Բավակա՞ն է:

Ես չեմ կարող նշել ճշտված թվականը
Եվ ժամանակը ճշգրիտ,
Բայցևայնպես այս հանդեսը,
Որ սկսվել է շա՞տ վաղուց,
Ավարտի է հասնում արդեն...

Բարոյական այն պարապը,
Որ շատ վաղուց
Ամենքիս մեջ հորանջում էր
Կարծես անչար և անվնաս,
Հիմա արդեն չարչարում է ու տանջում է՝
Վերածվելով մի անհատնում կկոտոցի...

Եվ թույն-փոշին ա՛յն խարտոցի,
Որ բանում է գիշեր ու կոր,
Բանում ինքնին և ինքնավար,
Նո՛ւյն թույն-փոշին հետևհետ
Ամե՛ն ինչի վրա թառում,
Խառնվում է ամե՛ն ինչի՝
Հացի՛ ,
Երգի՛,
Մտքի՛,
Շնչի՛:
Եվ խարտվածքի հոտ կփչի
Շուտով արդեն ամե՛ն ինչից
Հացի՛ց,
Երգի՛ց,
Մտքի՛ց,
Շնչի՛ց...

Հանեցե՛ք ձեր դիմակները,
Որ գեթ մի քիչ դյուրին շնչե՛լ կարողանաք...

Ինքնե՛րդ ասեք.
Բավական չէ՞
Դուք ձեվանից ձեվ գողանաք
Եվ տեղն ուրիշ մեկին դնեք ձեր փոխանակ:
Բայց չափազանց ճշտապահ է արեգակը.
Երբ որոշյալ ժամը հասնի՝ կլուսանա:
Ձեր արթնացումն այնժամ արդեն
Կնմանվի մի պայթյունի՛,
Մի պայթյունի՛,
Ձե՛զ եմ ասում,
Որից հետո
Լռությունն ու Փոշին պիտի գոտեմարտեն
Ձգության գահի համար...

Ինչ-որ բանի
Ինքը աշխարհն է սպասում,

Ինչպես մի օր, չիմանալով,
Սուսաննան էր մերկ սպասում... ծերուկներին...
Իսկ դուք եկեք մի՛ սպասեք.
Հանեցե՛ք ձեր դիմակները,
Ճանաչեցե՛ք ինքներդ ձեվ
Վերջի՛ն անգամ,
Վերջի՛ց առաջ...

Պարն ավարտվել,
Ու խաղն արդեն վերջանում է:
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Ուշացումի ամե՛ն պահից
Իմ վիճակը
Ձեր փոխարեն լրջանում է,
Որովհետև ինձ է տրված, դժբախտաբար,
Հիշեցնելու ձեվ վերստին ու վերջապես,
Որ ուշացած արթնացումը
Կնմանվի մի պայթյունի՛,
Որից հետո
Լռությունն ու Փոշին պիտի գոտեմարտեն
Ձգության գահի համար...

Դուք առայժմ դեռ լսում եք,
Ուստի նաև ի՛նձ լսեցեք
Ու հանեցե՛ք դիմակներդդ.
Արդեն խաղը վերջացա՛ծ է...

Իսկ եթե դեռ պիտի խաղաք,
Է՛հ, խաղացե՛ք, խնդրե՛մ, ինչքան սրտներդ ուզի.
Խաղ խաղացեք ինքներդդ ձեվ և իրար հետ,
Բայց... առանց ինձ:
Ես այլևս չեմ մասնակցում
Ո՛չ թե խաղին,
Այլ մինչև իսկ և մատաղի՛ն,
Թե մորթվողը

Մարդկայնություն-մարդկություն է...
Ու ես արդեն ո՛չ բողոքում,
Ո՛չ ողոքում,
Ո՛չ էլ կոկորդս եմ կեղեքում:
Ինչի՞ համար
Կամ ո՞ւմ:
Հիմա
Ես ջանում եմ լոկ... չլինե՛լ՝
Ամբողջովին դառնալ... դիմա՛կ:

1—2. IV. 67
Արկնի

ԻՐԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մասն Ա

ԻՐԵՐԻ ԴԵՄՔՆ ՈՒ ԴԻՄԱԿԸ

Իրերի դե՛մքը:
Իրերի դե՛մքը...

Իրերն ապրում են մի բոլորովին անծանո՛թ կյանքով,
Լոկ իրե՛նց համար,
Մի՛միայն իրենց:
Մինչդեռ մե՛կ համար
Նրանք պարկապես թատրոն են խաղում՝
Հե՛նց որ, քանի դե՛ռ նայում ենք նրանց:
Իսկ երբ չե՛նք նայում,
Հենց որ չենք նայում՝
Նրանք հանում են դիմակներն իրենց
Ու ծաղրում են մեկ՝ լեկու հանելով:
Իսկույն հանում են դիմակներն իրենց
Ու նայում իրենց դեմքով իսկական,
Որ խաղացկուն է (հավատացե՛ք ինձ),
Եվ արտահայտի՛չ,
Եվ խոսո՛ւն-խոսո՛ւն՝
Քամիների հետ վիճող ծառի՛ պես,
Լեռնային գետի՛
Ու գեղեցկուհո՛ւ...

Իրերի դե՛մքը:
Իրերի դե՛մքը...

Ա՛յ եթե լիներ մի ճար ու հնար՝
Նկարել նրանց հենց ա՛յն պահերին,
Երբ նրանք իրենց դիմակն են հանում

Ու դրսևորվում բոմն տեսքով իրենց:
Նկարել թաքո՛ւն, ինչ-որ անկյունի՛ց,
Անակնկալի՞ բերելով նրանց.
Նկարել նրանց... կոճակի ծակո՛վ
Կամ ինքնահոսի անտես սողանքո՛վ.
Նկարել այնպե՛ս,
Ինչպես որ ծածուկ կինոաստղի են լուսանկարում՝
Օրը ցերեկով տաք քնքշություններ փոխանակելիս,
Հանցագործին են լուսանկարում՝
Իր հանցանքի հետ գրկախառնված,
Եվ Լուսնին՝ իր մութ— հակառակ կողմից...

Օ՜ թատերական դիմակներ հագած իրերն այս բակում...
Ես համոզվա՜ծ եմ, ես հաստա՜տ գիտեմ,
Նրանք ինձանից վախենում-քաշվում-ամաչում են միշտ,
Ինչպես մերկ կինը՝ անսպասելի հայացքից օտար:
Եվ ամբողջ կյանքում նրանք մշտապես մի բան են անում՝
Դիմակ են դնում-դիմակ են հանում,
Ի՜նչ է թե իրենց դեմքը չտեսնեմ ավելորդ անգամ:
Եվ նրանք, գիտե՛մ, մահս են ցանկանում,
Որպեսզի... ապրեն առանց դիմակի...

Բայց երբ կատարվի տենչանքը նրանց,
Նրանցից ոմանք
(Կամա թե անկամ, ուրախ թե տրտում)
Կուղեկցեն իմ դին
Եվ ինձ հետ մեկտեղ կթաղվե՛ն անգամ,
Ինչպես որ անցած դարերում հին-հին
Հոմանի, ծառա, ճորտ էին թաղում
Իրենց վախճանված տիրոջ հետ մեկտեղ...

Անդիմա՞կ արդյոք թե դիմակ հագած
Իրերն եմ սիրում ետմահո՛ւ տիրով,
Սիրում եմ նրանց՝ ի՛մ իսկ ճորտերին...

28. X. 65
Չանախչի

Մասն Բ

ԻՐԵՐԻ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարծում եք, թե մե՞նք, մե՞նք ենք մտովին
Լուռ մենախոսում մեն-մենության մեջ:
Ո՛չ.
Մինչև անգամ մեր լռին խոսքում
Իրերն են մեզ հետ կրուցում անվերջ,
Այդ բարինե՛րը,
Որովհետև մեզ խղճում են նրանք:
Եվ այդ պահերին
Կենդանանում է
Ու շնչավորվում ամեն իր այնպե՛ս,
Որ մինչև անգամ մենության մեջ էլ մեզ մենակ չկգանք
Եվ չապրենք կիսատ ու պռատ կյանքով:
Նրանք բարի են
Ու խղճում են մեզ՝
Մեն-մենակներիս:

Եվ մենակության այդ պահերին է,
Որ մենք չենք ցրվում չորս կողմի վրա՝
Սալահատակին վերևից ընկած կույր կաթիլի պես,
Այլ ներամփոփվում,
Կենտրոնանգվում ձախից ու աջից
Եվ ստանում ձևն ա՛յն մսե խաչի,
Որ ունի մարդը,
Եթե փորձում է թռչել կամ լողալ:

Իսկ մենության մեջ մարդն ի՞նչ էլ անի՝
Թռիչք չէ՞ կամ լող:

Իսկ մենության մեջ՝ լողա՞ս թե թռչե՞ս,
Մե՞կ է՝ չլռել չե՞ս կարողանա...

Ու լռությունը,
Որ համատարած մի ականջ է լոկ
Եվ ունի միայն մե՞կ կգայարան՝ լոկ լսողություն,
Այդ լռությունը ուռչում է անվերջ,
Ասես մանկական փուչիկի նման,
Լցվելով ուռչում-ուռչելով լցվում
Մեր անլսելի խոսք ու կրույցով
Ու հետզհետե դառնում վիթխարի՞ մի օդապարիկ,
Որ եթե հանկարծ կամենա պոկվել՝
Մե՞կ էլ, մեր տո՛ւնն էլ վերև կհանի
Ու—թի՞ռ—կտանի՞...

Բայց լռությունը,
Որ համատարած մի ականջ է լոկ,
Եվ ունի միայն մե՞կ կգայարան՝ լոկ լսողություն,
Որքան ուռչում է՝ թանձրանում նույնքան
Ու դառնում կարծես
Մեկ համար մի նո՞ր՝ երկրո՞րդ... հայրենիք.
Հայրենիքի պես չփոխատրվող,
Հայրենիքի պես չփոխադրվող...

Դրսում
Երևի աստղերն են ելնում՝ ողջ շքախմբով,
Իջնում է նորից
Մի ճշմարտապես աստվածաշնչյան գիշեր
Պարզունակ ու նույնքան խորունկ,
Որ ով ուժ ունի՝ վայելի իրեն:
Դրսում
Երևի կենտ-կենտ լույսերը փորձում են խախտել
Նախապատմական վեհ լրջությունը Մեծն Խավարի:
Դրսում...
Մե՞կ ինչ, թե ի՞նչ է կատարվում դրսում:
Մենք ներսում

Մենակ ենք, բայց և մենակ չենք կարծես.
Իրերը բարի
Ամե՞ն ինչ մեր շուրջ կենդանացնում են ու շնչավորում,
Որպեսզի... մենք էլ հասնենք հենց իրենց ասքին ու փառքին.
Թե իր են իրենք,
Մենք էլ՝ մենության ժամին ահարկու,
Մենք էլ՝ իրենց պես՝ դառնանք իր,
Այսինքն՝ իր—ականանանք:

28. X. 65
Ջանախչի

Մասն Գ

ԻՐԵՐԻ ԴԱՏՆ ՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ

1

Մենք դատավոր ենք ամենքըս էլ մի քիչ:
Եվ մենք դատում ենք ու դատավարում
Յուրաքանչյուր օ՛ր,
Նույնիսկ ամեն ժա՛մ:
Եվ մենք դատում ենք՝
Մեր գլխի թեթև թափահարումով,
Ձպոցով աչքի,
Խեթմամբ հայացքի,
Հոնքերի խաղով, ուսի թոթափմամբ,
Աջի կամ ձախի ա՛յն շարժումներով,
Որոնք օդի մեջ արձանագրվում
Ու կարդացվում են ոչ ավելի վատ,
Քան ամեն տեսակ ուրիշ փաստաթուղթ:

Մենք դատավոր ենք ամենքս էլ մի քիչ:

Ես էլ եմ մտնում այդ ամենքի մեջ
Ու դատավոր եմ նաև ե՛ս մի քիչ:
Եվ այսօր պիտի ես դատեմ... մարդկա՞նց:
Ո՛չ, այսօր պիտի ես դատեմ իրե՛ր
Ու դատապարտեմ առարկաների՛:

Ահա աթո՛ռը:
Ունի բազմաթիվ այլ մականուններ:
(Դարեր շարունակ շատ է գործածվել, օրինակ, գահը):
Սա, ինչպես գիտեք, չորքոտանի է
Եվ չորքոտանի կոչվածների մեջ
Ուժեղագույնն է բոլորի՛ց՝
Վագրի՛ց ու փղի՛ց անգամ:
Մենք բարի եղանք.
Կատվի և շան հետ

Սրան էլ մենք մեր տունն ընդունեցինք,
Որ մեկ ծառայի,
Ինչպես դարեդար (շնորհակա՛լ ենք) ծառայել են մեզ
Չորքոտանիներ եզը, ձին, ջորին
Ու վերջիններիս ազգական էշը:
Բայց թշվառական ա՛յս չորքոտանին՝
Աթոռ ասվածը,
Սա այնտե՛ղ հառավ,
Որ մեկ, ներեցե՛ք, էշի տեղ դրեց:
Աթոռ կոչվածը, ինչպես գիտեք դուք,
Նրա համար է, որ նստենք վրան:
Սակայն պարզվում է,
Որ սրա վրա նստողի վրա
Սա ինքն է նստում...
Սա՛, որ ծառա է
Եվ պարտավոր է ծառայել մեկ միշտ,
Մեկ է դարձրել իր անարգ ծառան.
Սա՛, որ ծառա է ու դարձել է տե՛ր.
Կդատվի իբրև... մի չար ապստամբ՝
Այսի՛նչ Օրենքի Այնի՛նչ Հոդվածով:

Եվ այսուհետև պիտի՝

Առաջին.

Աթոռ ասելիս հասկանանք վարակ
Եվ զգուշանանք՝
Ինչպես վարակից:

Ուստի և՝

Երկրորդ.

Աթոռից միշտ էլ վերծ պահել նրա՛նց,
Ում ինքը կյանքը դեռ չի սրսկել
Ա՛յն ախտականխիչ համապատասխան շիճուկով,
Որի մի ասեղն արժե... մի բանտարկություն
Կամ մի այնպիսի... առաքինություն,
Որ ենթակա չէ հոռք ու վաճառքի:

Եվ այսո՛ւհետև՝

Երրորդ.

Ով նստեց Աթոռի վրա
(Կամ՝ այլ կերպ ասած՝ գրավեց Աթոռ,
Կամ՝ արժանացավ բարձրը Աթոռի),
Օրենքի ուժով պարտավոր է նա
Հիշել, որ ինքը երկոտանի է,
Այն էլ՝ բարձրագույն,
Եվ ո՞չ մի դեպքում իրավունք չունի
Վերստին դառնալ նո՛ր չորքոտանի,
Առավել ևս՝ չորքոտանու ճո՞ռտ:
Հակառակ դեպքում
Այս նո՛ւյն ամբիոնից,
Այս նո՛ւյն բերանով կինչի արդեն
Այնի՛նչ Օրենքի Այսի՛նչ Հոդվածը...

2

Հաջորդի՛ն բերեք:

Ինչպես տեսնում եք՝ սա մի գլխարկ է,
Եթե ավելի ճիշտ պիտի ասենք՝
Գլխարկի տեսակ:
Իսկ ահա սա էլ, տեսե՛ք, կգեստ է,
Իսկ առավել ճիշտ՝ համակգեստ:
Տեսա՞ք:

Ուրեմըն այսպե՛ս.
Այս կգեստի հետ
Ով որ դնում է գլխարկ այստեսակ,
Նա դադարում է... ն մտածելուց:
(Այստեղ կա փոքրիկ մի անճշտություն,
Որ կամենում եմ հենց ինքըս շտկել՝
Դատապաշտպանի խոսքը կանխելով:
Դատավորական իմ այս խոսքի մեջ,
Որտեղ որ պետք է, ինքնե՛րըդ դրեք
Այնպիսի բառեր, որոնք մեր լեզվով
«Մեղմացուցիչ դեպք հանցանաց» կասվի,

Իսկ դասագրքում՝ «միջանկյալ բառեր»:
Դրանք են՝ «ուանք... շատերը... հաճախ...
Երբեմըն... ցավոք... իհարկե... ոչ միշտ...»
Եվ բոլոր սրանց ապգականները):

Դառնանք մեր գործին:
Ուրեմըն այսպե՛ս.
Այս կգեստի հետ
Ով որ դնում է այստեսակ գլխարկ,
Նա դադարում է և մտածելուց:
Սակայն մի՞թե մեկ, ինչպես ասում են,
Պատիվ է բերում չմտածելը:
Եվ ճի՞շտ ենք անում,
Երբ մեկ վարժում ենք չմտածելուն,
Ի՞նչ է թե հանկարծ... սխալ չգործենք:
Նախ՝
Այսպես վարվելն անարգանք է մեծ
Մեր Դատարանի և Իրավունքի հասցեին: Այո՛:
Ի՞նչ է ստացվում.
Եթե ոչ մեկը սխալ չգործի,
Էլ ո՞ւմ մենք դատենք:
Եթե այդպես է՝
Ուրեմըն դեմ եք մեր... Դատարանի՞ն,
Մեր Արդարադա՛տ,
Նաև Անկաշա՛ռ,
Նաև Հարապա՛տ,
Ժողովրդակա՛ն մեր Դատարանին,
Որովհետև մենք
Առանց սխալի չենք կարող ապրել,
Ինչպես չի կարող
Ավտոտեսուչը՝ առանց վթարի,
Ծաղկավաճառը՝ առանց մեռելի,
Եվ առևտրի ամե՛ն աշխատող՝
Առանց ապրանքի անչա՛փ պակասի,
Ու շատ-շատերն էլ
Առանց հենց ահա այս համակգեստի

Եվ այս գլխարկի,
Որ կախարդական գլխարկ է կարծես.
Դրեցի՛ր թե չէ՝ էլ չե՞ս մտածում,
Գլխիդ փոխարեն
Արդեն գլխարկը՝ սա է մտածում:
Իսկ ի՞նչ ստացվեց.
Որ կարելի է աշխարհում ապրել
Եվ առանց գլխի՞,
Միայն գլխարկո՞վ:

Չեղա՞վ, ընկերնե՛ր, իսկապե՞ս չեղավ:

Ինչ ասել կուզե, որ մենք՝
Օրենքի և Իրավունքի
Սպասավորներ ու ծառաները,
Ունենք Օրենքի պաշտամունք, այո՛,
Բայց... պաշտոնապե՞ս ձեզ պիտի ասեմ,
Որ կույս օրենքը բոնաբարում է
Ո՛չ թե հատուկենտ անձ-անհատների,
Այլ նաև ամբողջ ժողովուրդների՞:
Իսկ եթե այլ կերպ սա ձևակերպենք՝
Բացառությունն է կուսություն խախտում,
Եվ դրանից է
Ծնվում մեր մանուկ Արդարությունը:
Եթե ոչ՝ գիտե՞ք, թե ի՛նչ կստացվի.
Երբ մենք արթուն ենք՝ մեր խիղճն է քնած,
Երբ խիղճն է կարթնում՝ մենք ենք քուն մտել...
Բայց վերադառնանք մեր կիսատ դատին:
Այսպե՞ս ուրեմն.
Անգլխարկ լավ է,
Սակայն անգլո՞ւխ... անկարելի է:
Ուստի մենք,
Որ միշտ գլուխ ենք դատում,
Այսօր կդատենք նաև մի գլխարկ՝
Այսի՛նչ (առայժմ նույնիսկ Չգրված) Օրենսգրքի
Այնի՛նչ Հոդվածի Այդի՛նչ Հատվածով:

Ա). Այսուհետև համապգեստ հագնող ամե՛ն ոք պիտի
Իր (այսպես ասենք) համագլխարկը դնելուց առաջ
Ասի հետևյալ մի քանի բառը՝
Շուտասելուկի՛, ո՛չ աղոթքի պես.
«Գլխարկըս գցեմ-գլուխըս պահեմ,
Գլխարկըս գցեմ-գլուխըս պահեմ»:
Իսկ եթե հանկարծ սխալմամբ ասի՝
«Գլուխըս գցեմ-գլխարկըս պահեմ»,
Կարող է այդօր նա տանը մնալ
Ու մինչև անգամ գործի չգնալ,
Եվ պիտի հաշվեն
Դա շատ հարգելի՛ բացակայություն:
Բ. Դպրոցական համապգեստները խստիվ արգելել...

Այսօրվա համար ո՞վ մնաց:
Բերե՛ք:

3

Ահա՛, տեսնո՞ւմ եք,
Սա քառանկյունի մի թուղթ է,
Որին մենք թերթ ենք ասում
Եվ կամ լրագիր:
Սա հաղորդում է վատ ու լավ լուրեր,
Ճառեր՝ բազմաթիվ,
Դիպվածներ՝ սակավ,
Հայտարարություն ու դամբանական
Եվ եղանակի տեսություն՝ վերջում,
Հենց խմբագրի ճակատից վերև...
Այս դեռ սկիզբն է մեղադրանքի:
Սրա հանցանքի և արդեն գործած
Մեղքերի երկա՞ր շարադրանքին
Անցնելուց առաջ
Հայտարարում եմ ընդմիջում՝ մինչև...

Ներեցե՛ք մի պահ:
Մինչև ընդմիջում հայտարարելը
Իմ բարոյական պարտքն եմ համարում
Ե՛վրս երկու բառ ասել ըստ հարկի՝
Նախ ձե՛ւ դիմելով,
Իմ մեծապատի՛վ ատենակալներ:
Մեր ձեռքով սարքված
Իրերն իրավունք ունե՞ն իշխելու,
Բայց ո՛չ մեկ վրա:
Այսօր դատում ենք լոկ մի քանիսին:
Այսպես կդատենք բոլորի՞ն նաև՝
Մինչև հասկանան,
Որ մեր իսկ սարքած
Իրերն իրավունք չունե՞ն իշխելու
Գոնե մե՛կ վրա:
Եթե Օրենքը,
Որ նմանապես մենք ենք ստեղծել,
Եթե Օրենքն էլ ի՛ր լիներ, դիցուք,
Մինչև իսկ նրա՞ն մենք կդատեինք:
Զգուշացնում ենք.
Թո՛ղ վախենա նա
Եվ չվերածվի անկենդան իրի,
Այսինքն՝ թող նա
Չընհամարձակվի... իր—ականանալ...

1. XI. 65
Չանախչի

Դարակների զարգեվները

«ԴԱՐԱԿԵՍԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ»

ԴԻՄԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՀՕԳՈՒՏ ԱՆԴԻՄԱԿՈՒԹՅԱՆ

Ե՛ս՝ հեղինակ պարականոն գրքերի
Եվ չգրված օրենքների վերծանող.
Ասում եմ ձեզ.
— Մի՛ վախեցեք վատթարից,
Նա է բավի օժանդակը թաքնված...

Ե՛ս՝ հոդախտով տառապողս ողջ կյանքում,
Խոնավության բանտարկյալս ու գերիս,
Տալիս եմ ձեզ իմ ցավըզգա ոտքերիս
Խորհուրդը խոր և հրամանն ահարկու.
— Խոնավությունն ունի ծաղիկ անարմատ,
Որ ծաղկում է ծիածանի յոթ գույնով,
Ու բորբոս են կոչում նրան աշխարհում:
Երբ բորբոսն է քարտեզ գծում մեր հացին
Կամ մեր հոգում,
Կամ երկրի մի անկյունում,
Զո՜ւր միամիտ կրակապաշտ մի՛ դարձեք.
Արեգակը պիտի խնդա՛ ձեզ վրա,
Պիտի խնդա՛,
Ո՛չ թե հասնի ձեր կանչին:
Ուրեմն ինձ պես խոնավապա՛շտ եղեք դուք,
Դարձեք ինձ պես հավատացյա՛լ բորբոսի
Եվ ապրեցեք նրա գծած քարտեզի
Մի անկյունում, ինչպես ցավը՝ հոդի մեջ...

Ե՛ս՝ անվավեր խլիրտների թվացույց
Եվ մասնագետ հոգեհարցման,

Ես հիմա
Ասում եմ ձեզ.
— Հավատն ինչքան պակասի,
Այնքան հույսը կավելանա ձեր սրտում,
Որովհետև վստահելը լավ է շատ,
Բայց չափից շատ վստահելը՝ մի աղետ,
Որ չի կախվում թշվառական մեր գլխին,
Այլ աճում է, քաղցկեղի պես, մեր ներսում...

Ե՛ս՝ նո՛ր գուշակ ըստ ստվերի և շուքի,
Ասում եմ ձեզ.
— Ստվերները կարճանում
Ու շուքերը երկարում են... առանց մե՛կ,
Բայց մենք պիտի շուքից հյուսենք ամուր թոկ,
Բայց մենք պիտի այուներ շինենք ստվերից՝
Սպասելով, թե ե՞րբ պիտի այդ թոկով
Ու այուներով մի օր սարքվի կախաղան
Ստի՜ համար, որ հերաթափ գլխի պես
Չի՛ սանրվում, բայց սանրի պես շիկացած
Մեր ուղեղի գանգուրներն է հարթեցնում...

Ե՛ս, այդ ստի սխալների սրբագիր
Եվ ուշացող արդարության խմբագիր,
Ասում եմ ձեզ (մի՛ կարմացեք), որ իրոք
Ամենամեծ միամիտին աշխարհում
Մարդիկ Աստված կամ Արարիչ են կոչել:
Եվ ասում եմ ու հիշեցնում վերստին,
Որ աստծուն էլ այդ միամիտ,
Եվ աստծո՜ւն
Եթե երեք սուտ աղոթքով դու դիմես,
Ապա չորրորդ սուտ աղոթքով չե՜ս խաբի...

Ե՛ս,
Որ Աստծուն Աստվածատուր եմ կոչում.
Ե՛ս՝ խեռորեն խոռվարար-խռովիչ,
Աստվածամերժ-աստվածարկու մի չաստ-ված,

Ասում եմ ձեզ, երկրորդելով երրորդում,
Որ երկնքում իրո՛ք չկան աստվածներ,
Նրանք վաղուց երկրի վրա են բազմած:
Բայց ոչ ուղտի սապատի պես, այլ ուղտի
Անտանելի բեռի նման, որ մի օր
Ցած կնետի համբերատար ուղտն անգամ:

Խռովության սերմը, իբրև մանանեխ,
Տարածվում է արտաշնչմամբ մեր բերնի,
Տարածվում է երկրից երկիր, վարակում
Մինչև անգամ աստվածներին հրեղեն...

Խռովության սերմը, իբրև մանանեխ,
Իբրև որոմ մի փրկարար, իբրև ախտ,
Ահավասիկ և նրանց է վարակում:
Եվ ահա ե՛ս՝ մանանեխի մի պտղունց,
Մի բուռ որոմ, ախտի մանրէ մի սրվակ,
Ուզում եմ ձեզ ուրախացնել՝ ասելո՛վ.
— Երբ աստվածներն են խռովում իրարից՝
Մարդիկ իրար հասկանալ են սկսում...

17. XI. 63
Երևան

ԴԱՐԱԿԵՍԻ ՀԻՄՆԸ

1

Առաջներում մերպեսներին
Այրում էին խարույկի մեջ...

Հիմա պիտի խարույկ վառենք մենք ինքներըս,
Խարույկ՝ մեկնո՛վ:
Աղը կրակ է հանգցընում:
Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ վառենք,
Որ ավելի բոցավառվենք,
Այնպե՛ս վառվենք,
Որ չմնա նույնիսկ մոխիր ու մնացորդ...

2

Առաջներում մերպեսներին
Կա՛մ քառատում, կա՛մ սպանում էին դանդաղ՝
Մեր մարմնի մեջ ցից խրելով,
Ինչպես քորոցն են մխրճում
Թիթեռնիկի եղա՛ծ-չեղած մեկ օրվա մեջ...

Հիմա պիտի մենք ինքներըս հանգիստ նստենք
Հեռուստացույց-աշտարակի բարձրը ցցին,
Որպեսզի մեր սուր դեմքերով ու խոսքերով
Մենք ինքներըս ցցվենք-մնանք
Ողջ մարդկության ականջներում ու աչքերում՝
Իբրև նշտար ապաքինման,
Իբրև ասեղ սրսկումի...

3

Առաջներում մերպեսների ականջն էին հատում հիմքից,
Կտրում ձեռքը, կոտրում աչքը, հատում լեզուն
Կամ ճակատին խորատպում անջինջ խարան՝
Համարելով մեկ չար կախարդ,
Սուտ մարգարե:

Իսկ մենք հիմա պիտի արձակ ու համարձակ,
Վերադառնանք վաղնջական մեր արհեստին՝
Դառնանք կախարդ... մեր բարությամբ,
Գեղեցիկի ու վսեմի նոր հարությամբ,
Եվ մարգարե դառնանք իրոք՝
Ա՛յն անվանի և անանուն խոտերի պես,
Որ կգում են մոտալուտը արեգակի,
Եվ կամ թե չէ ա՛յն գալանի մաշկի նման,
Որ փոխվում է՝
Եղանակի փոփոխումը նախկգալով...

4

Առաջներում մերպեսներին նայում էին,
Ինչպես նայել ու նայում են բորոտներին:

Եվ, ճիշտն ասած, մենք իսկապես
Բորոտներ ենք, սակայն... ներսից:
Թաքուն տենդից, ցուրտ առնելուց
Դուրս է տալիս շուրթը ոմանց,
Իսկ մեր՝ ներսը,
Իսկ մեր՝ հոգին:
Կարմի՛ր-կարմի՛ր բշտիկներով
Մենք պատված ենք ներսից այնպես,
Ինչպես հոնի աշնանային ծառը՝ դրսից:
Մեր ներսն ամբողջ ասես լինի համակ խտուտ,
Ինչպես կուրծքը նորահարսի:
Քոր է գալիս մեր ներսն ամբողջ...

Ու... մեր ներսով ներաշխարհով
Մենք քսվում ենք ու քսքսվում
Ողջ աշխարհի եղունդներին,
Բարի ձեռքին մարդկայնության,
Սիրո սուր-սուր եղունդներին
Եվ ցասումի սանրին քերող...

5

Սոխի գլխի տեղ էին մեկ դնում հաճախ:
Մենք, որ սոխի գլուխ չէինք բորբոքվին,
Մենք նման ենք սոխի գլխի լոկ այնքանով,
Որ նրա պես բազմաշերտ ենք, բազմափաթեթ:

Եվ մենք հիմա մեկ ինքներըս
Պիտի բացենք հոժարակամ,
Բացենք շե՛րտ-շե՛րտ, փաթե՛թ-փաթե՛թ,
Երբ որ պետք է՝ թեկուզ կծու սոխի՛ նման,
Երբ որ պետք է՝ արդեն ծաղկի կոկոնի՛ պես:
Պիտի բացվենք հոժարակամ
Փաթե՛թ-փաթե՛թ ու շե՛րտ առ շե՛րտ,
Մինչև հասնենք մեր միջուկին՝
Մինչև իսպառ մենք սպառվենք,
Ինչպես մայրերն են սպառում իրենց կաթը,
Ինչպես այրերն են սպառում
Որդեսերման կորությունը...

6

Կան խայտառակ ժամանակներ,
Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում,
Ապա նրա ձեռք ու ոտքին
Ուրիշներն են դնում կապանք:

Մենք մեր լեզվի կապն ենք կտրել,
Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր,

Բայց կարող է... ոսկո՛ր ջարդել,
Նաև կապա՞նք ձեռք ու ոտքի:
Մենք, որ մարդ ենք ծնվել մորից,
Ո՛չ, չենք ուզում դառնալ նորից
Ինչ-որ ընձուղտ երկարավիզ ու բծավոր:
Մենք չենք ուզում դառնալ ընձուղտ,
Որ վիզներըս չերկարացնենք
Դեռ չեղած ու չլինելիք
Բան տեսնելու հիմար հույսով:
Մենք չենք ուզում ընձուղտ դառնալ,
Որ մեր մաշկին անհուր աստղեր չդաջոտեն՝
Մեզ դարձնելով մի սուտ երկինք:
Եվ չենք ուզում ընձուղտ դառնալ,
Որովհետև ընձուղտ կոչված այդ վիթխարին
Ո՛չ մի անգամ ամբողջ կյանքում
Ձայն ու ծլտուն չի՛ արձակում...

Մենք ուզում ենք գործի լեզո՛ւն,
Բայց ո՛չ իբրև երկանք ստի
Ու ջրաղաց խոսքեության:
Դժվար բան է սուտ ասելը,
Բայց սուտ ասելն ավելի է հեշտ ու դյուրին,
Քան թե անվերջ սուտ լսելը:
Ռետինաձև սուտ ծամելուց մենք կլվել ենք:
Լավ ապրանքը ինքն է ծախվում,
Ու վատն է որ պիտի գովես:
Իսկ մենք դեմ ենք ամե՛ն տեսակ փերեզակի...

Մենք ծնվել ենք, աշխարհ եկել
Ո՛չ թե թվալ-երևալու խաբեությամբ,
Այլ լինելո՛ւ,
Ա՛յն լինելու, ինչ կանք իրոք:
Մենք ծնվել ենք, որ մարդկության
Հալալ ու մի «ինչու»-ներից գոնե մեկի
Հարցապնդող աչքում մնենք

Մեր գոնե մե՛կ պատասխանը
Եվ դրանով գոնե մաս-մաս վերադարձնենք
Օտարացվող էությունը մեր մտքերի,
Որ չխամրեն սրանք այնպես, կարծես իսկույն
Չորացնում են ծծողական կոչվող թղթով
Եվ մեզ տրված մեծությունից
Թողնում միայն ճմռթված թղթի կտոր,
Որ կոչվում է «Ստացական»...

7

Հարյուր տարին մեկ են ծնվում մեծություններն այս աշխարհի,
Բայց ամեն օր հարյուր մեծ է գալիս աշխարհ.
Ծնվում են մեծ, բայց չեն թողնում, որ դառնան մեծ:

Մենք ծնվեցինք...
Ու սնվեցինք
Շատ ավելի «ալելուա-օվսաննա»-ով,
Քան թե հացով սովորական...
Ճարպոտ մուժն էր վարագուրում
Կիսաջաղցի մեր աչքերը:
Փայտոջիլներն էին կծում ու կծոտում
Երակները մեր անմարմին:
Բայցևայնպես մերպեսները կարողացան
Պատիվն իրենց պահել ճերմակ
Եվ խիղճն իրենց պահել մաքուր՝ աղի նման,
Որովհետև մերպեսները
Նախընտրում են վրկվել գլխից,
Քան խոնարհել գլուխն իրենց նրա՛նց առաջ,
Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում
Ուղեղ հատել՝ դրամի պես
Ու միտք դաջել՝ լաթի նման:

Մերպեսները, ո՛չ, երբեք
Ծունկ չեն ծալում կուռքի առաջ

Եվ չեն հանում իրենց աչքը ա՛յն պատճառով,
Որ այդ կուռքը, կիկլոպի պես, մեկ աչք ունի:
Շա՜տ-շա՜տ՝ նրանք կկոցում են մեկ աչքն իրենց,
Որ... ավելի հեռա՛ւն տեսնեն ու պա՜րզ տեսնեն:

Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝
Անտանելի ցավն աշխարհի
Որևէ կերպ բարձրացնելու
Եվ արևի կիսարանում մոխրացնելու նպատակով:

Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝
Գեղեցկության մերկ ծնկներին շուլալվելո՛ւ,
Հողի տաքուկ բուրմունքի մեջ լուռ հալվելո՛ւ,
Մանուկների աչքերի մեջ նկարվելո՛ւ երազանքով...

Մենք թռչուն չենք,
Որ մի կաթիլ ջուր ըմպելով՝
Կտուցները անմիջապես երկինք տնկենք:
Ով ուզում է իր ջուրն ըմպել աղբըրակից,
Նա չի՛ կարող չխոնարհվել,
Նա չի՛ կարող ծնկի չգալ:

Եվ չի՛ կարող չխոնարհվել,
Ու չի՛ կարող ծնկի չգալ՝
Ով ուզում է նայել խորքը ջրհորների,
Որոնք նույնպես ուրիշ բան չեն,
Քան թե կուռքեր՝
Արձանները ա՛յն աղջամուղջ-մթնշաղի,
Որ ներաշխարհ կամ հոգի է կոչվում դարեր:
Եվ մերպեսներն ա՛յդ կուռքին են երկրպագում,
Խոնարհվում ու ծնկի գալիս
Ա՛յդ կուռքերի առաջ միայն՝
Նրանց մթին հայելու մեջ
Իրենք իրենց ճանաչելով...

8

Ու գալու է մի ժամանակ,
Երբ որ պիտի մարդիկ նաև մերպեսների՛ն երկրպագեն՝
Ոչ կուռքի՛ պես,
Ո՛չ էլ աստծու,
Այլ... հերոսի՛,

Որովհետև մենք լավ գիտենք,
Որ շատ հաճախ
Բռունցքով ենք կարկում մեխի ծակող ծայրին,
Մեր բռունցքով՝ մուրճի տեղակ:
Բայց դրա հետ գիտենք նաև,
— Բռունցքը չէ,
Որ սարքվել է մուրճի ծանոթ օրինակով,
Այլ մուրճն է հենց,
Որ սարքվել է մեր բռունցքի նմանությամբ:
Ու մենք գիտենք,
— Եթե քամին
Ընդամենը մեր մատների հետ է խաղում,
Ապա ինքը եղանակը խաղ է անում... մեր գլխի՛ հետ:
Բայց աստղերը իրենց կլոր-ճերմակ սանրով
Հանգստարար շարժումներով ամեն անգամ
Հարդարում են քամուց գլխած մեր մատները
Ու դրանով հավատացնում իրենց ու մեզ,
Որ առայժմ... մեր գլուխը իր տեղումն է...

Այս հավատով ու հույսով է, բարեկամքս,
Որ աշխարհում մերպեսները ամեն գիշեր
Աղքատ քնում ու պարթևում են հարատացած...

18—20. XI. 63
Երևան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ԵՎ ՃՇԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ

Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք հապա,
Թե ի՞նչ ալիքով, քանի՞ վայրկյանում
Եվ քանի՞ գրամ արյուն է հոսում աղջկա սրտից
Դեպի ամոթխած այտերը նրա՝
Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկյան,
Որ մինչև այսօր, միամտաբա՛ր, շիկնանք ենք կոչել:
Եվ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում
Մեր մթնոլորտված աչքերի միջով,
Երբ հանկարծակի նրանք դիպչում են ուրիշ աչքերի,
Եվ այս փոխադարձ ճառագայթումը
Վտանգավո՞ր է մեր սրտի համար,
Թե՞ օգտակար է:

Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք հապա, թե մեր ափերով
Քանի՞ կիլովատտ հոսանք ենք տվել
Երեխաների մազերին փափլիկ ու թաթիկներին,
Մեր սիրածների իրանին ճկուն,
Ուսերին նկուն մեր տատիկների,
Եվ մեր ստացածն ինչքա՞ն է պակաս
Կամ ինչքա՞ն ավել:

Թե չէ՝ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք, խնդրե՛մ, հաշվեցե՛ք սաա,
Թե մեկնից գոնե մե՛կը իր կյանքում
Քանի՞ կնոջ է տենչանքով նայել,
Քանիսի՛ն՝ մաքուր մի հիացմունքով,
Քանիսի՛ն՝ միայն եղբոր քնքշությամբ...
Նշեցեք նաև տեղերն ա՛յն կանանց,
Որ կարող էին մեկ խորունկ սիրել,
Բայց մենք այդպես էլ չհանդիպեցի՛նք:
Եվ թիվն ասացեք ա՛յն մանուկների,
Որ կարող էինք ունենալ կյանքում,
Բայց մենք չունեցա՛նք ու չե՛նք ունենա:
Եվ թիվը նաև ա՛յն մանուկների,
Որ պիտի մերը լինեին կարծես,
Բայց մերը չեղա՛ն...

Թե չէ՝ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Մենք դեռ մի կարգին չգիտենք նույնիսկ,
Թե այդ ինչի՞ց է մարդը ծիծաղում,
Մի՞միայն մարդը,
Եվ ո՛չ մի ուրիշ կենդանի էակ:
Դուք մեր ծիծաղի
Ալիքների թիվն ասացեք հապա,
Ցույց տվեք նրանց գույները պես-պես
Եվ քմծիծաղի ու քրքջոցի
Տարբերությունը հասկացըրեք մեզ...

Էլեկտրոնական ձեր գանգով հուժկու
Ու ճառագայթուն-անսպիտակուց-կիկլոպյան բիբով
Տարրալուծեցեք կարոտն էլ հապա,
Բաղադրեցեք այն ծուխն էլ անտես,
Որ անջատվում է միշտ այդ կարոտից
Եվ ո՞ւր է քաշվում...

Թե չէ՝ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Ա՛յն թվականը նշեցեք հիմա,
Գեթ այն մոտավոր-մոտալուտ տարին,
Երբ որ, վերջապե՛ս, ապգերը խոցված
Պիտի ողջանան կամ ապաքինվեն,
Եվ վիրավորող ապգերն ստանան
Հատուցումն արդար ու չբեկանվող:
Թե չէ՝ շատերը, քանի՞ դար արդեն,
Հույսերը կտրած անողորմ աստծուց՝
Սպասո՛ւմ են դեռ:
Սպասո՛ւմ են դեռ:
Դո՛ւք՝ նո՛ր աստվածներ նո՛ր ժամանակի,
Սուտ դուրս չգայիք գեթ դո՛ւք, գոնե դո՛ւք...

Հաշվեցե՛ք հապա ու թիվն ասացեք
Երկրներ կապող ա՛յն կամուրջների,
Որոնց վրայով
Կուզեինք նաև մե՛նք անցած լինել,
Բայց դեռ չե՛նք անցել
Ու չե՛նք անցնելու...

Թիվը ցույց տվեք
Ա՛յն երակների ու անուրջների,
Որ այս բառով են կոչվում աշխարհում
Լոկ ա՛յն պատճառով,
Որ չեն կատարվո՛ւմ...

Անկասկածելի թիվը նշեցեք ա՛յն կամկածների,
Ինչից մենք հաճախ հասունացել ենք,
Առավել հաճախ՝ վաղաժամ թոշնել...

Ցույց տվեք գիծը հիասթափությա՛ն,
Եվ հուսանք,
Որ դա գեթ չի ունենա ձևը կայծակի...

Եվ գիծը նաև հուսախաբությա՛ն,
Որ մեր կյանքի հետ

Վա՛յ թե հենց կապմի վուգահեռություն,
Իսկ վուգահեռը վուգահեռի հետ
Չի՛ հատվում կարծեմ...

Եվ թիվն ասացեք
Մեր ա՛յն ժամերի, անթի՛վ-անհամա՛ր,
Որ ծանր ու թեթև ժամանակներում կորա՛ն-գնացի՛ն
Ինչ-որ հերթերի
Ու երթերի մեջ
Եվ ընթերցման մեջ ա՛յն բավմալեկու օրաթերթերի,
Որոնց սևաբոց գլխագրերից
Ամեն առավոտ
Հրանոթների կենտ աչքն է նայում մեր վույգ աչքերին,
Սուպանավերն են մեր տենչանքները հոգու մեջ սուզում,
Ջրածընային արկերն են ուզում
Մեր երակների կարմիր արյունից
Ճերմակ ջուր ծնել...

Այսքանից հետո պիտի՛ որ հաշվեք
Եվ ասե՛ք, թե դեռ քանի՞ տոնն ատոմ ճեղքելուց հետո
Հեշտ կարելի է այս Երկրագնդի միջուկն էլ ճեղքել:
Պիտի՛ որ հաշվեք,
Թե դեռ ի՞նչ վենքեր ծնելուց հետո
Մայրը կպրկվի վավակ ծնելու կարողությունից:
Թե այսքանն ասեք՝
Էլ հարկ չի՛ լինի, որ ասեք նաև
Ծանրության չափը հավատապրկմա՛ն:
Կմնա միայն, որ պարպաբանեք,
Թե ի՞նչ հրաշքով
Հավատապրկման այդ բեռան ներքո
Մինչև վիկներս չենք խրված հողում՝ սուր ցցի՛ նման...

Բարեկամաբար ասացե՛ք նաև.
Քանի՞ տարին մեկ աշխարհ է գալու
Ա՛յն անդերանելյան մանուկը,
Որից

Թագավորները պիտի իսանան,
Որ մերկ են իրենք:
Եվ խնդրեմ՝ նաև ասվելացրրե՛ք.
Այդ իմանալով՝
Թագավորները
Ծածկո՞ւմ են արդյոք մերկությունն իրենց,
Թե՞ շարունակում կրկին մերկ մնալ
Եվ հակառակը կամեցողներին
Կամ թե պարզապես սամաչողներին
Հարկադրում են՝
Աշխարհում ապրել կապվա՜ծ աչքերով.

Եվ ասե՞ք գուցե,
Թե բեթհովենյան խլությունն արդյոք
Չի՞ կապվում բնավ
Ա՛յն ահագնացող պայթյունների հետ,
Որ կատարվում են հիմա աշխարհում
Եվ վե՜ր աշխարհից:
Ու թե կապ ունի, խնդրե՜մ, պարզեցե՛ք.
Աշխարհը հիմա
Անթիվ-անհամար բեթհովեններո՞վ կըերջանկանա,
Թե՞ կավելանա պարզապես թիվը խլացածների...

Հաշվեցե՛ք նաև, մի վերջի՜ն անգամ,
Թե այդ ի՞նչ ձևով,
Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է մարդուն՝ մա՜րդ պահել
Եվ կամ նո՜ր միայն մարդուն դարձնել Մա՜րդ...

26. X. 62
Երևան

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Եռում է ջուրը.
Ասես թոքերի բորբոքում ունի մինչևիսկ սա էլ:
Իսկ բուժո՜ղն ով է,
Եթե հիվանդ ես հիմա և ինքդդ,
Ու քեզ բուժում են
Նաև թեյ կոչված նո՜ւյն եռման ջրով,
Որ նմանապես
Թոքերի ուժեղ բորբոքում ունի...

Հիվանդ հայացքդդ
Մուգ մառախուղի վեհ վերելակով
Թագավորաբար լեռն է բարձրանում,
Ինչպես երևի բարձրացել են գահ...

Տենդոտ հայացքդդ
Հիմա հածում է դիմացի ձորում,
Որտեղ պառկած են այլական քարեր՝
Բրածոյացած նախիրների պես...

Թեպետ իրար հետ վաղուց եք ծանոթ,
Թեպետ ծանոթ է պապերի՜դ անգամ,
Բայց քրտնած գլխով տված բարևիդ
Չի՜ պատասխանում:
Դուրս տված բերնով ճամփած ժպիտիդ
Չի պատասխանում նո՜ւյնպես:
Իսկ ինչո՞ւ:
Որովհետև իր անունը... Ժայռ է,
Ինքն էլ երբևէ
Ոչ միայն կյանքում չի հիվանդանում,
Այլև... անմահ է...

Աստվա՛ծ իրեն հետ:
Դու թե՛լը խմիր:
Սառե՞լ է:
Տեսա՞ր, ջրի թոքերի բորբոքումն անցավ:
Կանցնի և քո՛նը:
Հապա եկ փորձենք. տաքություն չունե՞ս:

Ջերմաստիճանի որոշման համար
Ձեռքը դնում են մարդու ճակատին:
Այդ շարժումի մեջ չկա՞ խոր իմաստ
Եվ խորհուրդ խորին,— ո՛վ ի՞նչ է կարծում:

Իսկ աշխարհումը բանտեր քի՞չ կային,
Որ ստեղծեցին նաև այս մե՛կը՝
Այս ջերմաչա՛փը:
Եվ ի՞նչ հանցանք է գործել սնդիկը,
Որ տառապում է մենախցի մեջ...
Բայց գոնե լավ է,
Որ սնդիկային այդ մենախուցը
Լայն է ավելի, քան մարդկայինը:
Լա՞յն է, թե՞ երկար,— միևնույնը չէ՞:
Իսկ շատ չես խոսո՞ւմ.
Չէ՞ որ հիվանդը
Այսքան խոսելու իրավունք չունի:

...Կլռե՛մ:
Կուզես՝ կքնե՛մ անգամ,
Միայն թե... ջարդե՛նք այս ջերմաչափը:
Թվում է, թե իմ հիվանդությունը
Ո՛չ թե իմ մեջ է,
Այլ սրա՛, սրա՛՝
Այս ջերմաչափի՛:
Ուրեմըն ջարդե՛նք այս ջերմաչափը.
Եթե ես մեղք եմ՝ սնդիկն առավել...

9. XI. 65
Զանախչի

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անտարբերությո՛ւնը...

Ուխտյալ թշնամու պես հետևում է նա ինձ,
Բուսնում խոտի՛ նման,
Թառում փոշո՛ւ նման,
Խեղդում խորխի՛ նման:
(Գերանդի՛ եմ դառնում,
Խոպանա՛կ եմ դառնում,
Հա՛կ եմ դառնում):

Եթե կարճակոճը իր հասակը ներեր
Ու ձեռքը հասցներ իմ կոկորդին բարակ՝,
Խեղդամահ էր արել նա ինձ վաղո՛ւց:
(Եվ մինչ նա շարունակ ձեռքն է մարկում-վարժում,
Ես էլ աշխատում եմ հասակ նետել սնվերջ):

Իմ բերանն է փակում հապա՛ր ու մի ձևով,
Իր համբույրո՛վ անգամ,
Սո՛ւտ համբույրով նույնիսկ:
(Եվ մարմինս է դառնում համատարած բերան,
Ու բերանը փակող համբո՛ւյրն անգամ, նա՛ էլ,
Որ... ես խոսքը խոսեմ,
Ասելիքը ասեմ
Եվ դրանով մարդուս ի՛ր դասի մեջ դասեմ.
Մեկ ասո՛ւն են ասում,
Ո՛չ անասուն)...

Ա՜խ այս մշտափոփոխ-ինքնաբեկող,
Ամե՜ն ինչի տակից միշտ դուրս եկող
Անտարբերությո՜ւնը,
Որ հիմա էլ արդեն, երբ այլ հնար չունի,
Աշխատում է մի կերպ ինձ ներշնչել,
Թե խոսելը նույնն է, ինչ... ստելը:
(Ու ես ծա՜նը-ծա՜նը լռությունը
Բարձրացնում եմ խոսքի աստիճանի:
Ու ես ծա՜նը-ծա՜նը խոսքը իջեցնում եմ,
Դնում պատվանդանին քար լռության,
Եվ այդ միությունից ծնվում է այն բիճը,
Որ սերում է սիրո՜ւց,
Բայց ո՜չ երբեք՝ պարտքից,
Ու կարճ կոչվում է ձիշտ,
Երկար՝ ճշմարտություն):

...Եթե ինձ ծնողը ինձ չի ուզում պահել,
Թող որբանոց հանձնի, վնաս չունի՜:
(Շա՜տ ավելի լավ է որբ մեծանալ,
Քան թե ամբողջ կյանքում ապրել միշտ ո՜րբ)...

9. XI. 65
Զանախչի

ԱՇԽԱՐՀ... ԱՇԽԱՐՀ...

Ո՜չ ու փո՜ւչ աշխարհ,
Որ չես հանձնվում իմ տաք ձեռներին,
Որպեսզի փրչոտ մայերդ սանրեմ
Իմ ջերմ մատներով՝
Անմայր մնացած
Մինուճար որդուն սիրող հո՜ր նման:

Սո՜ւտ ու փո՜ւտ աշխարհ,
Որ իմ մայերն ես հանգուցել ամուր
Ամեն մի ծառիդ ու ամեն խոտիդ,
Ամեն էակիդ մագիլ ու մատին,
Շոշափուկներին, բեղին ու թաթին,
Եվ իրար ձգում փոխադարձորեն
Ու ձգձգում ենք նորից ու նորեն,
Որ... ինքդդ ապրես համակշռված,
Իսկ ես էլ...
Իսկ դու
Ե՞րբ ես իմ մասին մի բերան հարցնում,
Ո՜չ ու փո՜ւչ աշխարհ,
Սո՜ւտ ու փո՜ւտ աշխարհ:

Իսկ չե՞ս վախենում, որ հանկարծ... մեռնեմ:
Ես վախենում եմ, շա՜տ եմ վախենում,
Բայց ո՜չ ինձ համար,
Այլ լոկ քե՜զ համար.
Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի
Համակշռված այս վիճակը քո,
Ո՞նց պիտի լինես,
Ի՞նչ պիտի անես:
Տե՜ս, որ իմ մահով քեզ չկործանե՜ս,
Սո՜ւտ ու փո՜ւտ աշխարհ,
Փո՜ւչ ու ո՜չ աշխարհ...

9. XI. 65
Զանախչի

ՍԽԱԼ ԽՈՍՔ ՍԽԱԼԻ ՄԱՍԻՆ

«Ես ոչ ոքի չեմ դիմում,
բայց ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»:

Վ. Սարոյան

Գժվել է գարունը:
Եվ օդը գինով է:
Եվ լույսի՜ց, լոկ լույսի՜ց կարող է մայրանալ,
Կարող է մայրանալ... մինչև իսկ չբե՜ռը:
Մինչդեռ ես կրում եմ ուժից վեր այս բեռը՝
Իմ գլխի՜ և սրտի՜ այս բեռը,
Որի տակ
Ինձանձն մարմինըս քարշում եմ ութաձև:

Քարշում եմ:
Չե՜մ խորհում:
Եվ դա իմ խորհելն է:
Չե՜մ լսում:
Չե՜մ ուզում ընդունել ո՜չ մի ձայն:
Բայց անվերջ լսվում է թե՜ իմ մեջ, թե՜ իմ շուրջ.
«Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»:

...Ինչ-որ բան սխալ է հենց Երկրի առանցքում,
Որ ուղի՜ղ չի անցնում, այլ ինչ-որ թեքությա՜մբ:

Ինչ-որ բան սխալ է մինչևիսկ լույսի՜ մեջ,
Որ պիտի՜ ունենար ծանրություն ու կշիռ:

Թե կրոնն է սխալ՝ այդ վաղո՜ւց հայտնի է,
Բայց մի տեղ սխալ չէ՞ և հափս՜տ կոչվածը:

Ինչ-որ բան սխալ է ճշմարտի մեջ անգամ.
Եվ ստույգ կոչվածն է ստուգվել աղերսում:

Ինչ-որ բան սխալ է և արյա՜ն, արյա՜ն մեջ.
Չհեղվե՜ր, հեղվելիս ինչո՞ւ է մակարդվում:

Թե ձեռքն է գավաթին երկարվում հուսահատ՝
Սխալ է և գինի՜ն.
Չի՜ խցվում կոկորդում:

Սխալ են ջրե՜րն էլ.
Հոսում են վերից վա՜ր,
Վերից վա՜ր,
Վերից վա՜ր՝
Անընդհատ անկում է:

Կոշկատակն է սխալ.
Հողից է մեկ կտրում:

Սխալ է և հողը.
Առնըվում-ծախվում է:

Սխալ է կրակն էլ.
Ինչի՞ս է մխալը:

Լռությունն է սխալ.
Մեր թևերն է փետրում:
Իսկ անկե՜ղծ խոսելը... սխալ ու սխա՜լ է:

Իսկ ի՞նչն է տարբերում և ի՞նչն է անջատում
Փակուղի ասվածից հորիզոն կոչվածը,
Եթե սա՝ ոտքերդդ, նա աչքերդ է հատում:

Սխալ է ջարդելը,
Բայց չէ՞ որ դրանից

Երկրաչափն է կարծես օգտվում արանքում.
Ձնե՞րն են բարձանում այդ ջարդում փշրումից:

Սխալ կա թերևս և նրա՛նց արարքում,
Որ անկեղծ ձգտում են շտկելու սխալը
Եվ ամեն մի սխալ շտկելիս, ակամա,
Գործում են նո՛ր սխալ.
Սխալ է ձգտո՛ւմը:

Ինչ-որ բան ու լո՛ւրջ բան, անկասկա՛ծ, սխալ է
Եվ մարդուս մարմնի՛ մեջ.
Մի գլխով ի՞նչ անել,
Երբ այսքա՛ն դժվար է անսխալ ապրելը...

Հետո ի՞նչ դուրս եկավ.
Սխալ է ատե՛լը,
Սխալ է սիրե՛լը,
Այրվե՛լը,
Մխա՛լը:

Սխալ է, անկասկա՛ծ, և այսպես դատելը,
Ուստի և այս երգը... սխալի՞ց սխալ է...

19—20. V
25. VII
22 IX
10. X. 61
Երևան

ԿԱՅԱՆԱԼԻՔ ԶԲՈՍԱՆՔ

Վճռել եմ հաստա՛տ.
Պիտի շո՛ւն պահեմ...

Եվ ամեն գիշեր,
Երբ միլիոնավոր հոգնած կոշիկներ
Դռան մուտքի մոտ
Լաթերի վրա մտնեն խորունկ քուն՝
Արդեն չպաշտվող տոտեմների պես,
Երբ նեղ օդերից այլևս պատված
Մեր հագուստների կոճակները խեղճ
Ապատ շունչ առնեն մի քանի ժամով,
Ու փողոցներով երբեմն սուրա
«Շտապ օգնության» մեքենան միայն՝
Իր կույգ աչքերի ճառագայթներով
Պոկահարելով խավար ու ստվեր,—
Շանը հետ պիտի ելնեմ ման գալու,
Որ մտերմաբար ասուլիս անենք
Անդորրության մեջ կեսգիշերային,
Քաղաքի պարապ պողոտաներում:
— Իմ նախա՛-նախա՛-նախա՛պապերի ապնի՛վ օգնական,
Գապա՛ն երբեմնի,
Այսօրվա նույնիսկ քաղաքաբնա՛կ շուն իմ, սիրելի՛ս,—
Ես նրան կասեմ,—
Քո ականջներում առայժմ չկա
Հեռախոսային լար ու լսափող
Եվ քո բնական հոտառությունը չի չարաշահվում,
Որ իմ մշահոտ-ճենճերահոտով
Մտածմունքներիս ու տվայտանքիս նյութը որոշվի
Քիմիական ստույգ տարրալուծությամբ:

(Նա պոչով օդում «այո» կգծի):

Ամենքս էլ մի քիչ շուն ենք, շո՛ւն եղբայր,
Մեր անխախտելի հավատարմությամբ
Առ Աստված,

Որին հիմա ամենքը «Գալիք» ենք կոչում,
Եվ առ Հայրենիք,
Որ ձեր շնային լեզվով, կարծում եմ,
Կոչվում է «Ոսկոր»,
Եվ առ այն էգը, որ էգ չէ միայն,
Այլ «Սեր» է նաև,
Ինչին շնային լեզվով, երևի,
Դուք «Ծուծ» եք կոչում:

(Նա պոչով գետնին «դիցուք» կգծի):

Ամենքը էլ մի քիչ շուն ենք, շո՛ւն եղբայր,
Եվ ամեն մեկս էլ մեր հաչոցն ունենք:
Եվ մինչև անգամ լույսերն են հաչում՝
Լուսաձիգների բացուխուփ բերնով.
Այս լուսագդներն են հաչում համրորեն՝
Իրենց գույների տուրնառությամբ,
Եվ հանրակառքի ուղիներն այս կույգ՝
Իրենց կնգոցի երկար կաղկանձով:
Իսկ մարդի՞կ...
Ոմանք իրե՞նք չեն հաչում.
Նրանց տեղ իրենց սրտե՞րն են հաչում՝
Կարոտի՞ բերնով ու տառապանքի՞...
Եվ կա մի հաչոց, որ լաց է կոչվում,
Կա՞, որ կոչվում է հառաչ, հեկեկոց,
Կա՞, որ կոչվում է աղաղակ ու ճիչ,
Կա՞, որ կոչվում է ծիծաղ կամ քրքիջ:
Այս վերջին հաչն է ինձ շատ դուր գալիս,
Թեպետ շատ հաճախ ինձ տեսնում ես դու
Ոչ թե խնդալիս,
Այլ դառն լալիս:

(Նա պոչով կասի մի հաստատ «այո»):

Իսկ նրանք, իմ շո՛ւն, ովքեր շա՞տ են շուն,
Իրե՞նք են հաչում, ըստ որում, գիտե՞ս,
Մենք հաչոց ունենք հապա՞ր մի տեսակ,
Մինչ քեզ ծանոթ են մի քանիսը լոկ...

Այնպես որ, շո՛ւն իմ, ամենքս էլ իրոք
Մի որոշ չափով շուն ենք, եղբա՛յրս:
Ու շուն ես ե՛ս էլ՝ ամենքի նման,
Նրանցից գուցե այնքանո՛վ տարբեր,
Որ ես մերժում եմ պատառը ճարպոտ.
Ինձ մի ոսկորն էլ հերի՞ք-հերի՞ք է...

(Նա պոչն է տնկում՝ իբրև հարցական):

Ոնց եմ ոսկորով որկո՞րքս լցնում:
Աստղերից ցատկող լվեր բռնելով,
Հոգու ջրհորի ջրիմուռներով,
Ա՛յն քարաքոսով, որ «խիղճ» է կոչվում
Եվ ամենից շատ (թե անկեղծ ասեմ)՝
Ա՛յն արմատներով, որոնց մեր լեզուն
Կոչում է «ջղեր»:

(Այս խոսքիս վրա, իբրև միջակետ,
Շունը կդնի մի բերան հաչոց:
Փողոցով կանցնի մի բարակ քամի՝
Ջանալով ավել ստվերն իմ ու շան:
Լուռ կիորանչի մի լապտեր ադոտ՝
Արդեն ձանձրացած ա՛յն ցուցանակից,
Ում ծառայում է տարիներ անվերջ):

Եվ պկոտոցը իմ կոշիկների
Մի պահ չի հնչի ամայության մեջ,
Որովհետև ես պիտի կանգ առնեմ
Ցուցանակների մի խմբի առաջ
Ու շանը ասեմ.
— Նայի՞ր, շո՛ւն եղբայր,
Նայի՞ր այս բակում ցուցանակներին:
Տեսնո՞ւմ ես, շո՛ւն իմ, պատերն էլ ունեն
Իրենց պատային ճակատագիրը,
Որ «ցուցանակ» է կոչվում մեր լեզվով:

Եվ համատարած գրագիտության
Այս աննախադեպ լուսավոր դարում,
Երբ հազարավոր տարիներ առաջ
Մեռած լեզուն էլ վերծանվում է հեշտ,
Եվ մինչև անգամ
Լուսնի հակառակ երեսն են կարդում
Ու Վեներայի
Կամ Մարսի օդը դարձնում այբուբեն,—
Մեր երկրորդանոց ճակատագիրը մնում է դարձյալ
Անընթեռնելի՛ և անմեկնելի՛...

(Այս խուքիս վրա
Շունը իր ետին ոտներից մեկը կկտրի գեանից
Եվ անդաստիարակ-անկիրթի նման
Կթրջի պատի քարը սրբատաշ,
Ու մենք միասին տուն կգանք կրկին,
Որ միլիոնավոր կոշիկների հետ
Իմոնք էլ քնեն մուտքի դռան մոտ՝
Արդեն չպաշտվող տոտեմների պես,
Եվ նեղ օդերից այլևս ապատված
Խեղճ կոճակներն էլ իմ վերնաշապկի
Ապատ շունչ առնեն մի քանի ժամով)...
Իսկ շունը...

Սակայն ես դեռ շուն չունե՞մ
Եվ չգիտեմ էլ՝ արժե՞ ունենալ:
Իսկ եթե նրա ականջների մեջ
Հեռախոսային լար ու լսափող թաքցրած լինե՞ն
Ու չարաշահեն նրա բնական հոտառությո՞ւնը
Եվ իմ մշահոտ-ճենճերահոտով
Մտածմունքներիս ու տվայտանքիս նյո՞ւթը որոշեն
Քիմիական ստույգ տարրալուծությամբ:

Վճռել եմ հաստա՛տ.
Շուն չե՞մ պահելու...

20—21 և 26. XI. 63
Երևան

ՃԱՄՓԵԶՐԻ ԽՈՏԸ

Իմ բախտը բերեց.
Ես ո՛չ մի անգամ
Չշփոթեցի իմ ահեղ դարը օրացույցի հետ,
Եվ ո՛չ մի անգամ
Չկարողացա (չկարողացա՛-չկարողացա՛)
Դառնալ խոսափող ա՛յն անցողիկին,
Որ համարժեք էր հաջողությանը...

Իմ բախտը բանեց.
Ես բոլորի՛ հետ ու մեկտեղ էի,
Բայց ո՛չ նրանց հետ,
Ովքեր գոռգոռում
Ու բռռում էին բոլորի՛ անվամբ,
Բոլորի՛ն անվերջ վկա բերելով,
Մինչ այդ «բոլոր»-ի
Անունը թե կար՝ ամանում չկա՛ր...

Իմ բախտը բերեց.
Ես գրչիս կո՛թը հաճախ ծծեցի
Ու հենց դրանո՛վ հաճախ կշտացա,
Բայց ո՛չ երբևէ գրիչ ծախելով...

Իմ բախտը բանեց,
Ինչպես բանում է բախտը այն... խոտի,
Որ ճանապարհի եզրին է բուսնում.
Մի՛շտ կոխկրտվելով՝
Ես ցողունի տեղ, ստիպվա՛ծ, արմա՛տ երկարացրի...

14. XI. 63
Երևան

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՎԱԼՍ

Մի մոռացկոտ անձրև
Ու մի երկչոտ քամի
Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ՝
Բևա՛վ չհարցնելով կամքն աշխարհի,
Ու գործի են անցել.
Շաղ են տալիս... տաղտուկ:

Տերևները կրկին գործադուլ են անում,
Եվ ծառերի կանաչ գործարաններն արդեն
Էլ չեն արտադրում ո՛չ թթվածին,
Ո՛չ էլ դեղին շրշյուն,—
Հե՛րն անիծած:

Ու ծվատված ձանձրույթն ամենքիս մեջ
Երապում է հիմա հնավաճառ միայն:
Ա՜խ, թե պատուհանից մեկի ձայնը խռպոտ·
Խուժեր սենյակ.
«Ձանձրո՛ւյթ, հին-մին ձանձրո՛ւյթ կառնեմ»...

Եվ ամենքս ենք հիմա կիսով մենակ,
Եվ ամենքս ենք հիմա կիսով տխուր՝
Հոգնած մե՛ր իսկ բոլոր շարժումներից,
Եվ ձևերի՛ց ամեն
Եվ մտքերի՛ց բոլոր...

Օդը հաստանում է մառախուղով,
Ու մշուշով երկինքն է ցածրանում.
Որ բարակի թելը համբերության
Ու վեր բարձրանալիս ճիչ ճնգոցով հատվի:

Եվ ամենքիս հիմա վատ բաներ ենք հիշում.
Եվ ամենքիս հիմա հոռետես ենք դարձել,

Ամե՜ն ինչից կվված,
Զվված նաև մեկնի՛ց:
Եվ մեր քիթ ու մոթից քմծիծաղ է կաթում,
Ինչպես ամեն ծառից՝ կենտ-կենտ տերև,
Ինչպես ջրհորդանից՝ անձրևաջուր կեղտոտ,
Քիվից՝ պղտոր կաթիլ,
Տոիպ տաղտուկ՝ հոգուց...
Կաթո՜ւկ-կաթո՜ւկ-կաթո՜ւկ,—
Հե՛րն անիծած...

Այս մոռացկոտ անձրևն ու այս երկչոտ քամին,
Տխրությունն այս բարակ և տախտուկն այս պարարտ,
Նաև վատն ու հոռին
Պարապույգ են կազմել
Ու պարում են- պարո՜ւմ-պարո՜ւմ հիմա
Մեր փողոցո՜ւմ,
Տա՜նը,
Մեր սենյակո՜ւմ նեղլիկ:

Երկրագունդն է պարում նույն վալսը հին ու նոր,
Տարվա եղանակներն անվերջ նույնն են պարում,
Նույնն է պարում կյա՜նքը,
Նույնն է պարում մի՜տքը:
Այս ի՜նչ խենթություն է,—
Հե՛րն անիծած...

Եվ ինչ է դեռ մնում, որ ի՜նչ անենք
(Ձանձրույթ առնող չկա.
Մենք ամենքս ենք ծախող):
Ձանձրույթի հետ կազմենք լավ պարապույգ
Ու պտտվենք մե՜նք էլ,
Մե՜նք էլ պարենք
Խենթացնող այս վալսը՝ խենթի նման,
Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգո՜ւմ,—
Ի՜նչ ուզում է լինի.
Հե՛րն անիծած...

16. II. 64
Երևան

ՀՊԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Երբ վերջալույսն է մխրճվում ամպերի մեջ՝ սանրի նման,
Ու հոտոտող բարակ քամին, շնիկի պես, կանգ է առնում
Ամեն թփի, ծառի, գուղձի և ամեն մի մարդու առաջ.
Ու երբ ցուրտը երիտասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն՝
Ստիպելով շապիկ կոճկել ու մրմնջալ խոսքեր դժգոհ.
Ու երբ մթան թավշի վրա օրվա հաչոցն է խլանում,
Իսկ հատ ու կենտ լույսերն ասես դառնում են հին
վարդանկար,—
Միամի՞տ եմ դառնում նորից,
Հավատում եմ արդարությա՛ն,
Ու թվում է, թե ես պիտի իմ... բնական մահով մեռնեմ...

14. XI. 63
Երևան

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Դու՝ 20-րդ և, անտարակույս, հոբելյանական,
Դու՝ Խրուշչեական,
Կարծես էական
Եվ ավելի քան կարծես բանական,
Բայց նաև նույնքան խելագար դարի
Ո՞վ քաղաքացիդ անկոր ու հկոր,
Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության անդարման ցավով,
Որ բողբոջում է բջիջներիդ մեջ,
Ծաղկում է անգամ քո կույգ բիբերում,
Նյարդերդ է խեղդում ճուղերով իր պիրկ
Եվ իր թունավոր սաղարթն է բերում
Խառնելու գլխիդ մակերին անգամ:

Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության ահարկո՞ւ ցավով...

Եվ ինչպե՞ս ապրես միայն անցյալով,
Եթե ներկադ էլ
Արդեն չի ծախսվում այլ բանի վրա,
Քան վաղվա մասին պարապ խորհելու...
Ի՞նչ է սպասվում այս մոլորակին,—
Ի՞նչ պատասխանես:
Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,—
Ինչպե՞ս իմանաս:
Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին:

Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ...
Կրակն ես ընկել մտքերի ձեռքից:
Ապատո՞ւմ չկա: Եվ պրծո՞ւմ չկա:
Կա մի վիթխարի՞ անորոշություն,
Որ տորիչելյան դատարկության պես
Երբեք չի՞ լցվում:

Կա մի անսահմա՞ն անորոշություն,
Որ սողոսկում է՝ օդի պես՝ այնտեղ,
Ուր կա ծակոտիք

Կա մի որոշյա՞լ անորոշություն,
Կրկնակաղապար՝ ընկույզի՞ նման:
Եվ ինչպե՞ս ապրել
Թունոտ ու կարծրը կաղապարների
Անշունչ արանքում,
Էլ ինչպե՞ս ապրել...

Աղն էլ է ծանոթ արցունքոտվելուն
Ու կուրանալուն՝
Խոնավությունի՞ց,
Ինչպես որ մարդը՝ անորոշության
Օվկիանին անափ:
Իսկ ո՞ւր է ցամաքն ու չորությունը...

Ցեմենտ կոչվածը
Կարգին շնչում է միայն ջրի՞ մեջ.
Մինչդեռ այդ խեղճը շնչահեղձվում է
Հենց ի՞ր իսկ փոշով,
Ինչպես որ մարդը՝ անորոշությամբ:
Իսկ ո՞ւր է ջուրը...

Արևի շողերն ուզում են մտնել
Նաև եղնջի թփուտի մեջ թավ,
Բայց, դաղդղվելով, բեկվում են կոդքի:
Թող ցույց տան նույնիսկ եղնջի՞ թփուա,

Որ չի ստվերվում անորոշությամբ,
Եվ բնակավայր դու կդարձնես
Այդ եղնջո՞ւտը...
Թե ծառ լիներիր՝
Դու կարտասվեիր սեփական խեժով
Եվ քո կեղևով քեզ շրջափակած՝
Քեզ կբուժեիր:
Բայց քո արցունքը
Քեզ կրծոտում է.... սնդիկի՞ նման,
Եվ այս աշխարհի ցավերի դիմաց
Դու կեղևահան ծառ ես մարդաձև,
Եվ կեղևահան այդ ծառի վրա մնում են հիմա
Քիչ թե շատ առողջ այս քո աչքե՞րը՝
Լեցո՞ւն-լեփ-լեցո՞ւն անորոշությամբ...

Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության ոխերի՞մ ցավով,
Որ մահդ է տենչում:
Բայց մահ էլ չունես.
Կարգին մեռնելու համար էլ
Պիտի մարդ բախտ ունենա...

Եվ կուր մի՞ հարցրու. «Ուրեմն ի՞նչ անել»:
Այդ պատասխանը քեզ ե՞ս չեմ տալու:
Ինձնմանները եկել են աշխարհ
Եվ այսուհետև աշխարհ են գալու,
Որ իրենց կյանքով ցույց տան ինչ չանե՞լ:
Այսքա՞նը միայն:
Իսկ մնացածի համար դիմեցեք
Դուք դարձյա՞լ ցավին,
Անորոշության անորո՞շ ցավին...

«ԾԽԱՆԻ ԾՈՒԽ» շարքից

ՄԱՐԴ ԷԼ ԿԱ, ՄԱՐԴ ԷԼ

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...

Դու, որ սխալվել, սակայն չես ստել,
Կորցրել ես հաճախ, բայց նորից գտել,
Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,
Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել,
Այլ մագլցել ես կատարից կատար,
Ելել ես անվերջ, բարձրացել ես վեր՝
Քո ահեղ դարից առնելով թևեր...
Ելել ես, որ ողջ աշխարհը տեսնես,
Որ անօրինակ քո դարը տեսնես,
Բոլոր կերպերով դու նրան կգաս,
Շահածով խնդաս, կորուստը սգաս...
Ելել ես իբրև նրա մունետիկ,
Որ նրա հեռուն կգաս քեզ մոտիկ,
Որ ճշմարտության ափերը տեսնես,
Ծպտըված ստի խաբելը տեսնես,
Որ չվախենաս, որ չվարանես՝
Անարդարության դեմքը խարանես...
Ահա թե ինչու դու այսքան տարի,
Դու, որ հարապատ ծնունդն ես դարի,
Քայլում ես անդուլ, առաջ ընթանում,

Քայլում ես այնպես ծանր ու վիթխարի,
Ասես աշխարհն ես շալակած տանում...

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում,
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի...

Նա, որ ելել է շալակն աշխարհի,
Աշխարհում երբեք թաց տեղ չի քնում,
Գիտի թե ո՛ւմ հետ և ո՛ւր է գնում,
Ո՛ւմ մեռելին է անարցունք լալիս,
Ո՛ւմ խոսքի վրա ստից ծիծաղում,
Ո՛ւմ հետ դինջ նստած նարդի է խաղում,
Հարկ եղած դեպքում և տանուլ տալիս...
Վերից է նայում ցածրում կանգնածին,
Չի նայում երբեք ներքն ընկածին.
Վերև կանգնածի աղջկան, որդուն,
Սիրուհուն անգամ ու քարտուղարին
Ո՛նց է քսմսվում ու շողոքորթում...
Որտեղ մի պատառ չաղ ու յուղալի՝
Կանգնած է այնտեղ նա երկյուղալի.
Հեշտ կրպարտում է՝ երբ տեղն է գալիս,
Նույն հեշտությամբ էլ իր մեղքն է լալիս...

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր,
Հարապատ մորից ու որդուց ավել,
Աշխարհում նա իր աշխարհն է սիրում...

Սո՛ւտ է: Նա այնտեղ իր շահն է սիրում:

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր
Նա պատմության մեջ իր դարն է սիրում...

Սո՛ւտ է: Նա դարի ավարն է սիրում:

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր
Մեր կյանքն է սիրում, մեր նորն է սիրում...

Սո՛ւտ է: Նա միայն իր փորն է սիրում:

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր
Գաղափարական իր հորն է սիրում...

Սո՛ւտ է: Ո՛չ հորը, ո՛չ մորն է սիրում,
Թանկ չէ ո՛չ որդին, և ո՛չ էլ թոռը:

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր
Սիրում է կյանքում նա իր... աթոռը:
Աթոռն է սիրում
Ու նրան տիրում.
Ցանկացած գնով ելնում է նա վեր,
Փորձում է թռչել նա առանց թևեր,
Անվերջ սողալով առաջ է գնում,
Գնում է այսպես և... տարեցտարի
Ելնում է այսպես... շալակն աշխարհի:

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում,
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի...

25. X, 3. XI. 55
Մոսկվա

ՇԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

To be or not to be
(ԼԻՆԵԼ, ԹԵ ՉԼԻՆԵԼ)՝

Նամակ բարեկամիս՝ գրված պոետական
և աշխարհագրական հեռուներից

Հեռու ժխորից քաղաքի, ծխից հեղձուցիչ,
Հեռու շչակի խելագար բառաչից, կառքերի վազքից անկամ,
Այս հեռավոր լեռներում, ուր ամպերն են արձիձ
Եվ հարափոփոխ երկինքը՝ սենտիմենտալ ու լալկան,—
Ես— հոգուս մորկածուփ հորձանքի հանդեպ խլականջ,
Ես— շնչահեղձ, որպես հորձանքով ափ նետած ծովաձուկ,
Ես— անհունների մեջ նետած միտքս, որպես սովածին
գայլական՝
Սպասելով անհունների արձագանքին՝ կարոտով անձուկ.
Ես— սրտիս մեջ Դարի Տառապանքը և հանճարի շունչը
դարերի.
Ես— տրտմաթախիծ, ինչպես օրը արևից առաջ և խնդությամբ
ցամաք,
Այս խավար գիշերին երկունքի նստած՝ հայացքս դեռ
անհայտ արևին,
Երկունքից առաջ, բարեկամ, չափավորում եմ խռովքն իմ
հոգու և հանգավորում որպես քեզ նամակ:
Արդ տրտում է անձն իմ գերակոր և բեկված է կամքն իմ
անկոտրում,
Եվ թաց են աչքերն իմ անարտասուր.
Սրտիս մեջ խռովք կա անեպի, հոգուս մեջ՝ տրտունջ,
ոևերիս՝ փետ

Հայացքիս դեմ՝ արյան փոսեր:

...Եվ կանգնած է իմ առաջ մարդկությունը՝ վիպը ծուռ և
մերկանդամ,
Ամոթը թուխս դրած աչքերում,
Ձեռքերին կապանքի հետքեր, կապուտ վերքեր այնքա՜ն,
Սիրոտի նուսով, կորցրածի դառնությամբ, վեհությամբ
աստծո և հեգությամբ գերու...
Ե՛վ բկտված է նա, բրածեծ և խոցուկ է նրա տեսքը,
Ինչպես ծաղիկ մի ջրում՝ ջրալիքով տարուբեր,
Ե՛վ անալիք է նա՝ մեղապարտ կատաղության փրփուրը
սառած շրթներին,
Ե՛վ ծանր է նրա վիշտը, որպես դաժան տիրոջ մշակի բեռ,
Ե՛վ հոգնած, ինչպես մկանը վաստակած կռների...
Ի՞նչ է նա վերջապես, այդ խոցալին, որպես խրխունջ՝
անգետ, որպես խլուրդ՝ կույր—
Դարավոր մի խեղկատակ տիեզերական բեմերի,
Ուր հուշարար է Ժամանակը, Տարածությունը՝ վարագույր,
Բնությունը՝ կենդանի դեկոր և բազմերանգ ճառագայթները՝
գրիմ...
...Եվ ահա կանգնած է նա իմ առաջ՝ անօգնական ու թշվառ,
Եվ վերքերից իր, որպես ավերված աչքերից. հանդա՜ռտ
Ծորում է արյունը դեռ տաք, որպես ահեղ բողոք, որպես
ծանր գանգատ...
Իսկ իմ մեջ խոովքն է փայլատակում,
Եվ վրեժը կարկառում է թաթերն իր դեպի հոգուս երկինքները
յոթերորդ,
Իսկ իմ մեջ, որպես Աստծո մեջ, ծագում են երկու հակում—
Ինձ դեպի հակառակ բևեռներ մղելով:
— Արդյոք չընթքե՞լ այս թշվառ Մարդկության վերքերի վրա,
որպես թույն մահացու
Եվ անհնարին ուժով չապտակե՞լ...
Նրան, որ դարերով իր բյուր որդիների
Ժանիքներն է իրար ակռայել,
Բայց ոչ երբեք նրանց բազուկները հուժկու...
Եվ ինչպե՞ս կարող էր նա այդ կռահել,
Նա, որ միայն ծեծվել է, բկտվել, գերվել՝
Որպես Հիսուս մի բազմաչարչար,

Որ սիրտն իր, ուղեղն իր տերերին է տվել,
Նրանց, որոնք որպես վայրի արջառ
Փորփրել են հողը եղջյուրներով,
Սմբակներով ցրել երկինքն ի վեր
Եվ հետքերով իրենց գոռ ընթացման
Առատ շաղ են տվել դիե՜ր, դիե՜ր, դիե՜ր...
Երկրի երեսն ի վեր հորդեցրել
Վերջալույսի գույնի, կակաչների գույնի կարմիր ջրե՜ր,
ջրե՜ր...

...Եվ չթողնե՞լ արդյոք անմխիթար
Նրան այնպես մենակ ու կարեվեր
Եվ սիրտս առած որպես հավերժորեն գտած
Մի անկորուստ բաշխիչ, մի արևե,
Մի լուսավոր ցնորք, հավետ օտար
Հերյուրանքին...
Թռչել բա՜ռնր, հեռո՜ւ...
Որպես անմիտ կատակ՝
Էլ չընիշել բախտը այս աշխարհի,
Էլ չընիշել կանաչ, ճանաչ կանանց
Թովչությունները սին, երբ որ պիտի
Այդ ամենը արյան ումպով կուլ տալ,
Ոնց դառնահամ դեղը ջրով և կամ թեյով,
Երբ նախճիրով պիտի, մահով, պատերազմով, վենքերով
հոխորտալ

Եվ գրկել կնոջը կտրված մի թևով,
Այն էլ եթե, եթե, բախտը եթե ժպտա...
Օ՜, ծանր է, անթափանց մղձավանջը այս սև,
Ինչպես կուպր, ինչպես ծանրասև վարագույր...
Եվ ի՞նչ, և ի՞նչ, և ի՞նչ, ի՞նչ խոսքերով ասել
Նրա մասին, որ, արդ, իր կրակում
Հրկիզում է բոլո՜ր, բոլո՜ր նրանց,
Որ ապրում են այս խեղճ հողագնդի վրա...

Լավ չէ՞ արդյոք լռե՜լ, լռե՜լ հավետ
Եվ չընիշել այդպես մոտիկ ու մերձ.
Ինչպես ծաղիկ մի վառ ու հոտավետ՝

Քթին դեռ երապուն մի աղջկա,—
Եվ չըլինել այդպես մոտիկ ու մերձ
Այս աշխարհի բախտին, այս մարդկության
Բյուր ցավերին անբուժ, գալիքին դառնապերձ
Այդպես ահա ըսկիզբն ունենալ վերջ,
Լռե՛լ. լռե՛լ անճար... անհուսության ցավի,
Անհայտության կապիր, սուր ճիրանների մեջ...

Բայց ի՞նչ... Լինել որդի՞ դըրժյալ և դավաճան
Ե՛վ անարժան որդի, և՛ անառակ,
Լինե՞լ աստծո դեմ ըմբոստացյալ տաճար,
Բուն խոսքի դեմ ցըցված անմիտ առած.
Անցած ուղիներին դավաճանող...
Համաձայնվե՞լ կամա, որ ի վերուստ
Տրված շնորհն այս, գուցե վիթխարի
Այս կրակը ներքին՝ ինձ տապակող—
Դարձնելով ինձ մոխիր, անդարձ մարի՞...
Եվ այդ ամենն այնպե՞ս... մի կատակո՞վ...
Բայց չէ՞ որ ես անբախտ նույն մարդկության,
Նույն կարեվեր սրտի այսքա՞ն ահեղ
Ծնունդն եմ ի վերջո և գուցե թանկ,
Ինչպես նույն մարդկության վաղընջական դարի
Իմ պապերի համար— մի նետ-աղեղ...

Եվ այսօր. դառնագի այս օրերում,
Այս օրերում անլույս և խիստ մըթար
Թոչե՞լ դեպի եթեր, թոչե՞լ հեռու,
Թողնե՞լ նրան այսպես անմըխիթար...
Չփայփայե՞լ նրան հույսերով պերճ,
Վերքերը չամոքե՞լ վառ երգերով,
Դեռ ըսկիզբ չունեցած ունենալ վե՞րջ...
Եվ այդ այն ժամ, եթե որ բյուր վերքերով
Աշխարհն է կուչ եկել որպես ոգնի
Եվ հարկավոր է տալ նրան թևեր...
Երբ պարտեկն աշխարհի չոր է, ավեր,
Եվ պետք է նրա մեջ առուն խոսի՝

Բողբոջները նրա որ չըգոսնեն,
Եվ կանաչի ծառը հեգ մարդկության...
Իսկ դաշտերում անհերկ, մերկ ու ավեր
Դեռ որպես ժանգապատ, հուժկու գութան
Հերկե՞լ պիտի հողեր և ժանգը տալ
Հողի գոց արգանդին անվերադա՞րձ, հավե՞տ
Եվ մարդկության կրկին ծննդի հետ
Ահեղորեն կանգնել՝ մտքով հասուն,
Խորհով խրթին, լեկվով արևաներկ,
Շիտակիրան, որպես սեգ վերստայուն...

...Օ՜, չեմ կարող երբեք, իմ բարեկամ,
Հեռու մնալ ցավից իմ այս դարի,
Մարդկության սին բախտից, եթե անգամ
Իմ լույսն իր խավարում անդարձ մարի...
Թեկուզ մնան հավե՞տ, հավե՞տ օտար
Իմ թափառող հոգուն և իմ սրտին,
Իմ թռիչքին մոլի, հրակատար
Իմ իղձերին, խոհին՝ խոր ու խրթին...
Եթե անգամ մարդկանց ժպիտը— թույն,
Քմծիծաղը՝ աղբյուր անհուն ցավի,
Արհամարհանքը սին և մշտարթուն
Առօրեական, ճղճիմ, սրտացավի
Տեղիք տվող հապար արարքները նրանց.
Ձանքերը՝ կտրելու թևերս արծվի.
Հերյուրանքը ստոր, եթե հոգուս վրա,
Որպես մահվան ստվեր մեղմորե՞ն տարածվի,—
Նորից ես չեմ կարող լինել դաժան,
Լինել դրժյալ որդի և հեռանալ
Դեպի կապույտ հեռուն, որտեղ հապար
Հորիզոններ գուցե իմ դեմ բանան...

. . . . . .

Ռուբիկոնը անցած, ոչ շատ թեթև
«Լինել-չըլինելու» խնդիրն ահա
Այսպես լուծած և լուռ թողած հետև

Անկումներն իմ, որպես կանգուն պահակ
Իմ փոթորկոտ կյանքի անցյալ օրվա,
Այսօր ահա, որպես վաղվա
Գալիք փորձանքների անմահ գուշակ,
Ես նետվում եմ առաջ որպես բուժակ
Տիեզերքի անհուն, խոր վերքերի...

. . . . . .

10. VIII. 42
Չանախչի – Նավչալու

ԱՆՀԱՍՑԵ ԲԱՑԻԿ

Թաց փայտի պես
Ո՛չ վառվում են,
Ո՛չ էլ հանգչում,
Այլ լոկ մխո՛ւմ:

Ճահճուտի պես՝
Միանգամից չեն չորանում,
Չեն էլ բխում:

Բաց դռներ են անվերջ բախում,
Թխված կուտը նորից թխում:

Շաքարի տեղ շիբ են ծախում,
Ի՞նչ է՝ շիբն էլ սպիտակ է:

Կարծում են, թե կարևորը
Ապրա՞նքը չէ,
Այլ.... պիտա՛կը...

17. IV. 55
Մոսկվա

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻ

Ինչ անում եմ՝
Կրքով եմ անում,
Անում եմ թափով,
Եռանդով ամբողջ՝
Վատնելով ավյուն,
Ծախսելով արյուն,—

Անտարբերության թշնամին եմ ես,
Անհա՛շտ-անպիջո՛ւմ-մոլի՛ ոսոխը:

Բայց երբ աշխարհի բյո՛ւր գոտիներից
Աշխարհ է հաշվվում լոկ երկու բևեռ,
Բայց երբ աշխարհի բյո՛ւր երանգներից
Աշխատում են լոկ սևն ու ճերմակը,
Բայց երբ աշխարհի բոլո՛ր բառերից
Երկուսն են խոսում՝ լոկ «ոչ»-ն ու «այո»-ն,
Ջերմաստիճանս— անպոր կայրությից—
Հասնում է նույնիսկ քառասունմեկի,
Ցավը դառնում է կեղեքիչ մրմուռ,
Ու ես՝ թշնամի՛ս անտարբերության,
Անտարբերության ոսո՛խը մոլի,
երևակայե՛ք,
Գերադասում եմ... մնալ ձեռընպահ:

Սակայն այնպե՛ս եմ մնում ձեռընպահ,
Որ պերճախոս է «չէ»-ից ու «հա»-ից...

[1959]

ՊԻՏԻ

Ա՞խ այս անվերջ «պիտի»-ն
Վերջ ունենա՞ պիտի...

«Պիտի... այսպես անենք,
Պիտի... այնպես անենք:
Պիտի... այսպես լինի,
Պիտի... այնպես լինի:
Պիտի... պիտի... պիտի»...

Այսպես «պիտի»-ն պիտի
Նստի գահի վրա,
Իսկ մենք մնանք ոտքի,
Երկրպագենք նրան...

3. XI. 63
Երևան

ԾԱՌԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Չէ՛, շա՜տ եղավ,
Էլ շա՜տ եղավ այս թթվադեմ փնթփնթոցը...

Ծառերն անգամ
Ունեն իրենց բարությունը՝ կով ստվերը,
Որ անվճար մեկ են հանձնում,
Որպեսզի մենք նստենք նրանց բարության մեջ
Ու... չարանա՞նք՝
Եթե անգամ ոչ խեղճ հողի,
Ապա նրա թեկուզ և վատ տիրո՞ջ վրա...

Բայց ծառերը նաև կանաչ պլաքներ են,
Որ մեկ անխոս հրավիրում
Ու խնդրում են նայել... վե՜րև:

Կույրե՞րն են միշտ քայլում՝ դեմքը վերև տնկած:
Իսկ մշտապես ցած նայողը կույր չէ՞ արդյոք...

Եկեք մենք էլ վերև նայենք՝
Ոչ թե կույրի, այլ ծառի՛ պես,
Որպեսզի մեկ երբեմն զգանք
Քիչ ավելի մոտիկ օդին, քան թե հողին...

Իսկ շատ չեղա՞վ մեր այս տտիպ քմծիծաղը
Սրա՜-հրա՜,
Ամե՛ն ինչի,
Կյանքի՜ վրա:
Բավակա՛ն է.
Եկեք ժպտա՛նք,

Եվ ոչ թե լոկ մեր շուրթերով ու աչքերով,
Այլ ո՜ղջ մարմնով՝ այնպե՛ս, ինչպես
Ամբողջ մարմնով է կատարվում ամեն մի պար:
Թե չէ անվերջ փնթփնթալով կյանքի վրա՝
Արդեն կյանքն ենք վիրավորում շատ ավելի,
Քան կյանքն է մեզ վիրավորել

Թող ծառերը գրկախառնվեն
Իրենք իրենց բարության հետ՝
Զով ստվերի,
Ու քիչ քնեն,
Որ... չլսե՜ն մեր քացախած քրթմնջոցը,
Իսկ մենք
Նրանց մատնանշիչ պլաքներին հետևելով
Նայենք վերև՜,
Մտերմանանք ա՛յն օդի հետ,
Որ իշխում է ոչ թե հողի տիրո՜ջ վրա,
Այլ հենց նաև հո՜ղի վրա, նաև հողի՜:
Մտերմանանք ա՛յն օդի հետ,
Որ չի անցնում լոկ մարդկային շնչափողով,
Այլև փողով արդարությա՜ն՝
Շեփորելով և՛ արյունոտ կարեկցանքի,
Ե՛վ արյունոտ հաղթանակի
Ե՛վ ծանրագին ուրախության
Բեթհովենյան երգը հուժկու...
Ու եթե դեռ ոմանք պիտի կրկին գրկեն
Ծանոթ թառը
Եվ օրորեն իբրև մանկան, որ... լաց լինի,
Ապա ինքըս
Չե՜կ եմ ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել,
Ի՜նձ եմ ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել
Եվ օրորե՛լ,
Եվ օրորե՛լ,
Որ այսուհետ... չթնգթնգաք,
Որ այսուհետ... չթնգթնգամ...

4. II. 64
Երևան

ՀԱՉԸ

Շա՜տ է շատացել աղմուկն աշխարհում,
Շատացել այնքա՜ն.
Որ լռությունը բարկացել է խիստ,
Եվ դրանից է սնդիկը ելնում ջերմաչափն ի վեր՝
Բանտարկված ինչ-որ վհուկի նման՝
Մեկ վախեցնելով ու վկայելով,
Որ երկրագունդը թոքերի աճող բորբոքում ունի,
Եվ մենք ամենքս էլ ջերմություն ունենք:
Մեր ջերմությունը
Լռության սաստիկ բարկությունն է հենց,
Եվ նրա ցասում-բողոքն է նաև

Հա՜կը,
Այս հա՜կը.
Որ կարծես արդեն տիրակալական հովեր է առնում
Եվ համատարած աշխարհը բռնում...

Ու սաստկանում է այս հակը նաև... ծխից ու մխից,
Ուտի՜չ, թունավո՜ր ծխից ու մխից,
Որ շատացել է աղմուկի չափով,
Քանի որ ծուխը նրա շունչն է հենց...

«Ծուխ էր դուրս ելնում եղեգա՜ն փողից»...
«Օ ծո՜ւխ ծիրանի»...
Իսկ այժմ արդեն

Ծուխ են դուրս փնչում ո՜չ միայն կանայք.
Նույնիսկ ո՜չ միայն աղջիկներն անկոնք.
Ծխող են դարձել իրե՜ր ը նաև,
Առարկանե՜ր ը,
Մետաղնե՜ր ն անգամ.
Ամեն մեքենա ծխով է շնչում,
Ամեն գործարան ծուխ է դուրս փնչում:
Ծխնելուկային գլանակները ցցելով երկինք՝
Նրանք ծխի հետ տարածում են հակ...

Հա՜կը.
Այս հա՜կը:

Բռնել է հիմա նաև երկինքը.
Կապույտ երկինքը
Սուր վարակվել է ա՜յն կապույտ հակով,
Որ այլևս արդեն
Միայն մանկական հիվանդություն չէ,
Այլ հիմա նաև երկնայի՜ն մի ախտ,
Տիեզերակա՜ն մի հիվանդություն:
Եվ ամեն տեսակ օդանավերի

Հա՜կը.
Այս հա՜կը,

Այս կապո՜ւյտ հակը
Հնչում է հիմա մեր գլխից վերև,
Նաև մեր գլխի վերևից վերև,
Որտեղ ծխում են ոչ միայն ամպեր հնավանդական,
Այլև անիմաց ինչ-որ մի ոգի,
Որի անունն էլ չեն ուզում ասել,
Ինչպես որ չարքին անվամբ չեն կոչում...
Արբանյակների ծխին համաչափ
Ծուխն է խառնվում ա՜յն հրթիռների,
Որ ունեն երեք, չորս ու հինգ գլուխ՝
Քաղաքակրթված դևերի նման...

Եվ լռությունն է բարկանում կրկին
Ու ջերմաստիճան դառնում երկնքին,
Որ տենդի մեջ է,
Եվ ում քրտնքի
Անձրև կոչեցյալ կաթիլներն արդեն
Հաճախ են դառնում ախտ սոդոմական.
Որ բուժո՜ւմ չունի,
Եվ որի ճչան նախանշանը

Հա՜կն է,
Ա՛յս հապը...

Հապի՜ց,
Ա՛յս հապից
Բուժվե՜նք շուտափույթ,
Որ քամի՜ն հապա
Քարանձավների՛,
Խողովակների՛,
Փչակների՛ մեջ
Եվ փողոցային լուսամփոփների կենտ կոպերի՛ տակ
Հապա մշտական թրթիռով սրտի ու խորհրդավոր՝
Այն հավերժական սիրահարի պես,
Որ իր գալուստն է ավետում հապով...

Հապի՜ց,
Ա՛յս հապից
Բուժվե՜նք շուտափույթ,
Որ ամեն մի տան դռան մոտ հապա
Ավտոմեքենա՜ն հարմար ու էժան՝
Հրավիրելով մի կբոսանքի,
Որի վերջն ունի «հասբույր» գրություն...

Հապի՜ց,
Ա՛յս հապից
Բուժվե՜նք վերջապես,
Որ հապը դառնա տեր ու տնօրեն

Աշխարհի ամեն նավահանգստում,
Կայարաններո՜ւմ համայն աշխարհի,
Նաև երկնքո՜ւմ,
Նաև երկնքո՜ւմ,
Որ նույնպես ունի լայնացման կարիք:
Երկրին
ու
Երկնին
Թոքերի առողջ լայնացո՜ւմ է պետք...
Ո՛չ թե թոքերի ահեղ բորբոքում...

7. II. 64.
Երևան

ՊԱՏՐԱՆՔԻ ՊԱՏԱՆՔԸ

Եվ շատ ավելի վատթար է ցավը,
Քան անարգանքն ու անպատվությունը,
Եթե այդ ցավը ծնունդ չի տալիս վեհ ու վսեմին:

Վե՜հ ու վսեմի՜ն,
Լսո՞ւմ եք, տղե՜ր,
Վե՜հ ու վսեմի՜ն:

Եգիպտոսն ինքն է ավազ ներմուծում,
Այն էլ ո՞ւմ համար. իր... Սահարայի՜:
Ծաղրուծանա՞կ է: Կատա՞կ է հիմար:
Բայց Սահարայի ավազն իսկապես
Շինարարական շաղախ չի՞ դառնում.
Մանր է չափականց:

Ապրելով նույնիսկ համակ-անսպառ ավազի վրա՝
Մեկ հարկավոր է, հատկապես հիմա, ավազ ներմուծել մեր
շենքի համար,
Հարկավո՞ր ավազ:

Իսկ պատրանքներից և պատրանքներով հղիանալը
Մեղք չէ հասարակ, այլ մեղք այնպիսի՜,
Որ հավասար է... (բառը չե՛մ ասում):
Եվ բավական չէ՞,
Որքան մերպեսին
Այլասերեցին այդ պատրանքները՝
Այդ հանդերձափոխ գործակալները... (բառը չե՛մ ասում):

Թե բավական է՝
Հուղարկավորման լռությամբ լռենք
Ու լռության մեջ նոր տառեր կռենք՝
Իբրև նորօրյա աղվեսադրոշմ
Սին պատրանքների ճակատի համար...

Կորչելը, անշո՛ւշտ, աղետ է ահեղ,
Աղետն էլ գոնե լավ է այնքանով,

Որ ապատում է ելք որոնելու մտքաքամ հոգսից:
Սակայն պատրանքով փրկվելն էլ ախտ է (բառը չեմ ասում).
Որ տարածվում է... խոնավության պես
Եվ ամե՜ն ինչի լնդերքի վրա
Բացում իր վերքը՝ բորբոսի տեսքով:

Անգե՜տ տղաներ, մի՞թե չգիտեք
Մեր միակ փրկչի սուրբ գերեզմանի վայրը սրբական:
Նա հենց այնտեղ է,
Որտեղ պատրանքն են պատանքում, տղե՜ր.
Պատրա՜նք պատանքում:

Ամուսն ամուր չէ, ոչ էլ ամուրի:
Եվ Հայրենիքը ո՜չ մուրացկան է, ո՜չ էլ հարկահան
Եվ սերն էլ տուրք չէ, ոչ էլ գթություն,
Որ ամեն մեկը կամ տա, կամ տածի,
Այլ սուրբ ավյուն է
Ու սուրբ արյուն է,
Որ պիտի տա ծիլ
Անկողիններում թե՛ մոր, թե՛ մանկան,
Որտեղ սավանը ճմռտորվում է ո՜չ սավանի պես.
Այլ իբրև... պատա՜նք,
Որ... պատառոտվի պատանք-պատրանքը
Եվ համբարձվելով հառնի նո՜ր ոգին:
Նո՜ր ոգին, տղե՜ր,
Նո՜ր ոգին, նո՜ր...

4. XII. 64
Երևան
9. XI. 65
Չանախչի

ՈՂՋՈՒՅՆԻ ՔՄԱՅՔԼԵՐԸ



ԲԱՐԵՎ

— Բ ա՛ ր և,—
Մեկ հատիկ այս բառն եմ ասում՝
Կնքված անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման,
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես:

Եվ կուզենայի՛,
Շա՛տ կուզենայի,
Որ այս բառն իրոք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենքի՛ համար:

Եվ կուզենայի՛,
Շա՛տ կուզենայի,
Որ նմանապես այս բառը լիներ
Նոր և իրական մի «Բացվի՛ր, Սեզա՛մ»:

— Բ ա՛ ր և,—

Ասեիր գնացքին,
Նավին
Կամ օդանավին,
Ու ներս մտնեիր.
«Բարև»-ըդ իբրև տոմսակ ընդունվեր:

— Բ ա՛ ր և,—

Ասեիր կնոջն անծանոթ,
Ու նա քեզ սիրեր հենց նո՛ւյն վայրկյանին

Կամ ներումնահայց ժպիտով ասեր,
Թե բարևե՛լ են քեզանից առաջ:

— Բ ա՛ ր և,—

Ասեիր, և պարզ երկինքը
Իսկո՛ւյն անձրևեր, եթե պետք է դա:

— Բ ա՛ ր և,—

Ասեիր լռակյաց հողին,
Եվ նա ծլարկեր ու հասկավորվեր:

— Բ ա՛ ր և,—

Ասեիր մահի՛ն էլ անգամ,
Եվ նա հասկանար, որ քեզ մոտ գալով՝
Ինքը շտապե՛լ,
Շա՛տ է շտապել...

— Բա՛րև-ը դառնար իրական ու նոր մի... «Բացվի՛ր, Սեզա՛մ»:

Եվ այն ժամանակ եթե արջին էլ ասեիր

— Բ ա՛ ր և,—

Նա էլ միգուցե հենց նույն վայրկյանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
Եվ մի այնպիսի՛ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լարվում է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում:
Այսպես էլ՝ օձը ծերերի ձեռքին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար սպահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի,
Եվ փոթորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մա՛րդ իրոք...
Անկարելի բան աշխարհում չկա՛,

Եթե աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բերանում դարձել է

—Բ ա՛ ր ն.—

Ուրեմն՝ անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես՝

— Բ ա՛ ր ն.

Քե՛կ
Ու
Ձե՛կ,
Ծանո՛թ-անծանո՛թ իմ սիրելիներ:

Թո՛ղ անկարելին դառնա կարելի
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենքի՛ս համար,
Դառնա կարելի վաղն ու հենց հիմա,
Դառնա կարելի մե՛կ բառով՝

— Բ ա՛ ր ն...

19. II. 64
Երևան

ԲԱՐԻ ԷՈՒՅՍ

Նորից երկնքով հին արշալույսն է սիգալով սիգում,
Որպեսզի մեր նոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ
Միշտ էլ թարմ մնան... առասպելները:
— Բարի լո՛ւյս, իմ նո՛ր և իմ... առասպե՛լ:

Ինչպե՞ս քնեցիր:
Ի՞նչ երազ տեսար:
Ի՞նչ գեշ երազից արթնացար վախով:
Եվ երազիդ մեջ
Դու պատահաբար չտեսա՞ր նրան,
Ով— ի՛նքդ էլ գիտես— քեզ գիտի-այնպես,
Ինչպես հիվանդն իր հիվանդությունը...

Լույսը բարի է
Եվ բարին լույս է... այնքան ժամանակ,
Քանի դեռ սրտերն այդ «բարի լույս»-ը,
Դարերո՛վ մաշված այդ «բարի լույսը»-ը
Լսում են կարծես առաջի՛ն անգամ
Եվ ամեն անգամ փշաքաղվում են տաք փաղաքշանքից
Ու նվաղումից սարսռոում այնպես,
Ինչպես երևի
Մութ երկրաշարժից բույսն է սարսռում ու փշաքաղվում...

Ես փոքր-ինչ հետո դուրս կգամ փողոց,
Որ հետախուզեմ վիճակը օդի՝
Թունդ ներծծելով ծխամոլի պես:
Եվ վա՛յ թե թվա, թե ամեն ինչից
Բուրմունք է գալիս թարմուն աղջկա
Ու կամ ծաղկածայր փշոտ վարունգի:

Եվ վա՜յ թե թվա, թե բոլոր մարդիկ
Ի՜նձ են կողոպտում՝ օդը շնչվով,
Քանի որ օդը... քեզնո՜վ է լեցուն,
Ու քեզ են նրանք ներշնչում կարծե՜ս...

Հանգել են արդեն լույսերը բոլոր,
Եվ լոկ այս կիկլոպ լուսանիշներն են, որ արևի դեմ
Ծիսաքրմական գոռոզությունը կորցրած թեպետ՝
Պատվիրանի պես կրկնում են դարձյալ
Իրենց գունային երրորդությունը՝
Բոլոր սանձակերծ մեքենաներին տեղում մեխելով
Կամ վայրկենապես քշելով առաջ:
Մի՞թե կանաչը պիտի կուրանա
Աշխարհի բոլոր լուսանիշներում,
Որ ես էլ կրկին, կանչելու նման, կարոտով ասեմ.
— Բարի լո՜ւյս, իմ լույս կանա՜չ ու... կարմի՜ր:

Ամպի մի պատառ արևն է ծածկում.
Ակնոց է դնում արևը կարծես:
Ես անակնո՜ց էլ պարզ տեսնում եմ քեզ
Եվ զգում եմ քեզ ինձ այնքա՜ն մոտիկ,
Որ կարծես նույնիսկ քո շունչն եմ շնչում,
Մինչդեռ դու ինձնից հեռո՜ւ ես այնքան,
Որքան կիկլոպը՝ այս լուսանիշից:
Բայց մեզ կապում է մի ո՜ղջ պատմություն,
Փառահե՜ղ, անմե՜ղ, անմե՜ռ պատմություն,
Եվ մի «բարի լույս», որ չունի՜ վախճան:
Նա պիտի հնչի մեկնի՜ց էլ հետո
Եվ այնպե՜ս հնչի,
Որ մերպեսները
Նո՜ւյն փաղաքշանքից միշտ փշաքաղվեն,
Նո՜ւյն նվաղումով սարսռան ապաքուկ,
Ինչպես բույսերը՝ մութ երկրաշարժից:
— Բարի լո՜ւյս, իմ կյա՜նք և իմ... պատմությո՜ւն....

7 և 13. II. 64
Երևան

ԲԱՐԻ ԱՋՈՂՈՒՄ

Կենտ աչքն է ճփում արևը կրկին՝
Պաղ առավոտվա մաքուր լվացված,
Սակայն չարդուկված թաշկինակ-ամպով,
Ու մանուկ օրն է ձգվում-հորանջում:

Եվ սիամական երկվորյակի պես
Իրար կցկցված խոփերը, նորի՜ց,
Հլու-հնազանդ ա՜յն տրակտորին,
Որ գոմեշների, եզների, ձիու
Արքայատունը գահակուրկ արեց,—
Խոփերը նորի՜ց
Այստեղ ու այնտեղ
Ծեր երկրագնդի հին մաշկն են քորում՝
Կարծես թիմարում,
Եվ ակոսները իրար են դարսվում՝
Էջերի նման.
Հողը թերթվում է,
Իսկ ընթերցումը կլինի հետո,
Երբ արեգակը
Իր բժշկական սուր ասեղները խրելով հողում՝
Ավյուն սրսկի
Եվ դուրս քաշի ծիլ, հասկավոր ցորուն:
— Բարի աջողո՜ւմ:

Արևը հողից ձգում-հանում է ոչ միայն ցորուն:
Արևը նաև շենքեր է ձգում ու հանում հողից:
Եվ մարդ արարածն իր իսկ ստեղծած ա՜յն ընձուղտներով,
Որ մետաղ ունեն ոսկորների տեղ
Ու ջղերի տեղ՝ ճոպան պողպատե,—

Բաբելոնական իր նոր ու հսկա աշտարակներին
Մարդ արարածը մատուցում է քար,
Խճաշաղախ է մատակարարում,
Եվ արհեստական պսպղուն աստղեր՝ ապակու տեսքով,
Իսկ ինքը՝
Պուճո՜ւր, աննշմարելի՜,
Կարկինի նման ոտքերն է չոել
Շինարարական հրապարակում կամ պատի վրա.
Ուզում է ասես իր դոք-կարկինով
Չափել իր անցած-անցնելիք ուղին:

Կպել են արդեն քամու շուրթերին
Հյութեղ տերևներ,
Եվ, տե՜ս, սաղարթի կանաչ երկնքից
Կարճ-անհամաչափ ընդմիջումներով
Ամբողջ ժամանակ
Ցած են թրմփում
Փոքրիկ գույնզգույն օդապարիկներ՝
Տեսքով խնձորի, դեղձի կամ տանձի:
Եվ շնորհալի այգիների մեջ սկիզբ է առնում
Մի աշնանային հալոցք արտառոց:
Հաստակդեղը ծառերն իրենց կաթոցքի
Հեռագրային պարզ այբուբենով
Կանչում են մարդկանց,
Որ գան ու շոյեն
Գգվանքի կարոտ իրենց վարսերը:

Եվ հողի տակից
Գլուխն է հանում մինչև իսկ սոխը՝
Ստորերկրյա արևն այդ գաճաճ,
Ու լռին մարգի կանաչ մթան մեջ
Ասես բացվում է արևածագը:
Արդար նախանձից ու չարությունից
Տե՜ս, լոլիկներն են մուգ-կարմիր դառնում
Մանրակոտորակ արևների պես խավարում ասես,
Ոմանք՝ մասնակի

Եվ ոմանք՝ լրիվ:
Գագարն իր ոսկով
Խաղալիքային գլխիվայր շրջված բուրգեր է սարքում
Եվ կամ թռչելու պատրաստ հրթիռներ խաղալիքային,—
Ո՞վ ինչ իմանա:
Նրա ոսկու մեջ
Մաղձոտ սխտորն էլ կտրում է արծաթ:
Արծաթ է պտղում և մարդկանց դեմքին՝ քրտինքի տեսքով:
— Բարի աջողո՜ւմ:

Ոմանք ջութակի կամ դաշնամուրի բռնի օգնությամբ
Պարան են հյուսում անհայտ ձայներից,
Որ մարդիկ իջնեն իրենց խորքը մութ
Կամ իրենց խորքում շնչահեղձվելիս վերստին փրկվեն:
Ոմանք գույներից նոր կյանք են ձևում,
Որ մարդկանց աչքը ողջ կյանքում հագնի:
Ոմանք բայերի խոր գաղտնիքներն են ուսումնասիրում,
Ջանում են հասնել ածականների դիմակը ողորկ,
Որ ասուլիսեն Անհայտության հետ
Եվ նրա խորունկ խորհուրդը բանան ամենքի առաջ:
— Բարի աջողո՜ւմ:

Կնճիթը խրած անլեկու ծաղկի լի ալրատան մեջ՝
Իր ցերեկային բաց կողոպուտն է ավարտում մեղուն:
— Բարի աջողո՜ւմ:

Ութաձև միջատն ինքնաձև ճամփով իր բույնն է սողում:
— Բարի աջողո՜ւմ:

Մի համեղ մամիկ ընկույզ է ջարդում թռչնիկի համար
(Թող փուտը՝ պակա՜ս, սերտը՝ շա՜տ լինի):
— Բարի աջողո՜ւմ:

Իսկ դո՜ւ, սիրելի՜ս, որ կար ես անում՝
Ասեղդ թելած երապի թելով,
Կամ սրտատրոփ սեղան ես բանում՝

Ծածկելով ոչ թե սփոռոցով միայն,
Այլ նաև տաքո՜ւկ-տաքո՜ւկ կարոտով,
Եվ սպասումից ջերմում ու դողում,—
Մի վայրկյան հետո
Կտեսնես, որ քո դուռը կբախվի,
Եվ շրթերիցըս, մի վայրկյան հետո, սիրով կկախվի
(Համբույրի՜ց առաջ) քնքշանքըս շողուն.
—Բարի աջողո՜ւմ...

18. II. 64
Երևան

ԲԱՐԻ ՕՐ

Իմ օրը երեկ աղքատ էր այնքան,
Որքան դրախտի նկարագիրը՝ սուրբ գրքերի մեջ,
Քանի որ լինել նշանակում է մասամբ ունենալ,
Իսկ ինձ թվում էր, թե չկա էլ սեր,
Թե դարձել է նա արդեն սովորույթ...
Եվ երեկ աղքատ ու խեղճ էի ես,
Չար չէի բնավ, բայց աղքատ էի,
Անստվեր էի՝ անապատի պես.
Տա՛լ էի ուզում՝ տալո՛ւ բան չկար:
Ու ծանր էր մարդկանց «բարի օր» ասել.
Թվում էր, թե ես այդ «բարի օր»-ով
Նրանցից ինչ-որ բան եմ հայցելու,
Որ նրանք պիտի տան չկամությամբ...

Իսկ իմ օրն այսօր այնքան է բարի,
Որ կարելի է հացի տեղ ուտել,
Խաղալիքի տեղ տալ լացող մանկան,
Ծալել՝ իբրև թարմ հրավիրատոմս,
Բաժանել մարդկանց, որ երբ բաց անեն՝
Իրե՜նք ողողվեն ցոլքով բարության:

— Ծանո՜թ-անծանո՜թ մարդիկ, բարի օ՜ր...

Եվ օրն իմ այսօր այնքան է թեցուն,
Որ եթե նույնիսկ ինձ գետին կարկեն՝
Ես կփշրվեմ իբրև... գանձանակ,

Եվ հարատությունն ու կայքը հոգուս
Բարի կնգոցով շա՜ղ կգա չորս կողմ՝
Շփոթեցնելով և ապշեցնելով
Նաև ջարդողի՜ն,
Նո՛ւյնիսկ ջարդողին:

— Բարի օր... և ինձ ջարդողի՜ն անգամ...

Եվ կա կանչ արյա՜ն, որով մեր նախնիք
Դարերի խորքից մեր մեջ են խոսում,
Մեկ հետ են խոսում մե՜ր իսկ բերանով:
Եվ կա բնության անմերժ հրավեր,
Որից ընտանի կենդանին անգամ
Վայրենանում է հանկարծ վերըստին:
Արյան այդ կանչն է հիմա իմ բերնում դառնում
— Բարի օ՜ր,
Եվ քեզ է ահա հասցեագրվում,
Քե՜զ, իմ սիրելի՜, ում անմեղ մեղքով
Ես աղքատ էի երեկ տակավին,
Ինչպես դրախտը՝ սուրբ գրքերի մեջ,
Իսկ այսօր՝ բարի,
Իսկ այսօր՝ լեցո՜ւն... Տոլստոյի՜ չափ:

Թո՜ղ թագավորի այդ բարին այնտեղ,
Ուր դեռևս կա թագավորություն,
Թո՜ղ նույն այս բարին նախագահ դառնա ամեն մի երկրի,
Աշխարհիս բոլոր պետություններին դառնա վարչապետ,
Վառելիք դառնա շարժիչների մեջ,
Դրոշակ դառնա նավերի համար,
Ու ճակատագիր՝ ամեն մի մարդու...
Մենք էլ մտովին, ճամփորդենք սիրով,
Լինենք ամենուր՝ «բարի օր»-ի պես,
Եվ ամենուր էլ դասեր տանք սիրո՝
Ապացուցելով, որ սերն իսկական
Ընդամենը լոկ փոխում է ձևեր,
Երբեմըն թվում սովորույթ անգամ,

Մինչդեռ իսկապես նա նույնն է մնում
Եվ կյանքի միջով, մեր ձեռքից բռնած,
Ապահովաբար առաջ է տանում,
Որ հրե խոսքով մութը ետ հրենք,
Մեր ուսով մղենք ժամանակն առաջ,
Օրվա ճակատից, որպես հին հուռութք,
Կախենք միևնույն կանգը.
— Բարի օ՜ր...

16, 17. II. 64
Երևան

ԲԱՐԻ ԻՐԻԿՈՒՆ

Արեգակն է թեքվում:
Կարճանում է օրը:
Եվ լեռները նորից երեխա են ծնում՝
Ստվերների տեսքով,
Որ մեծանում քիչ-քիչ
Ու թաղում են իրենց ծնող մորը:

Պտտահողմը՝
Հենված ոտնաթաթի վրա,
Խոյանում է երկինք՝
Հաստատելով
Ժխտված առասպելը համբարձումի:

Ցրտող օդում դանդաղ թպրտում է
Մի կտոր տաք մարմին,
Որ թռչուն է կոչվում:

Ինչ-որ կին է կանգնած խուփ դաշտի մեջ,
Եվ ոտների տակով անց է կենում
Երկրագնդի ամբողջ այն առանցքը,
Որի երևացող մասն է ինքը:

Առա՜նց հանցանքի մեջ բռնվելու,
Առա՜նց վկաների առկայության
Ինքս մեղավոր եմ ինձ ճանաչում
Ու վախվորա՜ծ-քաշվա՜ծ մրմնջում եմ հեռվից.
Մրմնջում եմ արդեն ո՜չ թե սրան,
Այլ այն մեկի՜ն՝ իմի՜ն, հեռավորի՜ն.
— Բարի իրիկուն քեզ, ի՜մ մենավոր...

15. XI. 61
Երևան

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ

Ուռճացած երեկոյի մեջ լույսերը կեռ-կտուցավոր
Վաղուց են գիշերը պեղել:
Մայթերը էլ չեն հորանջում մարդկային կրունկների տակ:
Փողոցներն ավլած են արդեն.
Մնացած կեղտերը մթան պիտի որ արևը մաքրի:
Քնել է— և աչքերը բաց—
Քնել է ողջ քաղաքն արդեն:
Եվ մի՞թե դեռ չես քնել դու.
— Սիրելի՜ս, քեզ գիշե՜ր բարի:

Ճյուղավոր թախիծն ուզում է դեռ պատվել նաև սաղարթով,
Որպեսզի հետո, երևի, ստվեր տա, թունո՜տ մի ստվեր:
Այդ թունոտ ստվերի ներքո թող քնի՝ ո՜վ որ կուզենա,
Բայց ո՜չ դու.
— Քեզ գիշե՜ր բարի:

Կննջեն պահակներն անգամ՝
Գիշերվա ա՜յն հովիվները,
Որ կգոն լույս ու լամպերի շնային հսկողության տակ
Մշտապես արածեցնում են ոչխարված զգուշությունը:
Միայն ե՜ս բովանդակ գիշեր աչքերըս պիտի չփակեմ,
Քանի որ ամեն կերպ հիմա քո տեղն է բռնել կամենում
Մի ծանոթ պառաված օրիորդ՝
Այս կպչուն անքնությունը,
Որից ինձ չեն փրկում նաև քնաբեր կոչված դեղերը:
Ու ես այդ անքնությունից՝
Պառաված օրիորդից այս նույն,

Այնպես եմ վախենում հիմա,
Ինչպես որ երեխան է միշտ վախենում բուժակ-բժշկից:
Դո՛ւ գոնե, դո՛ւ եղիր առողջ
Ու քնի՛ր.
— Քեզ բարի գիշե՛ր:

Ես կյանքում ինչքա՞ն գիշեր եմ ունեցել,—
Դժվար է ասել,
Քանի որ այդ հաշիվը պարզ չի արվում թվաբանությամբ.
Այլ միայն սիրո՛ մատներով,
Որ գուցե ծալվեն հաշվելիս,
Բայց դժվա՛ր, դժվա՛ր թե բացվեն:
Ես կանեմ այդ հաշիվը բարդ,
Դա թող ի՛նձ, իսկ ինքդդ քնի՛ր.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:

Մի բարակ-քաղաքավարի անձրև է եկել ժամերով,
Եկել է առանց դադարի,
Եկել լոկ կարծես ի՛նձ համար,
Քանի որ արթուն մարդ չկա՛.
Բոլորը քնած են վաղո՛ւց:
Դե՛, դու էլ աչքերդդ փակիր.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:

. . . . . .

. . . . . .

Հեռու չէ առավոտն արդեն:
Եվ— գուցե արևի ահից—
Դադարեց անձրևն էլ հիմա:
Անձրևն էլ դադարեց հիմա,
Մինչդեռ դու... շարունակվում ես:
Նաև դո՛ւ դադարիր մի քիչ.
Խղճա՛ ինձ, և ի՛նքդ էլ ասա.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր ..

9. II. 64
Երևան

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

Իմ սենյակի մեջ
Գարնան հալոցքի պատրանք էր ցրում
Լվացարանի ծորակը ծանոթ.
(Սիրտը կարոտ էր մտերի՛մ ձայնի)...

Զրհորդաններում
Նորից տանջվում էր ջուրը թալկացած,
Որ մեկ-մեկ նաև ուշքի էր գալիս
Եվ ուրախ լալիս՝
Նո՛ւյն վաղածանոթ-ընտանի ձայնով.
(Սիրտը կարոտ էր հարապա՛տ ձայնի,
Որ դեռ չէ՞ր հնչում)...

Ապակիների լռության վրա
Անբուրմունք-անգույն ծաղկունքը ցրտի
Լուռ թախծում էին,
Ինչպես որ նույնիսկ բենզինն էր թախծում
Սառած-կանգ առած մեքենաների երակների մեջ.
(Սիրտը կարոտ էր սպասվա՛ծ ձայնի,
Որ պիտի՛ հնչեր)...

Ու ես կարծես թե շատ էի նման այն տիպ-նկարին,
Որ իր թափանցիկ թաղանթի ներքո
Տանջվում է սաստիկ, խեղդվում է ասես,
Ու երազում է մի ձեռք մանկական,
Որ թրջի իրեն
Ու շրջի թղթին:

Եկա՛ր,
Թրջեցիր քո քնքշանքի մեջ
Մանկականից էլ անմեղ ձեռքերով
Ու փակցրեցիր մաքրությանը քո,
Որ ես ազատվեմ ճնշող թաղանթից
Եվ պայծառացած գույներով կնգա՛մ...

Դո՛ւ չշտապեցիր,
Կյա՛նքը չուշացավ,

Որ... մեր անձնական օրացույցի մեջ
Մե՛կ օր էլ ներկի ալ-կարմիր գույնով
Եվ գորշությանն իր տա երանգ տոնի:

Եկա՛ր,
Որ (բա՞վ է) է՛լ չապավինեմ
Կարոտ հոլովող բառերին ծխոտ,
Եվ որ (հերի՞ք է) ձեռքերս այլևս չսովեն կրկին:

Եկա՛ր:
Եվ եկար՝ առողջությա՛ն պես,
Որ... իմ երբեմնի
Հիվանդությունն էլ վերհիշեմ հիմա
Քնքշությամբ թաքուն
Եվ հասկանալի մի գորովանքով:

— Բարո՞վ ես եկել:

Եկա՛ր:
Եվ եկար՝ վարպետությա՛ն պես.
Փոքր-ինչ ուշացած, սակայն մեկընդմիշտ:

— Գալուստդ բարի՞:

Եկա՛ր,
Որ նույնիսկ ամենաանպո՛ր բառը («Տե՛ր աստված»)
Հանկարծ վերածվի ամենապորե՛ղ բառի («Տե՛ր աստված»):
Տե՛ր ու սե՛ր աստված,
Իրավ չի՞ ասված,
Որ մահիճները երբ հարդարված են՝
Արդեն չե՛ն ապրում, արդեն մեռա՛ծ են:
Եկա՛ր,
Որ նրանք հարությո՛ւն առնեն՝ սրբերի՛ նման...

25. II. 64
Երևան

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Եթե աշխարհիս ճանապարհները
Լինեին միա՛յն միակողմանի՝
Լոկ գալո՛ւ համար,
Եվ ո՛չ գնալու...

Բայց բիլ երկնքի աստղագիր թղթին
Իր վայրկենական վարժ ձեռագրերով
Շանթն է վերստին ինքնաշարժ գրում՝
Ասես պետի պես ստորագրում.
Ա՛յն պետի,
Որի մականունն է Կյանք, անունն՝ Անհրաժեշտ.
Դու մեկնե՛ս պիտի.

— Բարի ճանապա՛րհ:

Տե՛ս,
Ծիր Կաթինը կարծես թե լինի մի ուղեփակոց
Մայրուղու վրա կողպ Տիեզերքի:
Բայց ամպերն ահա կծածկեն նրան,
Ու քեզ կթվա,
Թե ճանապարհը բացված է արդեն.

—Բարի ճանապա՛րհ:

Պտղած ծառերը կկտցահարի անձրևը շուտով,
Բայց չի կարենա կտցածն իր ուտել,
Նա ընդամենը կտցով կկծի

Ու ցած կգցի՝
Այնքա՜ն են հասած:
Նո՛ւյնքան հասած է միտքը մեկնումիդ.

— Բարի ճանապա՜րհ:

Ծառերի վրա,
Նրանց սաղարթի հովանու ներքո,
Եվ թռչուններն են համագումարվել.
Նո՛ւյնպես քննում են հարցը մեկնումի:
Ու շուտով նրանք սուր եռանկյունով
Պիտի չափչփեն երկինքն աննկար՝
Քարտեզագրման բնապդով ծածուկ:
Դո՛ւ էլ չես կարող և պիտի չվես.

— Բարի ճանապա՜րհ:

Քեզ հասկանում եմ և լա՜վ հասկանում.
Անհայտի կանչը վախեցնում է մեզ,
Բայց անկարելի անհնարին է այդ կանչը չանսա,
Եվ չհետևել այդ ահեղ կանչին...

Հասկանում եմ քեզ և լա՜վ հասկանում.
Տարածությունը ձգում է այնպես,
Ինչպես... անդունդը կամ վիհը,
Հիշի՜ր,
Ինչպես... անդո՛ւնդը կամ վի՛հը:
Եվ դու
Կարո՞ղ ես չափել խորքերը նրանց
Գլխիվայր անկման քո թիռ-թռիչքով:
Իսկ մենք մեխված ենք՝ ցուցանակի՛ պես՝
Ապրելու տենչով մեխված ենք կյանքին:
Հանե՞լ ես քեզնից այդ մեխերը դու...

— Բարի ճանապա՜րհ:

Մեր ծերությունը
Կարող է հանկարծ մեզ հարցնել մի օր.
«Իսկ որտե՞ղ, ասե՛ք,
Ինչպե՞ս երևաց,
Ինչո՞վ երևաց
Ջահելությունը ձեր ամենակոր»:
Գնո՞ւմ ես: Գնա՛:
Բայց խորհի՛ր նաև,
Թե քո ծերության անխուսափ հարցին
Դու ի՞նչ ես մի օր պատասխանելու:

Ասել-ասում են, թե լավ է այնտե՛ղ,
Որտեղ մենք չկանք:
Իսկ ես պնդում եմ, որ լավ է այնտե՛ղ,
Որտեղ չե՛նք կարող չլինել ու կա՜նք:
Դու ինձ կարող ես հիմա չլսել:
Եվ մի՛ էլ լսիր:
Գնա՛,
Որ ինքդդ նո՛ւյնը հասկանաս
Եվ հասկանալով նաև հասկացնես,
Որ աշխարհումըս ճշմարտությունը չի՛ հետապոտվում.
Ճշմարտությունը ապրվո՛ւմ է լոկ:

— Բարի ճանապա՜րհ:

Կյանքի վճռական բոլո՛ր պահերին
Միշտ էլ լռում են մի քանի րոպե:
Այդպես էլ՝ նաև ճանապարհելիս:
Եվ կարճ են խոսում ճանապարհելիս,
Նաև՝ հապշտապ:
Ահա թե ինչու

Հոգուս խորքերում ու լեկվիս վրա
Բակմակետերն են խոսքերին հաղթում,
Եվ ինչ-որ կեռուն բառեր են վխտում՝
«Իհարկե... սակայն... և այսուհանդերձ»...
Եվ, այսուհանդերձ, թերևըս գուցե

— Բարի վերադա՞րձ·

22. II. 64
Երևան

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ



«ՍԻՐՈ ԾԱՆԱՊԱՐՀԸ» շարքից

Չոր մասրենու մի հին չափար,
Որ այգին է շրջապատում:
Չափարի տակ առուծաբար
Մրափում է մեր չալ կատուն:

Չափարի տակ մի չար եղինջ
Շուլալվել է փշատենուն
Եվ մերթ ընդ մերթ դաղում է ինձ,
Երբ նրան եմ ես մոտենում:

Եղինջի մոտ՝ մի թո՛ւփ խոնարհ,
Թփի վրա՝ մի վառ վատի՛կ,
Թփերը՝ թա՛ց, կիսախոնա՛վ,
Շաղված շողով կաթիլ-կաթիլ:

...Թփի վրա մի վառ վատիկ՝
Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ,
Ինչպես ցողի մի ջինջ կաթիլ
Տարիների արևի դեմ:

Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ,
Բայց իմ սրտում մինչև հիմա
Մի մեղմ կսկիծ մնում է դեռ
Այն եղինջի խայթի նման...

21. V. 46
Երևան

Ա՜խ, ես գիտե՛մ, չէի՛ր սիրում,
Հիմա գիտեմ ես անկասկած...
Վազվզում ենք մենք սեկերում,
Խոտերի մեջ խոնավ ու թաց:

Հետո նստում ուրախ ու գոհ,
Երեքնուկի թուփ ենք քաղում
Եվ այդ ծանոթ երեքնուկով
«Սիրեմ-սիրեմ» անվերջ խաղում:

Անուններում երեք հոգու
Եվ դո՛ւ կաս միշտ, և ե՛ս միշտ կամ:
Քո անունն եմ ես միշտ պոկում,
Իսկ դու իմը՝ ո՜չ մի անգամ:

Որքա՜ն անգամ եմ ես վանել
Տխուր մտքերն ինձնից հեռու
Եվ վախեցել եմ միտք անել,
Որ դու... որ դու ինձ չես սիրում:

Չէ՜, ինձ չէի՛ր, չէի՛ր սիրում...
Թե չէ— ի՞նչ է, բա՞րդ էր այդքան
Գտնել երեք անուններում
Իմ անունը գեթ մի անգամ:

1946 թ. մայիս
Երևան
18. VII. 53
Նավչալու

Прошла любовь, явилась Муза...

А. С. ПУШКИН

Հիմա, երբ ողջը անցած է թվում,
Երբ առաջվա պես դու ինձ չես թվում,
Երբ երևալով, քայլվածքդ խոսուն
Ինձնից չեն խլում իմ ճարտար լեզուն,
Երբ ես կարող եմ քեզ հանգիստ նայել,
Սրամտելով՝ ժպիտդ շահել,
Կատակով ասել ա՛յն, ինչ-որ անցավ,
Ա՛յն, ինչ ես ասել չկարողացա
Ո՛չ խոսքով, ո՛չ էլ մի հատիկ երգով,—
Հիմա կքել եմ տողերիս ներքո:
Եվ քո փոխարեն հիմա էլ նրանք
Դարձել են գլխիս պատիժ ու կրակ,
Ինձ՝ քո փոխարեն չեն տալիս հանգիստ—
Մերթ՝ քո անունը կպչում է հանգիս,
Մերթ՝ ձայնդ ինչ-որ բառ է շշնջում,
Երբ ես չգրված թղթեր եմ շրջում.
Մերթ քո քայլվածքի լոկ հիշողությամբ
Չափեր եմ ընտրում — մեկ՝ քորել, մեկ՝ յամբ.
Անցյալում լոկ ինձ հասցեագրված՝
Քո մի ժպիտի ջերմությամբ գրված

Քանի՞ երգ ունեմ կիսատ ու լրիվ...
Բայց ի՞նչ դուրս եկավ: Չէ՞, երգ իմ, լռի՛ր:
Այսպես որ գնա, դե ի՞նչ դուրս կգա:
Հանկարծ դուրս կգա, որ սերը կրկին
Հետապնդում է... հիմա էլ երգին:
Երգից էլ երգիչն ինչքա՞ն է—
մի քա՛յլ:

19. XII. 52
Մոսկվա
15. VII. 53
Նավչալու

«ՆՈՒՅՆ ԾԱՄՓՈՎ» շարքից

ԱՆԲԱԺԱՆ Է ՔԵԶՆԻՑ

Անբաժան է քեզնից քո թովչանքը,
Ինչպես գույնը՝ ծաղկից,
Ինչպես պայծառությունն՝ արեգակից,
Ինչպես անրջանքը՝
Պատանեկան թովիչ այն հասակից,
Որից ես դուրս եկել
Ու դեռ դուրս չեմ եկել:

Անբաժան է քեզնից բարությունը,
Ինչպես կրկին քեզնից մայրությունը,
Որի դուռն ես եկել
Ու դեռ ներս չես եկել:

Անբաժան է քեզնից և երջանկությունը,
Որով լեփ-լեցուն են իմ սիրտն ու իմ տունը,
Որոնց դուռն ես եկել
Ու դեռ ներս չես եկել:

Ես կուզեի քեզնից— սա՞ է իմ տենչանքը—
Միշտ անբաժան լինել՝ ինչպես գույնը ծաղկից,
Ինչպես պայծառությունն արեգակից,
Ինչպես անրջանքը
Պատանեկան թովիչ այն հասակից,
Որից դուրս եմ եկել,
Չէ՞— տեսնում ես ինքդդ—
Որ դեռ դուրս չեմ եկել...

15. VIII. 53
Նավչալու

ԻՐԱՐԻՑ ՀԵՌՈՒ

Մեր տունը մեկ չէ,
Մեր տունը մեկ չէ,
Գնալը՝ տարբեր,
Բայց գալը մեկ է:
Թող որ ծիծաղով
Տարբերվենք մեկ-մեկ,
Ի՞նչ տարբերություն—
Մեր լալը մեկ է:

16. III. 56
Մոսկվա

ԱՀԱ ՆՈՐԻՑ ԳԻՇԵՐ

Ահա նորից գիշեր, ահա նորից մշուշ,
Նորից տապից այրված փողոցն է երջանիկ,
Նորից մանրահատիկ անձրևն է մեղմ խշշում,
Եվ լուռ անրջում է ամեն կիսված տանիք...

...Ես մեղմ էի այնպես, խոնա՜րհ և ընտանի՛,
Այդ երեկ էր կարծես, դու հիշո՞ւմ ես արդյոք:
Մեկ սպասում էր դեռ չեղած մի ընտանիք,
Մի համրախոս խրճիթ՝ ծածկված հող ու հարդով:

Բա՜խտ կար քո աչքերում, բախտ կար ամե՜ն ինչում,
Միայն սե՛ր կար կյանքում, ցավ ու ձանձրույթ չկար,
Ամեն խոսք ու հայացք խոստումով էր շնչում,
Երազով էր հարուստ օրն ու գիշերն երկար:

Բայց մեր բախտը այդ ո՞ր, ո՞ր գիշերում մոայլ,
Ո՞ր անձրևի ներքո և ո՞ւմ ձեռքը թաղեց,
Ո՞ր ջրհորդանն արդյոք քրքրջաց մեկ վրա,
Այդ ո՞ր առուն խնդաց, լամպը քմծիծաղեց:

Այդ ո՞վ իմ գալիքը՝ քո աչքերի խորքում
Եվ քո սերը մորթեց իմ ձեռքերի վրա:
Այդ ո՞վ և ինչո՞ւ էր բաց դուռն իմ դեմ փակում
Ու կղզման աղ ցանում իմ վերքերի վրա:

Ո՞վ էր,— չե՛մ հասկանում, ես չգիտե՛մ, մշո՛ւշ,
Գիշե՛ր, հանկարծ քեզ պես ողջը մուժով պատվեց...
Միայն գիտեմ՝ փլվեց մի որբ տանիք դրսում
Եվ մայթերին, իմ տեղ, անձրևն ուշաթափվեց...

12. X. 43
Երևան
20. II. 52
Մոսկվա

ԻՍԿ Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

Ես տեսնում եմ՝ չես հավատում ո՛չ իմ, ո՛չ քո անցյալին.
Մեր հարուստը՝ աչքիդ աղքատ, կեղծ է թվում պանծալին:

Դու կարծում ես, որ ամե՜ն ինչ, ո՛ղջը սուտ էր մեր միջև,
Ճիշտ էր միայն երկար ճամփան՝ լիքը փշեր ու խճեր:

Ճիշտ էր միայն սպասումը, որ և անցավ ապարդյուն—
Իսկո՜ւր էին մեր սրտերը սպասումից թպրտում:

Ճիշտ էր միայն արբեցումը այն սին բախտով, որ եկավ,—
Նա ոսկի չէր, այլ ոսկեզօծ, հետո՝ պղինձ, վերջը՝ կավ...

Ես տեսնում եմ՝ չես հավատում դու անցյալին իմ ու քո,
Չես հավատում ու չես տարվում նաև դու մեր գալիքով:

Չես հավատում, թե նա կգա, թե կլինենք բախտավոր,—
Քեզ ամե՜ն ինչ փուչ է թվում և ամեն ինչ՝ ախտավոր:

Քեզ թվում է, որ մենք իսկո՜ւր հանդիպեցինք մեկմեկու,—
Ո՛չ մեր սրտում՝ երջանկություն, ո՛չ մեր կյանքում՝
մեծ բեկում...

Իսկ ի՞նչ անենք, ո՞նց բաժանվենք, երբ սրտերը իմ ու քո
Թե սիրով էլ չեն ջղթայված, գեթ կապված են տանջանքով...

26. X. 55
Մոսկվա

ՍԻՐՏՍ ԿՈՏՐՎԵՑ

Սիրտս կոտրվեց սափորի նման,
Սիրտս կոտրվե՜ց:
Այդ ո՞վ է կտցում փայտփորի նման,—
Ծառս կտրվե՜ց:
Օրերս անցնում են թափորի նման,—
Քո մահվան ծեսը, անխի՜ղճ, այս ինչքան
Երկա՜ր կատարվեց...

20. II. 55
Մոսկվա

ԱՆԿԵՂԾ ԱՍԱԾ

Անկեղծ ասած՝ այս ամենից ես հոգնել եմ,
Ես, սիրելի՜ս, որ քեզ սիրել և օգնել եմ.
Ձեռք եմ պարզել, հույս եմ տվել,
Վատը թողած՝ լավը թվել,
Հավատացրել, հավատացել,
Թե իմ առաջ դուռ ես բացել՝
Ցտեսնըված, չեղած մի դուռ:
Սակայն ի՞նչ եմ ես ստացել
Այդ ամենին ի տրիտուր:

Անկեղծ ասած՝ ոչինչ չկա, և ոչ էլ կար:

Անկեղծ ասած՝ դու բնավ էլ ա՜յն չես եղել,
Ա՜յն չես եղել, ինչ-որ ես եմ կարծել երկար:
Ո՞ւր ես, ասա՜, դու ինձ մոլել:
Ճիշտ ճամփից ես միայն շեղել:
Սուտ խոստումով կապել ես ինձ,
Մանկան նման խաբել ես ինձ,
Ու չես տվել ոչի՜նչ, ոչի՜նչ:
Իսկ այն, ինչ որ ինձ ես տվել,
Արժանի չէր ո՜չ քեզ, ո՜չ ինձ:

Անկեղծ ասած՝ քո տվաւ՝ից ես հոգնել եմ:

Ինքդ գիտես՝ որքան ձգտել ու տքնել եմ,
Որ դու... որ դու նման լինես իմ երազին:
Իսկ դու գիտե՞ս՝ ի՜նչ դուրս եկավ.

«Տղան հասավ իր մուրապին,
Դուք էլ հասնեք ձեր մուրապին»:
Հեքիաթն, այո, միտքըս գնկավ...
Դու՝ հեքիաթում հրաշք աղջիկ,
Այնինչ կյանքում՝ ինչ որ.. չղջիկ,
Որ ոչ թռչուն, դչ էլ մուկ է...

Անկեղծ ասած՝ կուր էր ամբողջ այս աղմուկը:

Անկեղծ ասած՝ նեղանում ես, թե լրջանում,
Մե՞կ է հիմա: Էլ չեմ գցի ինձ սար ու ձոր,
Անկեղծ կասեմ՝ հեքիաթն ինչով է վերջանում.
Ցած է ընկնում երեք խնձոր—
Մեկ՝ ասողին,
Մեկ՝ լսողին,
Մեկ էլ... ինձ պես գիշեր ու կոր
Հիմարաբար սպասողին...

Անկեղծ ասած՝ հեքիաթներից ես հոգնել եմ...

31. X. 55
Մոսկվա

ՉԵՍ ՀԱՐՑՆՈՒՄ

Աչքըս բաց՝
Բայց էլի խաբեցիր—
Ոտքերըս-ձեռքերըս
Կապեցիր:
Հիմա էլ
Կտրում ես յոթ անգամ,
Բայց գոնե
Մեկ անգամ չափեցի՞ր:

19. III. 56
Մոսկվա

ՍԱՐՍԱՓՈՒՄ ԵՄ ԵՍ ԼՈԿ ՀԻՄԱ

Դու ասում ես, թե սառել եմ,
Բոլո՜ր-բոլո՜ր կրակներըս ես վառել եմ
Ու հիմա էլ... մթան մեջ եմ ես խարխափում:
Իսկ ես կասեմ. ես քայլել եմ,
Երբ որ մութ էր՝ ես փայլել եմ,
Բայց չեմ խաբել ես ոչ ոքի ու չեմ խաբում:

Ես չեմ խաբել ո՛չ մի խոսքով,
Ո՛չ մի երգով կամ ակնարկով.
Կա՛մ սիրել եմ, կա՛մ ատել եմ, բայց չեմ խաբել,
Երկու հարկով բարձր եմ ապրել,
Ցած եմ իջել երկու հարկով,
Իջել-ելել, սակայն երբեք չեմ խարխափել:

Թե երբևէ խարխափել եմ՝
Խարխափում եմ ես լոկ հիմա,
Թե երբևէ սարսափել եմ՝
Սարսափում եմ ես լոկ հիմա,
Միայն հիմա՛, երբ չգիտեմ՝
Դու եղե՞լ ես, կա՞ս, թե չկաս,
Միայն հիմա՛, երբ կգո՛ւմ եմ,
Հասկանո՛ւմ եմ ու սարսափո՛ւմ,
Թե առանց քեզ, իմ կորա՜ծըս,
Այս աշխարհի ինչն է պակաս...

25. X. 55
Մոսկվա

ՏԱՆ ԵՐԱԶԸ

Ես աչքերըս փակում ու տեսնում եմ հստակ՝
Մեր երականքն արդեն կերպարանք է առել.
Խանդոտ բարդիների արթուն հսկումի տակ
Սարավանդի վրա մեր տնակն է թառել:
Աղյուսից է շինված, միայն հիմքն է քարից,
Կտրին կանաչ խոտեր՝ հողածածկ է վերից.
Պատերն ակնըվորեն այնպես·շիտակ,
Սովորական փայտե ներկված հատակ.
Ո՛չ շատրվան ցայտող, ո՛չ ավազան մարմար,
Ո՛չ կամարներ շքեղ ու պայտաձև:
Խոյակավոր սյունե՞ր: Սակայն ինչի՞ համար,
Եթե պատշգամբ կա մի սլայտաձև,
Որ լուռ գոգ է տվել սաղարթի տակ,
Եթե, երակի պես, շենքի ճակատն ի վեր
Տարածվել է, փռվել մի սլատուտակ,
Ու դեղձին է տվել կանաչ շիվեր...

Իսկ տան չորս կողմ՝ այգի, միշտ էլ ցողոտ-շաղոտ,
Ածուների թմբով շրջանակված մարգեր,
Շրջանակված՝ ինչպես մի նոր սրբապատկեր,
Որ կարիք էլ չունի ու չի կորզում աղոթք,—
Քո հպումն են նրանք լոկ փափագում,
Քո հպումը, անգի՛ն:
Եվ դու հաճախ,
Երբ արևը նոր է սարից ծագում,
Բրդե շալը ուսիդ, ոտքիդ մուճակ,
Տարածելով չորս կողմ մի հողաբույր ժպիտ,

Այցելում ես սիրով ամեն թփի.
Մոտենում ես կգույշ,
Անհունորեն քնքուշ
Ձեռք ես տալիս, կարծես բարևում ես հերթով.
Կոր ցողունին մեկի՝ խաչափայտ ես տնկում,
Հիանում ես մեկի փարթամ ծաղկաթերթով,
Մեկի արմատները փխրում բրչով փայտի,
Իսկ այն մեկի մասին— հասունության առթիվ—
Շոյիչ մի խոսք ասում...

Այգու մյուս մասում
Ձեռքիս սրծաթ բահով այսօր նորից
Հորդ անձրևի բերած տիղմ ու քարից
Այն առուն եմ մաքրում, որ մանկաբար
Վախենալով դիպչել հանկարծ պատին՝
Սիրով ընկերանում ցանկապատին
Ու բակ է ներս խուժում ափալ-թափալ...

Բակ եմ մտնում ես էլ:
Այգու ցողով շաղված,
Փոքր-ինչ հոգնած արդեն՝ բակկաթոռում թաղված,
Տանու շորը հագած, ոտքիդ մաշիկ՝
Դու սպասում ես ինձ... նախաճաշի...

* * *

Դու հարցնում ես հաճախ.
«Ո՞նց ես տանում,
Անգո՛ւթ, ո՞նց ես ապրում ինձնից բաժան,
Ո՞նց է, որ ինձ նման չես խենթանում,
Ո՞նց է, որ չես գժվում անդուր տառապանքից»:

Մի մոռացիր, որ իմ և քո կյանքում դաժան
Եվ երակ կա,— այսպե՞ս,— բացի անհույս կյանքից...

22. VIII. 48
Երևան

ԵՍ ՔՈ ՄԱՍԻՆ...

Ես քո մասին
Արդյոք ի՞նչ եմ մտածում:
Ես քո մասին
Ախար ի՞նչ չեմ մտածում,
Բայց թերևս
Ամենից շատ՝ մտովին
Կորուստներս է,
Որ հաշվում եմ գտածում:

22. IV. 56
Մոսկվա

Ո՞ՆՑ ՕՈՒՏ ԱՍԵՄ

Ո՞նց սուտ ասեմ. չէ՞, բարակ չի ու թևի մեջ
չի առնվի քո իրանը:
Ինչպե՞ս ասեմ, թե քեզ նման կին չի տեսել
Հաֆեզների պերճ Իրանը:
Իսկ հագածը գործարանի ծաղկուն չիթ է—
ո՛չ աբրեշում, ո՛չ ծիրանի:
Ասեմ սակայն. նրա համար, որ իմն ես դու,
ինքս եմ տալիս ինձ երանի:

18. III. 56
Մոսկվա

ՎԱՂՎԱ ԽՆՋՈՒՅՔՈՒՄ

Վաղը խնջույք է լինելու, ու կլինենք մենք միասին:
Ոմանք՝ գինով, իսկ ես կարբեմ քո հայացքով պղտոր ու մառ.
Մինչ իմ հոգին, լի գավի պես, լուռ կերապի լոկ քո մասին՝
Լի գավերը կդատարկվեն հապար ու մի կենաց համար:

Ու խենթորեն երգեր կասեն՝ երգեր սիրո-դրժման մասին,
Կմիանան-կբաժանվեն պարպույգերն՝ իբր ապացույց:
Հապար մաղթանք բաժին կընկնի յուրաքանչյուր կենաց թասին,
Հապար մաղթանք նրա՞նց համար, ինձ՝ լռություն մի
անպաճույճ:

Հապար նայվածք նրա՞նց համար քո աչքերից մութ ու գերիչ,
Քո ձեռքերից հապար ալիք մեղմ կշոյի սրան-նրան,
Եվ միայն մի պատահական մոլորված շող քո աչքերից
Կիջնի, բայց չի հանգրվանի իմ դառնացած դեմքի վրա:

Քեզ կշոյեն ոմանք ձեռքով, ոմանք ժպտով ու հայացքով,
Ոմանց համար կին կլինես, այլոց համար՝ աստվածուհի.
Քեզ կդիմեն, կբարբաջեն թվատ լեզվով՝ գինու խոսքով,
Իսկ ես... հեռո՞ւ ինձ կպահեմ այդ խոսքերից ասված ու հին:

Եվ այն պահին, երբ թանկագին քո կենացը հանկարծ կնգա,
Ու ոսկեզօծ մաղթանքները արծաթ գավով հորդեն տնից,
Դու այդ արբշիռ աղմուկի մեջ չես նկատի ու չես կգա,
Որ սրտիս մեջ լեցուն մի գավ ճայթեց... կսպված լռությունից:

Բայց նստած եմ ես դեռ մենակ (չէ՞ որ վաղն ենք խնջույշ
ան ուզ),
Դեռ առանց քեզ և— առանց քեզ՝ քեզ ավելի մերձ ու մոտիկ,
Քան թե վաղը, երբ քո կողքին՝ ես ինձ կզգամ օտարոտի,
Ինչպես երգն այս, որ երբ գրվեց՝ քեզ պես այլոց է
պատկանում,
Մինչդեռ իմն էր, երբ սրտիս մեջ ճիչ էր ցավի և կարոտի...

29. XII. 46
Երևան

ԳԻՏԵ՞Ս, ՍԻՐԵԼԻՍ...

Գիտե՞ս, սիրելի՛ս,
Ո՛վ է անխելքը,
Եվ անբուժելի՝
Ո՛ր խոցն ու վերքը.
— Երբ ո՛չ թե կտրում,
Այլ համբուրում ես
Քեզ անխղճորեն
Հարվածող ձեռքը:

18. III. 56
Մոսկվա

ԳԱԼԻՍ ԵՍ, ԳԱԼԻՍ...

Գալի՛ս ես, գալի՛ս...
գաս հապա՛ր բարով,
Իմ գլխի՛ վրա և իմ աչքերի՛:
Ա՛խ, եթե պիտի բաժանվենք էլի՝
Բաժանվենք մի՛ օր, տեսնվենք տարո՛վ:
Թե որ գժտվենք՝ մի՛ օր գժտվենք,
Մի ամի՛ս կողջանք, տարո՛վ հաշտվենք:
Ու թե սիրում ենք՝
Մեր սրտի բոլոր լարերո՛վ սիրենք,
Ու թե սիրում ենք՝
Յոթ տարիս ո՞րն է—
դարերո՛վ սիրենք...

5. II. 56
Մոսկվա

ԹՈՂ ԼԻՆԻ ԱՅՆՊԵՍ

Թող լինի այնպես,
Ինչպես հուշում ես.
Էլ չե՛նք հանդիպի՝
Ինչպես ուզում ես:
Ինչ էլ որ լինի՝
Հիշելու բան կա.
Քե՛զ մոտ ավարտվեց
Սիրո ուսումը:

22. IV. 56
Մոսկվա

ՎԵՐՀՈՒՇ

Կրկին անձրևն է տեղում գիշերային մայթերին,
Քնա՜ծ, խաղա՜ղ քաղաքի տանիքներին երակկոտ:
Եվ արթնանում է կրկին մի հին երազ մտերիմ,—
Ու ես մեր գյուղն եմ ընկնում սովորական հրաշքով:

Այնտեղ ննջում է հիմա տարափի տակ այս վարար
Մի կավաշեն, հողհատակ ու հարդածածկ լուռ խրճիթ:
Հանգել է լույսը լամպի, իջել գիշերը խավար,
Քնել է մայրն իմ պառավ՝ կրողը մեր տան խղճի:

...Ես մի երազ ունեի պատանության օրերում,
Երբ արթնացել էր հոգիս սիրո նորեկ հովերից.
Այդ հողաշեն ծածկի տակ, հարսանեկան շորերում
Տեսնել նրա՛ն, ում համար ես կանցնեի ծովերի՜ց,

Տեսնել նրա՛ն, ում համար շուռ կտայի ես սարե՛ր...
Ա՜խ, ի՞նչ ծովեր, ի՞նչ սարեր,— միայն ասում են այդպես...
Տեսնել նրա՛ն, ում համար, փեշը լցրած խիճքարեր՝
Ես մեր այգու ծառերին տանջում էի պարզապես.

Ամեն նետված քարիս հետ թե մի խնձոր չընկներ ցած,
Ուրեմն իզո՜ւր,— վա՜տ նշան,— ես չեմ հասնի մուրապիս...
Խնձորն ընկներ թե չընկներ՝ ցնծագին կամ դառնացած,
Քարերն էի ես թողնում ու հետևում երակիս:

— Կապրենք մեկտեղ, բախտավոր: Դաշտից ես տուն կդառնամ
Արդեն հոգնած ու դադրած, բայց վաստակած, ինքնագոհ:
Մայրս, կովկիթը ձեռքին, տուն կմտնի, մինչդեռ Նա
Սուփրեն գետնին բացելիս ինձ կժպտա գողեգող:

Մինչ հավաքի նա սուփրեն՝ սարին, ձորին ու հանդին
Իրիկունը կիջնի ցած. ու ես մի կողմ կնետեմ
Իմ մանգաղ-հեսանդաղ կամ իմ սրվող գերանդին,—
Հո չպիտի մթան մեջ իմ մատները կտրատեմ...

16. Պ. Սևակ, Երկ. ժող. 3-հատորով, հ. 1

Խոտի դեզը տանիքից, բակից այգին կբուրի,
Ու ծղրիդի երգի տակ, նվագի տակ այդ վարպետ,
Ծածկված նախշուն վերմակով՝ քուն կմտնենք կտուրին,
Իսկ կողքներիս՝ մի ջեջիմ կամ հնամաշ մի կարպետ,

Որ թե, ինչպես այս պահին, տեղա անձրև անհատնում,
Ծածկվենք նաև շերտավոր մեր կարպետով այդ բրդե:
...Եվ անձրևի թակոցից խոր քնից ենք մենք կարթնում
Եվ, մինչ երկինքը պարզվի (այդ պատճառով իբր թե),

Էլ չենք քնում՝ զրուցում, երազում ենք շշուկով,
Առատ հնձից ենք խոսում, մրգահասից մեր այգու,
Եվ ա՛յն մասին, թե արդյոք պիտի գնել ե՞զ, թե՞ կով,
Եվ ա՛յն մասին, որ պիտի մորքս առնել վերարկու...

* * *

Չիգ տարիներ են անցել...
Կրկին անձրևն է երգում,
Սակայն արդեն քաղաքի գիշերային մայթերին:
Երգո՞ւմ է նա, ո՛չ, կարծես հին երազն է մորմոքում.
Հին երազը՝ նորացած, բայց և նույնքան մտերիմ:

Փոխվել է ո՞ղջը հիմա— և՛ դեմքերը գյուղակի,
Ե՛վ դեպքերը, որոնք ինձ օրերի խենթ վազքի հետ
Գյուղից քաղաք նետեցին ու քաղաքներ՝ քաղաքից,—
Ողջը փոխվել է հիմա, փոխվել ընդմի՛շտ, առհավե՞տ:

Նույնն է երա՞կը միայն, որ մնացել է հրկեզ.
— Լոկ ունենալ կավաշեն ու հարդածածկ մի խրճիթ
Եվ այդ համեստ ծածկի տակ ունենալ քե՛զ, միայն քե՛զ՝
Իբրև բերքի խոստումի,
մրգահասի
ու խղճի...

25. VIII. 48
Երևան
19—20. X. 55
Մոսկվա

ԱՆԾԱՆՈԹՈՒՀՈՒՆ

Անծանոթ եմ քեզ, բայց գիտեմ վաղո՞ւց...

Այդ քե՛զ համար են ապգերը կռվել՝
Այդ քե՛զ համար է Տրոյան վառվել:
Այդ դո՛ւ լույս տվիր կույր Հոմերոսին,
Սֆինքսի գաղտնիքը ժպտալով ասար,
Ու մարաթոնյան վազքի հերոսին
Այդ դո՛ւ, թերևս, թևերիդ տարար:
Քե՛զ համար ընկավ մեր չքնաղ Արան:
Նորից քե՛զ համար
Մի այրող ամառ
Մեր Արտավազդին գերության տարան...

Հին ծանոթներ ենք— քեզ գիտեմ վաղո՞ւց:

Դրախտը կորցրած՝ այդ քեզ է գտել
Մեր նախահայրը՝ ինձ նման մանուկ...
Երկար դարերի ճամփեքով բանուկ
Դու եկել ահա և ինձ ես հասել
Եվ ստիպում ես ինձ գոռալ՝ ասե՛լ,
Որ դու այրում ես՝ Տրոյայի՛ պես,
Ուզում ես գերել՝ մեր Արայի՛ պես,
Ինչպես Հոմերին՝ դու լույս ես տալիս,
Բայց շլացուցիչ քո լույս ու փայլից
Ես կուրանում եմ

Ու մոռանում եմ,
Որ դու աչքերով ինձ հույս ես տալիս,
Ժպտում ես, սակայն և խույս ես տալիս,
Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,— ես չեմ հասկանում:
Թե դու ուզում ես, որ, ինչպես մանուկ,
Մեր նախահոր պես միտքդս սքողած,
Իմ հանգստության դրախտը թողած՝
Ես քո հետքերով ու քո ետևից,
Ամե՞ն ինչ լքած՝ բռնեմ քո թևից
Ու գնա՛մ, գնա՛մ, ուր դու կգնաս,
Մտնեմ ա՛յն դռնով, որ դու կբանաս,
Խմեմ հարբենամ՝ ինչով դու հարբես,
Տանջվեմ ու տոկամ իմ նախահոր պես,—

Ես համաձայն եմ:
Ի՞նձ ինչ դրախտը,
Երևի նույնն է և թոռան բախտը...

20. X. 55
Մոսկվա

ՍԻՐՏՍ ՆՄԱՆ Է

Ա՜խ, սիրտս նաև նման է կարծես...

Նման է կարծես նա մի թութակի,
Որ ո՞ղջ ժամանակ նույն բանն է ասում.
— Ես քեզ եմ ուզում...

Նման է կարծես նա մի ջութակի,
Որ միա՞կ լարով յոթ լարից շատ է
Ապդում ու հուզում...

Նման է կարծես մի ջինջ վտակի,
Որ տարբե՞ր հունով, բայց դեպի քեզ է
Շարունակ վազում...

Նման է կարծես մի պատուտակի,
Որ գոտու նման փաթաթվում է քեզ
Եվ շա՜տ է սպում...

Նման է կարծես մի խոր հատակի,
Որ ուրիշներին փետուրի նման պահում է վերև
Եվ միայն քե՜զ է իր խորքը սուզում...

4. II. 54
Մոսկվա

ԻՆՉ ՄՆԱՑ

Աչքերըս լույսի էր սովոր,
Եվ հիմա տանջվում եմ խավարից.
Ես՝ վարժված ոստանիկ կյանքի՝
Զրկված եմ և մոտիկ գավառից:
Երեկվա իմ վարդավառից
Ի՞նչ մնաց— այս շապի՞կըս թաց,
Կախվելու մի պարա՞ն մնաց
Իմ սիրո հարուստ ավարից:

[1956]

ՄԻ ՄՈՌԱՑԻՐ

Մի՛ մոռացիր, որ շատ հաճախ, ցանկալի՛ս,
Երբ հույս ցանում ու հավատ են շաղ տալիս,
Չի՛ կանաչում:

Հիշի՛ր, որ միշտ ուշանում է ցանկալին,
Իսկ երբեմն էլ, իր ոտքով է երբ գալիս,
Չե՞ն ճանաչում...

3. XI. 55
Մոսկվա

ԵՐԱՉԱՆՔԻ ԳԻՆԸ

Մենք ամեն ինչ արեցինք
Շտապելով ու փութով,
Բան չտեսանք, սիրելի՛ս,
Բայց հուսացինք, թե շուտով
Սերն ամեն ինչ կհաղթի,
Լավ կընթանա ամեն ինչ...
Չէ՞, սնեցինք մեկ սուտով...

Դու տեսնում ես, իմ անգի՞ն,
Երազանքը մեր փարթամ
Հիմա դարձել է անշուք,
Հիմա դարձել է տարտամ.
Նա մի ստվեր է թվում,
Բայց մի ստվեր՝ ետևում,
Որից պրծո՞ւմ էլ չկա—
Մեկ է անվերջ հետևում...

5. XI. 55
Մոսկվա

ԵՍ ԱՅՆՊԵՍ ՀԵՇՏ ԷԻ ՏԱՐՎՈՒՄ

Ես այնպես հեշտ էի տարվում,
Ես այնպես հեշտ էի վառվում,—
Իմ թելած ասեղի վրա
Հուլունքի պես էին շարվում:
Եվ հանկարծ... ես՝ վաղո՞ւց հանգած,
Վառվեցի և ի՞նչ— քո սառցից...
Հե՞յ գիտի. ծովերից անցա
Ու հանկարծ... խեղդվեցի առվում:

17. III. 56
Մոսկվա

ԿԱՄ ՀԵՌԱՑԻՐ, ԿԱՄ ԱՐԻ

Ի՞նչ ես տանջում. կամ թո՛ւլ եղիր,
կամ արի՛—
Կամ հեռացի՛ր, ընդմիշտ գնա՛,
կամ արի՛:
Թե չէ՝ այդպես դու նման ես
չփլված,
Բայց ուր որ է գլխիս թափվող
կամարի:

22. IV. 56
Մոսկվա

«ՆՈՒՅՆ ՀԱՍՑԵՈՎ» շարքից

ԴՈՒ

Դո՛ւ՝
երկու տա՛ռ,
Դո՛ւ՝
հասարա՛կ մի դերանուն,
Եվ ընդամենն այդ քո երկո՛ւ հատիկ տառով
Այս բովանդակ աշխարհին ես ինձ տեր անում...

Դո՛ւ՝
երկու տա՛ռ,
Ու ես գարնան հողի նման
Քո կենսատու ջերմությանն եմ ընտելանում...

Դո՛ւ՝
երկու տա՛ռ,
Եվ ահա ես
Երջանկության համն եմ զգում իմ բերանում,
Անջատումին ըմբերանում
Եվ թերանում եմ կատարել հրամանը տառապանքի...

Դո՛ւ՝
երկու տա՜ռ,
Ու ես, անգի՛ն,
Ինձանից ինքըս վերանում՝
Փոշիացած հերոսների
Ու ծնվելիք հանճարների
Դասակին եմ ընկերանում...

Դո՛ւ՝
երկու տա՜ռ,
Ու երբ հանկարծ
Թողնում ես ինձ ու հեռանում՝
Լքված տան պես ճեղք եմ տալիս,
Ծեփը թափում, անտերանում,
Եվ կսկիծը, ցեցի նման,
Բույն է դնում իմ սյունի մեջ,
Ձեղունի մեջ ու գերանում...

Դո՛ւ՝
երկու տա՜ռ,
Դո՛ւ՝
հասարա՜կ մի դերանուն...

2. VII. 58
Մոսկվա

ՔՈ ՊԱՏՃԱՌՈՎ

Քո աչքերի՛, քո աչքերի՛, քո աչքերի՛ պատճառով
Իմ աչքերը ամբո՛ղջ գիշեր, ամբո՛ղջ գիշեր չե՞ն փակվում:

Քո մատների՛, քո մատների՛, քո մատների՛ պատճառով
Իմ մատները, իմ մատները լո՛ւյս են ուզում խմորել:

Քո թևերի՛, բա՛ց թևերի, մե՛րկ թևերի պատճառով
Իմ աչքերին, իմ աչքերին ջրվեժնե՛ր են երևում:

Քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛ պատճառով
Իմ ծիծաղը, իմ ծիծաղը պաշտոնաթո՛ղ է դարձել:

Քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛ պատճառով
Լսողությամբ սահմանապա՛հ, սահմանապա՛հ եմ դարձել:

Քեզ այս ձևով ունենալու-չունենալու պատճառով
Կորցրել եմ ունեցա՛ծս՝ հպարտությո՛ւնս հաղթողի...

23. III. 59
Մոսկվա

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Պե՞տք չէ, սիրելի՞ս,
Զո՞ւր ես երդվում:
Առանց երդման էլ ես հավատում եմ
Որ հիմա օրդ մի դար է տևում,
Որ փուշ կարոտը քեզ ծվատում է,
Որ գիշերն ի լույս չես քնում հաճախ,
Որ իմ անունն ես կրկնում հաճախ,
Որ աղջկական քո մաքուր բարձին
Թեքված ես տեսնում մի ծերուկ արծիվ
(Անգրդ էլ լինի՝ արծիվ է թվում),
Որ քեզ աշխարհում ոչի՞նչ չի թվում,
Որ առանց սիրուս կյանքդ կորած է.
Որ...
Գիտե՞մ, ջա՞նըս,
Զո՞ւր ես կրկնում.

Բայց գիտեմ և այն,
Ինչ դո՛ւ չգիտես.

Առաջին սերը, ինչպես որ հացը,
Ի՞նչ էլ որ անես՝ միշտ կուտ է գնում...

20. XII. 58
Մոսկվա

ՎԵՐՋԻՆ ՍՓՈՓԱՆՔ

Իմ տված ցավից
Դու լաց ես լինում,
Իսկ ես՝ ամոթի՛ց՝
Տաք-սպաղ քրտնում եմ:

Ի՞նչ ասեմ հիմա:
Գեթ մխիթարվի՛ր,
Որ նույն համն ունեն
Քրտինք ու արցունք...

19. IV. 59
Մոսկվա

Ո՞ՒՐ Է ԳԻՇԵՐԸ ՀԱՊԱՐՄԵԿԵՐՈՐԴ

Անձրևն իր հալված երկար մատներով
Մատնահարում է լռին մայթերի գորշ ստեղները,
Եվ ամայացած-քնած քաղաքում
Սկիզբ է առնում մի խուլ եղանակ,
Որտեղ մաս ունի
Աշնան ծառերի դանդաղ դեղնելը,
Ե՛վ այն ամուրին,
Որ պաղ սենյակում քնել է մենակ,
Ե՛վ այն բողոքը,
Որ դատարանում իզուր չի հարգվել,
Ե՛վ այն կարոտը,
Որ սրտի վրա՝
Իր տիրո՛ջ վրա,
Նոր տեր է կարգվել,
Ե՛վ այն աղջիկը,
Որ գեշ երազից ճչում է անձայն,
Ե՛վ այն հուշերը,
Որ եկան անկոչ,
Ես վոընդեցի՛,
Բայց էլի՛ չանցան:

Չանցա՛ն
Եվ հիմա,
Ինձ հետ միասին,
Ականջ են դնում,
Թե անձրևն իր պաղ երկար մատներով,

Իր վատ նվագից չվհատվելով,
Ինչպե՞ս է ծեծում
Համրը մայթերի ստեղնաշարը:

Եվ իմ տխրության,
Չանցնող կարոտի առատ պաշարը
Համալրվում է գթոտ խոսքերի նոր մթերումով:

Քո հեռո՛ւ-հեռո՛ւ պաղ մայթերում ո՞վ,
Ո՞վ կարող է քեզ այն խոսքերն ասել,
Որ եկել ահա բկիս են հասել.
— Իմ սիրտը
Սիրո հպար գիշեր է ապրել ու տեսել,
Իսկ ո՞ւր է հապա,
Ու՞ր է գիշերը հապարմեկերորդ:
Մինչև վերջ պատմել ինչո՞ւ չես ուզում,
Ինչո՞ւ չես ուզում,
Իմ Շահրազադե՞:

Դու ո՞ւմ ես ուզում մահից ազատել...

14. X. 59
Չանախչի

ԱԹԻԼԼԱՅԱԲԱՐ

Դեռ նոր հանդիպած՝ մենք բաժանվեցինք,
Իրար նոր գտած՝ կորցրինք իրար:

Այսպես՝ դանակի սրությունն են միշտ բութ մատով փորձում:
Այսպես՝ մտովին-անգիտակցաբար մեծ մեղք են գործում:

Այսպես՝ տալիս են, բայց ավելի քան թերևը առնում:
Այսպես՝ հառնում են, բայց՝ ավելի շուտ՝ թերևը մեռնում:
Ուրիշի մարմնով, այսպե՞ս, սեփական հոգին են բեռնում
Ու ծանրանում են, բայց ավելի շատ թեթև են դառնում:

Այսպես՝ մի ժամով «Հավերժ քաղաքը»՝ Հռոմն են առնում.
Աթիլլայաբար հասցընում մտնել,
Բայց չեն հասցընում կրակի մատնել...

13. I. 62
Երևան

ԳԼԽԱՊՏՈՒՅՏ

Դու իմ վերջի՜նը՝ թյուրիմացաբար,
Եվ իմ միա՜կը՝ ճակատագրով...

Սիրո բովանդակ կոչականները մանկական են միշտ,
Մինչդեռ ես արդեն ասրել եմ այնքան,
Որ իմ տարիքում
Դեղձին տասն անգամ մեռած կլիներ:
Իսկ ինչպե՞ս ես դու:
Չէ՞ որ չեմ տեսել քեզ այնքա՜ն տարի,
Որքան տեսել եմ:
Եվ աչքերիս մեջ կա անլցելի մի դատարկություն,
Քանի որ չկաս
Դո՜ւ—
Իմ վերջի՜նը՝ թյուրիմացաբար,
Եվ իմ միա՜կը՝ ճակատագրով:

Իմ շրթունքներից
Կախված է հիմա մի ամբո՜ղջ աշխարհ՝
Մի գունդուկծի՜կ,
Բառերի մի պա՜ռս,
Որ իր բկկոցով գլխապտույտ է հարուցում իմ մեջ:
Եթե երբևէ բառերն այդ պիտի իմ բերնից թռչեն՝
Թող թռչեն սիրո՜վ,
Մի՜միայն սիրով
Եվ մի ճախրանքով ատվածաշնչյան,
Որի մեջ կա գոլ անապատային,
Ավակների սողք ու մտապատրանք:

Մի՞թե քո հեռվից՝
Քո անտառների խոնավ օդի մեջ,
Անվերջ չեն լսում խոսքերս չասված:
Իսկ թե լսում ես խոսքերը չասված՝
Չե՞ս լսում արդյոք մի գլխապտույտ,
Որ, թվում է ինձ, պիտի որ կգան
Սրբորեն հղի դեռահաս կանայք,
Որոնցից մեկին,
Մի՛միայն մեկին
Կարողանայի՛ մտովին ասել.
« Դո՛ւ—
իմ վերջի՛նը՝ թյուրիմացաբար,
Եվ իմ միա՛կը՝ ճակատագրով»:

Քիչ ենք օգտվել մենք բարությունից:
Եվ դրանից չէ՞, որ հետևհետե
Բարի եմ դառնում,
Եվ այնքա՛ն բարի,
Որ խղճում եմ ես... մենակությանն էլ:
Նա էլ է տանջվել ու հոգնել: Մեղք է:
Եկ ամեն մեկս բացենք մեր փեղկը,
Որ նա դուրս թռչի իր փակ վանդակից,
Եվ կամ հանդիպենք գեթ այնտեղ... այնտեղ.
Ուր հանդիպում են այգն ու գիշերը:
Իսկ հանդիպո՞ւմ են նրանք երբևէ,—
Ես ի՞նչ իմանամ: Գուցե գիտես դո՞ւ,
Դո՛ւ—
իմ վերջի՛նը՝ թյուրիմացաբար,
Եվ իմ միա՛կը՝ ճակատագրով:

Ու ձյուն է գալիս,
Ինչ-որ ջե՛ռմ մի ձյուն.
Հյուսիսն է հղում հարավին ողջույն:
Եվ ձյան մեջ ինչ-որ բուրմունք կա գարնան,

Հեռավո՛ր մի բան,
Մի հիշողությո՛ւն,
Որի բարությամբ հոգեբուժական
Չեն մեռնում, ճիշտ է, բայց և չեն ապրում,
Ինչպես չի մեռնում, բայց և չի ապրում
Սե՛րը—
վերջի՛նը՝ թյուրիմացաբար,
Բայց և միա՛կը՝ ճակատագրով:

Արի՛ ինքներս մեկնից բարձրանանք՝
Թույլ տանք արարքներ ինքնաժխտումի.
Փոխադարձաբար իրար նեղացնենք
Ու վիրավորենք փոխադարձաբար,
Որ... կարոտն ինքը հաշտվի իրեն հետ,
Ու տառապանքը ինքն իրեն ների,
Ես էլ հավատամ, որ դու չես եղել
Ո՛չ իմ միակը՝ ճակատագրո՛վ,
Ո՛չ իմ վերջինը՝ թյուրիմացաբա՛ր...

26. I. 62
Երևան

ՆՈՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ծանոթանա՞նք:
Շա՜տ լավ:
Բայց ես անո՛ւն չունեմ:
Թե ուզում ես, խնդրեմ, «Հոմո Սապիենս» կոչիր
Եվ ապգանվան տեղ էլ ասա «Հարավ»:

Ես աչքերս եմ փակում:
Ես հոգնած եմ, այո՛:
Տիկնիկն էլ է հոգնում, երբ ետնից բեմի
Ինչ-որ թելեր նրան ստիպում են ապրել:
Այդ ապրե՞լ է կոչվում: Ի՞նչ իմանամ:

Ծառերը մայթերին բակմակետ են դնում.
Ունեն ինչ-որ գաղտնիք, որ ես չեմ ընդունում:
Չէ՛, ես սխալվեցի.
Գաղտնիքն ընդունում եմ,
Չեմ ընդունում արգելքն այն անտեղի,
Որ միշտ բակմակետ է բակմացընում...

Եվ փրփուրը բերնիս ես կարող եմ վիճել,
Որ բերան է տրված ո՛չ ուտելու,
Այլ խոսելո՞ւ համար:
Եվ ավելին.
Շուրթերո՜վ են խորհում, ո՛չ թե գանգուղեղով:
Ծանոթացա՞նք:
Դեռ ո՞չ:
Շարունակե՞մ:

Սոված՜ են ոտքերս.
Թող հո՛դ կոխեն մի քիչ:
Եվ աչքերս են սոված.
Չի կշտացնում լույսը...

Անմահության համար տաղանդ պետք չէ բնավ.
Հարկավոր է լինել գոնե մամոնտ կամ խոտ,
Որ իր տիպն է թողել քարածըխի շերտում....

Եվ չի պոկվում ինձնից մի անսահման կարոտ,
Ու կկվել եմ արդեն պարկությունից գծի:
Թե կեռ-կորությունը շռայլություն է մեծ,
Չկարողե՞մ գոնե այն կետ-գծին,
Որ նեղ նպատակ չէ,
Այլ երապա՞նք այրող...

Ծանոթացա՞նք արդյոք:
Բեթհովենի՛ց հարցրու,
Մի՛ մոռացիր, սակայն, որ նա խուլ է մի քիչ
Եվ կարող է հարցըդ չհասկանալ:

Իսկ ես ավելացնեմ,— քեզ օգնելու հույսով,—
Որ ինձ փոքրիշատե ճանաչելու համար
Հարկավոր է կրկվել... նախապաշարմունքից,
Որ և հեշտ չէ նույնքան,
Որքան որ ապրելը...

Ո՛չ մի գաղտնիք չունեմ իմ կնոջից անգամ,
Իսկ թե ստիպված եմ, այսուհանդերձ, ասել՝
Մեղավորը ե՛ս չեմ,
Իսկ թե ո՞վ է՝ քե՛զ ինչ:
Ինչո՞վ պիտի օգնես,
Ի՞նչ կփոխես:

Անկեղծության համար թե խաչեին,
Քրիստոսը վաղո՞ւց չէր ունենա պաշտող:
Ա՜խ, այդ պաշտամունքը, որ ձևեր է փոխում,
Ինչպես մոր մեջ սաղմը,
Բայց ծնվելիս ծնվում մի՛շտ մանուկի նման՝
Ուղեղը դեռ անբան և աչքերը դեռ գոց...

Ծանոթացա՞նք արդյոք:
Դու՝ չգիտեմ,
Իսկ քեզ ճանաչեցի ես իսկապես:
Քո փոխարեն աչքերդ ասում են լուռ,
Որ ինձ համարում ես ծանոթ հիվանդ,
Եվ կառանցանք՝ խոսքըս:
Բայց հավատա՜,
Խոսքս կառանցանք չէ,
Ոչ էլ հիվանդ եմ ես:
Ես պարկապես վաղուց համոզված եմ,
Որ դուր գալու ծանոթ առնտրում
Հարկավոր է լինել չմանրվող դրամ
Եվ չծախսել իրեն կոպեկ-կոպեկ...

Ծանոթացա՞նք արդյոք:
Անշո՛ւշտ, ծանոթացա՜նք:
Բաժանվելուց առաջ թույլ տուր ասեմ գոնե,
Որ քեզ նմանները, իմ սիրելի՛,
Գուցե կարողանան ինձ ամե՜ն ինչ անել,
Բայց չեն կարող խլել լավատեսի
Իմ ժպիտը, այո՛, իմ ժպի՜տը,
Նա՜մանավանդ եթե չմոռանանք,
Որ ժպիտի ինչ-որ մի տեսակն է նաև
Ամմահ քմծիծաղը...

Մնաս բարև՜:

30. IX. 61
Երևան

ԳԱՐՆԱՆ ՀՐԱՀՐՄԱՄԲ

Երեկ՝ դեռ խոնարհ,
Երեկ՝ դեռ հլու,
Իմ սիրտը այսօր
Խաղա՜ղ-անարդո՜ւն ապըստամբության դրոշ է պարկել
Իշխանության դեմ ա՛յն բռնակալի,
Որ կոչվում է Խելք
Ու կոչվում Գլուխ:

Արյուն չի՜ թափվի.
Զորքեր մի՛ բերեք:
Արյուն չի՜ թափվի:
Բայց արյան եռքից
Երակ-վարկերակ
Խփում են արագ.
Ապըստամբության թմբուկ են վարկում:

Արյուն չի՜ թափվի:
Դրա փոխարեն՝
Արյուն է թափում ծաղկած նռնենին,
Արյուն են հագել կին ու աղջիկներ,
Արյուն է հոսում երկնակամարով՝
Արյունն արևի՜,
Որ լերդանալիս դառնում է վառ ամպ:

Եվ ի՞նչ է ուզում սիրտըս ապըստամբ:

Թե չեք հասկանում՝
Դուրս եկեք փողո՛ց,

Դուրս եկեք փողո՜ց,
Ուր, տեսե՛ք, մարդիկ
Լքել են հիմա իրենց տաք մորթին
Ու հագել մի բան,
Որ հին մի բառով— անշուշտ՝ անհաջող—
Մետաքս է կոչվում,
Իսկ նոր մի բառով— նույնքա՛ն անհաջող՝
Նեյլոն ու կապրոն:

Անցնում են, տեսե՛ք, կեցվածքներ պես-պես,
Ձևեր բյուրբակում,
Բոլորը՝ մսից— տա՛ք ու մարդկայի՛ն,
Կրծքների ներքո ո՛չ թե պաղ մարմար,
Այլ մսի կտոր,
Որ կոչվում է սի՛րտ,
Եվ ամե՛ն սրտում՝
Խաղա՛ղ-անարյո՛ւն խռովություն է...

Կանանց աչքերում,
Տեսե՛ք,
Փլվել է ինքը երկինքը
Ու ծիծաղում է...

Շքահանդես է սարքել արբունքը—
Պատանիների շուրթերի վրա՝
Բեղերի շարքով,
Կորություններով նորատիների,
Որ դեռ չեն կգում սուրբ կոչումն իրենց...

Մայիսյան արփին,
Տեսե՛ք,
Բակմահարկ շենքերի վրա
Իր նկարչության դասերն է տալիս,
Մի նկարչությո՛ւն,
Որ ձանձրացել է իրապաշտներից...

Քամին ձևեր է քանդում ու կերտում,
Ասես թե Լուվրի կամ Էրմիտաժի
Հապարէջանոց ալբոմ է թերթում,
Թերթածը կարգին չհասկանալով՝
Երեխայի՛ պես....

Ես երեխա չե՞մ.
Լա՛վ եմ հասկանում:

Լա՛վ եմ հասկանում,
Եվ այդ պատճառով սիրտը ուզում է
Ապըստամբության դրոշը ներկել
Արևի՛ հրում,
Ժպիտների՛ մեջ,
Երանգների՛ մեջ ցոլուն աչքերի,
Կանանց հանդերձի գույներո՛վ վառ-վառ,
Դեռատիների շիկնանքո՛վ խոսուն...

Սիրտը պարպել է
Ի՞նքս էլ չգիտեմ թե ինչի՛ դրոշ...

2. III. 59
Մոսկվա

ԱՆՋԱՏՈՒՄ

Լռություն է: Խորունկ: Խորհրդավոր:
Ամե՞ն ինչ է լռել: Եվ լռել է այնպես,
Ինչպես բառարանում բառն է լռում:

Եվ գիշերը չունի տասներկու ժամ,
Այլ կրկնակի: Խոտի թարմ բուրմունք է գալիս
Այս ասֆալտի՞ց արդյոք,
Թե՞ այս տրրամվայից,
Որ ձգվել է հիմա լուռ փողոցում՝
Ինչ-որ հեքիաթական թրթուրի պես:
Ուրեմն անջատված է հոսանքն էլեկտրական:

«Անջատվա՞ծ է»:
Այս բառն ինձ դարձրել կշեռք
Եվ ուզում է իր ճիշտ քաշն իմանալ: Սակայն
Իմ խեղճ թվացույցին այդքան թվեր չկա՞ն...

Ո՞ւր ես: Ի՞նչ ես անում: Անջատվա՞ծ ենք:
Մագնիսական դա՞շտ կա: Անջատվա՞ծ ենք:
Խնձորն էլ են քամում— հյութը հանում միջից:
Այդպես էլ մենք ահա... անջատվա՞ծ ենք...

Ֆուտբոլասեր չեմ ես: Բայց աչքերիս դիմաց
Ինչ-որ մի գնդակ է անվերջ կաղում-խաղում:
Խենթանում են այսպե՛ս: Գնդակն ի՞նչ գործ ունի
Ի՞նձ հետ, լռությա՞ն հետ և մեր անջատման հետ...

Եվ այս սեր կոչվածը գուցե սեր չէ բնավ,
Այլ շչակի ձայն է, կայարանի աղմուկ,
Եվ կանացի ձեռք է՝ ճյուղի նման ջարդված...

Տեսնես թե աշխարհում կա՞ գեթ մի կենտ լեկու,
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայը:
Թե կա՝ ես փոխում եմ ապգությունը...

Կա՞: Պատասխան չկա: Լռություն է:
Ճիշտ է, որ պատասխան իրոք չկա,
Բայց և լռությունն չէ: Համատարած ճի՞չ է:
Համատարած կա՞նչ է: Համատարած գոռո՞ց:

Քառահատոր հսկա բառարանը հիմա
Մե՛կ բառով է լցված՝ «անջատվել»-ով:

Եվ մե՛կ միտք է հիմա մեջքս գոռում-գոչում.
— Աշխարհում կա՞ արդյոք գոնե մի կե՞նտ լեկու,
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայը:
Թե կա՝ ես փոխում եմ ապգությունը...

30. IX. 61
Երևան

ՔՈ ԽԱԿ ՍԵՐԸ ԵՎ ԻՄ ՀԱՍՈՒՆ ՏԱՆՋԱՆՔԸ...

Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը
Հանդիպեցին որպես երկու ուղևոր՝
Կյանքի ինչ-որ սակավամարդ կածանում
Եվ, ճարահատ, պիտի քայլեն միասին
Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը:

Ու երբ, հոգնած, մենք պառկում ենք, որ ննջենք,
Մինչև անգամ երբ պառկում ենք կողք կողքի,
Ինչպես հայոց հեքիաթներում՝ մեր միջև
Լուռ դրվում է հեքիաթական թրի պես
Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը...

20. III. 59
Մոսկվա

ԵՐԲ ԱՉՔԵՐՆ ԵՆ ՍԱՌՈՒՄ...

Մենակություն բառից դողդողում է օդը իմ սենյակի:
Ու ես հասկանում եմ,
Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը...

...Երբ աչքերն են սառում՝
Ասում են, թե՝ ա՛յ-ա՛յ՝ մարդ է գալու:
Բայց դա եթե սուտ չէ,
Ապա բարություն է,
Որ ծնվել է միայն խեղճությունից:
Իմոնք էլ են սառում:
Սակայն դու չե՞ս գալու:
Դու չե՞ս կարող: Գիտե՞մ:
Եվ օդը սենյակիս
Պիտի շարունակի մենակություն բառից անվերջ դողալ՝
Հարուցելով իմ մեջ այն միտքը հին,
Թե վիհերը գուցե նրա համար են լոկ,
Որ մարդ ներքև նետվի:

Իսկ թե վիհերն իրոք նրա համար են լոկ,
Որ մարդ ներքև նետվի՝
Այդ դեպքում ես
Ինչպե՞ս անեմ.
Կո՛ւժ չեմ,
Կուժկոտրո՛ւկ եմ.
Չե՛մ կոտրվում, միայն փետրվո՛ւմ եմ,
Եվ դրանից արդեն ես հոգնել եմ,

Ինչպես թուղթն է հոգնել իմ ջանքերից՝
Հեռվից հեռու ասել քեզ երկու բառ,
Որ կարող է նո՛ւյնքան ինձ թարգմանել,
Որքան թարգմանում է ինքնաթիռին հավը...

Սուտ կա, որ ճիշտ արժե:
Ու ես հավատում եմ մեր հնարած ստին,
Թե չենք կորցնի իրար:

Վախ կա, որ մահ արժե:
Ու ես վախենում եմ, թե կհաղթի կյանքը,
Եվ կմնամ ցավի խեղճ պատմաբան միայն:

Ու, վերջապես, քայլ կա, որ հենց թռիչք արժե:
Եվ ինձ դուրս եմ քաշում իմ մտքերի միջից,
Ինչպես առողջ ակռան բերանից են քաշում:

Բայց հոգնել եմ արդեն
Եվ հոգնել եմ այնքան,
Որ չեմ կգում ոչի՛նչ,
Ցա՛վ չեմ կգում անգամ:

Ա՜յ թե հնար լիներ չկգալ նաև,
Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը...

3. X. 61
Երևան

ՀԱՆԳՍՏԱՑՐՈՒ ԻՆՁ

Հանգստացրո՛ւ ինձ,
Հանգստացրո՛ւ...

Օգնի՛ր, որ ցավը...
Չի՛ անցնի ցավը:
Գուցե պետք էլ չէ, որ անցնի ցավը:
Նա էլ է ծնունդ,
Ինչ-որ երեխա
Եվ... իր ապրելու իրավունքն ունի...
Օգնի՛ր, որ ցավիս ետևո՛ւմ պահվեմ,
Հանգստացրո՛ւ ինձ,
Հանգստացրո՛ւ...

Ինչի՞ համար է այս երկմտանքը:
Չէ՞ որ տանջվել եմ ես ավելորե՛ն:
Թո՛ղ որ ամեն բան բաց պատկերված չէ,
Սակայն ամե՛ն բան պատկերացված է:
Ինչ-որ հնարքով կողպի՛ր մտքերը.
Հանգստացրո՛ւ ինձ,
Հանգստացրո՛ւ...

Այնչափ կարոտ եմ շատ պա՛րզ խոսքերի՝
Տափա՛կ-կրկնվա՛ծ,
Շատ գործածվելուց ողո՛րկ-լպրծո՛ւն,
Բայց նաև միա՛կ— չփոխարինվո՛ղ
Շատ պա՛րզ խոսքերի:

Թո՛ղ որ այցելեն ինձ այդ խոսքերը:
Եվ այնժամ գուցե ես ժպտամ նորից
Եվ իմ ժպիտով ինձ հանգստացնեմ:
Սակայն մինչև այդ ի՞նչ խոսքով կուզես
Հանգստացրո՛ւ ինձ,
Հանգստացրո՛ւ...

Հանգստացրո՛ւ ինձ՝
Չգիտե՛մ ինչով:
Գուցե՝ ոչնչով:
Էլ չկա՞ հրաշք:
Իսկ դու կարող ես հրաշք ստեղծել
Թաքուն երակված կետկետուն քայլիդ հնչուն նպանքով՝
Իմ շրջակայքում,
Փոշով խավապատ հայելու վրա՝
Քո փորագրիչ-նկարիչ մատի մի խպբպանքով,
Որ նման լինի անհայտ մի լեզվի նշանագրի:
Իսկ սա մի՞շտ ունի թալիսմանի ուժ...

Տո՛ւր ինձ մի խորհուրդ,
Խորհուրդ այնպիսի՛,
Որ ո՛չ մի բառով չի բռնադատվում:
Էլեկտրագրի՛ր մի գալարագիծ կամ մի լուսալիք,
Ինչպես անում են ճշգրիտ կոչված սարքերը միայն:
Թարգմանությունը մի՞շտ սպանում է:
Քե՛զ մի թարգմանիր.
Ի՛նձ հանգստացրու,
Հանգստացրո՛ւ...

Տիեզերքի մեջ բոլոր մարմիններն ունեն գնդի ձև:
Եվ հիմա չունեմ ես իմ մեջ ոչի՞նչ,
Որը չլինի հանգույցի՛ նման,
Կոճակի՛ նման,
Նաև կորիկի՛.
Սե՛րը,
Տանջա՛նքը,
Մտքերը՞ս բոլոր՝

Հանգույցի՛ նման,
Կոճակի՛ նման,
Նաև կորիկի՛:
Տափակացրո՛ւ.
Ինձ հանգստացրո՛ւ...

Ասա. «Հերի՛ք է»:
Եվ ասա. «Կա՛նգ առ»:
Ու ես կանգ կառնեմ,
Ինչպես կանգնում են
Տրամվայների մոտեցող-հասնող շնչառությունից,
Ինչպես կանգնում են փակ դռան հանդեպ:
Ու ես չե՛մ ուզում ոչի՞նչ ուզենալ.
Ո՛չ այն պատճառով,
Որ ուզենալը վիրավորիչ է,
Այլ ա՛յն պատճառով,
Որ պատճա՛ռ չկա բան ուզենալու:
Բայց, այսուհանդերձ, ինձնից էլ թաքուն,
Գուցե կուզեի մի պահ կանգ առնել,
Ինչպես կանգնում են
Ո՛չ թե մոտեցող տրամվայների շնչառությունից,
Փակ դռան առջև,
Այլ այնպես,
Ինչպես կանգնում են նաև ծաղկի՞ հանդիման...

Դու այնպե՛ս ուզիր,
Որ ես չուզենա՛մ.
Հանգստացրո՛ւ ինձ,
Հանգստացրո՛ւ...

4—5. IV. 61
Մոսկվա

ՊԱՏԱՀԱԲԱՐ ԵՆ ՊԱՏԱՀՈՒՄ ԿՅԱՆՔՈՒՄ

Մի՛շտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում
Ու հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբա՛ր...

Թե կուլես՝ լռի՛ր,
Թե կուլես՝ ոռնա՛,
Թե կուլես՝ ծամիր սեփական լեզուդ,
Թե կուլես՝ խցիր բերանը դարձով,
Թե կուլես՝ ոտքով հարվածիր բարձին.
Հավատացյալ ես՝ հայհոյիր աստծուն,
Հավատացյալ չես՝ աստծուն հավատա.
Թե կուլես՝ ուզիր է՛լ չուզել— իզո՛ւր,
Թե կուլես՝ ուզիր է՛լ չապրել— իզո՛ւր...
Ու եթե կուլես, ապրելն այս է հենց,
Եվ սերն իսկական հենց այս է որ կա.

— Պատահաբար ես պատահում կյանքում,
Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս...

26. I. 62
Երևան

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

ՍԵՐԸ

I

Նա գալիս է մի՛շտ էլ ճամփաներով անհա՛յտ,
չքարտեզագրվա՛ծ,
Ինչպես ջուրն անձրևի կամ հալոցքի:

— Սերն է:

Հոլանդացիք ծովի՛ց, ամենապո՛ր ծովից
Հող են հափշտակում,
Խլում պատա՛ռ-պատա՛ռ, նշխա՛ր-նշխա՛ր:

— Սերն է:

Երբ վիթխարի նավը մոտենում է դանդաղ
Նավարկելի գետի ցածը կամուրջներին,
Սրանք թևերն իրենց վեր են տնկում,
Իսկույն անձնատուր են լինում կարծես:

— Սերն է...

II

Հետը դրուցողին պատասխան ես տալիս՝
Խելոք, կարգին-սարքին մեքենայի նման,
Մինչդեռ մտքով, անվե՛րջ, նրա՛ հետ ես խոսում,
Ով հեռու է քեզնից.

Լոկ անունն է քեզ մոտ,
Իբրև մի անձնագիր, որ... չի կնքված:

— Սերն է:

Քներակիդ վարկը կաթոցքի է նման,
Ա՛յն կաթոցքի, որ (ճի՞շտ) քար է ծակում:
Անքնությունն անվերջ հյուսում է ցանց մի խիտ,
Որով ձո՛ւկ չեն որսում,
Խեղդում են մա՞րդ:

— Սերն է:

Քնքշացել ես այնքա՞ն
Ու խոցելի՞ դարձել,
Կարծես թե ապրում ես առանց մաշկի:

— Սերն է:

Երկու աչքեր, անվե՞րջ, հետապնդում են քեզ,
Երկու աչքեր, ասես մի կույգ դրոշմ,
Իրենց անջնջելի տիպն են դնում
Կյանքի՞դ, խմած ջրի՞դ, ողջ աշխարհի՞
Եվ մինչևիսկ արյան գնդիկների՞դ վրա,—
Երկու աչքեր՝
Դրո՞շմ,
Կնի՞ք,
Խարա՞ն...

— Սերն է...

10. III. 64
Դիլիջան

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

Այդ ո՞վ է ասել՝ նորից են սիրում:
Նորի՞ց չեն սիրում, սիրում են կրկի՞ն...

Ու երբ մինչևիսկ ալուրից (դեռ տա՞ք)
Դու նո՞ւյն մարմինն ես հիշում բնազդով,
Երբ հոտն էլ սուրճի նրա՞ն հիշեցնում
Եվ քո գունավարդ քնի փոխարեն
Անքնություն է փռում սպիտակ.
Երբ աստղերն իրենց կլորակ սանրով
Մազերդ են սանրում, իսկ դու վերստին
Շոյանքի սովոր քո մազերի մեջ
Նո՞ւյն հանգստարար մատներն ես զգում.
Երբ օտար մեկի շարժումի, դեմքի
Նմանությունը հեռու-մոտավոր
Ոտներդ է ասես դնում գիպսի մեջ,
Իսկ միտքդ բեկում այնպե՞ս կորական,
Ինչպես լույսերի վետվետումներից
Երկաթգծերն են կարծես ջարդոտվում.
Երբ անձրևներից հողն ասես թթվում
Եվ ստիպում է ռունգո՞վ էլ զգալ,
Որ մենակ ես դու իբրև մի... Իգրեկ,
Իսկ ինչ-որ մի տեղ կամ հենց քո կողքին
Կա մի Իքս ուրիշ, առանց որի դու
Խնդիր չե՞ս կազմի, ո՛չ էլ կլուծես,—
Մի՞շտ, ամե՞ն անգամ պաշարում է քեզ
Նույն զգացումը անճեղք ու անդուռ,

Եվ հասկանում ես, որ մարդն, ի վերջո,
Նորի՛ց չի սիրում, սիրում է կրկի՞ն,
Քանզի կա մթին մի կախյալություն
Ջղի և ոգրյան, հոգու և կրքի.
Քանզի նշանը հանման-գումարման
Այդ մե՛նք չենք դնում լուծվելիք խնդրում.
Քանզի թեպետև բախտ մենք ենք փնտրում,
Բայց բա՛խտը,
Բա՛խտը,
Բա՛խտն է մեզ ընտրում...

Ուստի մինչևիսկ սիրառատ հոգին
Նորի՛ց չի սիրում, սիրում է կրկի՞ն...

6. II. 64
Երևան

ՀԱԳՈՒՍՏՈՎ ԾՆՎԱԾԸ

Գործը թողած՝
Ես քեզ համար
Նոր հագուստներ եմ հորինում,
Որովհետև ես չգիտեմ,
Թե դու ի՞նչ ես հագնում հիմա:
Եվ գարունը՝
Այս նոր ու հին
Ճարպիկ-ճարտար ջուլհակուհին,
Ի՛մ պատվերով ու քե՛զ համար
Ճորտուհու պես
Անձեռագործ կերպասներ է ձեռագործում
Ու դիպակներ կանապան ու կարմանապան,
Եվ թվում է, թե ընկել եմ
Ինչ-որ աշխարհ խորհրդավոր ու բազմաբույր,
Ինչպես... ինչպես դեղատունը:
Եվ թվում է,
Թե քեզ համար շոր ընտրելը
Հեշտ է այնքա՛ն,
Որքան լեցուն դեղատնից
Սովորական դեղ խնդրելը,
Հե՛շտ ու դյուրին՝
Իր սեփական ապգանունը ասելու չափ:
Բայց... քիչ հետո հասկանում եմ,
Որ դա հեշտ է,
Ինչպես մարդու երկու աչքում
Միանգամից ու նույն պահին նայելն է հեշտ:
Փորձե՞լ ես դու:
Հապա փորձի՛ր...

Ու հիմա քեզ հագցընելու գործը թողած՝
Մտածում եմ,
Որ կան կանայք
Եվ աղջիկներ կան աշխարհում,
Որոնց մարմինն ասես ճչում ու հայցում է
Իրեն փրկել հանդերձանքի կաշկանդումից.
Թեպետ միշտ էլ հագա՜ծ-կապա՜ծ՝
Մե՜րկ են քայլում նրանք կարծես:
Իսկ դո՜ւ...
Ուրի՜շ, ուրի՜շ ես դու:
Դու ծնվել ես
Կարծես այդպե՜ս՝ հենց հագուստո՜վ...
Քո սեփական ստվերն անգամ
Քեզ դաթաթվում-ծածկում է քեզ՝
Խորհրդապաշտ թիկնոցի պես...
Ո՜չ մի կոպիտ միտք ու տենչանք
Քեզ չի հասնում,
Իսկ հասնելիս՝
Քեզ դիպչելով ընկրկում է
Ու վնասում
Հենց այդ մտքի կամ տենչանքի տիրոջն իրե՜ն,
Իրե՜ն գցում իր իսկ աչքից...

Ուրի՜շ ես դու:
Քոպեսներին սիրում են լոկ,
Միա՜յն սիրում:
Քոպեսների անունն ի՜նչ էլ դրած լինեն՝
Իմպեսները միշտ կոչում են նրանց... Մ ա ր ի ա՜ մ:

24. III. 64
Դիլիջան

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Մարիա՜մ, լսո՞ւմ ես,
Տեսնո՞ւմ ես, Մարիա՜մ,
Դրսում անձրև է շեղակի մաղում,
Ու երբ բացում եմ իմ լուսամուտը,
Ասես բացում եմ
Գժված ջերմուկի գազատատ մի շիշ:

Նույն լուսամուտով երկինք եմ թռչում,
Որ արդեն հիմա՝ անձրևից հետո,
Վճիտ է ու ջինջ՝
Քո հայացքի՜ պես,
Եվ լայնատարած ու հեռագնաց՝
Ինչպես ժպիտդ:
Հետո երկնքից ընկնում եմ սարին,
Որտեղ վեհորեն ժայռերն են թառել՝
Նախապատմական թռչունների պես...

Դու ի՜նձ չես մերժում:
Դու աշխատում ես ժխտել ինքդ քե՜զ:
Եվ քո մերժումի սուտ-սուտ խոսքերից
Կարող եմ խրտնել ես այնպես դյուրին,
Ինչպես... քարեղեն այս թռչունները:
Հիմա հասկացա՞ր...

Տե՜ս,
Հորիզոնի գիրգ-գգվոտ գոգին

Իր գանգրագիսակ գլուխն է դրել
Մեկնըված դաշտը՝
Մի անտառապատ մեծ լեռան տեսքով,
Որի անունը քչերը գիտեն,
Ինչպես որ իմը:
Իսկ ո՞վ չգիտի, Մարիա՛մ, անունդդ,
Որ հորիզոնի նման է, Մարիա՛մ.
Երբ ընկրկում ենք՝
Նա մոտենում է,
Երբ մոտենում ենք՝
Հեռանում է նա...

Գեթ մեկի՛ համար,
Գոնե ի՞նձ համար մի՛ լինիր կյանքում
Այս քո անվան պես կամ հորիզոնի,
Որ... երբ մոտենամ՝
Դու չհեռանաս...

24. III. 64
Դիլիջան

ՍՈՒՐՃԻ ԳԱՎԱԹԻ ԴԻՄԱՑ

Դու մի հորինված էակ ես գուցե
Ու հանդիպել ես ինձ մտքումըս լոկ:
Բայց իրական ես, ինչպես բուրմունքը
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՛:
Եվ ես ուզում եմ, որ շրջապատես
Ինձ ա՛յդ բույրերով,
Լոկ ա՛յդ բույրերով՝
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՛՝
Բույրով մանկության,
Բույրով մաքրության...

Ի՞նչ կարմանալի աչքեր ունես դու.
Կարծես թե լինեն երկվորյակ լճեր
Հին հրաբխի կույգ խառնարանում:

Ի՞նչ հրաշագործ նայվածք ունես դու.
Ինչի նայում ես՝ քե՞զ ես նկարում:

Ծոծրակդ կարծես մթին անտառի բացատ է գողտրիկ,
Ուր ափռված են միայն հասմիկներ:

Մազերիդ բույրից
Հին աստվածներն են հարություն առնում

Դամբանում իրենց՝
Ռունգներում իմ տաք:

Ձնքշորեն ասված ամեն խոսքը քո
Եթեր է ճամփում ռադիոալիքներ,
Որոնց կարող է ամե՞ն ոք որսալ,
Ով երջանկության տառերը գիտի:

Քո նայվածքի հետ
Ինքը քեզանից վատվում-անջատվում,
Բալենապատկում ես ինքդ քեզ կարծես՝
Շարժանկարի ժապավենի պես.
Որ... հապարնե՞րը հիանան՝ ձրի՝.

...Հապարի՞ նման մի աղջիկ ես դու,
Ում գտել եմ ես՝ մեկը հապարից,
Եվ հիմա՝
Քեզնից աստծո՞ւ չափ հեռու,
Նստած եմ ահա տխուր-երջանիկ
Ու դեռ փակ կրծքիդ տաք կաղապարով՝
Ձերմակ գավաթով, սև սուրճ եմ խմում,
Որ անքնությունն իր բույնը հյուսի
Լարված ջղերիս մերկ ծառի վրա:

Ու եթե մեկը սուրճով բախտ բացեր,
Ապա կարող էր գուշակել անսուտ,
Որ ես ինքնակամ ու սիրահոժար
Մնացած կյանքիս կեսը կտայի,
Միայն տեսնեի գրկիդ... թուխ մանուկ,
Ինչպես որ քեզ եմ իմ գրկում տեսել...

11. III. 64
Դիլիջան

ԱՎԵԼՈՐԴ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ

Քո անունո՛վ, Մարիա՛մ,
Քո անունով՝
Այստեղ նահանջում է ձմեռն արագ:
Ամառն առանց հերթի՝
Գարունի՞ց էլ առաջ,
Նպաստով է ապրում՝ քո անունով...

Եվ այստեղ կա մեկը քո անունով:
Ու երդվում եմ ես քեզ քո՛ անունով,
Որ ատում եմ մի քիչ
Եվ սիրում եմ նույնքան
Օտա՞ր այս աղջկան՝ քո անունով:

Նա ինչպե՞ս է ապրում քո՛ անունով.
Ինքը դո՛ւ չես, և նա... քո անունո՞վ:
Ուստի ատում մի քիչ
Ու սիրում եմ նույնքան
Օտա՞ր այս աղջկան քո անունով:

Ես կանչում եմ նրան քո անունով
Ու... տանջում եմ ես ինձ քո՛ անունով,
Իսկ նա իմ տանջանքից չի հասկանում ոչի՞նչ.
Այսքա՞ն անհասկացող՝ քո անունո՞վ:

Բայց կանչում եմ նրան քո անունով,
Կանչում այնպես, ինչպես մարդիկ հնում

Կանչում-կոչում էին ոգիներին բարի....
Ոգիդ չի՞ հայտնվում՝ քո՛ անունով:

Ուրեմն աշխարհումը իրո՞ք չկա
Ու չի՞ լինում իրոք ո՛չ մի ոգի...

Ես ավելորդ անգամ, վա՛տ իմ,
Անհավա՛տ իմ,
Անհավատ եմ դառնում... քո՛ անունով:

20. III. 64
Դիլիջան

ԲԱՐԵԽՈՍ ԵՂԻՐ ԻՄ ԵՎ ԻՄ ՄԻՋԵՎ

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Անաղարտ մնամ
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում:

Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ:
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Եվ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխոս եղիր ի՛մ և ի՛մ միջև,
Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ:

Ես խոռվել եմ նաև աշխարհից.
Ե՛կ ու վերստին հաշտեցրո՛ւ դու մեզ,
Թե չէ ես այսպես ապրել չե՛մ կարող:

Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով՝
Հաղթելով և՛ քաղց, և՛ պապակ փափագ:

Ուզում եմ ապրել անչար ու բարի՝
Գեթսեթի ճեղքում բուսած տուղտի պես...

Մի բու թառել է իմ վույգ աչքերին.
Թռցրո՛ւ նրան:
Մի ձու սպիտակ ինձ բիբ է դարձել.
Կորցրրո՛ւ այդ ձուն:

Ճանճեր են նստած ինձ վրա
Այնպե՛ս,

Ինչպես քունջութը՝ կաթնահունց հացին:
Ճանճը քունջո՛ւթ չէ.
Հացը չի՛ ուտվում:

Ճանճով է լցված իմ նե՛րսը նաև,
Ինչպես վարսանդը՝ խաշխաշի սերմով:
Խաշխաշ չե՛մ ուզում.
Կակա՛չ դարձըրու:

Ասում են, իբը, կապույտի վրա
Չեն նստում ճանճեր:
Լսո՞ւմ ես, Մարիա՛մ,
Ինձ ներս ու դրսից կապո՛ւյտ հագցըրու...

26. XI. 63
Երևան

ԿԱՐՈՏԻ ՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄԸ

Ես իմ մթի՛ն-մթի՛ն կարոտն այնպե՛ս գիտեմ,
Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին...

Իմ իսկ շարժումները ես չեմ տեսնում,
Իրերն իրենց տեսքը թաքցընում են ինձնից,
Բայց անսխալ արդեն և անսայթաք
Ես շարժվում եմ այնտեղ,
Ապրում այնտեղ,
Գուցե այն ինքնալար ժամացույցի նման,
Որի սլաքները պոկելուց էլ հետո
Աշխատում է դարձյալ՝ ցույց չտալով
Այլևս ո՛չ րոպե և ո՛չ էլ ժամ...

Ու ճոճվելով մթան և մենության միջև՝
Ես կարոտն եմ ուզում տարրալուծել
Քիմիկոսի նման, որ հասկանամ
Բնությունը նրա և խորհուրդը խորին:
Իմ ձգտումի վրա, ջանքիս վրա
Հեռվից քրքջում է ջուրը ջոհորդանի՝
Անասելի՛ հեռվից,
Անլսելի՛ հեռվից:

Մի քաղքենի թռչուն հեղուկ գեղգեղանքով
Իր խեղճ գոյությունն է երգ դարձընում անբառ՝
Անլսելի՛ հեռվից,
Անորսալի՛ հեռվից:

Բառերն սկսում են անձս վիրավորել,
Որովհետև նրանք ինձ են արձագանքում
Անորսալի՜ հեռվից,
Աններելի՜ հեռվից:

Պատից պատ եմ քայլում, և քայլերիս
Ձայնը թվում է, թե շատ է հեռվից գալիս,
Աններելի՜ հեռվից,
Անկարելի՜ հեռվից:

Թեպետ կույր չեմ բնավ,
Սակայն շուրջս նայում
Ու չեմ տեսնում ոչի՜նչ,
Որովհետև
Հաճախ մեր աչքերը ջոկվո՜ւմ-պոկվո՜ւմ մեկնից
Ու գնալո՜վ գնում և հասնում են այնտե՜ղ,
Որտեղից մենք հիմա շա՜տ ենք հեռու,
Անկարելի՜ հեռու,
Անհնարի՜ն հեռու:

Մենք ինքներս վազում մեր հետևից
Ու չե՜նք կարողանում ինքներս մեզ հասնել:
Ու չե՜նք կարողանում ինքներս մեզ հասնել...

Եվ հենց դա՞ չէ արդյոք, որ կոչվում է կարոտ...

4—5. II. 64
Երևան

ԱՅՍՊԵՍ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ

Պարտականության ու սիրո միջև
Այդ ես եմ տնկված՝
Ուղեփակոցի գերանի նման...

Եվ որտեղ որ է
Ես ինձ արմատից ինքս կպոկեմ,
Այսինքն՝
Կելնեմ ու լուռ կգնամ հենց Օրենքի մոտ,
Կասեմ.
— Վերցրո՜ւ ինձ,
Քո օրենսգրքի կետերից մեկը դարձրո՜ւ ինձ, կասեմ:
Դարձո՜ւ ինձ, կասեմ, այն «Չի կարելի՜»-ին,
Այն «Ո՜չ»-ը,
Այն «Չէ՜»-ն,
Որ մեզ խեղդում է
Կրծքի չբուժվող հեղձուկի նման...

Ու եթե հարցնես կատակասերին,
Ճարպոտ կժպտա ու կհռհռա,
Թե աքաղաղը
Զուրկ է ձեռքերից լոկ ա՜յն պատճառով,
Որ հավն էլ չունի իրան ու հագուստ:
Իսկ ես (ի՜նչ կատակ)... տնքոցով մի բութ
Ասում եմ, ինչպես պաղատում են գութ.
— Առե՜ք ձեռքերս, խնդրեմ, կտրեցե՜ք,
Որովհետև ես, ահա՜, տնկված եմ
Պարտականության ու սիրո միջև՝
Ուղեփակոցի գերանի նման,

Եվ որովհետև ես այսուհետև
Կարի՞քը չունեմ իմ այս ձեռքերի,
Եթե նա՛ չկա,
Ում մի ժամանակ «իմս» էի ասում,
Եվ ասում այնպե՛ս,
Որ բուդդայաբար պպված գորտերը
Առվի եզերքին
Պշած աչքերով ինձ էին նայում
Եվ, հավանաբար, ջանք էին անում միտը պահելու
Կարճ, բայց կրակված այդ բառը («ի՛մըս»)...

Հիմա դու իմն ես, որքան որ իմն է... Մաղագասկարը,
Հիմա դու իմն ես,
Որքանով իմն է... Հաբեշստանի արքայադուստրը,
Որովհետև ե՛ս,
Ես ի՛նքս եմ տնկված պարտականության ու սիրո մլչև՝
Ուղեփակոցի գերանի նման...

Այսպես չե՞ն սիրում:
Այսպես... մեռնում են մի դանդաղությամբ,
Որով փտում են հին նավակները ծովախորշերում....

14. XI. 63
Երևան

ԴՈՒԱՆ ՁԱՆԳԻ ԱՌԱՋ

Ես կոճակն եմ սեղմում.
— «Բո՛րբ»,— կնգում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «բոսո՛ր»:

Սպասում եմ: Մի պահ:
Մի պա՞հ: Թե՞ ողջ մի կյանք,
Որ նման չէ, ավա՛ղ, հոսող ջրի կյանքին:
Սպասում եմ և՝ «մո՛ւթ»—
Ձայնը ետ է դառնում
Եվ չակերտի նման ինձ իր մեջ է առնում:

Դու չե՞ս վերադարձել:
Սուտ է ուրեմն, այո՞.
Թե կա մի վեցերորդ ինչ-որ զգայարան:
Սուտ է ուրեմն, այո՞, մանկությունից ծանոթ
«Սիրտս վկայում է» այն խոսքը, որ գուցե
Մարդկայինն է բոլոր խոսքերի մեջ մարդկանց...

Ու կոճակն եմ սեղմում՝ կոկորդի՛ պես,
Եվ այդ խեղճ կոկորդը խռխռում է խռպոտ:
«Գո՛րշ»,— սողում է ձայնը՝ հորանջի՛ պես՝ դանդա՛ղ:

Սպասում եմ: Մի պա՞հ: Թե՞ բովանդակ մի կյանք,
Որ խաչվում է քո տան սանդուղքների գլխին,
Խաչվում՝ պաշտամունքի չարժանացած:
Սպասում եմ և՝ «սև՛»,
Ձայնը գույնի փոխված՝
Կրկին ետ է դառնում

Եվ ինձ առնում
Իր սև շրջագծում մահապդային...

Դու տա՜նը չես: Պա՜րզ է: Դու չե՜ս վերադարձել.
Որբ ես թողել և՛ ինձ,
Ե՛վ մի ամբողջ քաղաք,
Եվ հերքել ես մի բան, որ հաստատել է պետք.
Ա՛յն, որ կա վեցերո՜րդ զգայարան,
Եվ որ մարդկանց «սիրտը վկայում է» իրո՜ք:

Ու կոճակն եմ սեղմում.
«Սե՜ր»,— ճչում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «կարո՜տ»...

Սպասե՞լ եմ: Որքա՞ն...
...Ու երբ վերջին անգամ
Բթամատս նորից կոճակին եմ դնում՝
«Բո՜րբ»,— հնչում է անվերջ, դողանջում է կրկին.
Եվ այդ «բորբ»-ի հուժկու արձագանքը («բոսո՜ր»)
Արդեն լուսաբացի կիսաքնում
«Բարի լույս» է հնչում բոլո՜ր կանանց համար,
Որոնց ես չեմ սիրում, որովհետև
Քեզ եմ սիրում նույնիսկ ա՛յն ժամանակ,
Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում:

20. X. 62
Երևան

ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Իր արդուզարդից օրը մերկացավ՝
Խափշիկուհու պես,
Ու մնաց այնպես, ինչպես կար՝ սևո՜ւկ:
Աստղերը վերում՝
Շնիկների պես,
Պպզեցին կրկին:
Ցրտեց:
Լույսերը հետո՛ կվառվեն:

Օրվա այս պահին
Մեղք է վբաղվել որևէ գործով:
Մեղք է մինչև իսկ շոյել ու սիրել:

Թո՜ղ կապանակված և ամենամուտ լռությունը գա,
Ու նրա շնչից՝
Թոքերի նման դանդա՜ղ ուռչելով՝
Ամանեղենը թո՜ղ խոհանոցում ինքն իրեն վնգա,
Իսկ քարանձավում մեր ականջների
Թո՜ղ չղջիկի պես ձայները քնեն,
Եվ աստվածները կարթնեն մեր հոգում՝
Մեզ հաշտեցնելով ցրտին ու մթին...

Ի՜նչ լավ է, որ դու
Չես ապրել սիրո արվարձաններում
Եվ միայն նրա կենտրոնը գիտես:

Ի՜նչ լավ է, որ քո
Նորաձևորեն դիզված մազերում
Ունես հնաբույր բարության հետքեր՝
Թելեր սպիտակ:
Ի՜նչ լավ է, որ դու լռում ես կողքիս՝
Անտառաբնակ աքիսի նման,
Իսկ քո տամկացած աչքերում հիմա
Թառում են ահա փոքրիկ փայտաններ...
Ափսո՜ս... ուրեմնն՝ լույսերն են վառում:

26. X. 63
Երևան

ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Եվ պե՞տք է արդյոք
Քեզ միշտ ունենալ իմ կողքին: Ինչո՞ւ:
...Ու ես ծխում եմ,
Որ ծխի տեսքով
Այս ջլախախտիչ ագահությունը դուրս փչեմ ինձնից,
Ջանամ գոհանալ իմ ունեցածով,
Որ շա՜տ է այնքան:
Մի՞թե, տե՜ր աստված, շատ չէ իսկապես:

Բայց կյանքի փշոտ շարժուձևերից, ինչպես կեռերից,
Կախված ճոճվում են
Ու մեզ են կանչում ագահ ըղձանքներ:
Բայց կյանքի փշոտ շարժուձևերից, ինչպես կեռերից,
Կախված ճոճվում են
Կարկատանները մեր ծվատ հոգու...
Ես չե՜մ կամենում, որ իմ պատրանքը փոխվի պատանքի
Եվ հետո, ծվա՜տ, կախվի աշխարհի կեռերից փշոտ:
Ես սիրում եմ քեզ
Ու քեզ հետ նաև... անհնարինը՝
Ա՜յն գոհությունը,
Ում չի՜ հանդուրժում մեր գոյությունը:
Ուրեմն ի՞նչ անել,
Ինչպե՞ս սիրել քեզ— սիրվել քեզանից և...
...էլ չուզենալ
Ոչի՜նչ ավելի.
Սեփական իղձը, դավաճանի պես,
Գամել չորս մեխով,

Սեփական ցավին
Զորստապակ մեղրը քսել ու կլլել՝
Տհաճ, բայց բուժիչ դեղահատի պես,
Սեփական մտքից
Կտրել ուղղանկյուն մի քառակուսի
Ու վրան գրել սեփական արյամբ.
«Եղա՛ծն էլ շատ է»,
Գրել ու մեխել սեփական ափին,
Եվ ամեն վայրկյան ընթերցել ծածուկ՝
Դասը չիմացող աշակերտի պես...

11. III. 64
Դիլիջան

ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սիրո կապանքի և տառապանքի
Հարցերն են անվերջ պատասխան փնտրում,
Եվ բառերն իրար ձգում են կրկին,
Ինչպես ողնաշարն՝ իր իսկ ոդերը,
Եվ... ստացվում է
Ահավո՛ր խոսքի ահավո՛ր կմախք.
— «Այսպես ապրելը անկարելի է»...

12. III. 64
Դիլիջան

ՀՊԱՏԱԿԻ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Ասում են, թե մի բան կա լոկ,
Որ անձնապես ու մեն-մենակ են սովորում
Գիտությունը տառապանքի...

Ու կսկիծն է տիրակալի հոգեր առնում:

Ա՜խ, տե՛ր Կսկիծ, հարկավոր չէ՞,
Բավակա՞ն է, տե՛ր, ողորմյա՞:
Այս դժվարին գիտության մեջ
Հմտացել եմ ես շա՜տ վաղուց:

Ու չլինե՞ր թե ինքնածին բարությունը,
Կարող էր ի՞նքս դառնալ
Ուսուցչապետն ա՛յն գիտության,
Որ անձնապես ու մեն-մենակ են սովորում:
Ա՜խ, տե՛ր Կսկիծ,
Այսքանն արդեն բավակա՞ն է,
Է՛լ ավելին հարկավոր չէ՞, տե՛ր, ողորմյա՞...
Զե՞մ ուրանում.
Ես քո նախկին ու մշտական հպատակն եմ:
Ուրեմն այլևս ինչի՞ համար
Ուժը փորձել հպատակի հլու մեջքին:
Ինչի համա՞ր, տե՛ր, ողորմյա՞...
Եվ չափպանց կգո՞ւյշ եմ ես,
Նույնիսկ վախկո՞տ.
Անջատումից եմ վախենում,
Երկյուղում եմ տվայտանքից չվտարվող,
Կարոտի սև արյունումից եմ սարսափում...
Ա՜խ, տե՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենավոր

Մի պահ անսա հեզ ու հլու հպատակիդ.
— Դժվա՜ր բան է մարդ լինելը,
Դժվար է, տե՛ր:
Ամբողջ կյանքում
Ես եղել եմ ակնիվ, ինչպես... խաղալիքը:
Ուրեմն ի՞նձ էլ պետք է ջարդել
Խաղալիքի նման: Ինչո՞ւ:
Հարկավոր չէ՞, տե՛ր, ողորմյա՞...

Չէ՞ որ նույնիսկ ավերվելուց հետո
Վանքը վանք է կոչվում
Եվ կամուրջը՝ կամուրջ կրկին:
Ուրեմն ինչո՞ւ կուր ուժ փորձել:
Չէ՞ որ, տե՛ր իմ, փորձը մեկի
Մյուսի համար ջատ հաճախ է փորձանք դառնում:
Հարկավոր չէ՞, տե՛ր, ողորմյա՞...

Կրկի՞ն ասեմ,
Որ չափապա՞նց կգույշ եմ ես,
Նույնիսկ վախկո՞տ:
Վախենում եմ
Մինչև անգամ... հայելու մեջ ինձ նայելուց.
Կարեկցանքից վատթար բան է միշտ հարուցում
Իմ... ժպիտը:
Ա՜խ, տե՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենավոր
Մի պահ անսա հեզ ու հլու հպատակիդ.
— Անտանելի՜-ահե՛ղ բան է,
Երբ խղճում է մարդ ինքն իրեն:
Առավել քան բավական է հենց այսքանը,
Իսկ ավելին հարկավոր չէ՞,
Տե՛ր, ողորմյա՞...

. . . . . .

Երբ կսկիծն է դառնում արդեն անտանելի,
Ասում են, թե մոտենում է նրա վերջը:
Զո՛ւր են ասում:

Սո՛ւտ են ասում։
Ձի՛շտ կասեին,
Եթե իրո՛ք մենք անձնապես
Ու մեն-մենակ սովորեինք
Գիտությունը տառապանքի։
Բայց մենք, կարծեմ, միասի՛ն ենք այդ սովորում
Մի վիթխարի լսարանում,
Որտեղ... սերն է դասախոսում... մնջախաղով՝
Խուլ-համրերի համար կարծես։

Եվ չի՞ օգնի «տեր ողորմյա»-ն։
Մնում է, որ դու ի՛նձ սիրես,
Ես քե՛զ սիրեմ,
Մենք թե՛ իրար, թե՛ մեզ սիրենք՝
Ընդդեմ այս խուլ տառապանքի,
Կույր կսկիծի,
Համբոր ցավի.
Սիրենք իրար... հավիտենից հավիտյա՛նս,
Եվ թող նույնիսկ չգտնվի գոնե մե՛կը,
Որ բարությամբ «ամե՛ն» ասի։

Ո՛չ «ողորմյա»,
Ո՛չ էլ «ամեն»։
Բավակա՛ն է։
Հարկավո՛ր չէ...

14. III. 64
Դիլիջան

ԲԵՌԱՆ ՆԵՐՔՈ

Անցնում էիր։
Ողջ երեկոն քոնն էր կարծես,
Ողջ երեկոն՝ իր բույրերով ու ջերմությամբ։
Երկարափեշ եթե լիներ հագուստը՝ քո՝
Ես կասեի,
Որ երեկոն քարշ էր գալիս քո ետևից՝
Քո հագուստի փեշի նման։
Սակայն կարճ էր հագուստը քո։
Եվ երեկոն
Ամփոփվում էր քո ծնկների ծալերի մեջ՝
Կարճ հագուստիդ կարճ փեշերի կարի ներքո...

Վերջալույսի արևը շեղ գտել էր քեզ
Ու շուլալվել քո հագուստի կոճակներին։
Վերջալույսի շեղ շողերի միջնորդությամբ
Երկարում էր քո ստվերը՝ հմայքի՛դ պես,
Ու քայլում էր քեզնի՛ց առաջ՝ հմայքի՛դ պես...

Եվ արթնացավ մեջքս հանկարծ
Ինքնաձաղկման և ամոթի
Տարօրինակ մի ցանկություն.
Եթե կյանքում կա քեզ նման մի թանկություն,
Ես ինչպե՞ս եմ կյանքին նայել էժան աչքով՝
Ոչ թե անո՛ւշ մի հիացքով,
Այլ մի տտի՛պ,
Հաճախ դա՛ռն,
Նաև կծո՛ւ մի հայացքով։
Եվ ինչպե՛ս եմ հաճախ իջել-ստորացել՝

Բարկանալու և դատելու աստիճանի,
Չարանալու և ատելու աստիճանի,
Ու թույլ տվել, որ նողկանքը տեղից հանի
Հիացմունքի՞ն:
Հոգով-սրտո՞վ ներողություն...

Այսուհետև, ինձ հավատա՞,
Է՛լ չպիտի ես խառնվեմ ո՛չ իմ գործին.
Է՛լ չպիտի այսուհետև
Հակվեմ կյանքի աղտ-աղարտի ծանրության տակ:
Առանց այն էլ ես հակված եմ բեռան ներքո
Ա՛յն վիթխարի երգեհոնի, որ ի ծնե
Սապատվել է իմ շալակին:
Թող հնչի նա՛:
Եվ անցիր դո՛ւ:

Միայն թե դու... «մե՛ քիչ կա՛մաց գնա, գո՛կալ»,
Որ քո կամաց և անշտապ քելքի չափին համաչափվի
Մեր խեղճ սրտի տրոփյունը հաճախակված,
Որ քո տեսքից հանգստանան աչքերը մեր.
Եվ քեզ թաքուն ունենալուց
Ձեռքը մեր քիչ խաղաղվեն,
Ու երկարի այս անդորրը՝ շուքի՞դ նման,
Ու կարճանա հոգնությունը՝ փեշերի՞դ պես...

26. IX. 63
Երևան

ԱՐԳԵԼԱՆՈՑ

Երկու նռնակ՝ կրծքիդ վրա...
Երանի՞ թե նրանց պայթյունն ինձ սպաներ
Անտառի մեջ՝
Փասիանների ներկայությամբ,
Կամ սենյակում՝
Վարագույրի վկայությամբ...

Ու երկու աչք՝ հոնքերիդ տակ.
Պատերազմի երկու հրձի՞գ...
Ե՛կ, գրավի՞ր, միացրու քե՛զ.
Ես մի ամբողջ տիրություն եմ անտիրական,
Որ վաղուց է կգում կարիք
Քեզ պես վայրագ ու բարբարոս տիրակալի...

Ու երկու ոտք՝ նոսկանքիդ տակ,
Մկրատ մի նուրբ, որ կոպտորեն
Կտրատում է թելն ըղձանքիս,
Ինչպես լույսի էլեկտրական լարն են հատում,
Եվ խավարը անհուսության
Ինձ է ներսից շրջապատում...

Եվ կույգ ականջ՝
Ցորենագույն գանգուր մսե
Սևամազե գանգուրիդ տակ անթափանցիկ...
Եվ կո՞ւր մի կանչ.
Դու չե՛ս լսում,

Որովհետև... մտքիս մեջ եմ հետը դ խոսում,
Որովհետև մինչև անգամ... ծանո՞թ չեմ քեզ...

Ու թերևս դու կի՛ն էլ չես,
Այլ գուցե մի... արգելանո՞ց,
Ուր հասնում են նոնե՞ր վայրի,
Ուր փափանոներն են կբաղվում հրձիգությա՞մբ,
Ուր հրապեն չի արձակում ո՞չ մի որսորդ...

Արգելանո՞ց... արգելանո՞ց:
Ես հասկացա՛,
Բայց... ոտքե՞րս չեն հասկանում
Եվ, ինքնաշարժ կարկինի պես,
Բնա՞վ կամքդ չհարցնելով՝
Հետևում են դեռևս քեզ
Եվ չափում ա՛յն,
Ինչ կոչվում է «անմատչելի»,
Ու ձգվում է
Իմ հիացքից մինչև անծիր հմայքը քո,—
Մի անսահմա՞ն տարածություն,
Որ թերևս հաղթահարվեր,
Թե աստղային օրացույցով մենք ապրեինք
Կամ թերևս չլինեինք այսքա՞ն... այսքա՞ն օրինապահ:

26. XI. 63
Երևան

ՄԻԱՄՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԸ

Բոլորակի մեջ հայելիների,
Հայելիների քառակուսու մեջ
Տանջում են նրանք իրենց վարսե՛ր,
Դե՛մքը, հագուստի փոթ ու դարսե՛ր,—
Ամե՛ն ինչ անում, որ նայե՛նք իրենց,
Իսկ երբ նայում ենք՝ չեն նայում, դիտմա՛մբ:

Իրենց են տանջում
Ու... մեզ են տանջում:

Չե՛ն նայում, դիտմա՛մբ, ու քայլում այնպե՛ս,
Վճռել են կարծես իրենց թովչանքով
Եվ իրենց անհաս-անմատույցությամբ
Ցողել փողոցը,
Պողոտան ջրել,
Իսկ մեզ էլ վառել երաշտով հրե:

Չե՛ն նայում, դիտմա՛մբ:
Կրկին քայլում են:
Եվ եթե նրանց վիստերն են դողում,
Մեր էլ՝ սրտերը:

Քայլում են կրկին:
Եվ արեգակը ուրիշ ո՛չ մի տեղ
Իր ապդեցությունն այնքան չի վգում,
Որքան որ նրանց դեմքերի վրա.
Նույնիսկ արևի փութանցիկ խաղից
Երանգ են տալիս ու առնում երանգ:

Եվ նրանց խոսուն մաշկին նայելով՝
Փշաքաղվում է մաշկը մեր այնպես,
Ինչպես կգայուն լճակը՝ քամուց:

Յուրաքանչյուրը յուրովի նապում,
Օրո՜ր-շորորո՜ւմ, քայլում է կրկին,
Իրենց նայողին չի՜ նայում, դիտմա՜մբ,
Եվ մեկ մտքի մեջ համարում գուցե
Այնքա՜ն միամիտ, անգե՜տ ու անփո՜րձ,
Որ հավատում է, թե մենք չգիտենք
Իր պահվածքն ուրիշ՝ ինչ-որ ծառի տակ,
Ինչ-որ անկյունում, ինչ-որ սենյակում,
Ինչ-որ մեկ նման մի Ինչ-որի հետ,
Որին տիրում է— անձնատուր լինում,
Որին հաղթում է և հաղթվում որից,
Որպեսզի... կյանքը նորի՜ց ու նորի՜ց
Հաղթանակ տանի՝
Բարուն հակվելով
Եվ, ընդդեմ մահվան, շարունակվելով...

Եվ մի՞թե չարժե,
Եվ չարժե՞ արդյոք,
Որ կյանքի հավերժ հաղթության համար
Նրանք հափիտյան մե՛կ տանջեն այսպես
Եվ... իրե՛նց տանջեն:

17. II. 64
Երևան

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՓՈԹՈՐԻԿ

Գեղեցիկ չէր, ես էլ գերված-տարված չէի:
Կար պաղ գինի միայն ու նույնքան պաղ կրույց:
Ո՛չ ես, ո՛չ էլ ինքը սիրահարված չէինք,
Ո՛չ էլ խոսում էինք հիմար սիրուց:
Հետո... ինչպես եղավ... ու տաքացա՜վ գինին,
Ու տաքացավ խո՜սքը. ու... տաքացա՜վ:
Ինչքան խմեցի ես՝ ասաց «անո՜ւշ լինի»,
Ինչքա՜ն խմեցի ես՝ այնքան գեղեցկացա՜վ,
Այնքա՜ն գեղեցկացավ, որ չեմ հիշում հիմա,
Թե մինչև այդ ինքը իր ինչի՞ն էր նման...

Հետո, երբ դուրս եկանք, թվաց, թե նա
Շրջապգե՜ստ չի հագել, այլ փոթորի՜կ:
Հետո... փոթորիկն այդ տեղափոխվեց իմ մեջ,
Հետո... փոթորիկն այդ փոխանցեցի նրան՝
Իմ մատների միջով—միջոցով իր թևի:
Հետո... փոթորիկն այդ մեկ երկուսիս քշեց,
Թավալգոր տարավ չգիտեմ ուր,
Բանալիով ջարդեց ինչ-որ մի դուռ,
Եվ քանի որ արդեն հոգնած էր շատ՝
Փոթորիկը պառկեց մահճակալին,
Հսկա՜ փոթորիկը նեղի՜կ մահճակալին,
Որպեսզի մի փոքրը հանգստանա...

Հանգստացավ, երբ որ... առավոտն էր բացվում...

Հիմա, կանգնած այդ նույն մահճակալի դիմաց,
Փոթորկի հետքերն եմ զննում ու տնտղում՝
Ո՛չ անկողնու վրա, այլ իմ ներսո՛ւմ: Հիմա
Մինչև ծունկըս խրված ինքըս իմ մեջ՝
Ինչպես ծառը հողում,
Ես ճոճվում եմ տեղում:
Մեջըս սկսում են արմատ ձգել
Եվ ծառայի՛ն մտքեր, ծառի՛ մտքեր:
Ու ես ծառի նման չեմ կարենում լքել
Այն տեղն, ուր տնկված եմ:
Հիմա ինչպե՞ս պոկեմ,
Ինչպե՞ս ինքըս պոկեմ ինձ ինձանից
Ու վեր կենամ գնամ.
Քայլող ծառի՞ նման...

30—31. X. 65
Զանախչի

ԳՏՆՎԱԾ ՄԻԱՎՈՐԸ

Ասացի՝ ի՞մն ես:
Ասացիր՝ քո՛նն եմ:
Ու լուռ ենք հիմա...
Իմ մատներն ես դու մատներով սանրում
(Թե՞ ակամայից ուզում ես նաև
Կարդալ ծերության այբուբենը պարզ՝
Արդեն ճերմակող մատներն իմ ալիքի):

Ու լուռ ենք դարձյալ...
Ես քեզ մտքիս մեջ փո՛րձ եմ պարտք տալիս,
Իսկ դու, կարո՞ղ ես, ժամանա՞կ փոխ տուր,
Որպեսզի կյանքը՝ փորձարարն այս մեծ,
Նորի՛ց հաստատի
Նո՛ր օրինակով,
Որ կյանքում հաճախ այնպես է լինում,
Երբ սիրողները դեռ ողջ են-առողջ,
Իսկ սերը նրանց դառնում է լեգե՛նդ
Եվ... ապրում կյանքով հավարապատիկ...

Մենք լռում ենք դեռ...
Իսկ դրսում,— մի պահ, խնդրո՛ւմ եմ, լսի՛ր,—
Թռչուններ ինչ-որ՝
Ցուրաքանչյուրը մի-մի լարովի խաղալիք ասես,
Նույն երգն են երգում՝ լարաթափվելով,
Վերալարվելով՝ նո՛ւյնը նորերգում
Ու նորերգելով կարծես թե հերքում
Քամուն այս մաղձոտ՝
Սկեպտիկոսին այս վաղնջական,
Որ փնթփնթում է՝ «ամե՛ն ինչ կանցնի»,

Ու «կանցնի», իբրը, լոկ ա՛յն պատճառով,
Որ 1 × 1 հավասար է 1 և ոչ թե 2...

Ի՞նչ լավ է, որ քեզ
Հասկանալի չէ բարբառը քամու.
Դու ամենամե՜ծ հավատացյալն ես աշխարհում հիմա:
Ու ես էլ ահա հավատափոխվում-դարձի եմ գալիս,
Լցվում քո լեցո՜ւն-լեցո՜ւն հավատքով:

Ի՞նչ լավ է, որ դու
Ընդամենը քեզ կոչում ես «քո՜նն ես»
Ու չե՜ս հասկանում,
Որ ընդամենը «ի՜մը» չես միայն,
Այլ նա՜և...

Նաև միավո՜ր է պետք:

Միավո՜ր է պետք՝
Երջանկությունից կամ թույությունից մշտապես ծնվող
Գլխապտույտի վերոյի՜ համար,
Զերոյանման մեր գլխի՜ համար,
Զերոյանման մեր արտի՜ համար
Եվ վերոյացող ա՜յն կյանքի համար,
Որ ինքն իրեն է ճարմանդած պահում:

Միավո՜ր է պետք:
Միավո՜ր է պետք
Ա՜յն հսկայական վերոյի համար,
Որ... Երկրագունդն է գծում պտույտով...

Իսկ դու,— ի՞նչ լավ է,—
Քեզ ընդամենը կոչում ես «քո՜նն ես»
Ու դեռ,— ի՞նչ լավ է,— չե՜ս էլ կռահում,
Որ ընդամենը «իմը» չես միայն,
Այլ ինքդ ես նաև այդ... Միավո՜ր:

29. II. 64
Երևան

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԵՏ

Իսկ ինձանից
Ինչո՞ւ ես դու այսպես քաշվում և ամաչում:
Ի՞նչ է, մենք նո՞ր ծանոթացանք,
Իրար դեռ լավ չե՞նք ճանաչում:
Բայց, ամաչկո՜տ իմ սիրելի, ես քեզ գիտեմ
Ու սիրում եմ առնվազն մի 40
Կամ... 4000 կարգիկ տարի:
Դու ինչպե՞ս ես դա մոռանում
Ու քեզ պահում այնպես քաշված և ամոթխած,
Կարծես նոր ենք ծանոթացել
Ու դեռ կարգին չենք ճանաչում մեկը մեկին:

Չէ՜, սիրելի՜ս,
Մենք նորասեր կույգ չենք, բնա՜վ:
Սիրո քայլող հուշարձա՜ն ենք՝
Վաղնջակա՜ն և հինավո՜ւրց:
Ես քեզ անգիր ու գոց գիտեմ՝ կրակի՜ պես,
Ա՜յն կրակի,
Որ ստվերով մեզ նկարեց քարանձավի պատի վրա
Եվ բոցեղեն իր տագնապով ճիշտ թարգմանեց
Քո խլի՜րտը,
Իմ խայտա՜նքը,
Իրարատենչ մարմինների մեր փոխադարձ ընդգրկո՜ւմը,
Որից դիցեր և աստվածներ ծնունդ առան՝
Մեր մեծացած մանուկների ծանոթ տեսքով...

Եվ դարերը մենք կարող ենք հաշվել այնպես.
Ինչպես մանկան ատամները՝
Գորովանքով մի կաթոգին...
Մեր սիրո մեջ ձմեռում են առասպելներ,

Ասքեր նիրհող,
Որ մեր ամեն մի հպումից
Արթնանում են հանգստացած,
Դրանից էլ հին աշխարհն է միշտ նորանում
Յուրաքանչյուր նո՛ր սիրո հետ՝
Մե՛ր սիրո հետ:
Եվ նոր սիրով հին աշխարհի նորացումն է
Մինչև անգամ կրկնությունը քո ամոթխած շարժուձևի,
Այս քո երկչոտ տատամսումը,
Անգիտակից այս քո վախը,
Առանց որոնց սկի՛զբ չկա, սկի՛զբ, սկի՛զբ...

Իսկ սիրո մեջ ամե՛ն սկիզբ միշտ տարբեր է:
Վերջն է նույնը:
Վերջն է նման:
Սակայն մե՛զ ինչ վերջը սիրո:
Վերջի մասին թող մտածի վերջացողը:
Մերն սկիզբն է:
Եվ ուզում եմ, որ սկիզբը լինի այնպես,
Ինչպես (հիշի՛ր) ա՛յն ժամանակ,
Երբ կրակը մեզ ներարեց իր ստվերով
Քարանձավի խոնավ պատին
Ու բոցեղեն իր տագնապով ճիշտ ու ճկուն կերպավորեց
Քո սարսո՛ւռը,
Իմ թրթի՛ռը,
Իրարատենչ մարմինների մեր փոխադարձ ճարակո՛ւմը,
Որով կյանքի կրակը միշտ մնաց անշեջ՝
Ծխանման տառապանքով
Եվ բոցաձև երջանկությամբ:

Իսկ աշխարհում
Երջանկությունն ավելի է տարողունակ,
Քան տանջանքը,
Թե չէ սողուն ժամանակը այսպես արագ չէր սլանա՝
Երջանկության ժամը վայրկյան դարձընելով...

Ուրեմն արի մենք իրարից կուր չամաչենք՝
Շատ չծխանք,
Որ սերն ապատ շարունակվի, իբրև կուտ բոց,
Իբրև սնունդ մերատիպար աստվածների...

Ա՛յն, ինչ կյանքում մոռացվում է, միշտ չէ, գիտե՛մ,
Որ իսկապես արժանի է մոռացության:
Բայց մոռացի՛ր քո վարանքը,
Քո ամաչկոտ շարժուձևը,
Որովհետև մերպեսների համար, գիտե՞ս,
Ամաչելն է արդեն ամոթ:

Բացվի՛ր:
Բացվե՛նք:
Եվ մոռանանք,
Որ մենք նոր ենք ծանոթացել:

Բացվի՛ր:
Բացվե՛նք,
Որ արթնանա
Մեր հոգու մեջ դարեր նիրհող
Մտերմությունն ամենահաղթ,
Եվ մենք՝
Բռնած իրար ձեռքից,
Ե՛տ ճամփորդենք՝ հեքիաթի պես՝ դեպի այնտեղ,
Որտեղ էինք մի 40 կամ... 4000 տարի առաջ,
Եվ այնտեղից նո՛ր սկսենք
Ճանապարհը մեր նո՛ր սիրո.
Վերադառնանք մենք... դեպի մեկ,
Մենք... դեպի մեկ...

16. III. 64
Դիլիջան

ՕԴԱՀԱՆ ԶԱՆԳԻ ՏԱԿ

Զմեռային ինչ-որ թռչուն
Երեկոյի մոտալուտն է օրհնաբանում հիմարաբար՝
Չիմանալով,
Որ վերահաս երեկոյից
Ամե՛ն անգամ քո կգիխիչ հոտն եմ առնում
Եվ որ բոլոր թռչունների կանչերի մեջ
Ես ջանում եմ միայն որսալ քո անունի վանկարկումը...

Չյուն էր տեղում ամբողջ օրը,
Գուցե մի ձյուն համատարած-համապգային՝
Հեռվից հեռու
Մեկ իրար հետ մի ցանցի մեջ միացնելով:
Եվ լռությունն արդեն թրջված-ծանրացած է հիմա այնպես,
Ինչպես որ իմ կոշիկները
Կամ թերևս քո վերարկուն:

Ա՜խ այս ծանր լռությունը:
Ասես մեկի հետաքրքիր ձեռքը հիմա
Այս վիթխարի լռությունն է թաքուն կործել
Կյանքի վրա և աշխարհի՝
Մեծ օդահան կանգի՛ նման.
Կամենում է կարծես փորձել,
Թե վիթխարի այս օդահան կանգի ներքո
Մեր սիրտն ինչքա՞ն կդիմանա,
Ե՞րբ կճայթի...

Մութը, իբրև լակմուսյան թուղթ, լույսն է ծծում:
Զմեռային անտառն ասես պրկախտավ է հիվանդացել:
Ինձանից դուրս
Ես փնտրում եմ ինչ-որ մի բան վստահելի,
Որից կառչել կարողանամ:
Ու չեմ գտնում ոչի՛նչ.
Չկա՛ս...
Եվ... փնչում եմ ակամայից,

Խոզ փնչում եմ ու հասկանում,
Թե ինչո՞ւ են թռչունները ճտտում այդպես:
Նրանք ճայթում կամ պայթում են
Այս օդահան կանգի ներքո:
Իմ փնչոցը
Այդ միևնույն ճայթումն է հենց՝
Նո՛ւյն օդահան կանգի ներքո...

Փորձը կարծես ավարտվում է:
Եվ ապդարար քամին հիմա կսկսի տալ
Այդ ավարտի ապդանշանն ամենապդու՝
Պրկախտավոր այս անտառը վերածելով ընկնավորի,
Թպրտալով լուսամուտի ու դռան տակ,
Թպրտալով ձների մեջ՝
Ինքը՝ նո՛ւյնպես մի ընկնավոր...

Խավարն արդեն խորանարդում է ինքն իրեն
Եվ իր սևը խառնակելով ձյան ճերմակին՝
Ստանում է մի գորշություն,
Ու տարածում կյանքի՛, մարդկա՛նց,
Նույնիսկ մարդու շնչի՛ վրա:
Իսկ երբ նաև գորշանում է շունչը նույնիսկ՝
Սկսում են մարդիկ քնել,
Որ... գույնզգույն երազներով
Ներկեն կյանքի գորշությունը:

Իսկ ես քնել չեմ կարենում:
Եվ պտտվող Երկրի վրա,
Ինչպես հսկա խարտաքարի,
Հեսանվում է իմ գիշերը,
Որպեսզի միշտ սրված մնա զգացումը՝
Կտրատելով ա՛յն թաղանթը,
Որով սերը
Վերածվում է շրջանառու սովորության...

15. III. 64
Դիլիջան

ՕՏԱՐ ՍԻՐՈ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Զմեռային նվաղ արեգակը կրկին
Շողն իր դարձրել է ճոպանուղի մի շեղ,
Որով ճամփորդում է անվախ փոշին միայն
Վաղո՜ւց չմաքրված իմ սենյակում:

Ցավի պտտահողմից կյանքիս այբողջ փոշին
Բարձրացել է տեղից ու աչքերդս խցել,
Եվ իմ արցունքները դրանից են գուցե...

Ու վերստին ես ինձ դուրս եմ գցում փողոց:

Քաղաքային նեղլիկ ամեն պատշգամբում,
Ինչպես նորատեսակ տապկոցի մեջ,
Զյունն է հիմա եռում մարմա՜նդ-մարմա՜նդ՝
Արձակելով բարակ գոլ գոլորշի:
Իսկ շեղ կտուրներից ու քիվերից, հանկարծ,
Զյան կույտեր են երբեմն այնպե՜ս փռվում գետին,
Ասես հարբա՜ծ լինեն՝
Արեգակի՜ց հարբած...

Ես աչքերիս խորքում կասկածներս եմ ճմռում
Իմ բարեկամ ձեռքի պարզ օգնությամբ,
Ու բութ կոշկաքթով կտրատում եմ կրկին
Խուճուճ հանգույցները փողոցների:

Հավատ չընծայելով իր իսկ խոսքին ճոռոմ՝
Կեղծ-դասական մի հողմ հավատի՜ց է ճառում,
Խոսում է սրբությունի՜ց,
Հավերժական սիրո՜ւց:

Իսկ ես... իսկ ես, կարծես երազի մեջ,
Ինձ զգում եմ ինչ-որ վանքի գավթում՝
Լեցուն խեղվածներով ու մուրացողներով,
Եվ չմեկնած ձեռքիս ափում դատարկ
Եթե մինչև անգամ տասնոց դնեն,
Ես— փորձե՜լ եմ արդեն— չե՜մ գոհանա.
— Ես քո կոպեկների՜ կարիքն ունեմ:

Բայց ես աշխարհ չեկա, որ «գթացե՜ք» նվամ,
Ես ծնվել եմ, որ գութ ու բարություն ցրեմ...

Եվ ինքնասեր-հպարտ ջղե՞րս են ինձ ցնցում,
Թե՞ քամին է սարսում ամեն վայրկյան՝
Էլեկտրական ուրույն հոսանքի պես:

Մութը սոսնձվում է հոգուս և աչքերիս:

Լարի վրա թառած ագռավը սև
Հանկարծ— ինձ տեսնելո՞ւց— ճչում է խռպաձայն,
— Դեմքդս, հավանաբար, ահավոր է սաստիկ:
Ու խեթ նայելով ինձ՝
Շունն էլ է գոռոում,
Քաղաքայի՜ն շունը, որ չի հիշում նույնիսկ,
Թե մինչև դա մեկ էլ ե՞րբ է հաչել:

Ու երբ տուն եմ մտնում ու հայելուն նայում,
Հասկանում եմ շա՜նն էլ, ագռավի՜ն էլ.
— Քո երեկվա սերն է լուսավորում դեռ ինձ,
Բայց և մեր բաժանման շուքն է ընկել վրաս,
Եվ զգում եմ ես ինձ ա՜յն վիճակում ծանրը,
Որ և պատահում է արեգակին նույնիսկ
Եվ (քանի՜ դար արդեն) «խավարում» է կոչվում:

Եթե խավարում է՝ թող որ լրի՜վ լինի
Եվ ո՛չ թե մասնակի:
Թող մթընդի այնպե՜ս,
Որ երևան երկնի բոլո՛ր աստղերն անգամ.
Ամեն մեկը՝ մի կին,
Ամեն մեկը՝ աղջիկ,
Որոնց ես շա՜տ վաղուց չեմ նկատում՝
Քո խաբուսիկ սիրո ցոլանքի մեջ:

Թող խավարում լինի լրի՜վ-լրի՜վ-լրի՜վ...

Ու ես լույսն եմ վառում իմ սենյակի,
Միացնում եմ նաև երգասփյուռն էլ իսկույն,
Որ... տառերը սերտեմ նո՛ր մի սիրո,
Օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր սիրո...

20. III. 61
Մոսկվա

ԱՆՆԱՄԱԿ ԾՐԱՐ

Շրթունքներըս անգիր գիտեն
Վայելքների օրենքները,
Բայց ես հիմա
Շա՜տ եմ նման այն խեղճ մարդուն,
Որ ծանրորեն հիվանդանում օրվա մի օր
Եվ իմացած երկրորդ լեկուն մոռանում է բոլորովի՜ն...

Ու մտքերըս հարթ են հիմա, բայց սրանկյուն՝
Ինչպես էժան հուշարձանի քառակուսի պատվանդանը.
Իմաստներն են անհետացել
Ու մնում են լոկ բառերը՝
Դատարկ ու փուչ պարկերի պես
(Թե դեն նետես՝ քիչ ափսոս է,
Թե դեռ պահես՝ խանգարում են):

Եվ աննամակ ծրարի պես
Սոսնձում եմ շրթունքներըս...

Իսկ եթե ես հանկարծ վերցնեմ
Մի աննամակ ծրար ճամփեմ քո հասցեով,
Երբ դու բանաս՝
Կկարմանա՞ս:

Չե՜ս կարմանա:
Կհասկանա՛ս,
Որ այս տտիպ սպասումն է թվում արդեն,
Մի թվություն,
Որ դառնում է վտանգավոր...
Վտանգում ես, եթե ունես,— այսպես է միշտ:
Ու երկյուղն է մեջս խոսում
Շղթայական ա՛յն ցնցումով,
Որ ծխախոտն է ընծայում մեր թոքերին:
Ա՛յն, ինչ միտք էր
Կամ կարող է միտք հորջորջվել,
Հիմա իմ մեջ

Գլխիվայր է քայլում անվերջ, ինչպես ջուրը,
Եվ ջրի պես, չի հանգուցվում.
Իմաստներն են անհետացել
Ու մնում են լոկ բառերը՝
Դատարկ ու փուչ պարկերի պես
(Թե դեն նետես՝ մեղք է մի քիչ,
Թե դեռ պահես՝ խանգարում են)...

Եվ այնպես եմ ինձ անհարմար ու վատ զգում,
Կարծես կնոջ բարձրակրունկ կոշիկ հագել
Ու վազում եմ վերևից ցած,
Վերևից ցած:
Ե՞րբ պիտի ես բերանքսիվայր գետին փռվեմ:
Բերանքսիվա՛յր:
Փռվեմ մնա՛մ:
Հանգստանամ այս գլխիվայր թավալումից
Եվ ակամա, մինչև անգամ չուզենալով,
Լսեմ հոդի մեծ թոքերի տուրևառը,
Եվ ակամա համեմատեմ
Շղթայական ա՛յն ցնցումին,
Որ երկյուղն է ինձ ընծայում,
Երիտասա՛րդ այն երկյուղը,
Թե քե՛զ կյանքում ունենալով՝
Վտանգում եմ ես իմ կյա՛նքը,
Որ կախված է հանգստության հենց ա՛յն մապից,
Ինչով, կարծեմ, մի ժամանակ
Շինում էին նաև կամուրջ՝
«Դժոխք-Դրախտ» ուղեցույցի սահմանի մոտ,
Մի ահավոր գետի վրա,
Որի անունն, աստվա՛ծ վկա, մոռացել եմ,
Ինչպես որ իմ շրթունքները, կամա՛ց-կամա՛ց,
Մոռանում են մի ժամանակ անգիր արած օրենքները
Վայելքների...

14. III. 64
Դիլիջան

ԴՈՒ ՄԻ ՀԱՐՑՐՈՒ

Դու մի՛ հարցրու. «Սիրո՞ւմ ես ինձ»:

Ինչպես կույրը իր ձեռնափայտն է միշտ հիշում,
Դու էլ հիշի՛ր,
Որ երբ իպուր հարց չեն տալիս՝
Սուտ պատասխան չե՞ն ստանում:
Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա,
Այլ մտածիր,
Թե ջրհորի մութ խորության չափման համար
Իր սեփական մանկանն ո՞վ է ջրհոր նետում:

Դու մի՛ հարցրու, իսկ ես ասեմ
Քո ուսածից շա՛տ ավելին:

Եվ ասում եմ ե՛ս՝ միօրյա՛ հավատացյալ,
Իսկ դու լսի՛ր, իմ նորօրյա՛ աստվածուհի:
Պաշտամունքի մի ծե՛ս պիտի արվի այսօր,
Խոստովանքը էլ ո՞ւմ է պետք:

Դու՝ անծանոթ մի նոր աշխարհ,
Ես՝ մի հմուտ աշխարհագետ,
Որ վա՛տ գիտեմ, շա՛տ վատ գիտեմ
Բակմախոստում տեղանքը քո:
Ու խոսում է մեջս կրկին
Մոլի ոգին հետապոտման.
Ուզում եմ քեզ անգիր անել,
Մտքով գծել քարտեզը քո,—
Հարց ու փորձը էլ ո՞ւմ է պետք:
Եվ առավել լավ չէ՞ արդյոք,

Որ մարդու ո՞տքը սայթաքի,
Քան թե լեզո՛ւն:
Ուրեմն արի ոչ թե խոսենք,
Այլ մտովին քայլենք առաջ
Այս անծանոթ ճանապարհով,
Մինչև հասնենք հանգրվանի՝
Հեքիաթական ինչ-որ մի տեղ,
Ուր չկա՞ տեր ու տիրական՝ մեկնից բացի,
Ուր մենք պիտի լինենք թվատ՝ ջրի՞ նման,
Եվ լինենք կույր՝ կրակի՞ պես,
Ուր՝ հակառակ մեր իմացած հին օրենքի՝
Մարմինները ջերմությունից չե՞ն լայնանում,
Այլ կծկվո՞ւմ,
Եվ լուծվում են բոլոր հարցերն՝ ադի՞ նման,
Դառնալով համ մեր բերանում,
Մեր լարաթափ ջղերի մեջ,
Շփոթահար մեր դեմքերին...

Այնժամ գուցե բնապդաբար ե՛ս քեզ հարցնեմ.
«Սիրո՞ւմ ես ինձ»:
Ե՛ս քեզ հարցնեմ՝
Պատասխանիդ չսպասելով,
Այլ օգնելով, որ ստանաս
Նախկին տեսքդ աստվածուհու,
Նախկին տեսքդ ա՛յն աշխարհի,
Որ դեռ չուներ գծված քարտեզ:
Եվ իմ հարցին ի պատասխան
Այնժամ գուցե ինքդ ինձ ասես.
«Ասում են, թե դուք օգնում եք լոկ հանվելիս:
Իսկ դու օգնում ես հագնվել:
Դու ուրի՛շ ես:
Սիրո՞ւմ եմ քեզ»...

11. XII. 63
Երևան

ՍԻՐՈ ՓՈԽԱՐԵՆ

Դու մի՛ լինիր այսքան բարի:
Բարությանդ
Ես կարող եմ լոկ մե՛կ բանով փոխհատուցել՝
Իմ անարժե՛ք շփոթությամբ
Եվ թերևս ա՛յն թախիծով,
Որ տարորեն շատ է նման
Անվերջ մեռնող ու հարություն անվերջ առնող
Հին դիցերին...

Չէի՞ ուզի:
Շա՛տ կուզեի
Առաջվա պես հրճվել գեղջուկ այս կանաչով,
Որ հիմա քո
Զսպանակվող կողի տակ է զսպանակվում,
Եվ բարբարոս երգը լսել այն առվակի,
Որ հիմա քո
Մերկ ոտների կլոդապարն է ուզում հանել:

Չէի՞ ուզի:
Շա՛տ կուզեի
Մե՛կ անգամ էլ
Չճանաչել ո՛չ մի արգելք ու խոչընդոտ,
Դանդա՛ղ գնալ—շտա՛պ հասնել
Մեր մարդկային հայրենիքը սկզբնական,
Այսինքքն՝ իմ ափով ապրել քո ափի մեջ,
Ինձ կապել ու շաղկապել քեզ
Այնպե՛ս,
Որ մենք երկուսովքս մեկտեղ դառնանք
Անքակտելի՝ խաչքառի՞ պես:

Չէի՞ ուզի:
Շա՜տ կուզեի:

Բայց, սիրելի՜ս, չի հոգնում նա՜,
Ով գնում է շատ հեռավո՜ր հանդիպումի:
Իսկ ես հիմա
Զբոսնում եմ միայն ի՜մ իսկ արվարձանում,
Եվ կբոսնում՝
Ձեռքերովս փորագրված մակնիշները ընթերցելով,
Ու քերծելով շատ ավելորդ գրություններ,
Ու քերծելով առանց մուրճի և տաշիչի՝
Եղունգներո՜վ իմ սեփական...
Եվ իլո՜ւր ես քո բարությամբ,
Քո այս ծածուկ-հայտնի սիրով
Ջանում ապրել իմ կալվածքի մի անկյունում:
Ու ես հիմա
Այս ասում եմ ո՜չ լսելուդ համար արդեն,
Ո՜չ էլ իմ իսկ արդարացման,
Ո՜չ էլ իմ իսկ արդարացման:
Եթե կուզես ճիշտն իմանալ՝
Ասելիս էլ բա՜ն չեմ ասում, ամենևի՜ն,
Այլ պարզապես կբաղմունքս եմ շարունակում՝
Իմ սեփական կալվածքի մեջ
Հոգնածորեն կբոսնելով,
Ե՜վքս մի նոր
Գրություն եմ ավելացնում ջնջածիս տեղ.
«Չի հոգնում նա՜,
Ով գնում է շատ հեռավո՜ր հանդիպումի»:

Իսկ դու... իսկ դու շա՜տ ես մոտիկ:
Ու ես... ու ես շա՜տ եմ հոգնած...

25. X. 65
Ջանախչի

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՇՔ

Մենք հանդիպեցինք...
Եվ ի՜նչ կատարվեց, հասկացա՞ր արդյոք.
Կարծես թե կյանքը հանկարծ լվացվեց՝
Անվերջ խաղալուց կեղտի մեջ կորած մանուկի նման:
Օդը, որ կարծես գորշ մշուշով էր կեղևակալված,
Կեղևաթափվեց՝
Տեսքով անձրևի,
Ձյան կերպարանքով,
Եվ... օդի համը զգացինք կրկին.
Այնպես է համե՜ղ-առարկայացա՜ծ...
Որ... չե՞ս կամենում ուտե՛լ պարզապես...

Մենք հանդիպեցինք...
Եվ ի՜նչ կատարվեց, արդյոք հասկացա՞ր.
Հարազատության ա՜յն զգացումին,
Որ կյանքն էր ջոկ-ջոկ երկուսիս տվել,
Քնքշանք խառնվեց կրկնակի՜ չափով,
Որից ստացվեց մի... սե՜ր անվախճան,
Ինչպես անվախճան ջուրն է ստացվում,
Երբ ջրածինն է կրկնակի չափով մարտում թթվածին...

Մենք հանդիպեցինք...
Եվ— ահավասիկ այսպե՜ս— տապալվեց
Բանաստեղծության պարիսպը խարխուլ.
Գիտությունները սիրով լուծվեցին աչքերում քո թաց,
Ոտներդդ իրենց դրոշմը դրին պատմության դեմքին,
Շարժումը ձեռքիդ օդի ձևերը քանդեց ու սարքեց՝
Հարստացնելով երկրաչափությունն ա՜յն օրենքներով,
Որ սպասում են իրենց երջանիկ հետազոտողին...

Մենք հանդիպեցինք...
Եվ խոր քուն մտան «բայց»-երը բոլոր,
Որ խնդությունը կարթնելով հանկարծ՝
Ընդոստ վե՜ր ցատկի
Եվ պտտահողմի ահարկո՛ւ տեսքով
Աշխատի մի կերպ շաղափել-ծակել
Բոլո՜ր շերտերը կարծրը երկնքի,
Եվ երկրի վրա, շաղափված անցքից,
Գլխիվայր կախվի խենթ ուրախության ցայտուն շատրվա՜ն,
Որին բացվել կա՜ և... չկա՜ փակվել...

Մենք հանդիպեցինք...
Եվ հանդիպեցինք
Շատ սովորակա՜ն-հասարա՜կ ձևով,
Որ հրաշքները իրե՜նք էլ դառնան
Շատ սովորակա՜ն-հասարա՜կ բաներ ..

18. III. 64
Դիլիջան

ՆՅԱՐԴԻ ԹՐԹԻՌԸ

Նորից են կանգում
(Ո՜ր երորդ անգամ),
Զանգում են... գարնան դեսպանատնից.
Օտարսիրային անձնագիր են ինձ նրանք խոստանում:
Իկո՜ւր:
Չե՜մ գնա:

Ինձ՝
Քո աչքերի մութ ուղեծիրով թռած ու դարձած
Հին ու բավմափորձ աստղագնացիս,
Խաբելը բնավ այնքան էլ հեշտ չէ,
Որքան թվում է:
Ես տառապալից իմ փորձից գիտեմ,
Որ խաբուսիկ են օտար սերերը՝
Աստղերի նման.
Մեծ ու շողշողուն թվացողները ավելի փոքր են
Ու հաճախ անլույս,
Քան փոքրիկները,
Որ իրականում հսկայական են:

Դու՝ փոքրի՜կ ու մե՜ծ,
Ինչպես իմ ու քո այս հայրենիքը,
Դու ինքնավստահ ժպիտով լսիր
Օտարսիրային այդ դեսպանատան
Բոլո՜ր կանգերը.
Թող կանգեն այնքա՜ն,
Մինչև որ հոգնեն:
Իսկ դու քայլ արա ու նստիր կողքիս
Այս սենյակ կոչված անեկդոտության մեջ,

Որտեղ բյուրավոր մումիաներ մանրիկ,
Որոնք հայտնի են փոշի անունով,
Անմահացել են
Ա՛յն բազմակերպար գրքերի վրա,
Որ իրենց դեմքով դարձած են դեպի պատը,
Կարծես թե
Պատժել են (ինչո՞ւ) երեխայի պես...

Եվ բավական չէ՞ ինձ նայես այսպես՝
Երեխայի պես պլշած հայացքով:
Չե՞ս կգում արդյոք,
Որ ապստամբած քո ձևերի տակ
Մենակությունն է ճխլել ինքն իրեն,
Հաճույքն է կտրել մակկապերը իր կույգ թևերի
Ու կամենում է
Մտնել-գրավել մեր մարմինների դատարկ տեղերը,
Մեր ամբողջությունն ասես դարձնելով նյարդի մի կտոր՝
Կենտ աչքի ներքո մի ամենատես խոշորացույցի:
Եվ այդ մի կտոր նյարդի թրթիռը
Անցնում է հիմա... ո՜ղջ տիեզերքով...

Իսկ, նայի՛ր, դրսում
Մութն իրեն վրա նոր շերտ է քսում:
Լույսը մի՛ վառիր.
Բացված ծնկներիդ լուսամփոփային ճերմակությունն էլ
Մեկ համար շա՛տ է:
Ի՞նչ, հեռախոսն է կանգում: Ամո՛թ քեզ,
Որ դեռ կարող ես լսել կանգի ձայն:
Խլացի՛ր: Չքվե՛նք:
Նյարդի թրթիռը
Թո՛ղ կտրի անցնի անեկրությունը
Ու ետ գա կրկին.
Խոշորացույցի կենտ աչքը նրան մի՛շտ սպասում է...

Ջ2. III. 64
Դիլիջան

ՏԱՔՍԻՆԵՐԻ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄ

Երբ լուսաբացն է լրտեսում ապակիները մեր խավար,
Ու կիսամութն է խուզարկվում անկյունները մեր տների,
Դու երևի արթնանում ես՝
Արևի հետ:

Մեգն է մեկնում արձակուրդի:
Հավաքարար քամու ձեռքով
Ավելվում է գիշերային երապների կտորտանքը:
Ժամանում է օրը՝ իբրև վերաքննիչ:
Տարագրված տագնապներն են վերադառնում
Ու ծեծում են արդարության փակ դռները...

Իսկ դու ձեր փակ դռան ետև
Ի՞նչ իմանամ ի՞նչ ես անում:
Դու երևի նախ և առաջ լվացվում ես,
Որ... թարմանա ողջ աշխարհը...
Հետո մակերդ ես հարդարում, հավանաբար,
Որ շփումից քո մակերի ու քո սանրի
Առաջանա էլեկտրական հոսանք մի մեղմ
Եվ դրանից... բոլոր մարդիկ կգան սարսուռ
Ու հաճելի փշաքաղվեն ամբողջ մաշկով...
Հետո գուցե սուրճ ես խմում,
Քո աչքերի՛ գույնն ունեցող
Ու նո՛ւյնքան էլ այրող տաք սուրճ,
Որ... աշխարհի երակներով անվերջ շրջի
Հոտը սրճի...
Հետո արդեն փոխում ես դու կգեստը քո

Ու դուրս ելնում,
Որ... երբ անցնի ամբողջ մի դար,
Դարավերջին
Ինձ հանդիպես տաքսիների հանգրվանում
Եվ աչքերիդ անմե՞ղ-անմե՞ղ մեղմեղանքով
Ուշանալուդ համար, շիկնա՞ծ, չքմեղանաս՝
Շշնջալով «չնեղանա՞ս»:

Չե՞մ նեղանում:
Քշի՞ր, վարո՞ր դդ:
Ո՞ւր:
Չգիտե՞մ:
Քշի՞ր, վարո՞ր դդ:
Արեգակը՝
Շնիկի՞ պես, թե՞ բալիկի,
Տնից ելել և ինչ-որ տեղ մոլորվել է:
Գնանք գտնենք ու ետ բերենք:
Քշի՞ր, վարո՞ր դդ...

23. III. 64
Դիլիջան

ՀԱՍԱՐԱԿ ՊԱՀԱՆՋ

Իմ ուպա՛ծը...

Իմ ուպածը կարծում եք թե մի մեծ բա՞ն է:
Ես չե՛մ հայցում երջանկություն,
Չէ՛,
Տանջում է ինձ հասարա՛կ մի ցանկություն՝
Պա՛րզ տեսնելու,
Պա՛րզ տեսնելու ցանկությունը:

Ա՛խ, տրվե՛ր ինձ պարզ տեսնելու
Կարողությունն աստվածային...
Եվ ո՛չ միայն խավարի մեջ պարզ տեսնելու,
Այլ մինչևիսկ կրքի պահին
Պա՛րզ տեսնելու ա՛յն ստվերը,
Որ հինավուրց արևային ժամացույցի սլաքի պես
Պիտի նշի ժամանակը մեր հոգեկան՝
Այնշտայնին հաստատելով կամ հերքելով:
Պա՛րզ տեսնելու ինչպես մե՛ր իսկ,
Այդպես նաև Երկրագնդի ընդերքներում
Մեր ու նրա ա՛յն մարմաջը,
Անանցնելի ա՛յն հին քորը,
Եվ ա՛յն եռքը սնտանելի,
Որ տանջում է մեզ ու նրան,
Տանջում սաստի՛կ՝
Ստիպելով անվերջ քսվել ու քսմսվել
Մեր սեփական առաստաղին
Ու երբեմն էլ նո՛ւյնիսկ ծակել առաստաղը...
Պա՛րզ տեսնելու

Հրահեղուկ այդ մարմաջը-եռքը-քորը,
Ինչպես որ մենք տեսնում ենք պարզ
Խլուրդների խուլ խլիրտը
Ա՛յն խաղալիք-բլուրների ծանոթ տեսքով,
Որ վերև են մղում սրանք հողի տակից...

Բայց ո՞վ կտա ինձ այսքան բան՝ մե՛կ կոպեկով:
Չէ՛, տալիս եմ
Իմ բովանդա՛կ կարողությունն ու կայքը ես
Մի հասարա՛կ բանի համար՝
Պա՛րզ տեսնելու գեթ այն բանուկ ճանապարհը,
Որով քայլում ենք բոլորըս՝
Չիմանալով, թե մինչև ո՞ւր,
Ինչի՞ համար
Եվ արդյոք ի՞նչ նպատակով...

Պատասխանիր ինձ գոնե դո՛ւ, ի՛մ սիրելի.
Պա՞րզ է արդյոք գեթ մեր սիրո ճանապարհը:
Ո՞ւր ենք գնում:
Ո՞ւր կհասնենք:
Արժի՞ գնալ:

Դու լսո՞ւմ ես.
Ծտերն ասես ո՛չ թե երգում,
Այլ «ի՞նչ... ի՞նչ» են ճչում անվերջ
Եվ դրանով պատառոտում երկնի մովը,
Իսկ լորերն էլ ո՛չ թե երգում,
Այլ «չէ՛... չէ՛»-ի իրենց մեխն են մխում անվերջ
Այդ կապույտի պատռվածքում:

Ես նրանցից որի՞ն լսեմ:
Ի՛նձ չես խղճում՝ խղճա նրա՛նց.
Պատասխանի՛ր...

19. III. 64
Դիլիջան

ՓԱԿԻՐ ԱՉՔԵՐԴ

Պատահում է և... շա՛տ հաճախ,
Մարդ մտովին կրակում է իրեն վրա՝
Հստակ ջրի կամ հայելու,
Ինչ-որ մեկի աչքերի մեջ արտացոլված իր պատկերին,
Եվ տեղն ու տեղն սպանվում է:
Բայց մնում է նրա երկրորդ օրինակը՝
Ինքն է մնում=մնում ենք մենք:

Եվ ինքներըս առանց ողբի մեզ թաղելով՝
Սկսում ենք ապրել նորից
Նախ՝ բուսական-կենդանական,
Իսկ բյուրավոր դարեր հետո՝
Նաև մարդու կյանքով ծանոր ու դժվարին:
Եվ տևում է այս ամենը
Անծայրածիր մի պահ գուցե,
Գուցե շաբաթ մի անսահման
Կամ թերևըս մի կարճ տարի...

Տե՛ր իմ աստված, դու լա՛վ գիտես,
Թե ես քանի՞-քանի՞ անգամ
Այս սրախիճ-տատասկապատ ճանապարհը
Կրկնել եմ ոտաբոբիկ:
Եվ հոգնե՛լ եմ,
Շա՛տ եմ հոգնել
Թե՛ ինքըս ինձ սպանելուց,
Թե՛, առավել, վերապրելուց...

Եվ կարիք կա՞,
Որ ես նորից նո՛ւյնը փորձեմ՝
Այս անգամ էլ ինքս ինձ վրա կրակելով
Ա՛յս աղջկա աչքերի մեջ:

. . . . . .

Փակի՛ր աչքերդ, սիրելի՛ս,
Սարսափով եմ ես մտածում,
Որ կարող է այս անգամ էլ ե՛ս չսպանվեմ,
Այլ... ավիրեմ քո՛ աչքերը...

Փակի՛ր աչքերդ, սիրելի՛ս...

20. III. 64
Դիլիջան

ԿԵՂԾ ԱՆՑԱԹՂԹՈՎ

Հմայիչ, որպես անծանոթուհի,
Քայլում է կրկին գարունն աշխարհով...

Դո՛ւ՝ իմ երեկվա անծանոթուհի՞,
Իմ մտատիպա՛ր ու մտապատկե՛ր,
Հիմա՝ ստացած մարմին ու անուն,
Անծանոթուհու քո հին հմայքից
Բա՛ն չկորցրած
Ու դեռ վերցրած
Հարապատության տաքությունն ամբողջ...
Ու ե՛ս՝ պատրա՛նքը քո մշտադարձիկ,
Ու ե՛ս՝ գիշերվա հաճախա՛նքը քո,
Ու ե՛ս՝ փետուրե ասե՛ղը բարձիդ,—
Քայլում ենք հիմա մեկտեղ թևանցուկ.
Դու այս գարնա՛ն հետ,
Իսկ ես էլ՝ քե՛զ հետ,
Քայլում ենք հիմա այսպես երեքով,
Եվ չի՞ խանգարում երրորդը բնավ...

Դեռ մեր քաղաքում փողոցներ կան նեղ
Եվ այնպե՛ս ոլոր,
Այնպե՛ս ծուռումուռ,
Ասես չորացած գետի հուն լինեն:
Եվ գարունն այնտեղ,
Այլ փողոցների համեմատությամբ,
Ուշանում է քիչ:
Եվ հիմա այնտեղ
Կիսով չորացած ցեխ է դեռ:
Գնա՛նք.
Ոտնահետքերդ թող տպված մնան
Նրանց գորշ դեմքին՝
Լուսապդի նման...

Եվ մանուկներ կան մանկական այգում,
Որ համոզված են, թե իրենց մի օր

Հենց այս վարարած գետից են բռնել:
Գնա՛նք ու մտնենք աշխարհը նրանց:
Կընդունե՞ն իսկույն.
Նրանց աշխարհում
Անցաթուղթ հարցնող պահակներ չկա՞ն...

Եվ չմոռանանք և պահակներին:
Գիշերը նրանք՝
Մեծ մասամբ ծերեր
(Լացըդ չի՞ գալիս... կո՛լ տուր ինձ նման),
Մրսած մատներով կրակ են վառում,
Որ... ցուրտ խորովե՞ն-եփե՞ն-տապակե՞ն
Ու տան... ո՞ւմ... բախտի՛ն.
Թող բկի՞ն մնա...

Եվ մի՛ ամաչիր,
Մի՛ քաշվիր բնավ,
Եթե այդպիսի մի խարույկի շուրջ
Անծանոթ մարդկանց հավաքված տեսնենք:
Դու չե՞ս նկատել, որ կրակը միշտ
Իր շուրջ հավաքված անծանոթ մարդկանց
Ծանոթացնում է— հարազատացնում՝
Երևի նրանց ներանձավի մեջ վերարթնացնելով
Իրենց դարավոր անցյալի հուշը...

Բայց բավական է, սիրելի՛ս, ո՞ւշ է:
Մեծերի աշխարհն անչափ է հեռու
Երեխաների ապատ աշխարհից.
Հենց մերո՛նք մեկնից անցաթուղթ կուզեն՝
«Ո՞ւր էիր» հարցով:
Մի սուտ անցաթուղթ կեղծելով՝
Գնա՛նք,
Սիրելի՛ս, ուշ է...

22. III. 64
Դիլիջան

ՓՐԿԱՐԱՐ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեկ բաժանող ձիգ ժամերը
Ես կարող եմ արդեն հաշվել
Կարճ հավրանքով քո մատների,
Որ ես պիտի բռնեմ շուտով
Ու փնջելով սեղմած պահեմ՝
Էլեկտրական լարի նման:
Զվախենա՞ս իմ ցնցումից.
Էլեկտրական այդ հոսանքից ո՛չ թե մեռնում,
Այլ հարություն կրկին առնում,
Հոգեդարձվում-վերապրում են...

Իսկ դու գուցե բնավ էլ ինձ չես սպասում
Կամ սպասել-սպասում ես, որ լոկ ասես.
«Ես հասկացա, որ այլևս մենք չպիտի...»:
Եվ ակամա ինձ դնում եմ ա՛յն դերի մեջ,
Որ իմը չէ,
Սակայն պիտի ճարահատյալ հիմա խաղամ
Դատարկ բեմում...

Բայց ես,
Ում դու գուցե մտքով անվանուս ես ՆԱԽԿԻՆ սիրած,
Զգում եմ պարզ, թե ինչպես է փակվում լեզուս,
Որովհետև... մարդը մարդ է հենց այնքանով,
Որ մշտապես ելք է ճարում չընկճվելու
Եվ չի ուզում կոչվել ՆԱԽԿԻՆ
(Հասկանո՞ւմ ես.
ՆԱԽԿԻՆ էլ մա՞րդ, տե՛ր իմ աստված)...

Ու փակվում է, փակվում լեկուս
Դռան նման ՆԱԽԿԻՆ մի տան,
Որտեղ հիմա բնակվում են
Ա՛յն հինավուրց ոգիները,
Որոնց անգո գոյությունը կուր ենք ժխտում
Եվ դրանով
Է՛լ ավելի աղքատացնում մեր կյանքն աղքատ,
Եվ դրանով օտարացնում ինքներըս մեզ...

Ու փակվում է ՆԱԽԿԻՆ լեկուս՝
Քո ԱՅՍՕՐՎԱ սրտի նման,
Որտեղ, գիտե՛մ, բանտարկված է իմ ստվերը՝
Իբրև ծանր մի հանցագործ.
Նա փորձել է քո սրտի մեջ անմահանալ,
Իսկ դա, իրո՛ք, հավատար է մահափորձի,
Որովհետև... նորությունն է հավատքը մեր:

Դու մի՛ փորձիր արդարանալ,
Հարկավոր չէ՞:
Բայց երբ կանգնի
Ամեն անգամ վերջալույսը քո հանդիման,
Ու երբ կանգնի՝ քրմուհո՛ւ պես,
Հիշի՛ր, որ դու չե՞ս վերջանում,
Որ դու պիտի վերակվես թեկուզ վա՛ղը:
Բայց և հիշի՛ր, որ սկսվել՝
Բնավ էլ չի նշանակում փոխել հավատ,
Ինչպես նաև ուրացում չէ մոռացումը:
Ուստի և մեր անջատումն էլ վերջնական չէ.
Այլ անցողիկ.
Մե՞կ էլ տեսար, դարե՛ր հետո,
Մենք վերստին հանդիպեցինք՝
Այս լճակի
Կամ այն առվի ափին կանաչ,
Ուր ծառերը պիտի պտկեն,
Պիտի կրկին կապեն կոճակ,
Ուր գորտերը, մեկ հետ մեկտեղ,

Պիտի կրկին դասը սեղտեն իրենց սիրո՝
Ըստ աստղային այբուբենի:
Կրկին գարնան հոտը քնկոտ
Պիտի պառկի քո ռունգներում
Եվ արթնացնի արյունը քո՝
Ամբողջությունդ հպելով
Իմ արթնացած ամբողջության
Եվ վերստին արծարծելով անծուխ հրդեհ:
Ամենակուլ այդ հրդեհից մենք չենք այրվի՝
Ապբեստի պես,
Այլ արևից ստացածը կդարձընենք կրկին իրեն՝
Մեր հինավուրց ու նորոգվող այարտքի դիմաց...

Իսկ առայժմս
Ես հաշվում եմ մեկ բաժանող կարճ ժամերը
Ձեռքերիդ ա՛յն տասը մատով,
Որ ես պիտի բռնեմ շուտով
Ու փնջելով սեղմած պահեմ՝
Էլեկտրական լարի նման:
Չվախենա՞ս իմ ցնցումից,
Եթե անգամ էլեկտրական այդ հոսանքը մահացու է.
Էլեկտրահար մարդուն, գիտե՛ս, հողում թաղում
Եվ դրանով հարություն են տալիս կրկին՝
Չորս ժա՞մ հետո-չորս դա՞ր հետո,—
Մեկ չէ՞ միթե...

27. III. 64
Դիլիջան
9. XII. 64
Երևան

ԱՍՏԾՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Զորակա՛ ասէս լինի մի նեղ թանաքաման,
Ու նրա մեջ շեղ տնկված է հին ջրվեժը՝
Այնպե՛ս նման փղոսկրե գրչակոթի:
Կողքին՝ մի դաշտ քառակուսի և գույնզգույն,
Ասես մի մեծ նամականիշ, որ կնքված է
Դեմի լեռան մեծ դրոշմով...

Եթե բառերն էլի՛ բռնեն
Իրենց նախկին իմաստների տեղը լքված,
Եթե բայերն իրո՛ք դառնան գործողություն,
Ածականներն իրո՛ք դառնան հատկանիշներ շոշափելի,
Ինչպես որ, տե՛ս, այս հին հողը
Եվ քարքարոտ այս լեռները
Հիմա կրկին՝
Միջնորդությամբ ամառնացող արեգակի՝
Իրենց նախկին— հրահեղուկ շեկ ջերմության
Գեթ մի մասն են վերստանում,
Եթե նաև ե՛ս մոռացած չլինեի
Շատ հեռավոր նախնիներիս առողջ լեզուն,
Որ ամեն բան կոչում էր միշտ իր անունով,
Ուներ խոսքեր ոչ թե մաշված ու լպրծուն՝
Ինչպես ողորկ գետաքարը,
Այլ սրակող և արյունող՝
Ինչպես ցասկոտ որձաքարի թարմ բեկորը...
Ա՜խ, թե լինե՛ր,
Այսպե՛ս լիներ,—
Ես համարձակ կմեկնեի հիմա աջրս,
Կխլեի փղոսկրե այդ գրիչը,
Թաթախելով

Նեղլիկ ձորի շրջաղարձող սահանքի մեջ՝
Ճերմակ-փրփուր այդ թանաքով կգրեի,
Թավ անտառի միատարած մուգ կանաչի լայնքի վրա,
Կգրեի հին գրքացի՛— կախարդի՛ պես,
Կգրեի
Հնամենի մի հմայի՛լ,
Հուռո՛ւթք մի հին,
Որ... չի՛ կարող չկատարվել:
Ու... երկո՛ւ բառ կգրեի ընդամենը.
«Տենչա՛մ կքեզ»:

Կգրեի՛,
Տեղն ու տեղն էլ կվառեի՛,
Որ երկինքը
Զոհի ծխի խաբկանքն ստգար,
Ու ծխայիր այդ տենչանքով նաև ի՛նքըդ...

Այնժամ նորից գրչակոթը
Կվերածվեր հին ջրվեժի,
Թանաքամանն անմիջապես ձոր կդառնար.
Դաշտ կդառնար նամականիշն իսկույնևեթ,
Ու չէր լինի լեռը դրոշմ:
Բայց բառե՛րը
Կմնային նո՛ւյնքան սուրսայր ու սրակող,
Հնչյունի տակ իմաստները չէի՛ն մեռնի,
Ուստի ինքս էլ կդառնայի մի բանաստեղծ
Կամ... հի՛ն աստծու նո՛ր քարտուղար...

23. III. 64
Դիլիջան

ՇԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶՂՋՈՒՄ

Ճաշակած մայրական գգվանքի հետ կարոտիդ լեղին,
Մարմնական հանգստի հետ՝ հոգու խռովք,
Թույլ տուր այսօր, քույր իմ, դարձնել քեզ արնոտ
կառափնատեղի,
Եվ ինձ մորթել այնտեղ մեղանչման ու զղջման անագորույն
սրով...

Քանզի դու էիր միայն՝ հասկացար ապրումներս խելագար,
Անկումներս՝ թռիչքից առաջ, դժգոհ հայացքս՝ թռիչքից հետո.
Տեսար միտքս— գայլի պես անկուշտ, գայլի պես ագահ,
Լսեցիր տիրական ճախրանքը ոգուս, որ կարկվում է լոկ
հանճարի նետով:

Քանզի դու էիր՝ անսարսուռ իջար հոգուս վիհերն ի վար,
Հոգուս անհունները— մռայլ, ահալի, անհատակ,
Ուր լպրծուն են ծերպերը, քարանձավներն— ամայի,
քարափները— խավար,
Ուր պատահմամբ ընկածին կյանքս թվում էր անմիտ և
երգս՝ անախորժ կատակ:

...Սակայն դու անհատակ վիհերից այդ ելնելով անելարան,
Երջանիկ և գոհ ժպիտով մի, որ հատուկ է գանձեր պեղող
մարդուն,

Հասկացար, որ հրաշք էր կյանքս— անհունորեն հարուստ և
գերառատ...
Տեսար այնտեղ արարիչներ—երկնող, արքաներ—անթագակիր
և դևեր— մշտարթուն:

Ըմբոշխնեցիր ցավով՝ անդառնալի հաճույքի հետ միասին,
Քաղցր ու դառն շիճուկներն իմ սրբագործված արյունիս մեջ,
Սերս հավերժորեն խոստումնալից և վայրկենապես
խաբուսիկ,
Հոգիս, որպես հավերժ մատյան և մարմինս՝ երան գրքակալ...

Չխնդացիր, երբ հիվանդ էի հոգով՝ առանց պատճառի և
անցավ,
Չլքեցիր, երբ լքեցի քեզ՝ անգետ քո հոգուն, քո լույսին կույր,
Եվ խոստումի ու սիրտ, և դրժման ու լքման մեջ ինձ
հասկացար,
Կեղտով ապական հոգիս դիտելով՝ անբիծ ու մաքուր...

Եվ հիմա ես, անցած անվերադարձ ճանապարհի կեսից
Ետ նայելով, քույր իմ, ի՞նչ խոսքերով արդյոք արդարացում
հայցեմ,

Ինչպե՞ս հասցնեմ քեզ զղջման երգն այս իմ,
Երբ սերը— սուրհանդակ՝ անհանգիստ անցել
Եվ իր հետ տարել է սրտիդ մերձենալու անկրկնելի հասցեն...

1942

ՄԵՉԱՆԻՑ ՄԵԿԸ

Մեկանից մեկը, անշուշտ, այստեղ չէ,
Մեկանից մեկը՝
Կամ ես, կամ թե դու,
Թե դու չես այստեղ,
Ապա ինչպես է,
Որ ինձ հետ ես միշտ՝
Իմ սենյակի մեջ,
Իմ մատների տակ,
Իմ լեզվի վրա:
Թե ես չեմ այստեղ,
Ապա ինչպես է,
Որ ես հետդ չեմ՝
Քո սենյակի մեջ,
Քո մատների տակ,
Քո լեզվի վրա:
Ճիշտն այն է գուցե,
Որ մենք երկուսս էլ այստեղ չենք լինում.
Ինքս այնտեղ եմ, որտեղ որ դու ես,
Իսկ դու այնտեղ ես, որտեղ որ ես եմ :
Այսպես գալիս ենք մենք դեպի իրար,
Դու՝ ինձ մոտ,
Ես՝ քեզ
Եվ... չենք հանդիպում... այս քանի տարի:

18. III. 62
Երևան

ՔԱՐԵ ՀՅՈՒՐԸ

Աչքերդս՝
Ծրարված հիացում,
Եվ դու ես հասցեատերը:

Մատներդս՝
Հինգ հրթիռ-սլացում,
Եվ քոնն է ողջ ուղեծիրը:

Խոսքերդս՝
Մեռած մի լեզվի
Վիմագիր: Դո՛ւ պիտի վերծանես:

Ու ես էլ՝
Քարե հյուր ձեր բակում,
Ձեր տանը, քո սրտում մինչևիսկ:
Եվ գիտեմ.
Կա՛մ ես՝ քեզ, կա՛մ դու ինձ
Վաղ թե ուշ պիտի կործանենք...

22. X. 62
Երևան

ՀԱՎԵՐԺ ՆԵՐԿԱՆ-ԲԱՑԱԿԱՆ

Աչքեր ունի նեղ— երկարուկ,
Ասես լինեն կորիկ հոնի,
Ունի հայացք մի հեռախույս,
Նման մթին հորիզոնի:

Տիրուհի՞ է— տիրուհի չէ:
Սիրուհի՞ է— սիրուհի չէ:
Քո՞ւյր է— քույր չէ:
Կո՞ւյր է— կույր չէ:
(Երբ որ պետք է՝ կնկատի,
Երբ որ պետք չէ՝ չի նկատի)...

Անպարտադիր և անհրաժեշտ,
Հավերժ ներկա և բացակա՝
Թե «սեր» ասես՝ խնդրում է շեշտ,
Թե ասես «կին»՝ վեհ ածական:

Եվ էակ չէ վերացական,
Այլ կենդանի՞, միս-ոսկորո՞վ;

Իսկ անո՞ւնը: Ասեք Խոնարհ,
Ասեք Շնորհ, ասեք Գորով:

Եվ մի հարցրեք, ումն է նա.
Այս մեկը թող գաղտնիք մնա...

14. XI. 63
Երևան

ԿԵՍԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՆԱՆԿԱՐ

Քամին փոշուց ծուխ էր սարքում,
Ծուխ անկրակ,
Ու տարածում պուրա՜կ-պուրա՜կ,
Իսկ դրանից ձանձրանալով՝
Վճռում խաղալ պահմտոցի,
Եվ պահվում էր,
Այնպե՜ս պահվում,
Որ գյուղացիք ասում էին «շոգից մեռանք»:

Օրը քակել իր ծալքերը
Ու փռել էր աշխարհով մեկ.
Մի ծալքից՝ շոգ,
Երկրորդից՝ տապ,
Երրորդից՝ տոթ:
Տաքապում էր նույնիսկ օդը՝ դողերոցքից:
Տաքության մեջ կառանցում էր ամեն մի բույս:

Լռություն էր մի այնպիսի՜,
Ասես ծերուկ բնությունն էր ուշաթափվել:
Եվ այդ ահեղ լռությունից մանկան նման վախենալով,
Միակ ջուրը՝ աղբյուրը խեղճ,
Կարծես ոչ թե կարկաչում էր առու դարձած,
Այլ հեկեկում-ջղաձգվում...

Զրով լի դույլն ստիպում էր, որ աղջկա
Բոլո՜ր թովիչ պահուստները բացահայտվեն՝
Նույնիսկ իրեն վարագուրող հագուստի տակ:

Իսկ ես նաև նայում էի դույլի ջրին,
Որ աղջկա քայլվածքի հետ
Իր ողջ կապույտ մակերեսով
Աջ էր գնում-ձախ էր գալիս.
Ասես լիներ մեկ միաձույլ սկավառակ.
Ջուրն՝ աղջկա քայլվածքի հետ,
Ջրի հետ էլ՝ երկինքը ամբ:
Եվ ջուրը չէր ելնում-իջնում,
Կարծես երկինքն էր դույլի մեջ
Գլխապտույտ կգում անվերջ...
Եվ այս ամենն՝ ա՛յն պատճառով,
Որ քունն ինձնից անմեղ տեղը
Խռովել է ու... լքե՛լ ինձ:

6, 12. II. 64
Երևան

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանդիպումը բաժանումի սկիզբն է հենց...

Հանդիպեցինք այդ ե՞րբ արդյոք,
Որ գնում ես, գնում արդեն:

Իմ գտնվա՛ծ-միա՛կ մակդիր,
Ամենաճիշտ բաղդատություն.
Դեռ նո՛ր գտած՝ թռչո՞ւմ ես դու մտքիցս արդեն:

Համ չեն կգում միայն բերնով:
Համ կգում են հոգո՛վ նաև:
Եվ գնո՞ւմ ես, գնո՞ւմ արդեն,
Որ հռչակի անհամությունն իրեն արքա
Ու դարձնելով հոգիս ոստան՝ ու տնքացո՛ղ աթոռանիստ,
Իշխի նաև իմ կեղեքվող ծայրամասո՞ւմ...

Եվ համբուրված իմ շուրթերին դողդողում են սիրո խոսքեր,
Ինչպես ցողի կաթիլները ա՛յն թփերին,
Որոնց վրա անհոգ քամին դասն է սերտում իր զժգոհության:
Ու ես անվերջ փորձ եմ անում
Իմ թափանցիկ լռության տակ պահվել մի կերպ:

Քո փեշերը փաթաթվում են գիրգ ծնկներիդ.
Խանգարել են ուզում կարծես, որ չգնաս:
Ծխախոտն է մեջքս հպում:
Ստվերները հոտոտում են հոդը կրկին.
Կամենում են կարծես կգալ
Անցած տեղիդ բուրմունքն անանց:
Քաղաքային փողոցների լույսերն աղոտ

Փոշոտ քամուց իրենց աչքերն են շուտ թարթում,
Ինչպես մարդը, երբ ուզում է լաց չլինել...

Պիտի գնա՞ս...

Պիտի գնա՞ս,
Որ քանի դեռ չենք հանդիպել՝
Փողոցն այնպե՞ս ինձ կարոտի,
Ինչպես ես քե՞զ:

Պիտի գնա՞ս,
Որ ածխացած սպասումը
Բոլորագիծ քաշի իմ շուրջ՝
Ինձ դարձնելով սուր շառավիղ,
Սիրտըս՝ կենտրոն,
Որ ամեն ոստ իր ստվերով
Ցույց տա ժամը՝ պատի պես,
Ու շրջունով կրընգացնի նույն ժամն էլի.
Որ ես զգամ, ուշացումով,
Թե ինչպես է սահում-անցնում
Կյանքն իմ կողքով,
Ես էլ՝ կյանքի,
Չդիպչելով երբեք իրար:

Պիտի գնա՞ս,
Որ ես անվերջ իմ մտքի մեջ
(Թութակի պես կամ անվտանգ խելագարի)
Նո՞ւյնը կրկնեմ.
«Շատը... գը-նաց, քի-չը մը-նաց»...

Եվ քանի որ պիտի՞ գնաս՝
Դե, շո՞ւտ գնա, որ շուտ էլ գա՞ս, շատ չմնա՞ս:
Տե՞ս,
Օրորվող այս լապտերից
Ես մի շող եմ քաշում-պոկում.
Ա՜ռ,

Փաթաթիր ցուցամատիդ՝
Իբրև գունեղ մի հուշաթել,
Որ... վայրկյա՞ն իսկ չմոռանաս
Ու... շո՞ւտ դառնաս:
Իսկ քո երգուն քայլքի թելն էլ թող փաթաթվի
Մայթի՞ն այս գորշ, այս տա՞նը գորշ և իմ հոգո՞ւն,
Որ... բոլորս էլ (մա՞յթ, տո՞ւն, հոգի՞)
Մեկ վայրկյան իսկ չմոռանանք
Եվ սպասենք քեզ անհամբեր.
Իսկ ոլորուն-կպչուն ձայնը մեր համբույրի
Թող համերգվի այս վիրավոր լռության մեջ
Ու որբացած մեր սեփական ականջներում,
Իսկ հեռվահաս ժպիտները մեր փոխանցիկ
Թող դրոշմեն իրենց վրա ապակիներն այս լուսադող՝
Սպասումի կնիքի պես...

— Ցտեսությո՞ւն:
Ի տեսությո՞ւն...

20. II. 64
Երևան

ԲԱՐՈՎ ՏԵՍԱՆՔ

Նելլիին, ծննդյան օրվա առթիվ

Ինձնից հեռու էր նա՞:
Ինձնից հեռու էր նա՞:
Ում ես հապա՞ր անգամ անվանել եմ կյանքում. «Իմ մոտիկը»:

Նա՞,
Ով բոլորովին անծանոթ էր նաև,
Կարծես կարոտ էր սոսկ,
Լուկ ցնորք էր:

Եվ ամե՞ն ինչ կարծես հետքս բողոքում էր...
Կարծես լեռներն անգամ շուռ-մուռ էին գալիս՝ իրենց սովերներով,
Ինչպես ամեն գիշեր կողքից կողք է շրջվում մեկնից ամեն մեկը,
Երբ քունն անհանգիստ է ու եռալն է խառնակ:
(Թվում է, թե հիմա է՛լ չպիտի լինի ո՞չ մի ստվեր).
Պիտի լինի լոկ շո՛ղ,
Եվ շառավի՛ղ լինի,
Շառա՛ղ լինի,
Լինի երակներով խորանարդված խոր քուն,
Որովհետև...
Հիմա ես ասում եմ սիրով.

— Բարո՛վ տեսանք իրար,
Հապա՞ր բարով:

Բողոքում էր նաև,
Բողոքում էր նույնպես,
Բողոքում էր նույնիսկ... հորիզոնը՝
Իր մենության՞ համար,

Մենակության՞ համար,
Միայնության՞ն,
Այնտեղ ժամադրվում ու հանդիպում էին երկիրն ու երկինքը,
Միա՛յն ու լոկ նրանք, ուրիշ ո՛չ մի հոգի:
(Է՛լ մենակ չեն նրանք.
Հանդիպել ենք և մե՛նք՝
Մեր հանդիպմամբ կծկած մեկ բաժանող անծիր հորիզոնը):

— Բարով տեսանք իրար,
Հապա՞ր բարով:

Մթնած երկնքի մեջ, իրիկնացող օդում,
Ինչ-որ անտես ձեռքով ինչ-որ անտես բան են կոդում:
Ջրգողությամբ հիվանդ սև ամպերը
Ապաքինվում կրկին ու լալիս են ուրախ,
Եվ անձրևը հիմա թթխմորվում,
Ուռչում-ուռճանում է պղպջոցով:
(Թող խմորվի նաև երջանկությունը մեր
Ու դառնա հաց օրվա, ձրի նպա՞ստ՝
Իրար փնտրողների,
Բայց չգտնողների,
Միջահատված-կտված խեղճ սիրապույգերի
Ու սիրապուրկերի ափի վրա):

— Բարո՛վ տեսանք իրար,
Հապա՞ր բարով:

Երեքշաբթին, վախո՛վ, վիպն է քորում՝
Կամենալով խոսել օրենք-իրավունքից,
Բայց կիրակին, հեռվի՛ց, բիբում նրան,
Բայց կիրակին նրան սաստում է խեթ.
(Թող մեկ շաբաթվա մեջ վո՛ւյզ կիրակի լինի)...

— Բարո՛վ տեսանք իրար,
Հապա՞ր բարով:

21. II. 64
Երևան

ՄՆԱՍ ԲԱՐԵՎ

Իր վերջն ունի ամեն հեքիաթ,—
Ես դա գիտեմ այնքան վաղուց,
Որքան անունն ամիսների:
Եվ հասել է հրաժեշտի պահն անողոք...
Դաշտերն են լեռներն ահա՝
Դեմքը ցցած դեպի երկինք,
Ու դաշտերն են ահա պառկել՝
Բերանքսիվայր, մեջքը տնկած,
Որ... ոչնչով չմասնակցեն
Հրաժեշտին մեր այս տրտում:

Ծուռ ժպիտով պարտակում եմ տխրությունը
Ու նայում եմ մի հայացքով,
Որ հատուկ է մոդեսներին.
Ո՛չ դեպի դուրս,
Դեպի նե՛րս եմ կարծես նայում:
Եվ քշում եմ ինձնից մտքեր,
Ինչպես ամռան տոթ-խեղդոցին
Գլխով ճանճ է քշում խեղճ ձին...

Ա՜խ ճանճերն այս, որ չեն պոկվում ինձնից հիմա,
Ինչպես ահա քեզ մեկընդմիշտ առնանգող
Այս գնացքը՝ կույգ գծերից այս երկաթե,
Ինչպես ահա տտիպությունն՝ այն խնձորից,
Որ խածում ես,
Որովհետև... լացն է գալիս գուցե և ցա...

Գիտե՛մ.
Սիրուց խոսելն արդեն

Հավասար է հիմարության,
Սակայն ինչպե՞ս վերջին անգամ կրկին չասեմ,
Որ ինձ հիմա,
Նո՛ւյնիսկ հիմա
Թվում է, թե ամբողջ կյանքում
Ժամանակը ես վատնեցի
Ամե՛ն տեսակ (լուրջ թե դատարկ) բանի վրա
Եվ... ժամանակ է՛լ չմնաց
Մի լա՛վ-կարգի՛ն-կո՛ւշտ սիրելու.
Ինչ որ եղավ՝ նախափորձ էր կարծես միայն,
Ընդամենը... սևագրություն,
Որ դեռ պիտի
Սրբագրվեր-մաքրագրվեր ներշնչանքով,
Մինչդեռ ահա պահն է հասել,
Որ քեզ ասեմ.
— Մնաս բարև՜...

Էլեկտրական լույսերն ասես լինեն փողեր
Մի վիթխարի նորահնար երգեհոնի,
Եվ քամին է նրանց հիմա աշխատեցնում՝
Նվագելով մի այնպիսի՛ ողջերթ ցավոտ,
Որից նույնիսկ սարսռում է
Մետաղալարն էլեկտրական,
Ու դողոցով օդն է մղվում
Դեպի առաջ. ո՞ւր՝ չգիտի՞:
Իսկ դու բնավ չե՞ս էլ լսում.
Է՛լ այստեղ չես դու մտովին,
Այլևս դու հեռո՛ւ ես շատ
Եվ դրանից այնպես ես դու գեղեցկացել,
Ինչպես մանուկն իր քնի մեջ:

Ես կհիշեմ քեզ հենց այսպես՝ գեղեցկացա՛ծ·
Իսկ իմ դե՛մքը...
Երբ դավաճան ինչ-որ երազ
Երբևիցե ինձ վերստին հիշել տա քեզ,
Աղաչո՛ւմ եմ.

Դու մի՛ հիշիր իմ դեմքն այնպես,
Ինչպիսին է այս վայրկյանիս:
Անշարժացած մկանները վկայում են անհայելի,
Որ դա կարծես դե՞մք չէ հիմա,
Այլ մի... դիմա՞կ:
Եվ իսո՞ւր են ծիծաղեցնել փորձում սրա՛նք՝
Այս պուները.
Ես լա՛վ գիտեմ,
Որ այս պահին իմ ժպիտը
Պիտի դառնա մի դասական ծամածռանք...

Բայց... քանի դեռ բոլորովին դու չես մեկնել,
Ես չե՛մ շրջվի:
Է՛հ, կան բաներ,
Որ շրջվելու իրավունք էլ չունեն կյանքում:
Ի՛նքդ խորհիր, թե իսկապես ի՞նչ կլիներ,
Եթե շրջվել կամենային... կամուրջները կորաքանակ,
Որ իմանան, թե... երկինքը ի՞նչ գույն ունի...
Ես չե՛մ շրջվի՝ քանի դեռ դու չես հեռացել
Սահմաններից... մեկ կամրջող հիշողության:
Այնժամ միայն ես քեզ կասեմ.
— Մնաս բարև՛...

24. II. 64
Երևան

ԱՆԱՀԻՏ

Դու օտա՞ր չես, չէ՞:
Բայց ի՞մն էլ չես, հա՞...

Դու՝ վաղընջական հինավուրց բագին՝
Փակ շրթունքներով ու բաց աչքերով:
Ես՝ մի հեթանոս՝ առայսօր ծպտյալ:

Դու՝ հավերժաբուխ աղբյուր տանջակունք,
Քո ամեն մատից՝ մի ակըն ցայտիչ:
Իմ թաց աչքերի երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ըմպում եմ ես քեզ:

Անշարժությունը քո պիրկ ոտների
Դարձընում է ինձ մի խոյ օրուկված,
Որ պտտվում է չորսբոլորքը քո
Ողջ շառավիղով իր ոտնակապի:

Նա արածում է այն, ինչ աճում է
Իր ոտների տակ և քո շուրջբոլոր,
Բայց որոճում է... միայն քե՛զ ու քե՛զ
Ու բառաչում է... միայն քե՛զ համար:

Քո ստինքները՝ պարսատիկի պես,
Սպառնում են միշտ ջարդել գանգն իմ պիղծ,
Երբ ասում եմ քեզ, որ դրանք հետո
Կաղապարդ դարձան... սկիհի՞ համար:

Թվում է, թե քո շրթունքները փակ
Ուր որ է պիտի բարկությամբ բացվեն,
Երբ ասում եմ քեզ, որ հետագայում
Քեզ գրկել տվին մի... թո՛ւխ մանուկի:

Բայց ամեն անգամ խաղաղվում ես դու.
Երբ թաց աչքերիս երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ես ըմպում եմ քեզ:

Եվ հասկանում եմ, որ ամեն անգամ,
Երբ սկսվում է նո՛ր դարագլուխ,
Ջանում են մի կերպ խուսափել քեզնից,
Իսկ դարագլխի ավարտի վրա՝
Ինքնակամորեն քե՛զ վերադառնում:

Անտեսանելի վերջի՛ղ ժամանակ,
Անտեսանելի սկզբի՛ս պահին
Հանդիպում ենք մենք ու... տրվում իրար:
Եվ չե՛ն տեսնում մեզ... չի տեսնում նույնիսկ
Ո՛չ պատվանդանը,
Ո՛չ կոշկատակը...

Դու գիցուհի՞ ես:
Բայց և ի՛մն ես դու...

9. VII. 61
Մոսկվա
24. II. 64
Երևան

ԿՈՐՉԻ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ

Քեզանից հեռու
Ես ապրում էի
Կարծես թե ինքս էլ ինձանից հեռու:
Ինձանից հեռու
Դու ապրում էիր...
Դու չէի՞ր ապրում բուսական կյանքով:
Իսկ հիմա,
Երբ մենք մեկտեղ ենք արդեն,
Կարծես թե նորից շերտ-շերտ միացանք,
Որ ամբողջանանք՝ նարնջի նման՝ մի կեղևի մեջ
Եվ հյութավորվենք՝
Հողի ավշային չորս բաժնին խառնած
Չորս բաժին ավյուն արեգակնային,
Ու երջանկորեն՝
Նո՛ր կերպ ու նորե՛ն՝
Բարբառենք անխոս.
«Այս է մեր մարմինն, առե՛ք ու կերե՛ք»...

Ինձանից հեռու
Դու նման չէի՞ր...
Ես նման էի կարծես ա՛յն Յարդուն,
Որ սքանչելի ձեռագիր ունի,
Բայց... գրագետ չէ կատարելապես:
Իսկ հիմա,
Երբ մենք մեկտեղ ենք կրկին,
Նո՛ւյն կյանքը հիմա
Իր սքանչելի նո՛ւյն ձեռագրով
Գրագիտության դասեր է տալիս
Թե՛ շնորհալի վպերին այգու,
Թե՛ տաղանդավոր գետերին բոլոր,
Թե՛ հայտնի ոխից գապակողներին,

Թե՛ թաքուն սիրուց կակաղողներին
Եվ թե՛ աշխարհիս պետերին բոլոր,
Որ վերջիններիս մատերից բոլոր,
Մա՛նավանդ... ահեղ ցուցամատերից
Մա՛հը չկաթի,
Այլ կյա՛նքը ծորա
Թշվառ ու փոքրիկ այս երկրի վրա՝
Հեռվից ետ դարձող
Տիեզերախու,ս հրթիռների պես...

Տեսնո՞ւմ ես,
Մի տե՛ս.
Ծաղկած ծիրանին դիմացի բակում
Նշխար է բաշխում քահանայաբար
Ամբողջ շրջանով իր մեծ շուրջառի,
Իսկ մեղուները
(Այդ նշխարները ծծելուց արբա՞ծ,
Թե՞ գուցե դրդդված ուրիշ պատճառից)
Ցույցեր են անում փեթակի առջև.
Ինչպես որ մարդիկ՝
Շենքերի առջև պառլամենտների...

Ով ի՞նչ ուզում է՝ թո՛ղ այդ էլ անի:
Իսկ ես ուզում եմ... իսկ դու չե՞ս ուզում.
Որ գեթ ա՛յս անգամ,
Գոնե ա՛յս անգամ
Հեռավորությունն ինձ ու քեզ երբեք
Չկիսի՛ այնպես.
Ինչպես.. հինգշաբթին շաբաթն է կիսում:

Կորչի՛ հինգշաբթին...

18. III. 64
Դիլիջան

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇ

— Երջանիկները ի՞նչ չեն ունենում:
— Ժամ ու ժամանակ:

Չէ՛, սիրելի՛դ իմ,
Շատ է հնացել քո պատասխանը:

Երջանիկները մո՛ւժ չեն ունենում՝
Իրար հոգու մեջ բարդելո՛ւ համար:

Երջանիկները կո՛ւժ չեն ունենում՝
Անկգուշորեն ջարդելո՛ւ համար:

Ոչ մի կավճոտված հո՛ւշ չեն ունենում՝
Սրտի սպունգով ջնջելու համար:

Նրանք, կարճ ասած, ո՛ւժ չեն ունենում՝
Իրենց ու իրար... տանջելո՛ւ համար...

22. III.'64
Դիլիջան

ԵՐԿԿԵՆՑԱՂ ԿԵՆՑԱՂ

Մարիա՛մ, Մարիա՛մ,
Դու պարտ էիր ու պարտավոր
Աշխարհ բերել մի... թո՛ւխ տղա,
Բայց ծնեցիր մի... շե՛կ աղջիկ:
Եվ լինո՞ւմ է արդյոք այսպես:
Հավանաբար լինում է, որ եղավ:

Եղա՞վ.
Դու՝ տակավին ինքըդ աղջիկ,
Ծառվարդարի շվի նման դեռ դալարուկ,
Եվ... աղջըկա մա՞յր ես հիմա,
Այն էլ մի... շե՞կ աղջըկա մայր:
Եվ ո՞ւմ պիտի նա կոչի «հայր».
Ոչ թե Հորը գերեզեռավոր,
Այլ ինչ-որ մի... մի Հովսեփի՞...

Ու կան բառեր,
Որ ես հիմա մեջս եմ պահում
Այնպե՛ս,
Կարծես բանտարկյալներ լինեն նրանք:
Իսկ շուրթերի՛ս,
Փա՛կ շուրթերիս ձորի միջով
Մի ժպիտ է անվերջ սահում,
Մի ժպիտ, որ երկկենցաղ է՝

Ինչպես... աղը.
Դա՛ռն ու քաղցը՛ր,
Կո՛շտ ու լուծվո՛ղ...

Բայց կան բառեր,
Որ կտրում են փշալարեր
Ու փախչելով ապատվում են
Մինչև անգամ արդիական ճամբարներից:
Ու դրանցից մի քանիսը
Սիավասիկ
Ինձնից փախչում-հասնում են քեզ
Որ քեզ ասեն.
— Կյանքի՛ ձեռքով ինձնից խլված
Այլապատկա՛ն բնագավառ դու իմ սիրո,
Այլագրրա՛վ բնակավայր իմ սիրելի,
Այլապատկա՛ն,
Այլագրրա՛վ,
Բայց ի՞մն էլի,—
Բարձրդ բարի՛, իմ սիրասո՛ւն ու սիրելի՛:
Զարչարանքիդ ապաշխարա՛նք:

Եվ փա՛ռք աստծու.
Որ ծնեցիր
Թուխ մանկան տեղ աղջիկ մի շեկ:
Ուրեմն արդեն մի Մարիամ էլ եկավ աշխարհ,

Որ, երբ, հետո՛,
Իր մո՛ր նման
Ում հանդիպի և իր սիրով ընդմիշտ թովի՝
Նրա հացը սրբացնելով դարձնի նշխար,

Բայց դրանով
Նաև մատնի հավերժական քաղց ու ոսկի,—
Նախանձելի՜-անտանելի՜ վիճակ անանց.

Ապրել մի կերպ սուրբ նշխարով— մեռնել անհա՜ց...

1. III. 67
Արգնի

Մարդը ափի մեջ



ԻԲՐԵՎ ՍԿԻԶԲ

Իբրև սկիզբ ընդամենը ես այս կասեմ.

Աշխարհում կա ջահելությո՛ւն,
Կա կյա՛նք,
Կա սե՛ր,
Կան տղաներ և աղջիկնե՛ր,
Կա շե՛կ, կա սև՛:

Եվ մի աղջիկ՝
Սև աչքերով, սև մազերով,
Ինձ գերել է, խելքից հանել իր նազերով:

Գալիս է նա և շատ հաճախ
Ձեռքը բռնում, ափը բացում,
Սև աչքերը մերթ՝ կկոցում,
Մերթ՝ լայն բացում,
Մերթ փակում է,—
Սկըսվում է... գուշակո՛ւմը:

— «Ապո՛ւ-ապո՛ւ, կապո՛ւ-կապո՛ւ...
Եկ մի տեսնենք՝ ի՞նչ կա ափում...»:

— «Աթո՛ւ-աթո՛ւ, հա՛ թուի-հա՛ թուի.
Տեսնենք՝ տղան ի՞նչ է ասում...»:

— Անա՛մ-փերո՛ւ, չանա՛մ-փերո՛ւ...»:

Եվ մի օր էլ չեմ համբերում.
— Գիտե՛մ, գիտե՛մ,
Գուշակ է՞լ ես, կախարդ է՛լ ես.

Չէ՞ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես:
Բայց իմ ափը ի՞նչ է տալիս:
Ինքըդ գիտես, որ մի ափը
Մինչև անգամ ծա՛փ չի տալիս:
Ախար ի՞նչ կա այդ ափի մեջ:
Կուզե՞ս
դառնամ
մարդ՝ ափի մեջ...

Մարդկանց առաջ և քո առաջ
Ահավասիկ ինքս եմ բացում
Ինչ որ ունեմ- ինչ որ չունեմ
Իմ հոգո՛ւ մեջ,
Մարդկանց առաջ և քո առաջ
Ահավասիկ ինքս եմ բացվում,
Ինչպես մանուկն օրորոցում՝
Երբ շոգում է...

30. V. 57
Մոսկվա

ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ

Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:
Լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...

5. V. 57
Մոսկվա

ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԵՄ

Ուզում եմ այսօր մի պահ մոռանալ
Հոգսը, խորհուրդը, գործը աշխարհի.

Ուզում եմ այսօր մի պահ հեռանալ
Խոր սահանքներից այս ահեղ դարի:

Ուզում եմ այսօր լինել եսասեր.
Քեզ քնքուշ, շոյիչ, պարզ խոսքեր ասել,

Խոսել գարունի՛ց, պատանությունի՛ց,
Քո աղջկական սատանությունի՛ց՝

Քո սուտ վանումից ու խուսափումից
Եվ, մի պահ հետո, քո ճիշտ հպումից:

Եվ կահավորել այն տունը գուցե,
Որ Քաղսովետից չենք էլ ստացել:

Եվ չհավանել ամն վարագույրդ,
Որ չի նվիրել դեռ մորաքույրդ:

Տեսնել այն շորը, որ դեռ չես կարել,
Հուզվել այն երգից, որ դեռ չեն գրել:

Խոսել գեղեցիկ ու թանկ բաներից՝
Ծաղկի՛ց, պարտեզի՛ց, երեխաների՛ց,

Նրանց սպասող լավ մանկությունից,
Ապահով կյանքից, երջանկությունից:

Եվ լինել անհոգ, և անդարդ լինել,
Պարկապես սիրո՛ղ— ապրո՛ղ մարդ լինել,

Քեզնով գոհանալ, քեզնով հիանալ,
Քեզնով լիանալ
Ու քեզ միանալ...

26 IV. 57
Մոսկվա

ՈՒԶՈՒՄ ԵՄ

Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով,
բայց ոչ թե մոր, այլ մանուկի:
Ես ուզում եմ, որ կարապը ոչ թե մեռնի,
որ կարապը ապրի՝ երգով:
Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի,
ոչ թե՝ իպուր՝ ծովի վրա:
Ես ուզում եմ, որ քարափը քարայծ պահի,
ոչ թե օձեր և մողեսներ:

Ու թե մահը անխուսափ է՝
Թող նա տանի ո՛չ հերոսին, այլ մարդուկին:
Թե կռիվը անխուսափ է՝
Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:
Թե արդուկելն անխուսափ է՝
Ահա շո՛րը— սի՛րտ մի հանձնեք տաք արդուկին:

Թաղե՞լ է պետք —
պառավ մորը որդին թաղի,
ոչ թե մայրը ջահել որդուն:

Եթե երգել՝
Այնպե՛ս երգել, որ մտքի մեջ չմտածեն. «Հոգի հանեց»:
Եթե գրկել՝
Այնպե՛ս գրկել, որ նվաղեք խրար գրկում:
Եթե հարգել՝
Այնպե՛ս հարգել, որ քծնանքի չվերածվի:
Եթե փրկել՝
Այնպե՛ս փրկել, որ փրկվածը երախտիքի խոսքեր չասի:
Ու թե պառկել՝

Այնպե՞ս պառկել, որ խափանվի տանվի՛ ճամփան,
ոչ թե հրշեջ մեքենայի:

Մի անգամ էլ թողեք ուզեմ.
Ես ուզում եմ՝
ինչպես մարդու նախահայրը իր օթևան քարանձավից՝
չար նախանձի կերպարանքով հին գայլանն էլ
առանց ցավի մարդու սիրտը թողած՝ գնա՞...

Ես ուզում եմ.
Եթե գերվել՝
ոչ թշնամուց,
այլ խելքահան աղջիկներից:
Եթե մերվել՝
ապա երբեք չթթվելով:
Եթե լարվել՝
ապա միայն ստեղծելիս:
Եթե ճարվել՝
ապա փրկել մահամերձին:
Եթե ներվել՝
էլ չվիճե՛լ, էլ չկռվե՛լ:
Եթե սիրվել՝
միայն մեկի՛ց և մե՛կ անգամ...

Ես ուզում եմ, ձեր կարծիքով անհնա՞ր:
Թո՛ղ, այդ դեպքում, կանայք ծնեն առանց ցավի՛,
Երկրները պատերազմեն, սակայն առանց արյան ծովի՛,
Հրեաները առանց հրի՛ թող ճարակեն,
Մարդիկ իրար առողջությա՛մբ թող վարակեն:
Թե բարակել է հարկավոր՝
թող բարակի մե՛ջքը կանանց,
Թե տառակեր է հարկավոր՝
թող նա մնա մեկ անճանա՛չ:
Պատարագե՞լ է հարկավոր՝
համերգային մեծ բեմերի՛ց պատարագվի,
ո՛չ թե երգով դագաղ փակվի:

Կոտորակվե՞լ է հարկավոր՝
դպրոցական տետրակներո՛ւմ կոտորակվի,
ո՛չ թե մարդկանց սիրտը ծակվի:
Ի՞նչ, տրաքվե՞լ է հարկավոր.
թող տրաքվի մանկան փուչիկ-խաղալիքը,
այն էլ եթե անորակ է,
ոչ թե արդար և մեղավոր
մեր մարդկային մոլորակը...

Ես ուզում եմ...
Այն եմ ուզում՝ ինչ ամենքդդ...

25, 26. V. 57
Մոսկվա

ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԵՄ

Դառնամ փառաբանեմ ձկնորսներին ծովում՝
փոթորկի թունդ պահին,
Սերմնացանին՝ արտում, երբ է՛լ չի սպասում
նա տաք օրեր:
Դառնամ փառաբանեմ ձորից կաքավ թռցնող
վրընգոցը բահի,
Գերանդու խուլ երգը, որ դժվար է անգամ
նոտագրել...

Պտղավորումն այգու, արտի փոշոտումը
փառաբանեմ կրքո՛վ,
Ակնիվ թթխմորով հունցված ցորեն հացը
մեր սեղանի վրա,
Մեր անխարդախ գինին, որ մեր սիրտն է լցնում
մի անբարբառ երգով
Եվ կյանքը դարձնում է... հնարավոր հրաշք.

Դառնամ փառաբանեմ մանուկների խաղը՝
այնքա՞ն ինքնամոռաց
Եվ մտասո՛ւյզ այնքան, ասես որտեղ որ է
հսկա մի գյուտ կանեն:
Դառնամ փառաբանեմ նրանց թաթիկները
ցեխաջրից սառած,
Իրենց սրտակտուր ու փութանցիկ լացը
ցավո՛վ փառաբանեմ:

Դառնամ փառաբանեմ ջահել աղջիկների
ծիծաղն աննպատակ,
Նրանց կանչող ե՛րգը, նրանց անցնող վե՛րքը
սիրո՛վ փառաբանեմ:

Վախո՞վ փառաբանեմ այն պատանու ձեռքը
և՛ դողացող, և՛ տաք,
Որն առաջին անգամ սիրտ է անում... դեպի
սիրած կուրծքը տանել...

Սե՛րը փառաբանեմ և՛ պառավ մո՛ր հանդեպ,
և՛ կառամյալ տատի՛,
Որոնց սուրբ փեշերից անցած քո ողջ կյանքի
ծով բուրմունքն ես առնում.
Սերը՝ որդու հանդեպ, առանց որի ի՞նչ ես—
մարդ ես մի աղքատիկ,
Մինչ գներն էլ շուրջդ բարձրանում են անվերջ—
կյանքը թանկ է դառնում:

Դառնամ փառաբանեմ... փառաբանեմ մարդուն՝
ա՛յն էակին միակ,
Որ ծիծաղե՛լ գիտի, որ արտասվե՛լ գիտի,
երգե՛լ գիտի,
Թո՛ղ որ գիտի նաև իր նմանին դարձնել
անշնչացած դիակ,
Բայց և գիտի գրկե՛լ, գիտի գրել գրքե՛ր,
հերկե՛լ գիտի:

Նրա տքնությունը, բայց առավել ևս
հրաշք հուր-կայծակի
Այն բոց բռնկումը՝ այն ներշնչման պահը
փառաբանեմ ցնծո՛ւն,
Որ մեր աչքից ծածկված հապա՞ր ճանապարհ է
բացում հանկարծակի
Ու դարձնում է մարդուն... հավասար է դարձնում
իր ստեղծած աստծուն...

15. VIII. 54
Նավչալու
5—6. V. 57
Մոսկվա

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ

Ես կարծում եմ. երբ խոր վերքից
Մարդ ժպտում է համառությամբ,
Այդ ժպիտը վերջ ի վերջո
Փոխարկվում է ծամածռության...

Ես կարծում եմ. երբ որ ջուրը
Վարարում է, ելնում ափից,
Թույլտրվություն չի վերցընում
Իրեն հսկող նեղ քարափից...

Ես կարծում եմ. պակն ավելի
Լավ ես կգում ամռան շոգին,
Դողն ավելի լավ ես կգում
Ձմռան բքին...

Հողն ավելի լավ ես կգում
Այն ժամանակ,
Երբ նա հանկարծ տատանվում է
Քո ոտքի տակ...

20. V. 57
Մոսկվա

ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՄ

Ես նախանձում եմ նրանց բոլորին,
Ովքեր ապրում են հավատով խորին,
Ովքեր լավ գիտեն, թե ուր են քայլում,
Ում դեմ են ելնում, ում համար փայլում,
Թե տրտնջում են՝ ինչ բանի վրա,
Թե քրքջում են՝ ինչ բանի վրա,
Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ թոհուբոհուս,
Հանուն ի՞նչ բանի կյանքերն են կոհում...

Բարի նախանձով նրան եմ հիշում,
Ով չի մոլորվում անթափանց մուժում,
Ով չի վիատվում երկար վերելքից,
Չի հուսահատվում վայրի տարերքից,
Ով ստի հանդեպ բերան չի փակում,
Ով հոտած ջրում ուռկան չի ձգում,
Չի նայում կյանքին իբրև բոստանի,
Որտեղից պիտի չաղ բաժին տանի...

Ես նախանձում եմ նրան, վերջապես,
Անհուն նախանձով նրան եմ հիշում,
Ով հոգում չունի նախանձի նշույլ.
Ով աչք չի տնկում սուտ փառք ու պատվին
(Ինչպե՞ս նախանձես այն ճարպիկ կատվին,
Որ մի չաղ պատառ միս է թոցրրել)...
Իսկ ով հատիկն իր հապ է դարձրրել,
Ով սերմ է ցանել ու բերք է հնձում,
Անբանն է միայն նրան նախանձում...

Բանից պարզվում է,— ես ու իմ հոգին,—
Որ չեմ նախանձում կյանքում ո՞չ ոքի...

5. V. 57
Մոսկվա

ԻՆՔՍ ԻՆՁ ՀԵՐՔՈՒՄ ԵՄ

Նույն հարցն եմ հաճախ ինքըս ինձ տալիս.
— Ի՞նչ ես աշխարհի ցավերը լալիս,
Աշխարհի դարդը հո՞ քեզ չեն տվել:
Եվ ի՞նչդ է պակաս կամ ի՞նչդ է ավել.
Ամենքի նման մի մարդ ես, հոգի՛ս,
Ամենքի պես էլ աշխարհով գնա...

Իսկապե՛ս.
կարգին հագուստ կա հագիս,
Թե վաստակածըս գրպանըս մնար՝
Անտեղի տեղը չհալվեր-կորչեր,
Ինձ կարող էին և հարուստ կոչել:
Ես դուր եմ գալիս սրան ու նրան,
Ինձ շատերն անգամ սիրում են կարգին:
Շուտով կստանամ և բնակարան,
Եվրս երկու մանչ՝ կապատվեմ հարկից,
Եվրս երկու գիրք՝ անուն եմ հարգի,—
Ումի՞ց եմ պակաս, ումի՞ց եմ ավել,
Ի՞նչ ես աշխարհի ցավերը լալիս,
Աշխարհի դարդը հո՞ ինձ չեն տվել,—

Այս հարցն եմ հաճախ ինքըս ինձ տալիս,
Ինքըս ինձ վիճում, առնում ու տալիս,
Սակայն իմ հախից ինքս էլ չեմ գալիս:
Ինչպե՞ս աշխարհի ցավը մոռանամ,
Աշխարհի վատը, լավը մոռանամ.
Ես հո չեմ նստել աշխարհի վզին,
Որ չմտածեմ աշխարհքի մասին:
Ի՞նչ է, աշխարհը իմ բո՞ւռն եմ առել,
Որ ճմլոթելով գրպանս խրեմ...

Ինչպե՞ս չհոգամ աշխարհի մասին,
Եթե նա իմն է, ի՛մն է, իմպեսի՛ն,
Թե նրա վատը նաև իմ վատն է,
Նրա հավատը և իմ հավատն է:
Նա իմն է եղել և իմն է մնում.
Նա էր մոր նման ինձ երեկ սնում,
Նա է ինձ տվել քնքշանք ու գորով,
Նա է ներշնչել ինձ ուժ ու կորով,
Նա է ինձ ակնիվ-անակնիվ դարձնում...
Եվ հիմա ինչպե՞ս, ես ձեզ եմ հարցնում,
Աշխարհի մասին ինչպե՞ս մոռանամ,
Աշխարհի հոգսից ինչպե՞ս հեռանամ:
Մայրը միշտ մայր է, որդիքն են տարբեր.
Մեկը կարող է լինել անտարբեր,
Մյուսի սրտից արյուն է կաթում,
Երբ նա մոր դեմքին ցավ է նկատում...

22. IV. 57
Մոսկվա

ԾՆՎԵԼ ԵՄ

Ես ծնվել եմ նրա համար,
Որ մոր արտում կարոտ դառնամ
Եվ սպասվող որդու նման
Հեռուներից վերադառնամ.

Ես ծնվել եմ նրա համար,
Որ ցավածին մխիթարեմ.
Ջահելների հարսանիքին
Ձեռքիս գինի՝ կվարթ պարեմ.

Նորածընի բերնով ճչամ
Ու մոր բերնով ասեմ «նանիկ».
Տուն երապող կույգի համար
Դառնամ սիրո համեստ տանիք.

Եթե շուրջըս խավար լինի՝
Մարդկանց համար փայլատակեմ,
Հասակով մեկ փռվեմ գետին՝
Վհատության ճամփան փակեմ...

5. V. 57
Մոսկվա

ՄԵՌՆԵԼ

Եթե մեռնե՞լ....
Թո՛ղ որ մեռնեմ
հուր-կայծակից՝
Միանգամի՛ց,
մի վայրկյանո՛ւմ,
հանկարծակի՛,
Այնքա՞ն արդար,
խղճիս ձայնին մի՛շտ ունկընդիր,
Որ՝ համաձայն բիբլիական հին լեգենդին՝
Հանգիստ անցնեմ և աստղի նեղլիկ ծակից...

Եթե մեռնե՞լ...
Թող սպանվե՛մ,
թող կործանվե՛մ
Այնպես ապրած և բան արած,
Որ նորածին մանուկների տեսքով նորից
վերածնվեմ՝
Իմ անունո՛վ կնքեն նրանց...
Եթե գամվել՝
փարոսի՞ պես,
Արնաքամվել՝
հերոսի՞ պես,
Ու քրքրվել՝
դրոշի՞ պես....

Եթե մեռնե՞լ...
Բայց առայժմ ապրե՞լ է պետք:

26. V. 57
Մոսկվա

ԵՐԱԶՈՒՄ ԵՄ

Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն...

Ինձ թվում է, թե դեռ պիտի քեզ փախցընեմ
Ու հետս առած՝ դաչաղ դառած՝ քեզ թոցընեմ
Անտակ ձորից, գարնանային գիժ գետակից,
Եվ ինչ ուզես՝ գտնեմ անգամ քարի՞ տակից.
Թե սոված ես՝
Կերակրեմ եղնիկների համեղ մսով,
Թե ծարավ ես՝
Քեզ մոտենամ ցողով լեցուն ծաղկե թասով,
Թե դրսում ես՝
Պալատ դառնամ հանկարծակի,
Թե մրսում ես՝
Կրակ խլեմ և կայծակից,
Խփված արջի ոսկորներից խարույկ վառեմ,
Խարույկի մոտ քո պաղ խոսքից իսկույն տառեմ,
Սառցի մեջ էլ կրակ կտրեմ խոսքից քո ջերմ...

Բայց ես հիմա այն պատանի տղան հո՞ չեմ:
Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն:

Ինձ թվում է, թե դեռ պիտի մի օր աշխարհ կարմացընեմ
Հին ջութակի յոթ լարի մեջ մի ութերորդ լար մտցընեմ
Ու նվագեմ:
Նվագե՞մ, այլ սար ու քա՞ր լացացընեմ:
Եթե ինչ-որ տեղդ է ցավում,
Իսկույն բուժեմ լոկ հայացքո՞վ...

Մի հինավուրց քարանձավում,
Աստվա՞ծ գիտի ինչ հրաշքով,
Բոլոր մեռած լեզուներով գրքեր ճարեմ
Եվ բոլորը... ե՛ս վերծանեմ...

Գնամ մտնեմ Վանա լճի խորքերն անտակ
Եվ ի՞նչ— գտնեմ հին հայկական հապա՞ր քանդակ...
Մի օր հանկարծ ջղայնանամ ու վերցընեմ
Մթնոլորտը մեկ այլ օդով թարմացընեմ...

Արեգակի, լուսնի լույսով պատեր ծեփեմ,
Խարույկների հոսուն բոցից սարքեմ սեպեր,
Գրեմ վեպե՛ր,
Եվ ի՞նչ վեպեր...

Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն...

Ինձ թվում է, թե դեռ պիտի
Ես վերստին դառնամ ջահել՝
Իբրև հայտնի մարմնամարզիկ.
Մրցանակներ անվերջ շահեմ.
Թե դեռ պիտի չեմպիոն դառնամ ես շախմատի
Եվ, համաձայն պատվիրանին սուրբ Մահմադի,
Բերան չառնեմ օղու, գինու ոչ մի կաթիլ.
Ծխախոտով էլ չպիտի թունավորվեմ՝
Իմ իսկ ձեռքով էլ չպիտի տնավերվեմ,
Էլ չպիտի ուրիշներով տարվեմ-գերվեմ...
Միայն պիտի մեկին սիրեմ, մեկից սիրվեմ...

Այս հմայիչ երազներից գեթ երկուսը կկատարվե՞ն:
Ես կարող եմ պատասխանել այդ հարցի՞ն էլ.
— Միայն մեկը
և— վերջինը...

28. V. 57
Մոսկվա

ԱՊՐԵԼ

Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,
Որ սուրբ հողը երբեք չկգա քո ավելորդ ծանրությունը:
Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,
Որ դու ինքդ էլ երբեք չկգաս քո սեփական մանրությունը:
Ու թե հանկարծ անպետքություն քեզ համարես,
թե ինքըդ քեզ արհամարհես
ու համառես,
քեզ հետ վիճի՛,
քեզ չկիջի՛.
համբերատար քեզ հետ խոսի՞,
հակառակո՞ւմ քեզ համոզի
ինքը... հլոր Հանրությունը...

Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,
Որ ուրիշի խինդով խնդաս,
Որ ուրիշի ցնծությունով
Ինքդ էլ ցնծաս, ինքդ էլ թնդաս:

Լինես, մնաս ամենքի հետ,
Նրանց կամքին հպատակվես,
«Ես»-ըդ խառնես մեծ «մենք»-ի հետ,
Նրանց ցավով լուռ տապակվես:

Տրվես նրանց լույսի նման
Եվ չխաբես՝ հույսի նման:
Արշալույսի նման բացվես
նրա՞նց համար,
Վերջալույսի նման բոցվես
նրա՞նց համար:

Թե լաց լինես՝ նրանց համար,
Թե բաց լինես՝ նրանց համար:
Եվ հա՞ց լինես նրանց համար՝
հոգևոր հա՞ց,
Քեզ նրանցով կյանքում վինես
Եվ նրանցով կյանքում լինես
ոգևորվա՞ծ:
Եվ նրանցով կյանքում լինես
թույլ կամ ուժեղ,
Եվ նրանցով կյանքում լինես
բույլ կամ ուժեղ,
Թշվառ՝ ինչպես անապատան,
Հարուստ՝ ինչպես լայն տափաստան...

Ապրե՞լ, ապրե՞լ, ապրել այնպե՞ս,
Որ նրանց հետ մթնես-ամպես
Եվ նրանց հետ շանթարձակվես.
Մեկտեղ հանկարծ ընդարձակվես,
Մեկտեղ դառնաս գունդուկծիկ.
Մեկտե՞ղ բացվես, մեկտե՞ղ փակվես՝
Ինչպես նամակ և կամ բացիկ...

Ապրե՞լ, ապրե՞լ, ապրել մեկտե՞ղ,
Կյանքդ խառնել նրանց կյանքին,
Տառապանքդ՝ տառապանքին,
Ջանքդ՝ ջանքին,
Ցանքդ՝ ցանքին,
Եվ ենթարկվել նրանց կամքին,
Նրանց կամքն էլ քեզ ենթարկել,—
Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարգել...

27. V. 57
Մոսկվա

ԵՐԳԵԼ

Ա՜խ, թե երգելիս
Չրընգալ, ինչպես բահը ջրտուքի,
Ինչպես մանգաղը ցորենի արտում,
Դղրդալ, ինչպես ջաղացի ջրտուն,
Եվ լռել, ինչպես ստվերը ջոգին:

Իսկ դուք լսե՞լ եք՝
Ինչպես է երգում քամին նեղ ձորում,
Մեղրի կաթիլը ինչպես է ծորում,
Ինչպես է խոտը կրծում ճագարը,
Ինչպես է լիպում հորթն աղաքարը,
Ինչպես է երգում կաքավն իր «կղա»-ն,
Ինչպես է երգում խաղացող տղան...

Դուք չե՞ք մտածել.
Կարծես Էոլյան մի նոր քնար է
Սյունից սյուն ձգվող հեռագրի լարը:
Ա՜խ, եթե գտնել
Այդպես երգելու դյուրին հնարը...
Ա՜խ, եթե երգով լալ այնպես. ինչպես ծառերը խեժով,—
արցունքո՜վ բուժող,—
Եվ սպիանալ, ինչպես ջրերը կանաչ ջրմուռով,—
անցած մրմուռո՜վ...
Երգել ջրի պես՝ մերթ գահավիժող,
Նեղլիկ քարափից բաց հովիտ խուժող՝
Անգիտակ իր իսկ ահեղ մռունչին,
Մերթ էլ փոխարկված տարտամ մրմունջի՝
դանդաղ նեղվելով
ու ներս մղվելով
իրենի՜ց ծնված,
իրենո՜վ սնված

խարդախ սառույցից,—
երգել ջրի պես՝
Մերթ էպիկական մանրամասնությամբ,
ու մերթ թռուցիկ...

Իսկ եթե երգել,
Ինչպես ալիքը փոթորկված ծովո՞ւմ,
Եվ նվագակցել,
Ինչպես կաթիլը մութ քարանձավո՞ւմ:

Իսկ դուք լսե՞լ եք՝
Լցված սափորից ի՜նչ նվագով է
պաղ ջուրը չոռում.
Ի՜նչ անկրկնելի եղանակով է
թեյնիկը եռում...

Ա՜խ, եթե հնչել գովերգի նման՝
Երբ մանուկների բոբիկ ոտներից թեկուզ պղտորված՝
Բարի առուն է գոհունակ ճողփում.
Ա՜խ, եթե հնչել եղերգի նման՝
Երբ սիրած կինը իր հանկարծ գոհված մարդուն է ողբում:
Ա՜խ. եթե երգել եղեգնի նման՝
Երբ վեր է կենում քունն առած քամին—
ցանկացած ժամին...

Իսկ թե տրորվել՝
ավազի՜ նման,
և ոչ թե վակի:
Իսկ թե օրորվել՝
օրորոցի՜ պես և ոչ թե պատի,
և այն ծոցի՜ պես,
որ ուռճանում է մայրական կաթից:
Եթե գալարվել՝
ոչ թե օձի՜ պես,
այլ շեկ բոցի՜ պես:

Եթե դալարվել՝
աղջիկա ճկուն իրանի նման:
Եթե խելառվել՝
ավելի լավ է անհաջող սիրուց:
Եթե ոլորվել՝
այն թելի նման,
որ շուլալվում է կախարդիչ կնոջ
վզի կոճակում:
Եթե գլորվել՝
այն լուրի նման,
որ գերված երկրին
սեփական բախտի տեր է հռչակում:
Եթե մոլորվել՝
այն տուղտի նման,
որ կանաչում է ծառի փչակում...

Եթե ենթարկվել՝
ինչպես երակը արյան մղումին.
Եթե ուղարկվել՝
աստղերից եկած պայծառ լույսի՝ պես.
Եթե քողարկվել՝
ապա հույսի՝ պես.
Եթե ընդգրկվել՝
կորայունի մեջ, որ ստրկացած երկիր է փրկում
և ոչ թե մարդկանց լեզվից է գրկում.
Եթե վիճարկվել՝
վիճարկվել իբրև խոր ճշմարտություն.
Ու եթե կարկվել՝
տագնապի ժամին ահապանգի պես.
Ու եթե գրկվել՝
ապա սուտ փառքից, ոչ թե ամոթից.
Ու եթե լլկվել՝
բաժանման ցավից, ոչ թե թշնամուց.
Ու եթե լալկվել՝
արհամարհանքից և ոչ թե վախից.

Ու եթե ծլկվել՝
ինչպես անձրևը ճաքճքված արտում.

Իսկ թե իմանալ՝
ինչպես արևը իր ծագման պահը.
Ու թե կարմանալ՝
ո՛չ թե լավ բանից, այլ միայն վատի՞ց.
Թե ընդարմանալ՝
որպեսզի նորի՞ց, կրկի՞ն թարմանալ.
Թե ընդդիմանալ՝
նաև անցողիկ հաջողությանը.
Ու թե դիմանալ՝
ապա դիմանալ
ժամանակների խիստ քննությանը...

Երգե՛լ ու... մեռնե՛լ,
Ու եթե մի օր կասկած հարուցել,
Ապա բուրավետ այն հոտերի՛ պես,
Որ մի ժամանակ սուր են զգացվել,
Դրա համար էլ արդ չեն զգացվում.
Ու եթե մի օր դժվար հասկացվել՝
Ապա հինավուրց այն տոտեմի՛ պես,
Որ մի ժամանակ լավ էր հասկացվում:
Ու եթե մաշվել՝
Ապա հեսանվող մի դանակի՛ պես.
Եթե ետ քաշվել՝
Հաղթանակ տարած մի բանակի՛ պես.
Եթե չհիշվել՝
Զքնաղ լեգենդի հեղինակի՛ պես...
Ու եթե հիշվել՝
Ժողովրդական եղանակի՛ պես...

31. V. 57
Մոսկվա

ՄԻ ՊԱՀ ԶՂՋՈՒՄ ԵՄ

Ես օգնեցի բոլորին, ես ինձ միայն չօգնեցի,
Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի։

Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած գնացին
Քանի՛-քանի՛սը կյանքում— ե՛ս էլի գիժ մնացի։

Ով հանդիպեց՝ ստացավ մի թաս գինի ինձանից,
Լոկ ես գինի չըմպեցի իմ սեփական ինձանից։

Ի՞նչ եմ եղել ողջ կյանքում՝ հարսանքավոր ու քափոր,
Մինչ ամենքից ավելի ինձ էր օջախ հարկավոր։

Վստահեցին ոմանք ինձ— հոգիս դարձավ գաղտնարան,
Վստահեցի շատերին— գաղտնիքս առան ու տարան։

Ու կղջում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել...

20. IV. 97
Մոսկվա

ԳՈՎԵՐԳՈՒՄ ԵՄ

Գովերգում եմ այն խարույկը, որ բնա՛վ չի մտահոգվում,
թե իր մահն է իր իսկ բոցը։
Գովերգում եմ ես այն մորը,
որը
Ծնում և չի հոգում,
Թե ո՞ւր պիտի տեղավորի առանց այն էլ նեղ սենյակում
նորածընի օրորոցը։
Գովերգում եմ ես այն օրը,
որը
գալիս
ու տալիս է,
Ինչ երապել-տենչացել են ձիգ տարիներ։
Գովերգում եմ ես այն նորը,
որը
ոչ ոք չի հորինել...

Գովերգում եմ ես այն լավը,
Որ մեռնում է նրա մասին չցավելուց,
Եվ այն ցավը,
Որ ծնվում է շատ սիրելուց.
Եվ այն սերը, որ ո՛չ կույր է,
Ո՛չ էլ՝ դիտմամբ՝ ակնոցավոր.
Գովերգում եմ և այն լուսե գաղափարը,
Որ չի դառնում նեղ կաղապար.
Այն կասկածը, որ ծնվում է հեգնող ցավով,
Հետո դառնում մի անկասկած ճշմարտություն
Ու բաց անում նոր ճանապարհ...

Գովերգում եմ այն երա՜շտը, որ մղում է ջրանցք շինել,
Այն ջրա՜ցքը, որ չի շինվում արյան գնով,
Այն արյո՛ւնը, որ թափվելիս կուր չի թափվում,
Այն թափվե՛լը, որ վերստին հավաքվելու հնար ունի,
Այն հնա՜րը, որ չի խաբում,
Այն խաբե՛լը, որ մղում է չեղած ճիշտը որոնելու,
Որոնո՛ւմը, որ ի վերջո չի հասցընում մոլորումի,
Մոլորո՛ւմը, որ ակամա վերջանում է մի նոր գյուտով...

... Եվ, վերջապե՛ս, գովերգում եմ գովերգումը:
Թող բա՜ն լինի գովերգելու...

20, 25. V. 57
Մոսկվա

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒՄ ԵՄ

Հյուրասիրում եմ
Զմռան վերջերին՝ խաղողի ճութով,
Եթե չեք ճաշել՝ կաքավի ճուտով,
Որին, հավատա, ես չեմ սպանել:
Պատիվ եմ անում,
Ո՛վ քաջ սպաներ,
Ձեզ՝ արձակուրդով,
Ծեր պատմաբանիդ՝ այնպիսի նյութով,
Որ կնախանձեր և Հերոդոտը:

Թե հին տանձենին հյութի կարոտ է՝
Հյուրասիրում եմ անարատ հյութով:

Թե աշխատանքից հոգնել ես, խնդրե՛մ,
Հյուրասիրում եմ կենաբար մութով:

Եթե փող չունես և առիթ չունես՝
Չգիտես ինչպես ուրախացընես
Կնոջդ սիրած,
ի՞նչ է հարկավոր,
Ինձ համար հեշտ է, խնդրե՛մ, ի՜նչ կա որ՝
Հյուրասիրում եմ քեզ... մարտի ութով:

Ով առանց այն էլ շատ է սպասել՝
Հյուրասիրում եմ վերահաս «շուտ»-ով:
Հյուրասիրում եմ արտերին պուտով,
Արտերին... վա՜յ, չէ՛... ծովի՛ն կարկուտով,
Եվ ի՞նչ կարկուտով.
Որ նա չհալվի՝ դառնա մարգարիտ,

Եվ ողջը հասնի ծովի արքային՝
Հողածին մարդուն...

Քեզ ի՞նչ տամ, ասա՛, խռռված բալիկ.
Կուպես՝ պաղ ալիք,
Կուպես՝ խաղալիք:
Չէ՛, հյուրասիրեմ ես քեզ խտուտով,
Իսկ խռով կույգին՝ ճիտով-խտիտով,
Լռակյաց ձորին՝
երգող արտուտով,
Հոգնած հնձվորին՝
արևամուտով,
Զրով՝ ծարավին,
Սառած հյուսիսին՝ օդով հարավի,
Պառավին՝
երկար ու անվիշտ կյանքով,
Կյանքին՝ խնդությամբ և ուրախությամբ,
Ուրախությանը ոչ թե թռիչքով,
այլ տևողությամբ,
Կախյալ լուսնյակին՝ սեփական լույսով,
Կախյալ գաղութին՝ փրկվելու հույսով,
Հույսին՝ կատարմամբ...

Հյուրասիրում եմ
Անպավակ մարդուն՝ երպած որդով,
Ով չունի և տոհմ՝ քառասուն պորտով,
Փոքրը աշխարհին՝ մեծ ժողովրդով,
Ցորենի արտին՝ աննշան հարդով,
Շալ դարձած բրդով՝
գառնուկին անծին,
Առաջին վարդով՝
ժամադրվածին,
Զախորդ ձկնորսին՝ հաջողակ կարթով,
Զախորդ որսորդին՝
լեցուն թակարդով,

Պառավ օրիորդին՝
հոյակապ մարդով,
Թունդ խաղամոլին՝
Երկրի քարտեզով և ոչ թե քարտով.
Այն բաղաձայնին,
Որ գեթ մի անգամ երգել է ուզում՝
ուժեղ կոկորդով.
Այն պառավ տատին, որ վերջի՞ն անգամ
Կով է երապում՝
խորոտիկ հորթով.
Այն կիրթ կրթային, որ գիտի իրեն
Փշեր չեն ապում՝
ջրարջի մորթով...

Հյուրասիրում եմ մի վերջին անգամ
Գաղտնիք պահ տվող հուլված սրտերին
Ինձ նման ձրի ու թանկ լոմբարդով,
Իսկ գեղեցկուհուն՝ ինձ նման ճորտով,
Ինձ նման ճորտին՝ մի շռայլությամբ,
Որ չունի և վերջ,
Վերջին՝ սկիպբով,
Սկզբին՝ հարմար շարունակությամբ,
Որ ունի նաև... չափի զգացում:

Հյուրասիրում եմ ես ինձ էլ նույնով՝
չափի զգացմամբ...

27. V. 57
Մոսկվա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՄ

Օդում լավ ձե՞ռք է մնացել կախված
սիրո՛վ կսեղմեմ.
Անարատ սի՞րտ է կուր տեղը դաղված՝
ցա՛վը կմեղմեմ.
Սրբատաշ քա՞ր է լուռ ընկած գետին՝
կդնեմ պատի՛ն.
Թե հալոցք է պետք՝ սառույց էլ լինեմ՝
կդառնամ կաթիլ.
Թե թանաք է պետք փրկարար գործին՝
Ի՞նչ թանաք, կտամ արյո՛ւնը անգամ,
Թե նոր կոհ է պետք ընդհանուր գործին՝
Այդ ո՞ւմ եք փնտրում. ես արդեն հո կամ:

Նաև ասում եմ.
Գերադասում եմ կրակից հեռու մի փոքր մրսել,
Քան այրվել նրա մոտիկությունից.
Եվ հրաժարվել հյուրասիրվելու սուր ցանկությունից.
Քան դժվարությամբ կերածս մարսել...

Հայտարարում եմ.
Միայն ընդհանուր հայտարարում են
Ճշտվում-ճշգրտվում տրված թվերը,
Ծռիչքի մեջ են փորձվում թևերը.
Մարմնի ձևերը՝
լոկ մերկանալիս,
Անգին նվերը՝
լոկ ստանալիս,
Լոկ ճուտ հանելիս՝
Թռչունի առողջ կամ լակ ձվերը
Թռչուններն իրենք՝
Երբ սկսվում է նրանց չվելը...

Հայտարարում եմ.
Ձե՞մ պրծնի երբեք կնոջ նավանքից,
Իսկ նապուտուպից հոգնել եմ վաղուց...
Ձե՞մ ելնի երբեք խորունկ ակոսից,
Խորամանկ փոսից կպվել եմ վաղուց...
Ձե՞մ հոգնի երբեք մարմնի մարկանքից,
Մտքի մարկանքից հոգնել եմ վաղուց...

Հայտարարում եմ.
Իմ փորձված մետրը երբեք չեմ փոխի
անորոշ թիկով,
Փորձված բանջարն իսկ երբեք չեմ փոխի
անծանոթ մսով:
Միջնադար ընկնեմ,
Թե բռնակալ է իմ շահնշահը՝
չեմ դառնա վեկիր,
Ես նրա համար ոչ թե շքեղ գորգ —
Չեմ դառնա անգամ և մաշված խսի՞ր...
Ապագա ընկնեմ՝
Եթե հանդիպեմ գայլ ու աղվեսի,
տուպի և տպի.
Գործուղում կառնեմ, կվերադառնամ
Քսաներորդի այս ծանոթ կեսին...

Հայտարարում եմ, օ ո՜չ, խնդրում եմ.
— Գործուղում տվեք ապագա գնամ...

29. V. 57
Մոսկվա

ԱՏՈՒՄ ԵՄ

Ատում եմ ձյունը՝
Թե նա տեղում է ամառվա կեսին,
Եվ մահն եմ ատում՝
Թե հյուր է գալիս աղջկատեսին,
Մահից ոչ պակաս՝
Եվ ա՛յն քողարկված մենատընտեսին,—
Նրա՛ն ու նրա՛նց,
Ովքեր ուրիշի շեն տունն են քանդում՝
Իրենց պետք եկած գերանի համար,
Ովքեր ուրիշի ծառերն են ջարդում՝
Մի բուռ չհասած ծիրանի համար,
Ովքեր համայնքի ծովից են խոսում,
Բայց դեպի իրենց լճակն են հոսում...

Ատում եմ նաև այն խելոք սուսիկ-փուսիկությունը,
Որտեղ դժվար է տարբերել անգամ երեսն աստառից,
Եվ այն հարկադի՛ր, ոչ թե ի ծնե կուլիկությունը,
Որ ստացվում է... ցած առաստաղից:

Ատում եմ նաև այն նեղ կոշիկը,
Որ աքցանի պես ոտքերդ է բռնում,
Իսկ հոգուդ վրա կոշտուկ է դառնում...

Ա՛յն գործն եմ ատում,
Որ ոչ թե գործ է, այլ ծանոր հանցանք,
Ա՛յն փորձն եմ ատում,
Որ մարդկանց գլխին դառնում է փորձանք,
Ա՛յն դավանանքը,
Որ վերջ ի վերջո փոխվում է դավի,
Գլխացավանքը,
Որ փոխարկվում է սուր գլխացավի...

Խավարն եմ ատում, եթե խավարում
Ո՞չ միտք է ծնվում և ո՞չ էլ կավակ:
Եվ լույսն եմ ատում, թեկուզև պայծառ,
Թե չի հանդուրժում մինչև իսկ շվաք...

Ի՞նչ խոսքեր ասեմ այն ձեռագրերին,
Որ չի հասկացվում, բայց կարդացվում է:
Ատե՞մ, թե խղճամ այն տարեգրերին,
Որ նյութ է սարքում,
Ոչ թե հավաքում:
Խղճա՞մ, թե ատեմ այն տարագրերին,
Որ միշտ ապրում է... իր հայրենիքում...

Թո՞ւմ, ինչքա՞ն բան կա կյանքում ատելի,—
Ես չգիտեի...

25—26. V. 57
Մոսկվա

ՉԵՄ ՀԱՐԳՈՒՄ

Մինչ տարին ունի տասներկու ամիս ու չորս եղանակ,
Տասներկու անգամ սա եղանակ է մի օրում փոխում:
Եթե դուք պետ եք և, դիցուք, նույնիսկ հաշիշ եք ծխում,
Նա էլ է ծխում, որպեսզի հանկարծ... դուք չնեղանաք:
Ի՞նչ էլ նվագեն՝ նա է պարողը,
Ի՞նչ էլ կարել տան՝ նա է կարողը,
Ո՞ր ծառն էլ ցույց տան՝ նա է քարողը:
Հարգո՞ւմ եք նրան:

Իսկ հապա սրա՞ն,
Որ ասես լինի առաջի պարան.
Հապա փո՛ղձ արա ու ցա՛խ դիր վրան....

Չեմ հարգում շանն էլ, որին չար տերը
Անտեղի տեղը որքան ծեծում է,
Այնքան նա լիպում տիրոջ ոտերը՝
Իբեն տրորո՞ղ-ջարդո՞ղ ոտերը,
Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է.

Եկեք միասին չհարգենք նրա՞նց,
Ովքեր մերտում են և ոչ թե դատում,
Ճառո՞ւմ են — բնավ չե՞ն կշռադատում.
Ովքեր չեն ջոկում ո՛չ թացը չորից,
Ո՛չ էլ տարբերում անդունդը ձորից.
Ովքեր գրածի տառն են ընթերցում,
Ովքեր քնածին մեռած են կարծում,
Ովքեր կարծում են
Ծուխը՝ հրաբուխ,
Իսկ լացը՝ հարբուխ...

Չեմ հարգում նաև ա՛յն նորությունը,
Որ վաղեմության նոր տարբերակն է,
Ա՛յն չորությունը,
Որ չի տարբերվում անգթությունից,
Անհուն թվացող ա՛յն խորությունը,
Որտեղ աճում է եղեգն ու ջրմուռ,
Եվ հիմարավուն ա՛յն բարությունը,
Որ մոռանում է կսկիծ ու մրմուռ...

Հարգած չունենամ ա՛յն ծերությունն էլ,
Որ իմաստնության նույնիսկ բո՛ույր չունի:
Հարգած չունենամ ա՛յն ծառությունն էլ,
Որ Սասնա ծռից մի նշո՛ւյլ չունի,
Եվ հնարավոր ա՛յն հարությունը,
Ով ավարտվում է լոկ... համբարձումո՛վ,
Ո՛չ թե մարդկանց մեջ վերադարձումով...

Ե՛վքս մի անգամ չհարգեմ նրանց,
Ովքեր մտնում են հոտած գաղջ անկյուն,
Երբ կարող էին թարմ օդում մնալ,
Թեկուզև այնտեղ մի փոքրը մրսել
(Այդտեղ եմ հասել
Երբեմըն ես է՛լ)...
Ովքեր մթնում են,
Երբ կարող էին միշտ մնալ լուսե,
(Ինձ էլ երբեմըն խավարն է գրկում)՝...
Ովքեր վատնում են
Իրենց ուժերը փսփրսուքի մեջ,
Մինչ կարող էին բարձրաձայն խոսել
(Երբեմըն նաև ես ի՛նձ չեմ հարգում)...

Երբեմըն նաև ես ի՛նձ չեմ հարգում...

25. 27. V. 57
Մոսկվա

ՎԻՃՈՒՄ ԵՄ

Ես վիճում եմ,
մե՞կ է՝ ո՛ւմ հետ,
Ինքս ի՞նձ հետ,
Թե՞ ուրիշի:
Իսկ դու մի պահ ակա՞նջ արա
Ու լա՞վ հիշիր:

Ես վիճում եմ և աստղերից լավերի՛ հետ,
Եթե նրանք տալիս են մեկ աղո՞տ մի լույս,
Բայց ո՛չ կրակ...

Ես վիճում եմ կանաչների ծովերի՛ հետ,
Եթե նրանք դաշտում փտում,
Բայց չեն մտնում
Ո՛չ մի մարագ:

Ես վիճում եմ գավակի հետ,
Ա՛յն գավակի,
Որ իր մորը փող է տալիս դատարանով...

Ես վիճում եմ ավագի հետ,
Ա՛յն ավագի,
Որ կրտսերից ինքը պիտի խելք հավաքի,
Մինչդեռ նրան իր ետևից
Քարշ է տալիս հաստ պարանով...

Ես վիճում եմ շվաքի հետ,
Ա՛յն շվաքի,
.Որ արևից թունդ է վառում:

Ես վիճում եմ նվագի հետ,
Ա՛յն նվագի,

Որ բոլորին կկվացընել,
Բայց և այնպես չի դադարում...

Պիտի վիճեմ
Եվ երգի՛ դեմ,
Թե բռնի են երգել տալիս խեղճ երգողին.
Եվ բերքի՛ դեմ,
Թե չի մտնում բերք ու բարիք հավաքողին.
Եվ վերքի՛ դեմ,
Թե չի բուժվում, այլ վարակում,
Եվ ներկի՛ դեմ,
Թե ծածկում է, չի՛ նորոգում...

Ես չվիճե՞մ
Ա՛խ կրքի դեմ,
Որ չի ծնում մի նոր որդի,
Այլ պարկապես կուր վատնում է.
Ա՛յն գրկի դեմ՝ հուդայական,
Որ մատնում է...

Ասե՛ք, ինչպե՞ս դեմ չխոսեմ
Ա՛յն պիտակին,
Որ չի սպանում, բայց կպչում է և չի պոկվում.
Ա՛յն շիտակին,
Որ դիմակներ փոխելով է մտահոգվում.
Ա՛յն դիտակին,
Որ քնած է.
Ա՛յն կտակին,
Որ գնված է...

Նորի՞ց վիճեմ՝
ա՛յն բախտի հետ,
Որ գալիս է, գալը բարի՞,
Սակայն ո՞ւր է— տե՛ղն է պարապ:

Նորի՞ց վիճեմ՝
ա՛յն թխպի հետ,

Որ կուտակվում բոլոր տարին,
Բայց չի դառնում տեղատարափ...

Վիճեմ նաև ա՛յն մութի դեմ,
Որ կուրացնո՞ւմ — ա՛չք չի շոյում,—
Մթնա՞ծ վիճեմ.
Ա՛յն բութի դեմ,
Որ կարծում է՝ շեշտ է դարձել,—
Շեշտվա՞ծ վիճեմ.
Ա՛յն կուտի դեմ,
Որ ցորեն էր մի ժամանակ,
Սրսո՞ւռ ցորեն,—
Վիճեմ լացո՞վ.
Ա՛յն կուտի դեմ,
Որ չի ուտվում,
Ոչ էլ դառնում արդար գինի,—
Հարբա՞ծ վիճեմ.
Ա՛յն փուտի դեմ,
Որ ինքն իրեն սերտ է կարծում,—
Իպո՞ւր վիճեմ.
Ա՛յն տուտի դեմ,
Որ տո՞ւտ չունի՝
Որ անծայր է այս վեճի՛ պես,—
Վիճեմ անվե՞րջ...

Վիճեմ նաև ա՛յն վեճի դեմ,
Որի բերած օգո՞ւտն է շատ, թե՞ վնասը՝
Ես չգիտե՛մ...

20. 26. V. 57
Մոսկվա

ՍԱՐՍՌՈՒՄ ԵՄ

Սարսռում եմ
Հալվող-հալվող քո հպումից
Ու պաղ քամուց,
Եվ ա՛յն մտքից,
Թե կարող եմ քեզ կորցընել...

Թրթռում եմ
Բաց աչքերով խարխափումից,
Փակ թշնամուց
Եվ ա՛յն մտքից,
Որ կարող եմ շատ շոյելուց
Թռչնակի պես քեզ մեռցընել...

Դողդողում եմ
Որդո՛ւս վրա
Եվ քո սիրո՛,
Բախտի՛ վրա իմ տարագիր ժողովրդի...

Թպրտում եմ
Սրտի՛ նման...

10. IX. 57
14. XI. 57
Մոսկվա

ՀԻԱՆՈՒՄ-ՀՐՃՎՈՒՄ ԵՄ

Ես հիանում-հրճվում եմ՝
Ե՛վ քուն մտած քարափով,
Ե՛վ արթնացնող տարափով.
Մանուկների և՛ խաղով,
Ե՛վ կրկըրան ծիծաղով,
Որից նրանք ո՛չ հոգնում,
Ո՛չ կարող են հագենալ:

Ես հիանում-հրճվում եմ՝
Մինչև անգամ և անփամբույր մետաղով,
Եթե արդեն ադուծ կըտրած՝
Հալոցքի մեջ շեկ է նա,
Բայց և գիտես, մե՛կ է, նա
Ա՛յ-ա՛յ պիտի՝ կատու դարձած՝ լուռ հոսի,
Դառնա կալսիչ,
Տպագրիչ մեքենա,
Ինչպես նաև շքանշան հերոսի,
Նույնպես կնոջ ու հարսի
Կրքոտ վզնոց,
Փառավորվող լանջափակ,
Խանդոտ գոտու փակ ճարմանդ...

Ես հիանում-հրճվում եմ՝
Տարբեր վարքի
Ու բարքի տեր գետերի
Խելացնոր ու մարմանդ,
Լուրջ ու կայտառ հոսանքով՝
Ինչպես կանանց ոտերի
Կտկտացող նապանքով,
Որոնց հետքը փոշեթաթավ մայթերին
Շատ է նման ծանոթ կախման կետերի...

Ես հիանում-հրճվում եմ՝
Երկինք մաքրող որոտով,
Գառնուկների նոր հոտով
Կարկատանված արոտով,
Մինչև անգամ և սերմնաթափ առէջքով—
Միայն՝ տակը հող լինի,
Մինչև անգամ նաև լվի թռիչքով—
Միայն՝ թռի՛ք թող լինի...

Թե չեք հաշվի անհամեստ
Ու չեք գտնի անհարմար՝
Ինքըս ինձնից անջատվում
Ու հրճվում եմ մի քիչ նաև ինձանով՝
Երբ որ ինքըս ինձանից
Հոտն եմ առնում ինքնայրմա՛ն,
Սուրբ քըրտինքի՛,
Եռեփ եկող հնձանի՛...

27. V. 57
23. XI. 57
Մոսկվա

ԵՆԹԱԴՐՈՒՄ ԵՄ

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս շուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է:
Ես կարող եմ ենթադրել,
Թե հոյակապ ապարանք է այս խրճիթը:
Ես կարող եմ ենթադրել,
Թե այս ծուխը
Գոլորշացող քարածուխ է,
Եվ այս կարմիր ճոթը բարակ
Ոչ թե լաթ է, այլ բոց-կրակ...

Ես կարող եմ ենթադրել, թե ինձ մոտ ես,
Թեպետ և մեկ սար ու ձորեր են անջատում:
Ես կարող եմ ենթադրել,
Թե դու համեստ-սանչկոտ ես,
Մինչդեռ իրոք՝
Ինձ պարզապես չե՞ս նկատում...

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս քունը արթնություն է,
Եվ այն ծանոր պարտությունը
Չտեսնված հաղթություն է.
Թե այս տանձը... մեծ սափոր է,
Եվ հանդես է այս.. թափորը.
Թե այս լեռը... մի շուռ տրված հսկա փոս է
Եվ մի փոքրիկ ինքնահոս է
Իմ այն մատը,
Որ կոչվում է, կարծես, ճկույթ...

Ես կարող եմ ենթադրել,
Բայց ի՞նչ օգուտ...

25. V. 57
Մոսկվա

ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՄ

Խոստանում եմ
Լինել ո՛չ թե հարկհավաքը,
Այլ կավա՞կը
Դժվար դարի,
Ինչպես նրան՝ և ինքըս ինձ
Հավե՞տ մնալ հավատարիմ.—
Թեկուզ կրել և մահացու ցավը դարի,
Թեկուզ նույնիսկ կյանք արժենա դավը դարի,
Մեռնելիս էլ ո՛չ թե տանել,
Այլ կտակե՞լ լավը դարի.
Լինել բոցը նրա հրի,
Բերք հասցընող նրա տոթը,
Ո՛չ թե նրա անցնող քամին ու մոխիրը,
Լինել նրա ո՛չ չորացած,
Ո՛չ էլ անգամ կանաչ խոտը,
Որով սնվում,
Որին նաև կոխկըրտում է հոծ նախիրը.
Լինել նրա բո՞ւյրը, հո՛տը,
Հոտը,
որին
Ո՛չ մի սմբակ,
Ո՛չ մի կճղակ
Կամենա էլ՝ չի՞ տրորի...

Խոստանում եմ
Բաց ճակատով կուր չխփվել հաստ պատերին:
Ինչի՞ համար.
Էլի՞ պատը կմնա պատ,
Կպակասի մի լավ ճակատ:

Խոստանում եմ
Զբարձրանալ ու չքայլել ձիգ տարիներ
Իմ ոտերի

Խեղճ թաթերին:
Ինչի՞ համար.
Այն, որ չկա՝
Չի՞ երևա...

Համաձայն եմ, որ սագերը նկատելի
Ինչ-որ բանով ապգակից են և բադերին:
Բայց սագը՝ սագ,
Բադը բադ է:
Ինչո՞ւ խփվել պատեպատ էլ.
Մի՞թե աչքի արձակուրդ է
Կամ ուղեղի հանգստյան օր...

Լավ չէ՞ արդյոք ապաստանել հին լաթերին,
Քան նորաձև հագուստ կոչված այն անտերին,
Երբ որ մարդուն բարձրահասակ
Հագցընում են մանկան թասակ,
Մի համառոտ անդրավարտիք,
Քաղվածքի պես նեղ է գալիս և շապիկը,—
Ա՛յ շան որդիք,
Մա՞րդ ենք կոչվում,
Թե՞ կապիկ ենք...

Կարգ ու կանոն պահպանելու մտքից մղված՝
Ընդդեմ գոռոզ-անկարգապահ անհատների՝
Չե՛մ ստիպի ճնճղուկներին ու ծտերին
Աշնան վերջին չվել հարավ,—
Էհ, ի՞նչ դառավ.
Ծիտը ես եմ՝ չե՛մ կամենում...

Նաև պիտի ձեզ խոստանամ
Երբեք հոգով, ձեռքի նման, չկոշտանալ.
Թե շատ թանկ եմ ու շատ դժվար՝
Չէժանանալ ու հեշտանալ.
Խաբվածության խումից հետո
Ինչպես պետք է կգաստանալ

Ու դրանից չվշտանալ.
Չխստանալ հնապանդի, խոնարհի դեմ.
Հանգստանա՛լ,
Բայց ոչ երբեք այլոց մեջքին.
Ճամփա՛ բանալ
Եվ հույսի դո՛ւռ,
Դավադրությո՛ւն
Ու փակ աչքե՛ր.
Ցքնել-ջանալ՝
Ո՛չ թե փողով կամ պատվերով,
Այլ ակամա ինքն իրենից անջատվելով՝
Ինչպես հրից ջերմությունը...

Ի՞նչ խոստանամ.
Եթե լեռ եմ՝ դա՛շտ չեմ դառնա,
Ոխերիմ եմ՝ հա՛շտ չեմ դառնա,
Թե սրբության ավազան եմ՝
Ի՞նչ լվացքի— և խմորի՞ տաշտ չեմ դառնա...

Չե՛մ խոստանում,
Որովհետև համոզված եմ, հաստա՛տ գիտեմ,
Որ երբևէ կոխ չեմ բռնի կամ չեմ պարի
Ուրիշների դեռ նոր թաղած
Կամ չքաղած
Մարգերի մեջ ու բոստանում...

Չե՛մ խոստանում,
Որովհետև համոզված եմ, հաստա՛տ գիտեմ,
Որ ինձ նման մարդը երբեք
Չի կրպարտում — ամբաստանում
Անմեղ տեղը և ո՛չ մեկին,
Մինչև անգամ... մարդանման գինու տակի՞ն...

Բայց, ա՛յ, խնդրե՛մ,
Խոստանում եմ պարապ մնալ
Եվ կամ տրվել խաղ ու պարի,

Քան թե դառնալ ագիտատոր
Վնասակար գաղափարի:

Խոստանում եմ վրկվել նաև
Սուրբ անունից ուղղափառի,
Քան թե կոլցնել ոտքերիս տակ
Մարդկայնության հողը բարի:

Եթե անգամ դառնալ թռչուն՝
Բուի՛ նման, չղջիկի՛ պես
Ապրել թեկուզ մթին որջում,
Քան թե դառնալ սիրված... թութակ:

Ո՛չ մեղ դրեք,
Ո՛չ հանձնեք հիմար կատակ.
Որովհետև շա՛տ են խաբել միամիտիս
(Լավերն անգամ վատացել են),
Որովհետև երկրի վրա
Դրամանենց մարդիկ այնքա՛ն շատացել են՝
Ստիպված եմ ոսկին փորձել,
Ատամներո՛վ ոսկին կրծել,
Նույնիսկ ոսկի՛ն,
Էլ ո՛ւր մնաց թե հավատամ
Դեռ ոսկու տեղ ծախվող խոսքին...

Հանդիսավոր խոսք եմ տալիս
Քեզ ուրագե՛լ
Ու կացինե՛լ,
Տմարդությո՛ւն,
Իսկ քեզանով, ճշմարտությո՛ւն,
Իսկ քեզանով սի՛րտ վարակել,
Անձրև ու ջուր թե բարակեն՝
Եվ իմ արյա՛մբ քեզ ոռոգել —
Վերստեղծել ու նորոգել...

Խոստանում եմ
Ոմանց նման իզուր տեղը չխոստանալ...

20—21. VI. 57
Մոսկվա

ԿԱՐԴՈՒՄ ԵՄ

Ես կարդում եմ և... հասկանում,
Որ թեպետ և ինձ հերոսի տեղ եմ դնում,
Բայց շատ հաճախ նրա ճամփից շեղ եմ գնում,—
Նա խիզախ է, իսկ ես՝ զգույշ,
Նա գործում է, ես՝ լոկ զգում,
Նա կարող է, թե տեղը գա,
Եվ զո՛հ գնալ, անվախ մեռնե՛լ,
Իսկ ես՝ նրան... լա՛վ ըմբռնել,
Բայց ո՛չ նրա ճամփան բռնել...

Հեշտ է, գուցե, գրքեր գրե՛լ՝ ո՛չ թե կարդալ...

17. VI. 57
Մոսկվա

ԾԱԽՈՒՄ-ԱՌՆՈՒՄ-ԲԱՇԽՈՒՄ ԵՄ

Թե ավելորդ գորով ունեք՝
Տարեք շուկա՛,
Ես ծախո՛ղ եմ, ո՛չ թե առնող:

Թե ավելորդ կորով ունեք՝
Ես կամ ու կամ,
Էլ ինձնից էլ լավ ձեռք բռնո՞ղ:

Խե՞լք եք ծախում՝
Առնողը չեմ,
Թե գինն անգամ ջրի գին է,—
Հաջողությա՛ն համն եմ անգամ ես մոռացել,
Ահա թե ի՞նչ:

Ելք չե՞ք ծախում՝
Հապա՛ր ափսոս,
Թե չէ մուտքը իմ կողքին է,
Չի պահանջվում և մուտքի տոմս—
Քիչ է մնում քաշեն թևից:

Ինչի՞ս է պետք և ձեր երգը,
Առնող ճարեք՝ ինքըս ծախեմ:
Դահլիճ լինի կամ լսարան՝
Այդ ուրի՛շ բան,
Կառնեմ ե՞ս էլ:

Ինչի՞ս է պետք ձեր տարերքը,
Փոխող բերեք՝ ինքըս փոխեմ:
Հանգի՞ստ փոխեմ իմ տարերքի գոնե կեսը:

Ո՞վ է այնտեղ համարյա թե ձրի ծախում նահանջ: Ունե՛մ:
Ինձ հարձակման թափ էլ պետք չէ:—
Ճարպկությա՛ն պահանջ ունեմ...

Ո՞վ է այնտեղ ներկեր ծախում,—
Ներկարա՞ր եմ ու նախշո՞ւմ եմ...

....Եվ շատ բաներ,
Որ չեն ծախվում ու չեն առնում,
Ես բաշխո՛ւմ եմ:

Ես բաշխում եմ ակնարկության անցագրեր,
Սակայն ո՛չ թե «մի անգամվա»,
Այլ «մշտական»՝ միանգամայն:

Ես բաշխում եմ հանդգնությո՛ւն,
Ո՛չ ճգնություն
Անպորության փակ շրջանում,
Եվ ո՛չ մտքի մթագնություն,
Այլ տքնությո՛ւն,
Որ թռիչքով է վերջանում:

Գութ ու խղճից զրկվածներին՝
Մինչև անգամ ո՛չ խղճի խայթ,
Ողորմաբար խի՛ղճ եմ տալիս.

Ո՛չ թե դեմքի ծամածռանք,
Այլ օգնություն աղերսելու ճիչ եմ տալիս՝
Ցավածներին,
Անմահություն՝
Զոհվածներին,
Ծլարձակում՝
Բովվածներին,
Անդավաճան ընկերություն՝
դավվածներին,

Բարի գալուստ՝
չվածներին...

Համակրությո՞ւն է հարկա՝ լոր բարի գործին,
Եվ մաքրությո՞ւն է հարկավոր միտք ու հոգու,—
Թեկուզ մտքո՛վ, նույնիսկ հոգո՛վ լոկ կամեցեք
Եվ... մի՛ քաշվեք-կարկամեցեք,

Մո՛տ համեցեք...
Ես ծախում եմ, նաև առնում
Եվ, հույս ունեմ, ինձ չեք խառնում
Զարաշահող չարչիներին,
Թե չէ, գիտե՞ք, ո՛չ թե աստված,
Զարչինե՛րն էլ ձեզ չեն ների...

4—5. VI. 57
Մոսկվա

ԳԺՎՈՒՄ ԵՄ

Եվ ինձ լսելով՝
Կարող են ասել.
«Գժվե՞լ է, ի՞նչ է».
Իսկ ես էլ կասեմ.
«Այո՛, գժվե՛լ եմ,
Ինչո՞ւ չգժվել»:

Իսկ գժվելով չե՞ն սիրում ու ատում:
Իսկ գժվելուց չէ՞ փայտը ճարճատում:
Առանց գժվելու՝ չկա՛ շահած մարտ:
Առանց գժվելու՝ չե՞ն ծնի նոր մարդ:
Մինչև չգժվի՝ ջուրը չի՛ եռա,
Կեղև չի պատռի հատիկը նռան:
Ծառե՞րն են փթթում՝
Գժվա՛ծ են անշուշտ:
Երկի՞րն է պտտում՝
Գժվա՛ծ է անշուշտ...

Սերմերը մինչև կարգին չգժվեն՝
Բե՛րք չեն դառնալու:
Թաթերը մինչև կարգին չգժվեն՝
Ճե՛ռք չեն դառնալու:

Բառերն էլ մինչև կարգին չգժվեն՝
Ե՛րգ չեն դառնալու...

Ա՛խ, ուր էր թե ես միշտ գի՛ժ լինեի...

1. X. 61
Երևան

ԴԻՄՈՒՄ ԵՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՊԵՍ

Դո՜ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,
Իբրև պատասխան նրանց սրսըփուն ակնկալիքի.
Դո՜ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոջուն կանչով,
Իբրև պատասխան նրանց կարիքի.
Դո՜ւ, որ ոտներդդ խճողել ես դեռ անցյալի ցանցով,
Մինչդեռ ձեռքերդդ մեկնել ես արդեն կանչող գալիքի՝,—
Արի՜, Նո՜ր Տարի,
Գալուստդդ բարի՜:

Արի՜, Նո՜ր Տարի,
Բայց... այնպե՜ս արի,
Որ ատոմական այս ահեղ դարի
Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի
Մայրացած հարսի սրտատրոփի համաչափությամբ,
Եվ նրա անտես սլաքները կույգ
Իրենց վիրավոր թևաթափությամբ
Ոչ թե մեկ կրկին
Քարանձավների անաչ խոռոչը մատնացույց անեն,
Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին
Մեր կույգ աչքերի հայացքը տանեն...

Արի՜, Նո՜ր Տարի,
Բայց... այնպե՜ս արի,
Որ ավելանա աշխարհի բարին,
Եվ այդ աշխարհի բախտի վրայով
Խնորեն ձգված մետաղալարին
Լարախաղացի ծպտված տեսքով Չա՜ը չպարի՝
Ողջ մարդկությանը դնելով ծանոթ ծաղրածուի տեղ...

Զյունն է վար իջնում
Ու դածկում մայթեր, ծառեր ու թիթեղ:
Իսկ ուրիշ մի տեղ
Անձրևն է կրկին

Երկինք ու երկիր մեկմեկու հինում,
Կարծես թե հսկա տավիղ է շինում,
Որի հոսանուտ լարերի վրա
Իրիկնամուտի տավղահար քամին
Մրսած մատներով
Պիտի նվագի հինավուրց տաղեր՝
Ի վերա սիրո,
Վասն խնդության,
Վասն մարդկային ոգու խենթության:

Անձրևի տեսքով,
Զյան կերպարանքով
Այդ դու ես գալիս:
Արի՜, Նո՜ր Տարի,
Գալուստդ բարի՜:
Բայց... այնպե՜ս արի,
Որ անձրևը հորդ սրբելով տանի
Ոչ միայն կեղտը հոգնած մայթերի,
Այլ նաև փոշին ու մուրը հոգու,
Այլև խավար խոհ ու խարդախ խոկում,
Եվ ձյունը իջնի որոգայթների՜,
Ծանրը ամոթից շիկնած այտերի՜,
Ուրացումներից դեղնած-ժանգոտած սրտերի՜ վրա
Եվ իր այդ ճերմակ բարությամբ շոայլ
Մարդուն մարդու դեմ պարզերե՜ս անի...

Արի՜, Նո՜ր Տարի,
Բայց այսպե՜ս արի,
Եվ ոչ թե այնպե՜ս, որ ձյունը ճերմակ
Դառնա վարակի սավան ու վերմակ,
Եվ որ անձրևի ջուրն աստվածային
Մարդու արյունը ջրի վերածի,
Ու ճառագա՜յթը, ճառագա՜յթն անբիծ
Սկըրտվի իբրև մի ահեղ ու պիղծ
Նոր հիվանդության դիվային անուն,
Որից մինչև իսկ մահն է մահանում...

Արի՜, Նո՛ր Տարի,
Գալուստդ բարի՜:
Եվ արթնացրո՛ւ քո թնդուն քայլքով
Ուշ մնացածին,
Քնով տարվածին.
Տո՛ւր ապաքինում հոգով ցավածին,
Հիասթափվածին՝ նոր մի հիացում,
Սիրասթափվածին՝ մի նոր միացում.
Ձեռքից հավատը փախուստ տվածին,
Իբրև Նոր Տարվա բաղձալի նվեր,
Տո՛ւր նոր հավատի կապակուռ թևեր,
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,
Մեծին՝ մանուկի անարատություն,
Տափարակներին՝ Արարատություն,
Իսկ Երկրագնդին՝ մի առատություն,
Որ նրա վրա Քաղցը այսուհետ
Չունենա ո՛չ մի կայսրություն ու գահ,
Ու սարսափն իրեն թագակիր չկգա.
Որ Ապատությունն իր բառե գունեղ շապիկը ճեղքած
Տրվի ճախրանքի,
Ու Մարդն ապատվի իր նին գերության նոր հաճախանքից,
Ու Մարդն այսուհետ ո՛չ մի տեղ երբեք չգունավորվի.
Եվ որ այլևս ո՛չ մի ժողովուրդ,
Ո՛չ մի ապգ ու ցեղ
Պատմության քափից ու սև մրուրից չթունավորվի,
Դառնա լիապո՛ր, դառնա լիիրա՛վ,—
Ու մենք, վերջապե՛ս, հասկանա՛նք իրար.
Ամենքըս, բա՛վ է, հասկանա՛նք իրար:
Նաև հասկանա՛նք,
Որ մեր իսկ արյան գնդիկը մանը
Այս Երկիր կոչված գնդից ավելի մեծ է ու ծանը...

5. I. 63
Երևան

ԱՐԴԱՐԱՑՆՈՒՄ ԵՄ

Արդարացնում եմ
Այս երկինք կոչված հրա՜չք սիրունի,
Հրա՜շք սիրունի
Հիմար թվացող անտերությունը
Եվ ա՛յն,
Որ աստղե իր խալերի հետ
Նա դեմքը ծածկող սև ամպեր ունի:

Արդարացնում եմ
Եվ անծիր ծովի ա՛յն թերությունը,
Որ... ափեր ունի:

20. VI. 57
20. XI. 57
Մոսկվա

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Հաճախ սիրում եմ,
Երբ մարդկայնորեն սիրտըս գերում են:

Հաճախ լռում եմ,
Երբ ճիշտ ասածըս դիտմամբ ծռում են:

Նաև խղճում եմ,
Եթե կղջում են:

Հիասթափվում եմ.
Եթե խաբվում եմ:

Նաև ատում եմ,
Եթե ստում են:

Բայց ամենի՛ց խոր
Ես հավատո՛ւմ եմ:

Ո՛չ միայն գիտեմ.
Ես հավատո՛ւմ եմ
Երկնի բացխուփիկ քողարկությանը,
Օվկիանոսների հավերժ կրկընվող խաղարկությանը,
Հավք ու թռչունի անբեկանելի ձվարկությանը:

Ո՛չ միայն գիտեմ.
Ես հավատո՛ւմ եմ,
Որ անհնար է արևը բանտել,
Երկնակամարի կարդերը քանդել,
Խմորի ՝ման հունցել ու գնդել
Կապույտը ծովի,
Ատելի լուսնին բռնել վռնդել
Երկրնքից ծավի...

Ինչո՞ւ թաքցրնեմ,
Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն:
Ի՞նչ ասես չկա նրա փակ սրտում:

Գիտի կործանե՛լ,
Բայց և... գո՞րծ անել,
Մատնություն գրած նո՛ւյն իր ձեռքերով՝
Աշխարհը լցնել շռայլ բերքերով:

Նո՛ւյն այդ ձեռքերով՝
Ե՛վ ճրագ մարել,
Ե՛վ խարույկ վառել:

Նո՛ւյն այդ ձեռքերով՝
Ե՛վ դանակ խրել,
Ե՛վ վեպեր գրել:

Նա գիտի կարկե՛լ
Ու կրկե՛լ գիտի,
Բայց գիտի գրկե՛լ
Ու փրկե՛լ գիտի:

Նա գիտի կեղծե՛լ
Ու սրբապղծե՛լ,
Առավել ևս՝
Գիտի ստեղծե՛լ:
Ես նրան հաճախ դատափետում եմ,
Երբեմըն նրան նույնիսկ ատում եմ,
Բայց, ամենից շատ, խոր հավատո՛ւմ եմ:

Ես հավատում եմ նրա բնության ո՛չ թերությանը՝
Ստորությա՛նը
Ու չարությա՛նը,
Այլ խորությա՛նը
Ու բարությա՛նը.
Ո՛չ ծերությանը,

Այլ նորությա՞նը՝
Զավակի տեսքով անվերջ կրկընվող այդ հարությանը,—

Ես հավատում եմ կենդանի մարդուն,
Առավել՝ նրա ծնվելիք որդուն:

Ես հավատում եմ նրա անուրջին.
Նա որտեղ որ է Մարս էլ կթռչի,—
Նոր է սկըսում տիեզերական ճամփորդությունը:
Եվ Վեներայի լանջին կկառչի,—
Ես գրտեմ նրա տղամարդկային շանորդությունը..

Ես հավատում եմ նրա ծով խելքին
Եվ նույնիսկ՝ նրա հոտառությանը,
Ամե՞ն ինչ տեսնող աչքերի ցոլքին
Եվ նույնիսկ՝ նրանց մթարությանը:
Ես հավատում եմ նրա մատների
Հար անհատնելի
ճարտարությանը,
Նրա ոտների
արդարությանը.
Մինչև իսկ եթե ճամփից էլ հանեն՝
Էլի՞ ճար կանեն,
Տե՛ղ կհասցընեն...

Ես հավատում եմ հավատի՞ն մարդու՝
Իմ ա՛յս հավատին...

2. VI. 57
Մոսկվա

ՏԽՐՈՒՄ ԵՄ

Հոգուս վրա տխրություն է հաճախ թառուս,
Երբ թաց աչքնան չոր խաշամն է ծածկում առուն,
Չոր խոտի հետ երբ այրվում է թուփը կանաչ,
Երբ մենք՝ հիմար տղամարդիկ, չենք նկատում ապնիվ
կանանց,
Ու երբ գուսան-չալ կաքավն է ընկնում վանդակ,
Իսկ երգ ատող,
Նվագ հատող
Մարդը դառնում... մեկենասի ձուլված քանդակ...

Ես, սրտիս տեղ, իմ կրծքի տակ
Տխուրաչյա մի կաքավ եմ հաճախ կգում...

27. V. 57
Մոսկվա

ՄԽԻԹԱՐՈՒՄ ԵՄ

Մխիթարեմ՝
Թե ինքնատիպ ու չընդունված բանաստեղծին
Երախտապարտ որդիներով ու թոռներով
Եվ հետմահու հատորներով,
Ապա տափակ ու միջակին,
Ե՛վս առավել պատեհապաշտ բութ գրչակին՝
Ա՛յն պարտադիր հաչողությամբ,
Որ և՛ ունի, և՛ կունենա՝
Ողջ է քանի
Ու կենդանի:

Եվ ծերացած այն ամուրուն,
Որին ոչ ոք օր ծերության
Չի փայփայում ու գուրգուրում,
Խաբեմ ես այն սփոփանքով,
Որ... չի կապվել նա երբևէ
Լաչառ կնոջ պինդ կապանքով...

Ում մերժել է իր դրացի
Հոգի հանող
Ու խելք տանող
աղջիկը չար,
Ես այն մտքով չեմ սփոփում,
Թե չի վարվել այդ դրացին
արդարացի:
Ես մերժվածին սփոփում եմ լոկ այն դողով,
Որ... չի ապրել նա առավել ահավորը,
Գիտե՞ք որը.
Դավաճանելն ու խաբելը իր սիրածի...

Անբա՞խտ իմ քույր,
Ո՛վ չբեր կին,
Անբուժելի քո այդ վերքին
Ես ո՞րտեղից, ի՞նչ դեղ ճարեմ,
Ես քեզ ինչո՞վ մխիթարեմ:
Մխիթարեմ ա՛յն սարսափով,
Որ չես ապրել որդեկորույս մոր կսկիծը,
Երբ պոկում են կարծես սիրտդ խեղճ կրծքիցդ...

Նաև մի քիչ լինեմ բարի
Եվ սարն ի վար ցած գլորվող-ջարդվող քարին
Մխիթարեմ այն թռիչքով և անկումով,
Որ վայել է և... հանճարին:

Ընդհատակում, հոգու խորքում
Զգույշ տարվող թույլ պայքարին
Մխիթարեմ նոր ուժերի հավաքումով:

Հարբուխ ընկած—մրսած չարին
Մխիթարեմ և... թոքերի բորբոքումով:

Արձագանքով մխիթարեմ հանդիր սարին:

Գոլորշացող-ցնդող ջրին,
մարող հրին
Մխիթարեմ այն օրենքով, որ բարությամբ
Սահմանել է ինչ-որ ծերուկ Լառւապե.
Հարատևել ա՛յլ դրությամբ,
Ո՛չ մի չափով չնվազել...

Ուղղագրական նոր օրենքով
Գործածումից հանված տառին
Մխիթարեմ այն տանջանքով,
Որ տարիներ, ձի՞գ տարիներ
Պատճառել է ծեր ու մանկան:

Մխիթարեմ հատվող լարին
Ա՛յն ճնգոցով, որ կարող է նա՛ արձակել,
Ուրիշ և ո՛չ, և ո՛չ մի լար՝
թե նվագեն
Վարպետ-ճարտար մատներն անգամ...

Իպուր անցած գոռ պայքարին
Մխիթարեմ իրեն ծնող
Ու կործանող
պատճառներով:

Հերքված աստծուն խեղճ ու բարի՝
Հավար ու մի շեն ու ավեր տաճարներով:

Եվ, վերջապես,
Ծով արյունով թրջված դարին
Մխիթարեմ
Այն հալատի ավետիքով (թե՞ չար բոթով),
Որ արյունն այդ կցամաքի
Թղթերի մեջ, թանաքի հետ...

Իսկ ի՞նձ...
Ինչով ի՞նձ սփոփեմ,
Մխիթարե՞մ, ո՛չ թե խաբեմ:

Այն կնո՞ջ պես ինձ սփոփեմ,
Որին
միշտ էլ երբ օրհնում են ավանդաբար,
Նույն հին բարի խոսքն են ասում.
«Աստվա՛ծ պահի գլխավորիդ»:
Իսկ խեղճ կինը, թե չամաչեր,
Երինջի պես կբառաչեր.
«Թաղե՛մ էդպես գլխավորին».
Որովհետև գլխավորը՝
Այդ անհոգի բեղավորը,
Նրան ծեծում ու տանջում է ամեն վայրկյան՝

Չհարցնելով անմե՞ղ է, թե՞ մեղավոր է.
Այն էլ այնպե՛ս,
որ անհոգի
Ճիպոտը միշտ կամրջվում է
Իր մի ծայրով կնոջ այտին, մեկով՝ հոնքին,—
Եվ խեղճ կինը ցավից լալիս,
Բայց և աստծուն փառք է տալիս,
Որ... գեթ ա՛չքը չկուրացավ ծեծ ուտելիս...

Մխիթարվեմ այն հավատի իրողությամբ,
Որ ես ինքըս տղամարդ եմ և ոչ թե կին,
Եվ իմ ապրած ժամանակը՝
Արտասվո՛ր
Եվ
Լուսավո՛ր՝
Ո՛չ մի բանով չի նմանվում
Այդ նկովյալ ժամանակին...

19, 21—22. VI. 57
Մոսկվա

ԽԱՆԴՈՒՄ ԵՄ

Ես խանդո՞ւմ եմ:

Անկեղծ ասած, թե ամոթ չէ,
Ինձ շատ ծանոթ և շատ մոտ չէ
Այդ ահավոր խանդ կոչվածը.
Իմ մեջ, գուցե, բնությունից
Ինչ-որ մի բան անտեսված է,
Ուրիշ մի բան՝ տնտեսված է:

Ընդամենը գիտեմ լոկ այն,
Որ ես այնտեղ, որտեղ մարդիկ
Հավանաբար և խանդում են,
Բարկանում եմ— ոչ տևական,
Քմծիծաղում — անբավական.
Կամ ծիծաղում — անբնական,
Եվ... եղածը ես քանդում եմ:

Մեր խորտակված սերը վկա...

19. XI. 57
Մոսկվա

ԴԱՌՆՈՒՄ ԵՄ

Եթե դառնայի նույնիսկ սրցարան՝
Ես չէի թողնի,
Որ կեղծավորը հաղթի շիտակին,
Ճառող թերուսը՝ խորհուն գիտակին:

Եթե դառնայի նույնիսկ թրծարան
Ու սուտ թրծեի հարկադրաբար՝
Բոլո՞ր ստերը մեկ-մեկ ճաքեին,
Հակառակ դեպքում՝ դուրը փակեի:

Ու եթե նույնիսկ դիահերձարան՝
Վերստի՞ն սուտը,
Մե՞ծ հաջողությամբ տարածվող սուտը
Ես կհերձեի,
Որ մի փորձեի՝
Ինչպես խելացի երեխան ինքը
Քանդում-ջարդում է իր խաղալիքը,
Որպեսզի տեսնի, նաև հասկանա՝
Ինչո՞ւմն է բանը և բանալիքը...
Ու երանի՜ թե
Խաղալիքի պես սուտն էլ փչանար,
Եվ չգտնվեր ո՛չ սարքող վարպետ,
Ո՛չ էլ գործարան...

Դառնայի մառան՝
Չէի ցանկանա մի խորշում պահել
Քծնանքի թթու և կամ թե քացախ,
Որ ախորժակ են գրգռում հաճախ,
Շատերիս նույնիսկ շատ դուր են գալիս,

Բայց ստամոքսը ակնիվ է, եթե
Միշտ ետ է տալիս...

Ու եթե խարան՝
Ես չէի ջնջվի այն սուտ-սուրբ աջից,
Որ բոլո՛ր նրանց գամում է խաչի,
Ովքեր մտքի մեջ,
Մտքի՛ մեջ անգամ
Ուզում են խույս տալ հարկադիր պաչից...

Ու եթե շարան՝
Չդառնամ շարան
Կեղծ հարցադրման,
Այլ մեղադրմա՛ն.
Եվ ոչ թե ինչ-որ հիմար ցույցերի,
Այլ մեղադրման ապացույցերի՛...

Ու եթե բերան՝
Ո՛չ խաբեբաի,
Այլ երևույթի՛,
Ո՛չ թե անտարբեր մի դասախոսի,
Այլ դատախազի՛.
Ո՛չ թե ստոթող մի խեղճ տատիկի,
Այլ մունետիկի՛...

Դառնալի պարան՝
Եթե ոչ լաստի
Կամ առագաստի,
Եթե ոչ պարկվող սուրբ դրոշակի,
Ապա ոչ ձեռքում և հրոսակի,
Որ նա դրանով ոտք ու ձեռք կծկի:
Ավելի լավ է այդ դեպքում արդեն
Գեթ պարան դառնալ... թեկուզ լվացքի՛...

Ու եթե իրան՝
Ո՛չ թե աջ ու ձախ անվերջ ճկվողի,

Այլ պատվախնդիր հպարտ աղջկա՛
Եվ ա՛յն կտրիճի, որին՝ բարդու պես՝
Հատվել-փռվել կա,
Բայց ծռվել չկա՛...

Ու եթե կռան՝
Ո՛չ մարդկանց գլխին,
Այլ դարբնի՛ ձեռքում...

Ու եթե դռան հուսալի կողպեք՝
Պահեստի՛ վրա,
Որ բարիքը գա բարիքին դիպվի,
Պահեստի՛ վրա,
Եվ ո՛չ թե լեզվի...

Դիցուք, թե նաև դառնում եմ մի օր
Բանաստեղծության օրենսդիր մի նոր
Եվ... գիտե՞ք արդյոք, թե ինչ եմ անում.
Ա՞յս եմ հավանում,
Այն չե՞մ հավանում:
Չէ՛, թույլ ես տալիս,
Երբ տեղն է գալիս,
Բանաստեղծները բանաստեղծելիս
(Ոչ կիպի-բիպի բան ստեղծելիս)
Չափածո խոսքում երբեք չգրված,
Կոպիտ հանարվող,
Նույնիսկ արգելված
Բառեր ու խոսքեր թող օգտագործե՛ն,
Թո՛ղ չկարկամեն, թո՛ղ վստահ փորձեն:

— Օրենքներ չկա՛ն, կա լոկ իրավո՛ւնք...

15. VI. 57
Մոսկվա

ԶԱՐՄԱՑՆՈՒՄ ԵՄ

Ահավասիկ այս խնձորը՝
Մեղրաձորը,
Կամ այս դեղձը՝
Անձեռակերտ-անստեղծը...

Սա մի պատառ կերպափոխված արեգակ է.
Զովություն է այստեղ դարձել նրա տաքը,
Հոսուն հուրը ստացել է մի հստակ ձև,
Շողն ու լույսը փոխվել գույնի, համ ստացել:
Եվ այս՝ գիտե՞ք ինչի՛ համար,
Միայն նրա՛, որ մեկ համար
Արեգակը դառնա հարմար.
Որ այս դեղձը պոկենք հիմա,
Աղվամազոտ դունչը շոյենք,
Այս խնձորով նախ հիանանք՝
Ա՛յս կողմ շուռ տանք,
Ա՛յն կողմ շրջենք
Եվ— թե հանկարծ սրտներս ուզի—
Ոչ այս-ոչ այն՝ բռնենք կրծենք:

Տարօրինակ բան չեք կարծո՞ւմ,
Որ արև է մարդը կրծում...

20. XI. 57
Մոսկվա

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ

Աղաչում եմ.—
Մի՛ վրդովվեք, եթե ասեն
Փառասերին հենց փառասե՛ր,
Ո՛չ թե համեստ.
Սրիկային՝ հենց սրիկա՛,
Ո՛չ թե ապնիվ.
Հեռակային՝ հենց հեռակա՛,
Ո՛չ թե ներկա...

Աղաչում եմ.—
Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից.
Անկեղծ խոսքը չի սպանում,
Փակ խոցեր է միայն բանում:

Թե սոված եք և երեխա՝
Մի՛ վախեցեք լաց լինելուց.
Դե՞հ, քանի դեռ նա չի լալիս՝
Ծիծ չե՞ն տալիս:

Մի՛ վախեցեք
Ժանգոտ թասից ժանգ քերելուց.
Նա դրանից չի փչանա:

Մի՛ վախեցեք
Կեղծի մասին ճիշտ գրելուց.
Նա դրանից կքչանա:

Աղաչում եմ.—
Եվ թվաբա՞ն եղեք մի քիչ,
Բայց պայմանով այս ամոքիչ.

Ո՛չ թե ճշտին սուտ գումարեք,
Այլ բաժանեք սուտը ճշտին.
Ո՛չ թե վշտին գութ գումարեք,
Այլ բաժանեք գութը վշտին:
Եվ պարծեցեք ո՛չ թե հարցով.
Հպարտացեք լոկ լուծումո՛վ՝
Փակագրծի ճիշտ բացումով,
Մնացորդով
Ու քանորդով...

Աղաչում եմ.—
Եղեք նաև քիչ հոգեբան.

Եթե որդին տրտում երգով
Իր ծնողի մահն է սգում,
Աղաչում եմ, մի՛ ընդհատեք,
Ի՞նչ է թե նա... լա՛վ չի երգում...

Աղաչում եմ.—
Այս և նման այլ հարցերում
Երբևիցե ինձ չաղաչե՛լ...

9—10. VI. 57
Մոսկվա

ԵՐԿՄՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

— «Լինե՞լ-չլինե՞լ,— այս է խնդիրը»...

Եթե վառվում է մորըդ թոնդիրը,
Հայրենի ծուխը երդից փնչում է,
Էլ ի՞նչ խնդիր է.
Ուրեմըն՝ լինե՛լ:

Թե տապալվում է չար հարձակումը,
Թե անխուսափ է ծլարձակումը,
Թե հարկավոր է նոր աղաց շինել,
Ուրեմըն՝ լինե՛լ:
Եթե բակմական,
Թեկուզև դաժան
Գայաններն անգամ մնում են գալսն,
Ոչ թե օրեցօր դառնում ընտանի.
Եթե վերստին աղջիկ-ոպատանի
Ի՞նչ էլ որ լինի՝ սիրահարվում են,
Իրար ձեռք բռնում, իրար փարվում են,
Կազմում ընտանիք.
Եթե մայրական կաթից ուռչում են
Նորահարսների կանգուն ծոցերը,
Եվ կենդանության կայտառ բոցերը
Ու կյանքի ծուխը նորից փնչում են,—
Էլ ինչո՞ւ ինչ-որ խնդիր հորինել,
Նախորոշված է երբ նախընտիրը:

Ի՞նչ էլ որ լինի՝ անպատճառ լինե՛լ,—
Եթե խնդիր կա՝ այս է խնդիրը...

28. V. 57
26. XI. 57
Մոսկվա

ՈՂԲՈՒՄ ԵՄ

Ողբամ վաղամեռ մինուճար որդուն,
Առավել՝ նրա խեղճ մորը տրտում,
Եվ որդեկորույս ամրից առավել՝
Վա՜յ տամ ու ողբամ այն թշվառ մարդուն,
Որ հավա՜տ ուներ — և ծովածավա՜լ,
Եվ հիմա չունի՜,
Մի՜ կաթիլ չունի...

Ստիպողական ժպիտով ողբամ,
Հարգանքով ողբամ, թե հարկադիր է,
Թե աղբյուրի պես սրտից չի բխում,
Այլ լիմոնի պես քամվում է վախից...

Եվ դողը ողբամ,
Եթե չի ծնվում նա ակնածանքից
Եվ կամ թե սրտում այն դեռահասի,
Որ իր կյանքի մեջ առաջի՜ն անգամ
Ծրար է բացում՝
Սիրային նամա՜կ:
Ա՜յն դողը ողբամ,
Որ կոռով-շառով որդեգրվում է,
Եվ կնքահայր է դառնում Երկյուղը,
Եվ կնքամայր է դառնում Սարսափը...

Քե՜զ ողբամ, աստվա՜ծ,
Եթե սուտ ես դու:
Ողբամ, սո՜ւտ, և քե՜զ,
Եթե քո հագին
Դու ճշմարտության քղամիդ ունես.

Եվ քե՜զ, քղամի՜դ,
Թե ուս ես ծածկում և ոչ թե քամակ...

Հիասթափությո՜ւն, քե՜զ ողբամ նաև,
Եթե գալիս ես և էլ չես գնում,
Ինչպես չի գնում հյուրը անտես:
Ողբամ և հյուրին, որ տանն օտարի
Իրեն պահում է տանտիրոջ նման,
Եվ տանտիրոջը՝ թե չի վռնդում,
Նրան թողնում է կնոջ հետ մենակ,
Աչքը դո՜ւրս կնոջ,
Որ շատ է սիրում արցունքով կինվել:
Արցունքն էլ ողբամ,
Եթե արցունքը՝ ցավը մեղմելով՝
Եվ քենն է փոխում հնազանդության.
Թող քենը գործե՜ր...

Վայ տամ ա՜յն գանգին,
Ուր ձմեռում է խելքը՝ արջի պես.
Նաև ա՜յն գանգին,
Որ ուսին դրված կաղամբ է ասես,
Եվ այդ կաղամբը այնտեղ է հասել,
Որ՝ օգտվելով նմանությունից՝
Իրեն վիթխարի վարդ է հռչակում
Ու դեռ սոխա՜կ է պահանջում նաև,
Եվ հարցնող չկա,
Թե ո՞ւր է գույնը,
Բուրմո՞ւնքդ ուր է...

Ճիշտ այսպես՝
Նաև վայ տամ տականքի՜ն,
Որ իրեն յուղից թանկ է համարում
Լոկ այն պատճառով,
Որ... ծանր է յուղից.
Ա՜յն արձագանքին,

Որ հոգնած «մեռա»-ն
Դարձնում է «ուռռա՛»....

Ճիշտ այսպես՝
Պիտի այն ցա՛նկը ողբամ,
Որ միայն ինքն է մնացել գրքից.
Այն վա՛նքը ողբամ,
Որ վեր է ածվել բողկի պահեստի.
Այն վա՛նկը ողբամ, այն վա՛նկը, որին
Զրկում են միա՛կ իր ձայնավորից.
Նաև հավանգը,
Թե հավանգի մեջ լոկ ջուր են ծեծում.
Նաև սահանքը,
Եթե սահանքը... խելագարվել է՝
Բռնել է գրապ
Նույնիսկ ձկներին խեղդամահ անել,
Բռնել է գրապ
Եվ մտադիր է գրապը տանե՛լ...

Եվ ողբամ նաև...
Ինքս ի՛նձ ողբամ,
Թե այսպես պիտի ողբամ — վայ կանչեմ
Եվ իսուր տեղը ինքս ինձ տանջեմ...

3. VI. 57
Մոսկվա

ՀՐԱՎԻՐՈՒՄ — ՈՒՐԱԽԱՆՈՒՄ ԵՄ

Եկե՛ք, խնդրեմ, եկե՛ք այսօր ու դարձեք ինձ սեղանակից՝
Օգտվելով իմ այսօրվա բարենպաստ եղանակից:
Եկե՛ք այսօր ուպածիս պես ուրախանանք, ուտենք խմենք,
Չէ՞ որ նորից
Էլ մեր մորից
Չենք ծնվի մենք:

Թող գան, խնդրե՛մ, բոլո՛ր նրանք, ովքեր գիտեն
Փայլատակել կարմիր գինու թնդությունից.
Ուրախանալ և օտարի՛ խնդությունից,
Ովքեր գիտեն վիշտ ու ցավը ետ վանելու,
Կյանքում լավը և առողջը հավանելու,
Գեղեցիկը ու վսեմը դավանելու
հարգն
ու
կարգը.
Ովքեր գիտեն նաև իրենց բերնի համը,
Թող չուշանա՛ն, թող շտապե՛ն, քանի որ դեռ
Գինի-օղին փակ շշերից դուրս չի հորդել,
Եվ չի հասել խորոված ի
ժամն
ու
դամը:

Թող մոտենա իմ սեղանին
Նա՛, ում ձեռքը կոշտացել է
Մուրճից, բահից ու եղանից.
Ով տանջանքից կշտացել է
Ու փնտրում է սպեղանի.
Ով կրում է խոցերն անանց

Աղջիկների ու գեղանի
հարս ու կանանց:

Նա կգտնի այստեղ նրա՛նց.
Ովքեր գիտեն երգել-պարել.
Գրկել-փարել,
Գերել-սիրել,
Ինչպես նաև հյուրասիրել
Ունեցածը լավ ծախսելով,
Ոչ թե կիտված կոպեկներին
Հավի նման լուռ թխսելով:

Բայց ո՛չ.
այսօր
Ես կանչում եմ նաև նրա՛նց՝
Եվ այդ կիսատ-պռատներին,
Այդ ձեռը փակ-ժլատներին:
Թող գան, մարդկանց շարքը դասվեն,
Թե կարող են՝
Իրենց հիմար արատներից
Թող ամաչեն ու ետ քաշվեն.
Թե չեն կարող՝
Իրենց մտքում մեպպեսներին
Թող պարկապես հիմա՛ր հաշվեն...

Մի՛ ուշացեք, դե՛հ, ձեզ մատաղ.
Բոլորվեցեք այս կանաչին,
Այս վիկը ծուռ ուռենու տակ,
Եվ բաժակով այս առաջին
Նախ և առաջ «բարով տեսանք» իրար ասենք,
Ինչպես խփել ու խմել են լուսահոգի մեր պապերը:

Եկեք այսօր մենք էլ, առանց ամաչելու,
Նրանց նման որկորները լավ կարասենք
Ու նախապես թուլացընենք մեր ձիգ տված մեջկապերը,—

Այսօր մի լա՛վ, ուպածի՛ս պես ուրախանանք, ուտենք-խմենք.
Չէ՞ որ նորից
Էլ մեր մորից
Չենք ծնվի մենք...

Մինչ նապ անող խորոված ի համ-դամը գա՝
Ես, ռանտիրոջ իրավունքով, ձեզ թամադա:

Դե՛հ, խմողաց խո՛ւմը անուշ,
Եռեփ գինու կո՛ամը անուշ,
Խորոված ի հո՛ւմը անուշ...

Այս մի թասն էլ՝ նրա՛նց կենաց, ովքեր կյանքում
Թեկուզ ծանոր կարիքի մեջ ու զրկանքում
Ընդունում են
Ու տանում են
Ամե՛ն հարված,
Բայց մնում են
Էլի կյանքին սիրահարված:

Դե՛հ, վերցընենք,
Բաժակները շախով-շուխով չխկացնենք,
Խմենք, հետո այս կենացը ծաղկացնենք.
Ով որ երգի՝ ձայնն անսպառ,
Մատաղը՝ գառ,
Ճրագը՝ վառ...

Տեսնեմ այդ ո՞վ այս բաժակը չի պարպելու,
Տեսնեմ այդ ո՞վ այս բաժակից չի հարբելու...
Այս բաժակն էլ մեր սրտից վեր բարձրացընենք,
Քամենք այնպե՛ս, կարծես լի է... երեխեքի դառը լացով,
Խմենք, հետո բերանները քաղցրացընենք
Նրանց թմբլիկ թուշիկների անուշ պաչով:
Թո՛ղ որ նրանք ծիլի նման
Քարն էլ ճեղքեն,

Բարով ծաղկեն
Հեր ու մերով,
Քույր-ախպերով:

Մեր հին գինով՝ և՛ըս մի հին ու նոր կենաց.
Կենացն ըմպենք հավատարիմ բոլո՞ր կանանց,
Որոնց հաճախ ցավ ենք տալիս, բայց որքան անց,
Այնքան՝ ցավով՝ խելքի գալիս,
Տարբերում ենք մամուռ-կանաչ,
Էժան և թանկ,
Սեր և դյութանք:

Եկեք փութանք,
Որ չսպառնա նրանց սիրուն ո՛չ մի վտանգ,
Եվ հավատա՛նք,
Որ մենք կյանքում
Բախտի՞ նման նրանց գտանք...

Խմենք կենացն անդավաճան ընկերության,
Ընկերների ա՛յն սերության,
Որ մինչև իսկ չի ընդհատվում
Աքսորի մեջ ու գերության:
Ընկե՛ր լինենք
Նույն հուզմունքի,
Համոզմունքի՛,
Նույն ճաշակի՛,
Դրոշակի՛,
Ո՛չ թե ընկեր լոկ բաժակի...

Եկեք նաև մե՛կ չկրկենք,— առանց այն էլ
Քիչ կրկնանքներ հո չենք կրել աշխարհում մենք:
Այս թասով էլ մե՛ր կենացը եկեք խմենք:
Այս թասով էլ տրտմությունը,
Ցավը,
Դավը եկեք քամենք,
Որ այսուհետ ուրախ ապրենք՝

Կարաս բանանք, տկճոր կլցրենք
Երբեք չկգանք մեկ մենմենակ,
Անթևթիկունք և անհենակ:
Մեր վատ օրը հենց ա՛յս լինի,
Հետո էլ գան դեռ լավե՛րը...

Դե՛-հա՛, քամե՛նք մեր գավերը,
Շուռ տանք պաչենք թասի տակը...

Այս գավով էլ եկեք հարգենք
Եվ անթառամ հիշատակը
Կամար-կամուրջ քաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու արկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,
Վանք ու պալատ շինողների,
Կտրիճ կավակ ծնողների,
Աղբյուր-առու սարքողների,
Փող ու թմբուկ կարկողների,
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող-հարգողների...

Հպարտությամբ և անհատույց երախտիքով
Հիշենք բոլոր ընկածներին՝
Հերոսաբար հանգածներին
Հանուն լույսի
Եվ մե՛կ հատար.
Հիշենք նաև նրանց ծնող,
Նրանց անող,
Նրանց կինող
Հայրենիքը հերոսամայր:
Ակնածանքով շուռ տանք հողին
Այս մեկ բաժակ մաքուր օղին,
Այս մի բաժակ անթառամ գինին
Թող մայր հողը նրանց վրա թեթև՛ լինի...

Տեսե՛ք, տեսե՛ք, ո՛ւխ, վերջապես,
Խորոված ը մեջտեղ մտավ:

Հիմա ընտրենք մեկ իսկակա՛ն մի թամադա,
Որ, հավատա՛,
Արդեն խմած կենացներին չի հակասի,
Այնպես, ինչպես որ մեկ նման
Քեֆ անողի քեֆն էլ երբե՛ք չի պակասի...

27—29. XI. 57
Մոսկվա

ՄԻ ՊԱՀ ՄԵԾԱՄՏՈՒՄ ԵՄ

Ա՛խ, ի՞նչ բախտ է կյանքում լինել
Ամենքի պես,
Ամենքի հետ.
Գիշերները հանգիստ քնել՝
Ամենքի պես,
Ամենքի հետ:
Լինել անդա՛րդ,
Լինել հանդա՛րտ՝
Ամենքի պես,
Ամենքի հետ.
Կյանքին նայել պա՛ղ ու անթա՛րթ՝
Ամենքի պես,
Ամենքի հետ:
Չմտածե՛լ վաղվա մասին՝
Ամենքի պես,
Ամենքի հետ,
Կյանքդ մատնե՛լ ինքնահոսի՝
Ամենքի պես,
Ամենքի հետ...

17. IV. 57
Մոսկվա

ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՄ

Ես խուսափում եմ
Թեթև դերերից,
Էժան սերերից
Եվ ա՛յն նորերից,
Որ հաստատվելիս
Ու թուխս նստելիս
Միշտ հինն են ծնում.
Եվ ա՛յն օրորից,
Որ քուն չի բերում,
Այլ, ավելի շուտ, քուն է փախցնում...

Մի՛շտ խուսափելով,
Ճի՛շտ խուսափելով՝
Պիտի չհասնեմ և ա՛յն դրության,
Երբ փափուկ բանի հեշտ կտրվելը
Վերագրվում է թրի սրության.
Լողալ չիմացող մարդու խեղդվելը
Լճի խորության.
Ստիպողաբար կռվում հաղթվելը՝
Սրտի բարության.
Օժտված մարդու հաջողությունը՝
Քաջնակարության.
Իր սկզբունքին հաստատ մնալը՝
Մտքի քարության...

Ես խուսափում եմ դեռ շա՜տ բաներից:
Ես խույս եմ տալիս
Թեթև բաներից վիրավորվելուց.—
Շատ եմ ինքնասեր.
Եվ անպատասխան սիրահարվելուց.—
Սիրառատ եմ շատ.
Եվ շիլ դառնալուց՝

Իմ խեղճ աչքերի անվերջ չովելուց.—
Զարմանում եմ դեռ.
Ամեն կշեռքի թաթին դրվելուց.—
Իմ քաշը գիտեմ.
Ամեն առիթով իսկույն սրվելուց.—
Եվ ի՜նչ եմ տաշում,
Լոկ ի՜նձ եմ մաշում...

Չե՜մ ուզում տրվել, ամեն մի կրքի,
Չե՜մ ուզում տրվել.—
Ես շատ եմ կրքոտ.
Չե՜մ ուզում կռվել հիմարների հետ,
Չե՜մ ուզում կռվել.—
Էլ ջիղ չմնա՜ց.
Ուզում եմ ծռվել՝ բա՜ն չի ստացվում
Եվ չի՜ ստացվի.—
Բունս է հաստացել...

Գուցե վտարվե՞լ ուրախ շրջանից.—
Հաճախ եմ տխրում.
Գուցե վթարվե՞լ՝ մեքենայի պես.—
Մաշվում եմ անվերջ.
Գուցե կտրվե՞լ այս խոկումներից.—
Ես էլ եմ հոգնում...

Ես խույս եմ տալիս և կուր այրվելուց.—
Ո՞ւր եք, մրսողնե՛ր,
Մո՜տ եկեք գոնե.
Ես խույս եմ տալիս և կուր լարվելուց.—
Դեռ շա՜տ գործ ունեմ,
Որ չարվի՜ գուցե...

Ես խույս եմ տալիս
Ամեն քամոցով իսկույն թորվելուց.—
Զուր եմ հանքային:

Ես խույս եմ տալիս,
Բայց չեմ վախենում շուտ պղտորվելուց.—
Աղբյուր եմ լեռան:

Ես խույս եմ տալիս,
Բայց չեմ սարսափում և խոտորվելուց.—
Ճամփա կգտնեմ...

...Եվ չխուսափե՞մ այն դրությունից,
Որ լոկ գալիս է մեր խլությունից:
Խուլին ասում են.
— «Յուրտ է, չես մրա՞ւմ»:
Խուլն էլ ասվածը խլաբար լսում
Եվ ի պատասխան իրենն է ասում.
— «Հա՛, ճիշտ եք լսել, մեր անտեր ցուլը
Կա-չկա կարծեց, թե փորոտիք է՝
Զարկեց ու պատռեց մեր գինու տիկը...»:

Ես խույս եմ տալիս ո՛չ թե խուլերից,
Այլ կարաս ջարդող
Ու տկճոր պատռող
Բոլո՛ր անմակդիր նման ցուլերից...

14—15. VI. 57
Մոսկվա

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ

Ես մտածո՞ւմ եմ:
Բա՛ն չեմ մտածում...

Լեռնային գետն է թավալվում ցածում,
Ինչ-որ մրջյուն է
Կծում իմ ոտը.
Ինչ-որ թռչուն է
Թրատում օդը.

Սառույցն է շողում լեռան կատարին,
Ինչպես որ երեկ ու բոլոր տարին...
Վիճաբանո՞ւմ են խոտերն ու քամին,
Թե՞ դատապարտում սուտ բարեկամին...
Ինչպե՞ս չեն փլչում այս լեռ քարերը,
Թե կտրատվել են նրանց կարերը...
Ինչո՞ւ քարն է պինդ, իսկ ջուրը՝ հեղուկ
Եվ ապառաժը՝ անձայն ու համը,
Իսկ այս տատրակը անվերջ գեղգեղում՝
Շատախոսելով հանում է համը...

Ես մտածո՞ւմ եմ:
Բա՛ն չեմ մտածում:

Ես նույնն եմ անում, ինչ գետը ցածում,
Ինչ այս մրջյունը
Եվ այս թռչունը,
Այս խոտն ու քամին
Եվ սարն ու քարը.—

Շարունակում եմ իմ գոյությունը...

25. V. 57
Մոսկվա

ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ

Պատկերացնում եմ նորի՛ց ու նորի՛ց.

Ինչ-որ տեղ մի օր ծնվում է մորից
Շա՜տ սովորական
Մանուկ մի լալկան:

Ինչ որ ես գիտեմ՝ նա դեռ չգիտի,
Իր դասագրքից իմանա պիտի.
Ինչ որ եղել է ինձ համար հանգույց,
Որ պիտի քանդել կամ թրով հատել,
Նա գիտի՛ արդեն
Եվ գիտի — մանկո՜ւց.
Ինչի վրա ես գլուխ եմ ջարդել
Եվ տառապելով տառապել սաստիկ,
Նա ստացել է արդեն... պատրաստի՜.
Ինչ ես ատել եմ, ինչ ես ատում եմ՝
Նա նույնիսկ իր շուրջ չի նկատո՜ւմ էլ.
Ինչ չեն ներել ինձ՝ նրան ներում են,
Ինչ ես եմ սիրել՝ դրան տիրում է.
Ինչին ձգտել եմ, ինչ երազել եմ՝
Նա դրան արդեն վաղո՜ւց հասել է,—
Եվ չի՛ հասկանում իմ տենչանքը նա,
Եվ չի՛ հասկանում իմ տանջանքը նա ..

Ինչ ես եմ կրել՝
Նա էլ չի՛ կրի,
Ինչ ես չեմ գրել՝
Նա՛ պիտի գրի...

Սակայն նա գոնե պատկերացնո՞ւմ է
Կյա՜նքը,
Տանջա՜նքը,
Ջա՜նքը պապերի...

25. V. 57
Մոսկվա

ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ

Ես հպարտ եմ իմ ճյուղերով ու տաղարթով,
Բայց առավել՝ իմ արմատով
Եվ իմ բնի վաղեմությամբ.
Ժողովրդիս ծերունական
Խիստ բնական
խոհեմությամբ,
Բայց ավելի՝
Նոր ջիվերի
դալարությամբ —
Նրա ջահել որդիներից հենց լավերի
խելառությամբ...

Ես հպարտ եմ մի բուռ հողով,
Թե աճում է այնտեղ խաղող:
Ես հպարտ եմ ջրով մի կուց,
Թե նա մեկին տասն է տալիս
Մի թիզ արտից և կամ այգուց...

Անշահադետ օգնություն եք թե ցույց տալիս՝
Ես հպարտ եմ ձեր օգնությամբ.
Թե չեք թողնում հանգստանալ մարդավարի՝
Ես հպարտ եմ իմ հոգնությամբ.
Սարիպում եք մի կո՞ղմ քաշվել ասպարեզից՝
Ես հպարտ եմ իմ ճգնությամբ...

Եթե պետք է լավ հասկացվել,
Եթե պետք է խոր զգացվել
Լոկ եղածի նոր կրկնությամբ՝
Ես հպարտ եմ
Չհասկացվող
Եվ չզգացվող

Իմ ինքնությամբ.
Շատ-շատերից չկարդացվող՝
Բայց և այնպես իմ սեփական՝ ձեռագրով.
Այլոց կողմից չարդարացվող՝
Բայց և այնպես իմ սեփական՝ ծրագրով.
Ուրիշների խնճույքի մեջ
Թող ո՛չ մի դեր չխաղացած՝
Բայց և այնպես ի՛մ հնձանով.
Թեկուզ խռպոտ ու բաղաձայն՝
Բայց ի՛մ ձայնով.
Թո՛ղ որ անզոր՝
Սակայն արդա՛ր իմ ցասումով.
Թո՛ղ որ իզուր՝
Բայց բնակա՛ն իմ հոսումով.
Եվ անտարբեր լրջությա՛ն դեմ՝
Թո՛ղ որ գուցե անհետևանք և ապարդյուն,
Բայց և այնպես միտք խմորող իմ տաք վեճո՛վ.
Անփառունակ-երկարատև կյանքի դիմաց՝
Իմ մկրտված կյանքի վերջո՛վ...

Հպարտ եմ ես
Իմ փայփայած նպատակով,
Թեկուզ նրան չհասնե՛մ էլ
(Մեղքը կընկնի ոչ իմ վզին).
Թեկուզ նույնիսկ իզուր անցած
Ուրախ ու նուրբ իմ կատակով
(Տափակները չհասկացա՛ն).
Իմ կտակով, թեկուզ գիտեմ,
Որ երբևէ չի կատարվի
(Մեռածի՛ն էլ քիչ են հարգում).
Իմ կտարյուն հովատակով,
Եթե չտա նույնիսկ սերունդ
(Նա ի՞նչ անի—սատա՛կ չկա)...

Եվ, վերջապես, հպարտ եմ ես,
Հպարտ եմ ես իմ... գդակո՛վ,

Թեպետ և նա վաղո՛ւց ծակ է
(Ճիշտ խոտողի խեղճ գդակը,
Ինչպես գիտեք, ծակ է լինում)...

Ինձ թույլ տվեք հպարտանալ
Եվ կարծեցյալ իմ բարդությամբ՝
Թե լավ գին են տալիս միայն պարկունակին
Ու պարծենում ա՛յն պարկությամբ,
Որին անգամ չի պղտորում
Ո՛չ արյունը,
Ո՛չ սմբակը,
Ո՛չ էլ կեղտը...

Ինձ թույլ տվեք, վերջի՛ն անգամ,
Խիզախի պես հպարտ զգալ
Հնարավոր իմ պարտությամբ,
Ինչպես նաև... նաև իմ այս հպարտությամբ,
Որ թերևս անտեղի է...

21, 23. VI. 57
Մոսկվա

ԺԽՏՈՒՄ ԵՄ

Ասում են, թե առանց սիրո
Կարելի է մեկտեղ ապրել:
Ես ժխտում եմ.
Կարելի է չմահանա՞լ,
Ո՛չ թե ապրել:

Կժխտեի ես արևի՛ գոյությունն էլ,
Թե արևը չջողջողար,
Այլ գրքերում անփայլ լողար
Ու գրքերում թաղվե՛ր միայն:

Կժխտեի ես տերևի՛ գոյությունն էլ,
Թե տերևը ծառի վրա ոչ թե շողար,
Այլ ածուխի շերտերի մեջ պեղվե՛ր միայն:

Կժխտեի ակներևի՛ գոյությունն էլ,
Ակներևը թե չերևար՝
Թե նա իբրև լավ ցանկություն
Զեղվե՛ր միայն:

Ես լա՛վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը.—

Եվ ես բերում անդարձ կորած մանկությունը,
Փոխարկում ես էժանության թանկությունը.
Սնանկության խեղդող ձեռքից
Ապատվում ես չստանալիք ժառանգությամբ.
Տնանկության բաց երկընքից
Դու կատվում ես ցնորական բնակությամբ.
Աղմկարար աշխատանքից
Շունչ ես քաշում մտացածին մենակությամբ.
Բարակ մեջք ես դու երապում,
Զա՛ղ աղջիկըս.
Երկու առողջ ոտք ես ուզում,
Կա՛ղ աղջիկըս.

Հավանաբար աչքն է հուզում
Քեզ, չղջի՛կըս.
Տրորվող խոտ,
Դու ուզում ես անշուշտ լեզու.
Դու, մութ գիշե՛ր՝
Թեկուզ մի քիչ լույս ու լապուր...

Ես լա՛վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը:

Բայց ցանկությա՞մբ լոկ լիանալ,—
Ես ժխտում եմ:
Երազանքո՞վ լոկ հիանալ,—
Ես ժխտում եմ:

Ես ժխտում եմ, չեմ ընդունում,
Երբ ժխտում են խոսքո՞վ միայն,
Ո՛չ թե փորձով,
Ո՛չ թե գործով:

Ես ժխտում եմ՝ երբ չեն փնտրում
Առաջ տանող մի նոր ճամփա,
Այլ սպառնում վերադարձով.
Երբ լրջորեն հոխորտում են ու պարծենում
Ոչ պարկապես եղած սառցով,
Այլ պաշարով և ա՛յն ջրի,
Եվ ա՛յն ձրի
Էժան շոգու,
Որ չհալած ու գոլորշի դեռ չդառած
Ա,դ սառույցն է պարունակում...

Ինչպես որ դուք չեք հավատում
Միջնադարյան ոգիներին,
Գոյությունն եմ ես էլ ժխտում շոգի՛սերի,
Եթե նրանք... դեռ սառույց են:

4. 8. VI. 57
Մոսկվա

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՄ

Հրաժարվում եմ նախ՝ ի՛մ իսկ ձեռքից,
Եթե նա պիտի պոկի վիրակապ
Փակվել սկըսվող խորամուխ վերքից:

Հրաժարվում եմ օգնական կորքից,
Թե պիտի հետո նա չհեռանա
իմ երկրի խորքից:

Հրաժարվում եմ ա՛յն միակ արկից,
որ պատերազմի ելք չի որոշում,
Այլ միայն տասնյակ մարդկանց է հոշում:

Ա՛յն միակ վարկից,
որ և հերիք է,
Որպեսզի կրկին նոր կյանք ստանա
Մսրա Մելիքը.
Նաև ա՛յն բարկից,
Որ լոկ վառում է— չի տաքացընում,
Եվ ոչ թե թրծում, ա,լ ճաքեցընում:

Հրաժարվում եմ
Ինչից որ կուզեք՝
Նույնիսկ սեփական հայարտությունի՞ց:
Բայց ո՛չ թանկ նստող ճշմարտությունից:

Իսկ եթե հանկարծ անկարող լինեմ
Չհրաժարվել ճշմարտությունից
Թե կուրծքըս չուզի, որ իր վանդակին գնդակներ խրվեն,
Թե վիզըս չուզի պինդ օղակի մեջ մի կողքի ծռվել,
Թե մեջքս չուզի մայր հողի վրա դիտապաստ փռվել,—
տեսնելով, որ իմ կյանքը հատվում է՝
Իմացեք, ես է՛լ
Այդ պահին կասեմ.
— «Բայց այսուհանդերձ... նա պտըտվո՛ւմ է»...

6. VI. 57
Մոսկվա

ՎԱԽԵՆՈՒՄ-ՍԱՐՍԱՓՈՒՄ ԵՄ

Վախենում եմ շա՛տ բաներից,
Ամեն տեսակ վա՛տ բաներից:

Ինչպես մանուկն է վախենում
Գիշերային ավեր վանքից՝
Վախենում եմ ես էլ արդի
Կեղծ ֆանատիկ-մոլեռանդի
կուրա՛չ ջանքից:

Ինչպես մանուկն է վախենում
Գերեզմանոց տանող ճամփից՝
Վախենում եմ ես իմ անվան,
Պատվի՛ հատար՝
որքան անբիծ,
Նույնքան նաև չպաշտպանված
Զրպարտության թունավ ու ամպից...

Վախենում եմ
Սին մտքերի ճարճատումից,
Հին մտքերի աղճատումից,
Նոր մտքերի կրճատումից,

Վախենում եմ
Մերժված կնոջ ահեղ քենից,
Խարխուլ պատի խաղաղ շուքում
Հոգնած մանկան անմեղ քնից:

Վախենում եմ ես թույլերի՞ց.
Այդ նրանք են ամենից շատ
Ստորություն անում կրքերում...
Վախենում եմ ես ծույլերի՞ց.
Այդ նրանք են ամենից շատ
Հոգնածորեն ծանրը տնքում...

Եվ աստղային ա՛յն բույլերից,
Որ խաբում են ճամփորդներին՝
Շփոթեցնում հյուսիս-հարավ...

Եվ տակը ծակ ա՛յն դույլերից,
Որ խաբում են ճամփորդներին՝
Ջրհորի մոտ թողնում ծարավ...

Վախենում եմ ես շա՛տ բանից,
Սարսափում եմ շատ... քի՛չ բանից:

«Խոսքն է եղել սկզբանից...»,
Իսկ թե հանկարծ մի անբանից
Հրրաման գա՝
Մինչև անգամ
Վերցնել մարդկանց լեզվի՞ց գրկել—
Ո՛չ թե մարդկանց քիմքին կպած
Այն մի կտոր միսը պոկել,
Այլ բերա՛նը ամուր փակել...

Դժբախտ մարդ է անշուշտ կաղը:
Բայց ինչ արժե և կաղության
Անբնական ծանրը խաղը՝
Երբ կաղություն պիտի խաղաս,
Սուտ-սուտ լնգաս, բռնի կաղաս...
Դեռ կա ուրի՛շ վարիուրանք էլ—
Երբ մինչև իսկ երակա՛նքը
Սենյակի պես կտան վարձով,
Հոգեփրկիչ թղթի նման
Կփաճառեն կյանքում նորից...

— Սարսափում եմ վերադարձող
Քաղաքակիրթ միջնադարից...

8, 9. VI. 57
Մոսկվա

ՔՐՏՆՈՒՄ ԵՄ

Ես քրտնում եմ՝
Ինչպես որ նա, ինչպես որ դու.
Այստեղ մեր մեջ՝ արդեն ո՛չ մի տարբերություն
Ես քրտնում եմ
Տաք քրտինքով՝
Տապի՛ց,
Տոթի՛ց,
Պաղ քրտինքով՝
Ե՛վ սարսափից,
Ե՛վ ամոթից:

Ես քրտնում եմ և ամոթից,
Երբ ես կուշտ եմ, դու՝ անոթի,
Երբ ես՝ սխալ, իսկ դու ճիշտ ես,
Երբ կարծեցյալ ծանրը վիշտս
Քո վշտի դեմ լոկ փետուր է.
Մինչ կաթում է իմ կտուրը՝
Տանիք չունի տունդ մի՛շտ էլ։

Տաք քրտինքն է հոգիս պատում,
Երբ ինձպեսին ինքս եմ դատում:

Ամաչում եմ իմ անտեղի կոշտությունից,
Իմ պատճառով խիստ խորացած գժտությունից,
Դիտավորյալ, ոչ թե անկեղծ հաշտությունից:
Ամաչում եմ ու քրտնում եմ այն ժամ նաև,
Երբ — լինում է — սիրտ չեմ անում
Իմ իսկ սրտի խորքը նայել,—

Նայել — և ի՞նչ՝
Հանկարծ կգալ,
Որ չեմ սիրում, այլ խաղում եմ,
Որ չեմ աղում, այլ մաղում եմ,
Որ չեմ ատում, այլ պարկապես նախանձում եմ,
Եվ շոյում է մեղք գործածի թախանձումը,
Ու ստում եմ, թե իբրը ես հավատում եմ,
Չե՛մ հավատում — հավատացող ձևանո՞ւմ եմ...

Սակայն կյանքում շա՛տ ավելի ես քրտնում եմ ուրի՞շի՛ տեղ,
Թեպետ գուցե չի երևում իմ քրտինքի աղի շիթը:
Ուրիշի՛ տեղ,
Երբ որ մի բան մտածում են,
Բայց ասում են բոլորովին ուրի՞շ մի բան
Եվ չեն կգում, որ այդպես է հասնում ահա
Ա՛յն դանակի բթացումը,
Որով մարդիկ ա,գու նման կրանքն են ետում:
Ուրիշի՛ տեղ,
Երբ նրանք չեն կշռադատում —
Կատարում են լոկ հրաման.
Ասես ուսին գլո՛խ չունեն,
Այլ շուռ տված մի ջրաման՝ և...

Ես քրտնում եմ ուրիշի՛ տեղ,
Երբ որ նրանք իրենց ուժը...
Բայց այս մասին՝ ուրի՞շ անգամ,—
Չէ՞ որ ինձ պես անպգուշը...
Իմ այս վախկոտ-կգուշավոր մտքի համար՝
Ես քրտնում եմ նաև հիմա
Եվ մտածում,
Թե ինչի՞ց է քրտնում մարդը:
Ք՞նչ եք կարծում:

Ինձ թվում է՝
Ա՛յն պատճառով
Եվ այնժամ է քրտնում մարդը,
Երբ որ օդը պակասում է:

Չեվ թվում է,
Թե ամոթի կամ սարսափի զգացումը
Իմ ասածին հակասո՞ւմ է...

4, 17. VI. 57
Մոսկվա

ՀԻՄԱՐԱԲԱՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ

Հիմարաբար խոստովանեմ և այն, որ ես...
Ես էլ ձեզ պես մարդ եմ ծակաչք.
Անտեր աչքըս՝
Թեկուզ փակած,
Չի՛ կշտանում—
Ու տանջում է,
Եվ գլխիս դեմ սիրտս հաճախ
Ըմբոստանում՝
Պահանջում է
Օտար այգուց վարդ ու կակաչ,
Ուրիշների փռից՝ տաք հաց.
Ծուռ է նայում օտար կնոջ,
Թե իմն անգամ լինի հնոց,
Իսկ նա՝ նույնիսկ ցրտից ճաքած...

Հիմա՞ր մարդն է այսքան անկեղծ խոստովանում,
Թե՞ խելքն է ունեցածով միշտ գոհանում...

20. VI. 57
Մոսկվա

ՆԵՐՈՒՄ ԵՄ

Ես չե՛մ հարգում, ճի՞շտ հասկացեք,
Ես չե՛մ հարգում,
Բայց ներում եմ ջահելներին՝
Երբ կուր տեղը կռիվներ են նրանք սարքում—
Մեղավոր է հորդող ուժի ավելցուկը:

Ես չե՛մ հարգում, ճի՞շտ հասկացեք,
Ես չե՛մ հարգում,
Բայց ներում եմ ահելներին՝
Երբ ասում են շատ լրջորեն,
Հետն էլ տնքում.
— Բա սա ձո՞ւկ է: Մեր ժամանակ լա՛վն էր ձուկը...

Ես ներում եմ
Օտար երկրում լիապորված հայրենասեր այն դեսպանին,
Որ հայրենիք տանող ճամփա չի հարցընում՝
Իմանալով, որ իր դժբախտ հայրենիքում վիշապացել
Ու խժռում է բռնակալի դեռ երեկվա բարակ օձը:

Այսպես՝ նաև ես ներում եմ ինքնասպանին,
Թե մի քնած ժողովուրդ է արթնացընում
Նրա միակ կրակոցը...

Ու ներում եմ գլխացավը՝
Թե ծագում է տարիքն առած կուսությունից,
Գլխացավանքն անակընկալ՝
Թե գալիս է հաջող չանցած քսությունից.
Եվ այն ցավը,
Որ արդյունք է սիրո անուշ հիվանդության,
Եվ այն հիվանդ սովորությը,
Որ ծնունդ է ավանդության:

Թող որ ներվի
Նաև սուտը անմեղունակ,
Ամեն կոպիտ անմեղ հանաք,
Ամեն ամպ օր ու եղանակ:

Եկեք նաև մի՛ նեղանաք,
Թե սիրում են՝ ցույց չեն տալիս,
Բայց մի՛ ներեք,
Թե ցույց տալիս, բայց չեն սիրում:

Եկեք նաև նրա՛ն ներենք,
Ով լռում է հարկադրված,
Սակայն գոնե փրփրում է,
Բայց ոչ նրան,
Ով դավում է
Եվ ցավում է՝ հարկադրված...

Ես չներե՞մ երեխեքին, եթե նրանք
Եվ թանկարժեք իր են կոտրում,—
Թող սպառնան մինչև անգամ և լուսնյակի՛ն:
Ես կներեմ ամե՛ն տեսակ ձեռնածություն ու հնարանք—
Եթե նրանք
Երեխայի սրտաճմլիկ լացն են կոտրում,
Երեխայի լացն են կոտրում, բայց ոչ խաբում
Դավաճանած եղջյուրակիր ամուսնյակին...
Երբ ենք ներում կամ չենք ներում,
Հասկանո՞ւմ եք:

Մենք ներում ենք
Ամե՛ն անգամ
Ու լոկ այնքա՛ն,
Որքանով որ կատարվածը հասկանում ենք:

29. V. 57
10. VI. 57
21. XI. 57
Մոսկվա

ՄԵՂԱՆՉԵԼ-ՉՂՋՈՒՄ ԵՄ

Պատահել է, որ չեմ սիրել,
Բայց, չգիտեմ՝ ինչի՞ համար,
Չեմ կլացել անսեր տիրել.
Գրկել եմ կամ համբուրել եմ:
Չեմ ընդունել սրտիս խորքում,
Սակայն լռել-համբերել եմ,

Ես շատ հաճախ ա՛յն չեմ տվել,—
Մեղանչել եմ,— կարո՞ղ էի.
Ու շատ հաճախ ցած եմ թեքել,
Իսկ վեր թեքել կարո՞ղ էի:
Եվ փախուստ եմ ինձնից տվել՝
Ուրիշ տեղ եմ խուր չվել—
Օտա՞ր ոլորտ՝ օտա՞ր թևով,
Մինչդեռ մնալ կարո՞ղ էի,
Կարո՞ղ էի և— պարտավո՞ր:

Մեղավոր եմ հույսի համար,—
Չարդարացա՞վ՝
Ո՛չ իմ մեղքով.
Եվ կենդանի ա՛յն հավատի,
Որ քարացա՞վ՝
Ո՛չ իմ մեղքով.
Եվ ա՛յն բարի սրտի համար,
Որ չարացա՞վ՝
Ո՛չ իմ մեղքով:
Մեղանչել եմ
Եվ ա՛յն ըմբոստ երգի առաջ,
Որ խոհեմը պատառեցի.
Ա՛յն խոհերի մահվան համար,

Որոնց ծինը խաթարեցի.
Մեղավոր եմ և քո՛ առաջ,
Որ... սիրելուց դադարեցի,
Եվ ա՛յն ներման, որ բռնությամբ
Իմ լայն սրտից փոարեցի...

Իսկ ճիշտն առած՝
Ընդհանրապես մեղա գալու քի՛չ բան ունեմ...

4. VI և 27.XI. 57
Մոսկվա

ԽՆԱՅՈՒՄ ԵՄ

Խնայում եմ ո՛չ թե սերը. ճի՛շտ հասկացիր:
Խնայում եմ քո նոր կարթնած սի՛րտը միայն
Տարիքն առած ինձ պես մեկի խելառ սիրուց,
Ինչպես որ հին— նստած գինուց,
Անփորձները շուտ են հարբում
Եվ շատ ուշ են ուշքի գալիս...

Խնայում եմ միակ հույսը,
Ինչպես նաև պառավ մորը,
Թե չէ, գիտե՛ք, մե՛կ էլ տեսար՝
Ինչ-որ հոգնած մի վայրկյանի,
Վերջ տվեցի հիմար կյանքիս...

Թե չեմ ասում,
Որ մեր տնկած խնձորենին ուռի դարձավ,
Արդյոք ո՞ւմ եմ ես խնայում.
Մե՞կ՝ խեղճերիս,
Թե՞ ուռենին...

Թե չեմ ասում,
Որ հատակին թափված յուղը
Էլ ոչ մի կերպ ճաշ չի դառնա.
Ո՞ւմ եմ արդյոք խնայում.
Պարզ է, որ մե՛կ,
Ոչ թե յուղը...

Խնայում եմ ես ոչ այնքան ձեր ակա՞նջը,
Որքան ա՞չքը,
Թե չէ, գիտե՞ք,
Չեկ բոլորիդ այն ցույց կտամ,
Ինչ ես վաղուց նկատում եմ...
Խնայում եմ
Ու— ծալում եմ ցուցամատը...

8. XII 57
Մոսկվա

ԱՂՄԿՈՒՄ ԵՄ

Այս ամենը արդյոք ի՞նչ է.
Խեղճի նվոց ու ճռի՞նչ է,
Թե՞ մի ճիչ է
Ու մորմոքում
Հկոր հոգու:

Եվ գալիքի աչքում ի՞նչ եմ.
Ճո՞ռտ եմ արդյոք,
Թե՞ ապատ եմ,
Հարապա՞տ եմ,
Թե՞ լոկ բիճ եմ:
Կենդանաշատ մի հատա՞կ եմ,
Թե՞ լոկ այնտեղ ննջող խիճ եմ,
Կախարդում եմ ու մոգո՞ւմ եմ,
Թե՞... պարպապես աղմկում եմ:

Եվ իրար հետ դաշնակի՞ց են,
Թե՞ թշնամի կույգ բանակ են
Իմ մեջ քանակն ու որակը:
Եվ ապագա ինչ-որ ժամի
Ես՝ գապանը,
Ես՝ վապանը,
Չե՞մ շորորա ու չե՞մ քայլի հենափայտով,

Սա
Ո՛չ աղքատ ձևանալ է,
Ոչ հանաք է.
Հանրահաշվի մի խնդիր է՝ կույգ անհայտով,
Որ կարող է լուծել միայն ժամանակը:
Իսկ առայժմ աղմկում եմ,

Ինչպես ջուրը,
Որը ի՞նչ է.
Ծո՞վ է,
Լի՞ճ է,
Թե՞ ճահիճ է.
Տա՞ք է,
Պղտո՞ր,
Պաղ ու ջի՞նջ է,—
Վերջին հաշվով ջրի համար
Միևնույնն է կամ ոչինչ է.
Նա հոսում է
Ու խոսում է՝
Իր սեփական ձայնը բնա՜վ չլսելով,
Ո՛չ ցավ կգում,
Ո՛չ էլ սգում՝
Իր գեղեցիկ մահը բնա՜վ չափսոսալով...

Իսկ առայժմ աղմկում եմ.
— Գոնե լսե՞ք...

13. XI. 57
Մոսկվա

ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ

Ես, ճիշտն ասած, զարմանում եմ շա՜տ բաներից,
Քիչ լավի հետ՝ ամեն տեսակ վա՜տ բաներից,
Բայց ուզում եմ միայն մեկով բավարարվել՝
Ա՛յն հոգնատանջ ճամփորդի պես այսօր վարվել,
Որ հոգնելով ճամփաներից՝
Զարդ ու փշուր կանգ է առնում
Եվ չի նայում առաջ, վար-վեր
Ու հայացքով ետ չի դառնում—
Հոգնածորեն նայում է նա աննպատակ
Եվ ա՛յն տեսնում, ինչ ընկած է ոտքերի տակ:

Ու ես հիմա,
Որ անհարմար
Վատ բաների թավ անտառում ճամփորդելուց
Զարդված-հոգնած՝
Հանգըստանում-թարմանում եմ,
Նրա պես էլ ակամայից ու ծուլորեն զարմանում եմ,
Որ— թռչնի պես— ճիշտ խոսքից է մարդը խրտնում,
Եվ ոչ երբեք սուտ խոստումի կրակոցից.
Լուսնի նման՝ արևից է նա ափրթնում
Եվ շիկնում է հրախաղի սառը բոցից...

Իսկ դուք՝ ինչպե՞ս:
Դո՞ւք էլ՝ ինձ պես:

Է՜հ, երևի, ինձ վրա եք դուք զարմանում...

20. XI. 57
Մոսկվա

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ



Տաքն ի՞նչ իմանա,
Թե պաղը ինչ է:
Վե՛րքը կիմանա,
Թե աղը ինչ է:
Նա՛, ով շատերին
Կսկիծ է տվել,
Ինչպե՞ս իմանա,
Թե դաղը ինչ է:

15. III. 56
Մոսկվա

Ինչ էլ որ անես — հարյուրը՝ հարյուր,
Հապարն էլ հապար է մնում:
Հա՛ զուլզ փաչտա — մրսելը՝ մրսել,
Հապարն էլ հապար է մնում:
Ինչքան սիրտըդ տա՝ սաղարթից խոսիր
Ու վարդից խոսիր մայիսյան,—
Ախար ի՞նչ օգուտ — աշունը՝ աշուն,
Խապալն էլ խապալ է մնում:

18. III. 56
Մոսկվա

Մեղուն ինքն էլ չգիտե,
Թե խայթելիս կսատկի:
Ցողունն ինքն էլ չգիտե,
Որ կթոշնի՝ թե ծաղկի:
Դու, որ մարդ ես՝ ոչ մեղու,
Ոչ էլ ցողուն մի անշունչ,
Ամեն «սխալ» մի՛ ձաղկիր,
Ամեն «սխալ» մի՛ շտկիր:

22. III. 56
Մոսկվա

Դու ինքդ քեզ տաքանում ես
Եվ ինքդ քեզ հաճախ պաղում,
Ու թվում է տեսնողներին,
Թե ինքդ քեզ դեր ես խաղում:
Քեզ, երևի, կհավանան
Միայն նրանք, որ կաղում են,—
Երանի չէ՞ր ոտքդ լիներ,
Հոգին էլ է հաճախ կաղում:

[1956]

Լինում է այսպես էլ կյանքում.
Իրավ են միշտ իրենց կարծում
Եվ այնպես պատժում են դաժան,
Երբ թեթև վանցանք ես գործում —
Այնքա՜ն խիստ և այնքա՜ն դաժան,
Որ, գիտե՞ք, մեկ պատիժ տալով՝
Շատ թեթև վանցանքի դիմաց
Շատ ծանր հանցանք են գործում:

18. III. 56
Մոսկվա

Ի՜նչ անենք,
Թե առուն բարակել է,
Բայց չէ՞ որ
Նա մի օր ոռոգել է,
Բայց չէ՞ որ
Ավերված այս դաշտերը
Նա մի օր՝
Մեռնելով՝ նորոգել է:

17. III. 56
Մոսկվա

Հեշտ բան չէ, ջա՜նըս, ճիշտ ժամանակին
Զարկել տագնապի սուր ահազանգը:
Չէ՞ որ երբ չկա դեռ ժողովածուն,
Չես կարող կպմել դու նրա ցանկը:
Հանկարծակի է պայթում վտանգը,
Բայց նա ուռչում է դանդա՜ղ, աննկա՜տ,
Դանդա՜ղ, աննկա՜տ՝ մետաղից ծնվում
Ու նույն մետաղն է կրծոտում ժանգը:

[1956]

Սարն ի՞նչ գիտե՝
Տուժն ինչ է,
Չշտապողը՝
Ուշն ինչ է:
Թե դատարկ է
Անցյալը,
Ի՞նչ իմանաս՝
Հուշն ինչ է:

[1956]

Եթե անգամ այնպես փայլես, ոնց ամենքը,
Քեզ չե՞ն տեսնի,— ի՞նչ իմանաս:
Եթե անգամ այնպես քայլես, ոնց ամենքը,
Տեղ չե՞ս հասնի,— ի՞նչ իմանաս:
Տե՛ս, շատերը չեղած գարուց
Բերք են վերցնում մեկին հապար,
Իսկ քո ոսկի ցորենից էլ՝ մեկ էլ տեսար՝
Փո՞ւշ կբուսնի,— ի՞նչ իմանաս:

23. IV. 56
Մոսկվա

Ա՜խ, ինչպե՞ս է, որ չի հոգնում
Նրա անփակ այս բերանը...
Նա ուրիշի ցուղն է տեսնում՝
Մոռանալով իր գերանը,
Ուրիշներին դեռ մածունից
Ու պանրից է քարոզ կարդում՝
Մոռանալով, որ այլևս
Չի՞ մակարդում իր մերանը:

18. III. 56
Մոսկվա

Իսկ այս տիպը, հապա տեսեք,
Ձվի մեջ էլ մաղ է փնտրում,
Ոչ թե աչքիդ... ակնոցի՞դ մեջ
Վտանգավոր խաղ է փնտրում:
Թե սկսես. «Հնում լավ էր...»,
Հո չի հարցնի, թե ինչն էր լավ,—
Նույնիսկ կիսատ քո խոսքի մեջ
Իր դարն ապրած ֆաղ է փնտրում...

15. III. 56
Մոսկվա

Այս տի՞պը: Քո տանը լակում՝
Ուրիշի դռանն է հաչում,
Ուտում է իր կուտն այս բակում՝
Չուն ածում մեկ ուրիշ քուչում:
Դու, ի՞նչ է, չգիտե՞ս ինչու:
Զգայուն առագաստ ունի.
Հասկանում, կգում է իսկույն,
Թե քամին ո՛ր կողմն է փչում:

15. III. 56
Մոսկվա

Բեղերը քեզ քիչ են թվում՝
Ուզում ես և լինի մորուք.
Հա՛մ ջահել մնալ ես ուզում,
Հա՛մ դառնալ իմաստուն ծերուկ:
Դու շատի ետևից ընկած՝
Քիչն էլ ես բաց թողնում ձեռքից...
Ախ, հիմա՛ր, այդ ո՞վ է բռնել
Մի ձեռքով երկու ձմերուկ:

[1956]

Սա տուն չի շինել՝
Գիտի, թե սյունը տան մեջ է բուսնել:
Նա, որ չի վազել՝
Անցնել է ուզում, ոչ միայն հասնել:
— Խոսելը հեշտ է,
Հոսե՛լն է դժվար —
հուն է հարկավոր.
Սյունը չի բուսնի,
Ինչքան էլ գոռաս.
«տուն է հարկավոր»:

15. III. 56
Մոսկվա

Թե նա մի քիչ վատ է կգում՝
Թեթևակի հիվանդանում,
Վայնասուն է գցում խկույն,
Ո՞նց է սուգ ու շիվան դնում:
Իսկ դու — կեցցե՞ս. Հրո երկիր,
Թե Սառուցյալ օվկիան ընկիր՝
Միևնույնն է, կգում ես քեզ
Բարեհուսո հրվանդանում:

[1956]
Մոսկվա

Նրա ձեռքը բան չի ընկնում —
Եվ... չհավան է:
Սրա գլխում բան չի մնում —
Ամբարտավան է:
Տանտիրուհին անշնորհք է —
Միսն է այրել թեժ կրակին,
Մեղավորը ո՛չ թե ինքը,
Այլ... խեղճ թավան է:

15. III. 56
Մոսկվա

Բա՞խտ է հարկավոր, ամեն տգետից
Ախար կադրերի բաժվար դուրս չի գա:
Զգո՞ւյշ քսմսվիր, շողոքորթելը
Բոլոր պետերին, դժվա՞ր, դուր չի գա:
Ես հասկանում եմ քո շփոթմունքը.
Ոսկե միջինն էլ քեզ ձե՞ռք չի տալիս —
Ոսկե միջինը մի սերմ է հաճախ,
Որ կանաչում է, բայց բե՞րք չի տալիս:

22. IV. 56
Մոսկվա

Նա այնքան ջահել է դեռ,
Եռանդագին ու խանդավառ է,
Բլրաշատ այս դաշտը դեռ
Նրա աչքին մի հարթավայր է,
Չգիտի, որ ձավարը
Ցորեն է, բայց ծիլ չի տալիս,
Եվ, նայի՛ր, ինքնավստահ,
Լուրջ ու ամբարտավան է:

[1956]
Մոսկվա

Նա դուրս է տալիս
Ծռտի ու պոտի,
Մեկ՝ խիստ պարզունակ
Ու մեկ էլ՝ խրթին:
Բայց կարևոր է
Գիտե՞ք, թե որը.
Լեզվին՝ մի բան է,
Այլ բան է սրտին:

Դուք հիշում եք.
Միշտ էլ գործը
Մեր ձեռքով էր
Գլուխ գալիս,
Բայց— թե ինչո՞ւ—
Նրան էին
Մեծարանքով
Գլուխ տալիս:

Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար
Այս մեկին ուշք չեք դարձնում.
Մի ասեղ պիտի առնի՝
Պողպատի փութն է հարցնում,
Իսկ կողքին թե մարդ չկա՝
Էլ ո՛չ հարց, ո՛չ պատասխան.
Թե հավը ձեռքից թռավ՝
Անփետուր ճուտն է վերցնում:

Ինչ ասեմ խելքիդ.
Ժամանակից շուտ մի խոսք ասացիր,
Քեզ, դրա համար,
Մեղավորների շարքը դասեցին:
Բա ո՞նց մոռացար.
«Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝
Մորթեցին կերան,
Հետն էլ մատները մի լա՜վ լիզեցին»:

Իմաստուն էր, բայց շատ ձգեց
Ու քաշքշեց այս պարանը՝
Մոռանալով, որ պարան է—
Ճիշտ է, հաստ է, բայց գերա՞ն է:
Է՛հ, թող նույնիսկ գերան լինի,—
Միևնույն է, ո՛վ իմաստուն,
Պիտի հատվեր՝ թե պարան է,
Պիտի ջարդվեր՝ թե գերան է:

Թե ասես. «Մատը վարունգ է»,
Աղ կառնի ու մոտ կվալի.
Թե ասես. «Աչքս դուրս եկավ»,
«Տուր տանեմ խեղճ կատվիս», կասի:
Բայց փորձիր հիմար գտնվել՝
Հունվարին մրսել ու հազալ,
Լեղաճաք կփախչի հեռու.
«Նման է թոքախտի հետքի»:

Աչք մտնողը աչքի ընկավ՝
Աչք կհանի...
Աչքալույս տաս՝ աչքի լույսն ես—
Աչքով կանի.
Աչքիդ չընկավ՝ աչքի փուշն ես—
Այնուհետև՝
Քեզ նայելու աչք էլ չունի
Չորսաչքանին:

Աչք մտնելու համար նա մի հատ է,
Բիբ փորելու համար՝ արդեն երկու:
Բայց գիտե՞ք, թե ինչն է,
Որ ամենից վատ է.
Մաթեմատիկական այս անհայտը
Հայտնի՞ քննադատ է,
Եվ ինչո՞վ է հայտնի—
Ինքն իրեն է հերքել+ինքն իրեն է հերքում...

Չյունը ի՞նչ է իմանում,
Թե աղքատը փայտ չունի.
Ճամփան ի՞նչ է իմանում,
Թե ձին ոտքին պայտ չունի:
Բայց ես գիտեմ. ով երեկ
Շեն տներ է ավիրել,
Ինչքան կղզման խոսք ասի՝
Մե՞կ է, խղճի խայթ չունի՞:

Ինքը հոպուկն է հոտած,
Կարծում է՝ բույնն է հոտած:
Սեջուր առուն ճահճացել,
Կարծում է՝ հունն է հոտած:
Եվ հակառակն է լինում.
Ի՞նչ ես ուզում խեղճ թխսից.
Առողջ ճտեր ո՞նց հանի,
Թե տակի ձուն է հոտած:

Ա՜խ, արդեն ականջ է ծակում
Այս անվերջ կնգոցն ու կանգը,—
Լավ երգը կրկնել տուր անվերջ՝
Կցնդի նախկին հուզանքը,
Թե ջուրը նույն ափն է ծեծում՝
Լճակ է և կամ ճահիճ է,—
Մաքո՛ւր ջուր, հոտա՛ծ ջուր չկա,
Գործում է միայն հոսա՜նքը:

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե չասեմ՝
Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ.
Բա իմ բանը
Ո՞նց կլինի:

Թե ինձ այրեց
արտասուքը,
Ինչի՞ս է պետք
էլ քո շուքը:
Մարդ է մեռնում
քո երեսից,
Ինչի՞ս է քո
սև ու սուգը...

Մի ամի՞ս է, թե՞ մի տարի,
թե՞ մի դար,
Այն օրվանից, ինչ այս դռնից
չմտար,
Շեմքին կանգնած՝ այդ ի՞նչ բառ էր
ասացիր:
Մոռացել եմ— մի ամի՜ս չէ,
այլ մի դա՜ր:

Դո՛ւ ես ձգում,
Այնինչ ես եմ կտրվում.
Դո՛ւ բռնվում,
Այնինչ ես եմ փետրվում:
Ի՞նչ էլ անեմ, ի՞նչ էլ չանեմ,
Ա՛յ քեզ բան,
Կուժն ու կուլան
Իմ գլխին են կոտրվում:

Հովիտը ինքս տվեցի,
Խլեցիր և սարավանդը.
Քեզ քիչ էր այս այրող սերը,
Վառեցիր և կիպող խանդը:
Ուզեցի, որ հավետ կապվենք,
Որ սիրով խայտանք ու ծփանք.
Դու կապը գարձրիր կապանք
Եվ տուն կոչեցիր... այս բանտը:

Թե ինձ համար ինչ է պահված՝
Ինքս էլ կարգին չգիտեմ...
Հավար գետից թռել-անցել,
Կանգ եմ առել մեկի դեմ,
Կանգ եմ առել, չեմ հասկանում.
Թրջվելո՞ւց եմ սարսափում,
Թե՞ ինձ ոչինչ չի գրավում
Ու չի ձգում այն ափում:

Նույն հին վանքն է,
Բայց այլևս սուրբ չի թվում այս վանքը:
Նույն լեկվակն է,
Բայց մի տեսակ կեղծ է հնչում այս կանգը:
Հանգը տեղը, վանկը տեղը՝
Ոտանավոր է կարծես,
Նույնիսկ վաղուց անգիր գիտես,
Բայց... կորել է հուլանքը:

Իմ սրտի այունը
Տեղից խախտել են...
Իմ տան սրբերը
Ո՞ւր են— գաղթել են...
Փառք ու հաղթանակ
Իպո՞ւր մաղթեցին,—
Չգիտեմ՝ ովքեր.
Բայց ինձ հաղթել են...

Մաղի մեջ
Ջո՞ւր կմնա,
Պաղի մեջ
Հո՞ւր կմնա,
Այրում են
Թե անկրակ,
Էլ մոխիր.
Մո՞ւր կմնա:

Ես բռնել ուզեցի,
Եվ դու պուկ տվեցիր,
Ես արև ուզեցի,
Եվ դու շուք տվեցիր:
Իսկ հենց որ՝ դառնացած՝
Ուզեցի արտասուք,
Արցունքը շատ էր քի՞չ,
Որ և սուգ տվեցիր:

Տանը լինեմ, լինեմ մայթում՝
Քո ծիծաղն է դեմքիս ցայտում,
Քո ժպիտն է ամեն կողմից
Արևի պես ճառագայթում:
Ապատ զգամ, զգամ գերված,—
Միևնույնն է, սիրտըս իրեն
Միշտ զգում է ինչ-որ անտես
Որոգայթո՛ւմ, որոգայթո՛ւմ:

Հիմար ժպիտով
Ծածկում եմ վերքըս,—
Ներսից սև՜-սև՜ է,
Դրսից է ներկըս...
Ինքս ո՞նց դառնամ
Հեքիաթի տղան
Եվ ինձ ո՞նց ասեմ.
— Արքա՛, դու մե՛րկ ես...

1956 թ. մարտ
Մոսկվա

Ուրիշ ես դառնում ամեն օր—
Իրենն է անում տարիքըդ.
Առնելիքդ ուրիշ է թվում,
Ուրիշ է թվում տալիքըդ:
Խստադեմ գայիքն է նայում.
Քեզանից ի՞նչ պիտի մնա,
Երբ անցնի օրվա հետ մեկտեղ
Օրերի փրփուր ալիքը:

18. III. 56
Մոսկվա

Ականջդ բեր ասեմ

«Ես էլ դու եմ, ես չկամ...»:
Վ. ՏԵՐՅԱՆ

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

(Նախերգանքի փոխարեն)

Բոլոր օրերից գուցե առավել անգույն-տարտամը
Այս օրն էր, որ կար,
Իսկակա՜ն միջակ ու տափակ մի օր,
Բա,ց նա ինձ համար
Մի արքիմեդյան օր դարձավ հանկարծ.
Ոչ այն է կարծես նորից ծնվեցի,
Ոչ այն է հանկարծ
(Առաջի՜ն անգամ)
Գտա ինքս ինձ.—
Խորամուխ եղա
Ստվերի բակում երանգների մեջ,
Է՛վ լույսի բոլոր կգայարաններն ինքս կգացի,
Է՛վ ծաղիկների ներկերի հյութը ինձ հայտնի դարձա
Դարձա ընդերքի մրափող ապար,
Ժայռի քարաքոս,
Որ ստրուն է միշտ,
Դարձա երակոտ՝
Ջրհորի նման,
Եվ մտամոլոր՝
Որպես արահետ.
Ես ըմբռնեցի,
Որ եթե ունես թռցնող թևեր՝
Չես կգա երբեք ծանրությունը քո.
Եվ ա՛յն հասկացա,
Որ դրամի պես
Մաշվել են արդեն բառերը բոլոր.
Հասկացա նաև,
Որ մինչև անգամ լավ է ավելի

Բառերն իրար հետ կապ իսկ չունենան,
Քան թե չունենան կշիռ ու արժեք...

Հիշեցի նաև այն խոսքը հայտնի,
Որ եթե մեկից կոչվես մեծամիտ
Եվ կամ սնահեթեթ,
Եվ կամ խելագար,
Դու հակառակը չե՞ս ապացուցի՝
Որքա՜ն էլ ջանաս...

14. X. 59
Ջանախչի

ՀԱՆԴԳՆԵՄ ԱՍԵԼ

Կարող եմ կյանքում ես շա՜տ բան անել,
Բայց անկարող եմ ինձանից վանել
Իմ երկվորյակին՝
Անկեղծությո՛ւնը:

Ուրեմըն ասեմ ամենից առաջ,
Հանդգնե՛մ ասել, որ ես աշխարհում
Անխտրական եմ՝ նվագի նման,
Անձրևի նման՝ հավասարատես,
Բայց և կան բաներ,
Բայց և կան մարդիկ,
Որոնց նկատմամբ միտումնավոր եմ՝
Չորը ճարակող չար կրակի պես,
Եվ ծխի նման անտարբեր եմ ես՝
Նրանց ճարճատում-ճիչերի հանդեպ...

18. XI. 59
Չանախչի

ՔԱՅԼՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԱՌՎՈՂ ԱՐՅՈՒՆ

Ե՛ս, որ կարող եմ ինքըս ինձ կոչել
Եկած ապագա,
Ես նաև քայլող հիշողություն եմ՝
Ապրո՜ղ պատմություն:
Թող ներվի ասել,
Որ իմ արյունը
Հենց համարյա թե նույն ծագումն ունի,
Ինչ ունի նավթը.
Հյութն ու ավիշն է բյուր սերունդների,
Մարդ ու կենդանու,
Ու թե արյանըս լուցկի մոտեցնես՝
Արյունը նույնպես կարող է... վառվե՛լ,

18. XI. 59
Չանախչի

ՍԻՐՈՒՄ ԵՄ ՍԻՐԵԼ

Քիչ է պատահում, որ ինքըս ինձնից
Փոքր ինչ գոհ լինեմ:
Դժգոհ եմ հաճախ,
Ուրեմըն՝ մարդ եմ ու դեռ ապրում եմ:

Բայց ես սիրում եմ ինքըս ինձ սիրել:

Իսկ սիրում եմ ինձ, երբ սիրում են ինձ:
Ես ինձ այդ պահին այնպես եմ ժպտում,
Ինչպես ժպտում են ա՛յն կոր գերանին,
Որ գետի վրա դարձել է կամուրջ,
Եվ ա՛յն մանուկին, որ ոտաբոբիկ
Մտել է առուն և— թա՛ց վարտիքով—
Կավ է դուրս հանում,
Որ նավակ շինի:

18. XI. 59
Ջանախչի

ԱՆՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆ

Ես վերածնողն եմ խորին լռության
Եվ թարգմանիչը անորոտ շանթի.
Գարնան աշկերտ եմ
Ու սիրո վարպետ.
Իմ կաթնեղբայրն է երաժիշտ քամին,
Եվ ապգականը՝ խորհող անձավը.
Ես վստահության մերձ-մտերիմն եմ,
Բարևի ծանոթ՝ հաջողությանը.
Ու ճամփորդական կարճ ծանոթությամբ
Սիրուհիս դարձավ խոհեմությունը՝
Ամե՜ն ինչ կշռող խոհեմությունը,
Կոկլիկ ու սոկլիկ, մի՜շտ շրջահայաց,
Բայց, փա՜ռք աստծու, բանը չհասավ
Ո՛չ ամուսնության,
Ո՛չ էլ կավակի.
Որ եթե ծնվեր՝ անուն փնտրելիս
Պիտի, ստիպված, խեղճ մատը դրվեր
Եղկելու վրա կամ Ողորմելու...

18. XI. 59
Ջանախչի

ՎԱՀԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Իսկ քարածո՛ւխը...

Երբ նա վառվում է
Զմեռվա ցրտին,
Հին փառարանում,
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,—
Լինում է այնպես,
Որ՝ մեկ էլ տեսար՝
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,
Որոնք բյուրհազար տարիներ հետո
Այս քարածուխին պիտի վերածվեն.
Եվ գազանների ոռնոցն եմ լսում
Այդ անտառների անեզրության մեջ.
Եվ ձայնը նաև
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ որս են անում այդ անտառներում,
Որ մերկանդամ են
Եվ ունեն դեռ պոչ,
Բայց անկարող են այլևս ապրել
Լռին խավարում կույր անձավների,
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,
Որ սերվել եմ ես
Դե՛ռ այն ժամանակ. հե՛նց այն ժամանակ...

15. XII. 59
Երևան

ԱՆՄԵԿՆԵԼԻ ԶԳԱՑՈՒՄ

Մտքովդս հաճախ բաներ են անցնում,
Որ շատ է նման խելագարության.

Երբ որ տավարն է ծաղիկ արածում՝
Չեմ կգում ո՛չ ցավ,
Ո՛չ էլ ափսոսանք.
Իսկ երբ որ մարդն է պոկում ծաղիկներ՝
Մի՛շտ ինչ-որ մի ցավ,
Ինչ-որ ափսոսանք
Ծագում է հանկարծ
Ու ծակում հոգիս..

18. XI. 59
Չանախչի

ՀԱՓՇՏԱԿՎԵԼՍ

Հափշտակվե՞լս...

Այնքա՜ն նման է ուշաթափության.
Շատ կարճ է տևում,
Թվում է երկար:

18. XII. 59
Թիֆլիս

ԶԳԱՅԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ

Ինձ մեկ-մեկ նույնիսկ այնպես է թվում,
Թե ես քնել եմ այն թագուհու հետ,
Որ Ի՛ն կոչում են Կլեոպատրա:

Քնե՛լ եմ, հետո... առավոտ ծեգին
Գլխատվել նրա՝ ինձ շոյած ձեռքով:

18. XI. 59
Զանախչի

ԱՆՎՆԱՍ ԽՈՐՀՈՒՐԴ

Այնտեղ, որտեղ ինձ դուք չեք համբկգա,
Այնտեղ, որտեղ ինձ չեք համաձայնի,
Չշտապեք, խնդրեմ, իսկույն համարել
Ուղեղի քաղհան
Կամ սրտի բորբոս:

Մտածեք նաև ձեր որդո՞ւ մասին.
Խոսում եմ նաև նրա՛ անունից:
Դուք գնալու եք,
Իսկ նա գալո՞ւ է:

18. XI. 59
Զանախչի

ՈՒՐՈՒՅՆ ՀՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

Չե՞մ սիրում արխիվ ու գերեզմանոց:

Բայց երբ ճամփամերձ ծառեր եմ տեսնում,
Թփեր ու խոտեր՝
Փոշու մեջ կորած,
Այդ վայրկյաններին ես ինձ զգում եմ
Հնությունների մոլի սիրահար:

18. XI. 59
Զանախչի

ՆԱՀԱՆՋ ՏԱՐՎԱ ՊԵՍ

Երբ ջահելությունս անցնում է արդեն,
Ես նո՞ր հասկացա,
Որ շատ եմ նման փետրվար ամսին.
Գիտեմ կարճանալ ու երկարանալ—
Նայած թե՝ սեր կա՞:

18. XI. 59
Չանախչի

ՍՐՏԻ ՑԱՎՈՎ

Թռչունի երամ խրտնեցրնելիս
Ինձ ամեն անգամ այնպես է թվում,
Թե փախցրրեցի մի խուրք... հղացում:

19. XI. 59
Չանախչի

ԱՆՇՆՈՐՀԱԿԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն մեկն ունի մասնագիտություն:

Հացթուխն այուրից ու մաքուր ջրից
Հրի օգնությամբ տաք հաց է թխում,
Տաք՝ սիրահարի ափերի նման:

Ամեն առավոտ նա հաց է թխում,
Եվ ամեն անգամ, ուտելուց հետո,
Երբ մենք ասում ենք «շնորհակալ եմ»,
Ոչ միայն մորն է դա վերաբերում
Կամ տանտիրուհուն մեկ հյուրընկալող,
Այլ նաև նրա՛ն՝
Անհայտ հացթուխին:

Հավաքարարը շենքերն է մաքրում,
Դռնապանները՝ բակեր ու փողոց:
Ասենք, թե չասենք՝
Շնորհակալ ենք:

Ամեն առավոտ,
Ամեն երեկո
Գործի է անցնում ջրցան մեքենան,
Որ շատ է նման փոքրացած փղի,
Թեպետ շարժվում է նրանից արագ
Եվ փղի կարծրը ժանիքների տեղ
Ժանիքներ ունի փղոսկրե ջրի,
Որ կարծր-անշարժ չեն,
Այլ դարահոսուն:

Ասենք թե չասենք՝
Շնորհակալ ենք

Մեքենավարից
Ու մեքենայից:

Գործում է նաև նրա եղբայրը—
Մեկ այլ մեքենա՝
Փոշեհավաքը:
Սա էլ իր հերթին նման է մի շան,
Որի ետևի թաթերը կարծես
Զարդված-սրկված են,
Եվ այդ պատճառով
Նա քարշ է տալիս
Ու... մաքրում փոշին...

Շնորհակալ ենք՝
Առանց խոսքերի:

Ամեն մեկն ունի մասնագիտություն:
Դե՛հ, ես էլ մարդ եմ,
Պիտի ունենամ:
Եվ ունեցածս այդ արհեստներից
Քիչ է տարբերվում:

Ես էլ բառերի լվացարար եմ.
Մաքրում եմ նրանց փոշին դարավոր
Ապատում նրանց կեղտ ու բորբոսից,
Բառակեր ժանգից ու բառաքոսից,
Ջանում, որ նրանք չունենան ջրմուռ,
Եվ... շնորհակալ խոսքի փոխարեն
Ստանում եմ ես շատ հաճախ... մրմուռ:
Եվ գիտե՞ք.
Արդեն չե՞մ էլ նեղանում:
Եվ իմ արհեստն էլ գուցե հենց այս է՝
Մարդկանցից բնավ չնեղանա՞լը...

18. XII. 59
Թիֆլիս

ՄԱՏՆԻՉ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ դառնա՞մ:

Դառնամ
Ոչ միայն խորունկ հանքահորերում
Ծդափոխություն,
Շքանշանի գունեղ ժապավեն՝
Իմ հողը փրկող հերոսի կրծքին,
Այլ նաև դառնամ գերիկոր թևեր՝
Սիրամարգերի՞ն,
Որ երկի՞նք սուրան
Եվ ո՛չ թե քայլեն լոկ հողի վրա:

18. XI. 59
Չանախչի

ԳԱՂՏՆԱԲԱՑՈՒԹՅՈՒՆ

Մտերմությիս է նաև... գիշերը:

Երբ նա՝ լանջաբաց նեգրուհու նման,
Ինձ է հանձնվում
Ու տիրում է ինձ՝
Անվերջանալի գրկախառնումից
Ծնվում է ինքը՝ մեր արշալույսը,
Որ թույլ ու շեկ է՝
Որպես խառնածին:

Եվ օրը գրկած, որպես մանուկի,
Երբ քայլում եմ ես հոր հպարտությամբ,
Ասես լեռները, դաշտերն ու մարդիկ
Լուռ նայում են ինձ
Ու միտք են անում.
Թե այսքա՞ն տգեղ-այլանդակ հորից
Ինչպե՞ս է ծնվել մանուկն այս հրաշք...

18. XI. 59
Չանախչի
18. XII. 59
Թիֆլիս

ԹԱՔՈՒՆ ԵՐԱԶԱՆՔ

Արտառո՞ց եմ ես,
Անհասկանալի՞·
Ոչի՜նչ,
Քեզ կօգնեն,
Եվ կհասկանաս:

Հավատա՛, կօգնե՜ն

Չէ՞ որ ավեն ծառ
Իմ արմատաշատ բացատրումն է
Եվ իմ ճյուղառատ լուսաբանումը:

Ամե՜ն արարած,
Նույնիսկ բլեկը,
Իմ բնագլրի մեկնությունն է հենց:

Ամե՜ն մի կացին,
Ամե՜ն բահ ու մուրճ,
Սարից թավալվող ամե՜ն քարածայռ,
Ափերը թակող ու ետ ընկրկող
Ամե՜ն մի ալիք
Իմ իսկ խոսքերի արձագանքումն են,
Ո՛չ,
Իմ խորքերն են արձագանքումը
Նրանց բոլորի...

Այնպես որ՝ կօգնե՜ն,
Ու կհասկանաս:

20. XII. 59
Թիֆլիս

ՀԻԱՍԹԱՓՎԵԼՍ

Հիասթափվե՞լըս...
Ի՜նչ ասեմ, ինչպե՞ս:
Չէ՞ որ այդ մասին խոսելու համար
Ստիպված պիտի ես վերապատմեմ
Իմ ամբողջ կյանքը՝
Այն պահից, երբ ես
Ձեռքըս մեկնեցի կրակի բոցին՝
Կարծելով, թե դա լաչակն է իմ մոր,
Կարմի՜ր լաչակը,—
Այդ պահից մինչև երեկ իրիկուն,
Երբ...
Սակայն արժե՞
Աղ ցանել վերքին...

18. XII. 59
Թիֆլիս

ՎԱՐԴԵՐԻ ԿԱՐՄԻՐ ՃԻՉՆ ԵՄ ԵՍ ԼՍՈՒՄ

Վարդերի կարմիր ճիչն եմ ես լսում
Իմ ծխամորճի դառն ծխի միջից
Ու ձմռան ճերմակ սառն ծխի միջից:

Փոքրիկ մի թռչուն,
Որի անունը չգիտեմ ցայսօր,
Որ ուշ է չվում— ետ գալիս շատ շուտ,
Ընկրճվածության ծանրը ժամերիս
Համակրանքի խոսք է ինձ ասում
Իմ ծխամորճի դառն ծխի միջից
Ու ձմռան ճերմակ սառն ծխի միջից:
Ու թվում է ինձ,
Թե փոստատարը երջանկացրրեց
Երկու սպասված ու թանկ նամակով,
Մինչդեռ բերել էր լոկ... լրագրրեր...

18. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿԱՌՆԵՐԸՍԱՅՐԸ

Ես եղբա՛յր չունեմ,
Մայրս էլ մեղք չունի:
Ծնել է,
Սակայն ծնելը քիչ է,
Սնելն է դժվար,
Քանի որ հաճախ
Ե՛վ սով է լինում
Ե՛վ գաղթ,
Ե՛վ ավեր:

Ես եղբայր չունեմ:
Ու եղբայրացար,
Ինձ եղբայր դարձար,
Ո՛վ համբերություն:

Ես շատ եմ քայլել քեզ հետ միասին,
Դու իմ մանկության միա՛կ խաղընկեր;
Իմ պատանության միա՛կ գաղտնարան,
Իմ ջահելության լո՛ւռ խորհրդակից:

Փոքր էիր այնքան՝
Երբ փոքր էի ես,
Ինչքան մեծացա՝
Դու էլ մեծացար,
Երկվորյակի պես
Ետ չմնացիր
Ու չթողեցիր երբեք ինձ մենակ.
Երբ տատանվեցի՝
Դարձար ինձ նեցուկ,
Խեղանդամվեցի՝
Դարձար դու հենակ...

Ու դեռ քայլում ենք:
Իմ Համբի՛կ... Համբե՛ր... իմ Համբերությո՛ւն,
Դու էլ ես հոգնել,
Հոգնել ես, սակայն ծպտո՛ւն չես հանում,
Թե տրտընջում ես՝
Միայն ականջիս,
Որ շատ է լեցուն քո շշուկներով,
Ինչպես փչակը՝ շնչով հովերի,
Եվ ա՛յն լռությամբ,
Որ քիչ է լինում,
Եվ ա՛յն լռությամբ,
Որ հասավ թե չէ՝
Ես վեր եմ թռչում,
Ասես խոցեցին,
Ինչպես այն քնած ջրաղացպանը,
Որ իր աղացի խոլ աղմուկի մեջ
Կարող է քնել մեռածի նման
Եվ խայթվածի պես իսկույն արթնանալ,
Երբ որ իջնում է մի պահ լռություն՝
Երբ չի աղմկում իր ջրաղացը...

Իմ Համբի՛կ... Համբե՛ր... իմ Համբերությո՛ւն...

18. XII. 59
Թիֆլիս

ԵՐԿՈՒՆՔԻ ՄԵՋ

Մնալով նո՛ւյնը,
Նո՛ւյնը լինելով՝
Մեծանո՛ւմ եմ ես,
Շարունակվո՛ւմ եմ,
Ինչպես... սենյակը մեծ հայելու մեջ...

23. III. 59
Մոսկվա

ՆԵՐՇՆՉՄԱՆ ՊԱՀԻՆ

Միաժամանակ և՛ բպկանարդ է,
Ե՛վ անաղմուկ է իմ հոգին։
Այդպես
Լինում է միայն համբր կինոյում
Ու... թանգարանում։

19. XI. 59
Ջանախչի

ԱՆՄԵՂ-ՄԵՂԱՎՈՐ

Խակությունից է ատամը առնում։
Ո՛չ միայն ատամն, այլ նաև հոգի՞ն։
Եվ մի՞թե, մի՞թե ես եմ մեղավոր,
Որ խակն ու թթուն շատ է աշխարհում։

19. XI. 59
Ջանախչի

ՓՈՍՏԱՅԻՆ ԼԵԶՎՈՎ

Ես մարդ եմ կոչվում, եթե ոչ—ասե՞մ—
Պիտի կոչվեի հեռագրատուն,
Որ ունի... լոկ մե՛կ հեռագրավար:

Աշխարհի բոլո՛ր-բոլո՛ր ծայրերից
Անծանոթ-անհայտ մարդիկ բյուրավոր
Դարձրել են ինձ գաղտնարանն իրենց.
Առանց ավելորդ որևէ բառի,
Միևնույնիսկ առանց կետադրության,
Գաղտնիքներն իրենց ինձ են վստահում.
Հայտնում և՛ վիշտը,
Ե՛վ խնդությունը:

Լռին վկան եմ ես նրանց սիրո,
Նրանց բաժանման ականատեսը,
Նրանց կարոտի խոսքերը գիտեմ
Եվ տառապանքի շնչին եմ ծանոթ:
Թե հարսանիք է՝
Նրանց բոլորի հյուրն եմ առաջին.
Եթե ծնունդ է՝
Իմն է առաջին բառն աչքալուսի.
Ու եթե թաղում՝
Ես եմ առաջին հուղարկավորը...

Տեղյակ եմ նրանց հաջողությանը,
Տեղյակ եմ նրանց ձախողությանը,
Դատարկ առիթով ուրախանալուն,
Դատարկ բաներից տխրելուն նաև,
Որ միշտ ջանում ու ձգտում են ասել
Առանց ավելորդ ո՛րևէ բառի

Եվ նույնիսկ առանց կետադրության.
Եվ այս պատճառով
Երբեմն կակազ-թլվատ են թվում...

Ես մարդ եմ կոչվում, եթե ոչ... կյանքում
Հեռագրատուն պիտի կոչվեի:

Եվ այդտեղից է գալիս երե՛ք բան.
— Ուրիշների ցավն ու խնդությունը
Իմ սրտին այնքա՛ն մոտ ընդունելը:
— Ծով գաղտնիքներս,
Որոնց մի չնչի՛ն մասն եմ բաց անում:
— Եվ երրորդ՝
Նաև... թլվատությունս...

ՈՒՂՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ես ուղտի նման սակավապետ եմ,
Բայց ոչ ուղտի պես քենը միշտ պահող:
Նման եմ ուղտի և՛ըս մի բանում.

Է՞հ, մեկ էլ տեսար՝
Պար գալըս բռնեց
Խարխուլ ու ճոճկան կամըրջի վրա:

15. XII. 59
Երևան

ԱՌԱՆՑ ԱՍՏԱՌԻ

Ես ուրախության գործակատար եմ
Եվ խոր խնդության վաճառորդ եմ ես,
Բաց կրպակ ունեմ առողջ ծիծաղի
Ու ժպիտների կիսափակ խանութ:
Եվ երջանկության հաղորդիչներ են
Իմ կույգ ափերը
Ու մատներն իմ տաս:
Բերանըս սիրո մի սերտարան է,
Իմ կույգ ոտները՝
Ժամադըրավայր տանող ինքնաշարժ,
Իսկ իմ թևերը՝
Գիրկ ու խտիտի խելացի գործիք:
Կուրծքըս պաստառ է շքանշանի,
Եվ շքանշա՛ն, որ կոչվում է սի՛րտ,
Եվ որ պաստառի ներսից են կրում...

Այսքանից հետո՝
Էլ ի՞նչ կարիք կա,
Էլ ինչո՞ւ եմ ես ինքըս իմ մասին
Ինչ-որ չափածո տեղեկանք գրում:

Աշխարհին ուղղված մի բացիկ եմ ես.
Մի՛ ծրարեք ինձ
Եվ մի՛ սոսընձեք...

19. XI. 59
Չանախչի

ԱՎԱԶԸ՝ ՀՈՎԱՋ

Ես նա եմ նաև,
Ով հասկանում է,
Թե ինչու է միշտ ավազը լռում:

Նա հիշում է այն ջրհեղեղները
Նախապատմական,
Որոնց լուռ վկան նույն ինքն է որ կա.
Իսկ երբ չար քամին
Խաղում է նրա խեղճ ջղերի հետ՝
Հիշեցնելով
Նրա փառավոր անցյալը կորած
Ու նրա ներկան աննախանձելի,
Ավազը հանկարծ հովակ է դառնում
Ճանկռոտում քամու
Ու նաև մարդկանց
Էպիրշ աչքերը:

Ու նաև մարդկա՜նց,
Որ մոռանում են իրենց անցյալը:

15. XII 59
Երևան

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ

Ես նա եմ նաև,
Որ տարբերում է պայծը համբույրից,
Ինչպես սիրոտին՝ սիրահաբվածից,
Եվ մահացումը՝ մեռնելուց:
Իրոք.
Ի՜նչ է իմ գործը,
Եթե ոչ ջոկել
Ո՜չ թե կեղծիքը ճշմարտությունից,
Այլև տարբերել սուտը կեղծիքից,
Ճիշտը՝ ճշմարտից և ճշգրիտից,
Գութը՝ խղճալուց...

Իսկ երբ ես շատ եմ ինքս ինձ նման,
Այսինքն՝ բարձր ինքս ինձանից,
Ես տարբերում եմ մուժը մշուշից,
Ու մառախուղից մեգն եմ տարբերում:
Տարբերում նաև
Բախտավորություն ու երջանկություն,
Ոճիր ու հանցանք:

Ու երբ ես շատ եմ ինքս ինձ նման,
Այսինքն՝ բարձր ինքս ինձանից,
Զարմանալի՜ բան —
Ես՝ Տարբերողս,
Բնա՜վ ամենքից ինձ չեմ տարբերում...

15. XII. 59
Երևան

ԱՐԹՆԱՑՆՈՂ ԺԱՄԱՑՈՒՅՑ

Եվ, վերջ ի վերջո, ես ի՞նչ եմ, գիտե՞ք:

Ես արթնացընող մի ժամացույց եմ՝
Ըստ ձե՛ր ցանկության,
Ձե՛ր ձեռքով լարված:
Ու երբ պետք է ձեզ՝
Սրտաճաք ճիչով
Արթնացնում եմ ձեզ,
Որ քնով չընկնեք:

Եվ հաճախ,
Իբրև շնորհակալիք,
Գլխիս եք բամփում,
Որ ձայնըս կտրեմ...

19. IV. 59
Մոսկվա

ԱՄԵՆԱՎԱՅՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվ ա՛յն հասկացա—
Խինդով ու ցավով—
Որ անհնար է բուրմունքն սպանել,
Հա՛, անհնար է բուրմունքն սպանել՝
Առանց դիմելու նրա ապգական
Գարշահոտության չար օգնությանը:

— Ամենավայրի՜ սպանությունը,
Որ չեն հորինել սուլթաններն անգամ:

[1956]

ՈՉ ԱՌԱՆՑ ՑԱՎԻ

Այն էլ կգացի, ցավո՜վ կգացի,
Որ կտրվելուց հետո է միայն
Երևում ծառի բուն հաստությունը:

15. XII. 59
Երևան

ՀԱՄՐԻՉ ԵՄ ԴԱՐՁԵԼ

Համրիչ եմ դարձել ես ձեր մատներին.
Քաշում-ետ տալիս,
Հաշիվ եք անում
Ու դեռ ուզում եք,
Որ մինչև անգամ ձա՞յնը դուրս չգա,
Որ չշնչկշնչկա՞մ...

15. XII. 59
Երևան

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Եվ ա՛յն հասկացա,
Ո՞վ Ապատություն,
Որ կարծեմ շատ ես դու նման աղի.

Երբ քեզ պեղում են՝
Հանում ընդերքից,
Իրենց ձեռքերն են մարդիկ կտրատում,
Ինչպես ապակուց...
Ու երբ լուծվում ես՝
Ճիշտ աղի նման
Դու չես երևում,
Դու համ ես դառնում...
Իսկ եթե չկաս՝
Անհամություն է,
Որ և կարող է կոչվել բռնություն...
Իսկ եթե չկաս՝
Կարող է հոտել
Ե՛վ թանկ սնունդը,
Որ հոգևոր է...

Իսկապես որ դու նման ես աղի:

18. XII. 59
Թիֆլիս

ԵՍ ՉԵՄ ՇՏԱՊՈՒՄ

Ես չեմ շտապում:

Շտապում է նա,
Ով ուշանում է:

Ես չեմ ուշանում:

Ու թե տանջվում եմ
Ուշացողների երեսից միայն,
Ուշացողների՛,
Որ հաճախ նույնիսկ կարող են կոչվել
Ե՛վ առաջավոր,
Ե՛վ առաջատար:

18. XII. 59
Թիֆլիս

ԵՍ ՉԵՄ ՈՐՈՆՈՒՄ

Ես չեմ որոնում:
Որոնում է նա,
Ով կամենում է ինչ-որ բան գտնել:
Իսկ ես... չգիտեմ, թե ինչպե՞ս գտնեմ

Իմ ունեցածը ցույց տալու հնար:

18. XII. 59
Թիֆլիս

ՌԵՏԻՆ ՉԵՄ— ԹՈՒՂԹ ԵՄ

Ա՜խ, դժբախտաբար, ռետինի՛ց չեմ ես,
Որ ձգես՝ ձգվեմ,
Թողնես՝ կարճանամ,
Ինչքան ճմրթես՝
Թողնելուց հետո
Շուտ վերըստանամ իմ տեսքը նախկին:

Ես, ավելի շուտ, թղթի եմ նման,
Քաշես՝ կպատռես,
Ճմրթես՝ պրծա՜վ—
Իմ նախկին տեսքը չի՜ վերականգնի
Եվ ո՜չ մի արդուկ:

Կյանքի հետքերը վրաս են մնում
Եվ անց չեն կենում,
Ինչպես տառերը՝ մամլված թղթից...

29. XII. 59
Թիֆլիս

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ

Ես էլ հավատո հանգանակ ունեմ,
Որ կարճ լինելով՝
Դյուրին է հիշվում.

— Լավ է չունենալ կյանքում տուն ու տեղ,
Քան թե արվեստում լինել... տնփեսա...

28. XII. 59
Թիֆլիս

ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԳՐՈՏՎԱԾ ԵՄ

Եվ ամբողջովին գրոտված եմ ես,
Այնպես եմ պատված սոսինձ բառերով,
Ինչպես հնձվորի ոտք ու ծնկերը
Փշոտ սերմերով այն լպիրշ բույսի,
Որ հենց այդպես էլ կոչվում է՝ կպչուկ:

Ոտիցը գլուխ գրոտված եմ ես,
Ու եթե վրաս լուսանցք է մնում,
Դա էլ՝ ձե՛ռ համար,
Որ գրի առնեք
Ձեր հապա՞ր ու մի դիտողությունը:

— Մի «կեցցես»-ի հետ՝ հապար «բա եղա՞վ»:

29. XII. 59
Թիֆլիս

ՄԻ ԽՈՐՈՒՆԿ ԳԱՂՏՆԻՔ

Շա՜տ խաթարված է ջաչել իմ գլխին,
Շա՜տ մտրակ՝ մեջքիս հատցեագրվել,
Եվ հարվածների, վարկերի թիվը
Համրելու համար ինձ պետք է եիմա
Մի պատկառելի հաշվապահություն:
Բայց...
Այսօր բացեմ գաղտնիք մի խորունկ
Որ անշուշտ պիտի խիստ ցավ պատճառի
Ինձ ցավ պատճառել ցանկացող մարդկանց:
Նրանք վարկե՜լ են, հարվածե՜լ, ծեծե՜լ,
Բայց ինձ ո՜չ մի վարկ չի հասել բնավ,
Ինձ ո՜չ մի հարված չի դիպել երբեք,
Ու ես ո՜չ մի ծեծ չեմ կերել կյանքում:

Նրանք վարկե՜լ են, հարվածե՜լ, ծեծե՜լ
Ո՜չ թե ինձ,
Այլ լոկ այն տեղը, ուր ես
Կանգնած եմ եղել մի վայրկյան առաջ,
Մի վայրկյան առաջ... առաջ եմ անցել:

Եվ, այնուհանդերձ, եթե ինձ նրանք
Ցավ են պատճառել,
Ապա ա՜յն փոշով,
Որ բարձրացել է նրանց հարվածից
Եվ ինձ հասնելով լոկ հեռվից հեռու՝
Լցվել է իրե՜նց, իրե՜նց աչքերը...

[1959]

ՊԻՏԻ ԾԱՆԱԿՎԵՄ

Գիտե՜մ, վերջստին պիտի ծանակվեմ,
Սակայն ի՜նչ արած,
Չասել չե՜մ կարող,
Որ լռությունը նույնպե՜ս գույր ունի.
Սպիտակ է նա,
Այնքա՜ն սպիտակ,
Որ աչք է շաղվում...

Փառքը համ ունի՝
Թթվաշ ու տտիպ,
Որ ախորժակ է գրգռում միայն՝
Չտալով հագուրդ...

Խանդը հոտ ունի՝
Այն հոտը արյան,
Որ ցուլերին է կատաղեցնում...

Եվ արյուն ունի նաև նախանձը.
Արյունն այդ սև է,
Ինչպես արյունը միջատ-մրջյունի...

19. XII. 59
Թբիլիսի

ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐ

Հուսահատության պահե՞ր։
Ինչպե՞ս չէ.
Լինում են, լինո՞ւմ,
Նույնիսկ ավելի՛, քան հարկավոր է։

Հուսահատվում եմ ինքս ինձանից.

— Երբ շատ լավ գիտեմ,
Որ պետք է ասել «այո»,
Մինչդեռ ես «ոչ» եմ բղավում...

— Երբ ես՝ խելահաս ու հասուն արդեն,
Երեխայի պես այն եմ դուրս տալիս,
Ինչ տան գաղտնիք է.
Փոքրը տան թե մեծ,—
Մի՞թե նույնը չէ...

— Երբ իմ սիրածից չհիասթափված,
Ավելին՝ նրան դարձյա՛լ սիրելով՝
Հափշտակվում եմ նորահայտ մեկով...

— Երբ ես հենց այսպե՛ս անկեղծանում եմ
Ի՛նքս էլ, ա՛խ, ի՛նքս էլ լավ հասկանալով,
Որ արդեն այսչափ անկեղծանալուց
Մինչև երջանիկ հիմարությունը
Կես քայլ է միայն...

— Հուսահատվում եմ նաև ա՛յն բանից,
Թե որքա՞ն պիտի դեռ հուսահատվեմ
Ինքս ինձանից...

26. XII. 59
Թբիլիս

ՁՐԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Ձրերի լեզուն ասես ինձ համար
Կիսով սովորած օտար լեզու է.
Ի՞նչ էլ որ ասեն՝
Հասկանում եմ լավ,
Բայց պատասխանե՞լ
Չե՞մ կարողանում...

19. XII. 59
Թբիլիս

ԱՆԿՈՉ ՀԱՅՐԸ

Անհանգըստությո՛ւն,
Հաճախ է լինում,
Որ կամենում եմ քեզ «հայրի՛կ» կոչել:

Ո՛վ էլ չիմանա՝
Ինքըս լա՛վ գիտեմ,
Թե ոնց եմ ուզում
Մտքով ու հոգով
Մի տեղից այլ տեղ,
Սրտից սիրտ քոչել:

Ախար որտեղի՞ց
Այս վաչկատունի արյունը իմ մեջ,
Եթե նախնիքըս,
Հի՛նգ հազար տարի,
Ապրել են անվերջ նստակյաց կյանքով:

19. XII. 59
Թիֆլիս

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Եվ ի՞նչ ենք ախար մենք անում, գիտե՞ք:

Կասեք՝ ապրում ենք,
Այնինչ ես կասեմ,
Որ մենք նստել ենք մի մե՛ծ կարուսել՝
Նույն ուղեծիրով անվերջ այտըտվող
Այս Երկրի վրա:

Եվ դուք դրանից ձեզ վատ չե՞ք զգում:

Իսկ ես, ճիշտն ասած. այդ կարուսելից
Գլխապտույտ եմ ունենում հաճախ...

20. XII. 59
Թիֆլիս

ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ՍՈՆԱՏ

(Հինգ նվագով՝ մինոր հնչականությամբ)

Ա. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից գուցե մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,—
Կիսախելագար մտքեր են գալիս
Որ խտանում են իմ խեղճ գանգի մեջ,
Խտանում, ինչպես սերմերը՝ հասկում:

Ես միտք եմ անում,
Ա՜խ, եթե մեռնելն այնպես հեշտ լիներ,
Ինչպես ծնվելը...
Բայց մինչև անգամ թե այդպես լիներ՝
Կշահեինք մե՛նք,
Դարձյա՛լ-վերստի՛ն-կրկի՛ն-նորի՛ց մե՛նք.
Բայց ո՛չ մայրերը:

Բա մեղք չե՞ն նրանք...

Բ. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից իզո՛ւր մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,

Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,—
Պարապ քայլերով պատից մինչև պատ՝
Կոշիկիս մոթով ու կրունկներով
Խով նվագում եմ հատակի վրա,
Որ տանտիրուհու ձեռքի է կարոտ,
Եվ այդ նվագին ունկ չդնելով՝
Հանկարծ միտք անում,
Թե շունն ինչո՞ւ է հաչում Լուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա:

Եվ չգտնելով հարմար պատասխան,
Ավելին՝ նույնիսկ չըորոնելով,
Զգում եմ, թե ես ո՞նց եմ կարոտել
Ա՛յն ավազակին,
Որ կոչվում է շոգ:

Գ. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից արդե՛ն մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,—
Աչքըս, ակամա,
Ճամփորդության է դուրս գալիս հանկարծ,
Դիմացի շենքի
Զարդաքանդակված քիվի երկայնքով
Ճամփորդում այնպե՛ս կգույշ ու դանդաղ,
Ասես մրջյուն է
Եվ ոչ թե հայացք:
Ճամփորդում է նա քիվի երկայնքով,
Եվ հասկանում եմ ես լուսնտներին:
Ու հանկարծ,—
Կյանքումս առաջի՛ն անգամ,—

Լուռ միտք եմ անում.
Լուսնային ախտով հիվանդներ թե կան,
Իսկ ինչո՞ւ չկան
Արևի ախտով տառապող մարդիկ,
Եվ դա չի՞ կապվում այն առեղծվածին,
Թե շունն ինչո՞ւ է հաչում Լուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա...

Դ. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից վադո՞ւց մոռացված
Նույն այդ անձրևն է ինքն իրեն թախծում,
Երբ տխրությունը դարձյա՛լ իմ տան մեջ
Իրեն պահում է տանտիրոջ նման,—
Գրասեղանից մի գիրք եմ վերցնում,
Որ՝ հետապընդված իմ իսկ մտքերից՝
Գեթ ապավինեմ էջերին նրա:

Վերցնում եմ և— ի՞նչ.
Խորհում ակամա,
Որ նույնիսկ գիրքը... նա էլ է նեղվում՝
Ընդմիշտ սեղմված ամուր կապմի մեջ..

Ե. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից ընդմի՞շտ մոռացված
Նույն հին անձրևն է թախծում ինքն իրեն,
Եվ տխրությունը իմ ներկայությամբ
Տանը մեջ իրեն տանտեր է զգում.—
Էլ ի՞նչ է մնում,
Որ ես ինչ անեմ.—
Գլուխս եմ կողպում

Ու բաց եմ անում փակված բերանը.
— Է՛յ, ընկե՛ր երկինք,
Մի՛ խուլիգանիր,
Թե չէ՝ միլիցիա կկանգահարեմ:

Զայնը չի՞ հասնում հեռու երկընքին,
Թե՞ միլիցիայից նա չի երկյուղում
Եվ բաց չի անում իր դեմքը ամպած.
Ամենքի կողմից իսո՞ւր մոռացված
Այդ նույն անձրևն է թախծում ինքն իրեն,
Իմ տուն ներս եկած տխրությունն անկոչ
Տանտիրությունն է դեռ շարունակում,
Ու ես, կայրագի՛ն.
Ու ես, ճարահա՛տ,
Քենքս թափում եմ իմ խոհանոցի ծորակի վրա,
Որ բաց է եղել.
Ես խեղդելո՛ւ պես ծորակն եմ փակում:

Եթե անպոր եմ երկընքի հանդեպ,
Այս լիրբ ծորա՛կը թող լռի գոնե,
Որ... չատեմ ջուրը
Ու չկարոտեմ ա՛յն ավազակին,
Որ շոգ է կոչվում:

19. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

I

Ճանապարհների փոշիների մեջ
Դնում են կնիք նախարարական,
Մի կնիք,
Որի՛ հաշվի չի առնում
Լոկ օրինականց-քրեագործ քամին...

Սրտի տրոփ ու բաբախ են բաշխում
Մայթերին անկյանք...

Վստահություն են ներշնչում հողին,
Ա՛յն վաղընջական—հինավուրց հողին,
Որ չի կորցնի վստահությունը...

— Այդ... իմ քայլե՛րն են:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

II

Մի քիչ կարմանք են պատճառում մարդկանց,
Բայց ավելի շատ՝ անախորժություն...

Փակ դուռ բացելու սուր ճռինչ ունեն,
Հին դուռ փակելու ցավալի թակոց...

Ուրիշի շրթին պաղած են թվում,
Մինչդեռ այրում են իմ բերանը՝ մի՛շտ...

— Այդ... իմ խոսքե՛րն են:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

III

Կանուչ մամուռից արցունք է ծորում,
Ծորում է դանդա՛ղ,
Ծորում է անձա՛յն
Ու մեղմիկ ճթթում
Այն քարաժայռի փոքրիկ սանդի մեջ,
Որ ինքն է փորել:

Ճթթում է մեղմի՛կ,
Իսկ իմ ականջում
Դա փոխարկվում է ահեղ դղրդի՛...

— Անքնությո՛ւնս է:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

IV

Հանկարծ զգում եմ ինձ ապատ— այնպե՛ս,
Ինչպես հովատակն՝ արոտում արձակ,
Ինչպես կրակը՝ վառվող անտառում...

Թվում է՝ կյանքում ամե՛նքն են խելոք,
Ամե՛նքն են իրոք ամե՛ն ինչ զգում...

— Այդ... ես եմ երգում՞
Միայն ի՛նձ համար:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

V

Քայլում եմ գարնան լեցուն փողոցով
Ու չեմ նկատում մինչև իսկ կանանց,
Որ գեղեցիկ են՝ բարկացնելո՛ւ չափ...

Քայլում եմ այնպես դանդա՛ղ-գլխիկո՛ր.
Ասես փողոցն է հանգուցվել ոտիս
Ու խճողում է քայլքս, խճճում...

Արփին շողերի ցած մեկնած ճանկով
Գոռալ մայերս է թերևս քաշում,
Որ վառի-ցնցի և ուշքի բերի,
Բայց ես չեմ կգում ո՛չ ցավ,
Ո՛չ այրուցք...

Արյունը այնպես դանդաղ է հոսում,
Ինչպես հարթ հովտում գետը ծավալված,
Երբ չես էլ կարող հասկանալ կարգին,
Թե նա ո՛ր կողմից ո՛ր կողմն է հոսում...

Մի բան եմ հիշում
Եվ կիսատ թողած՝
Մտքով կառչում եմ մեկ ուրիշ բանի...
Ինքս ինձ խղճում,
Ուզում եմ, որ ինձ
Մի փո՛քր սիրեն՝
Թեկուզ նպաստով...

— Այդ... ես եմ թախծում...

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

VI

Ետ-ետ են գնում պատերը հանկարծ,
Անվերջ հեռանում,
Դառնում հորիզոն,
Թե՞ հորիզոնն է այնքան մոտենում,
Որ եթե ուզեմ,
Որպես նոր կախարդ,
Իմ զույգ ձեռքերով կարող եմ հունցել
Նրա կապույտը՝
Խմորի նման...

Աղմուկ ու ժխոր ողողում են ինձ,
Բայց ինձ չեն կպչում,
Ինչպես ձկանը՝ ջուրը օվկիանի...

— Իմ... լռությո՛ւնն է:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

VII

Լռին շրթերը մի բույն են դառնում,
Ուր թռչուն է նստում քմծիծաղն ինքը...

Նայում եմ, սակայն ոչինչ չեմ տեսնում:
Ու թե տեսնում եմ
Միայն ինքս ինձ...

Վաղուց այր հասուն՝
Զգում եմ հանկարծ,
Որ ես տակավին հասակ եմ առնում,
Ինքս մի գլխով բարձրանում ինձնից...

Վստահությունը ստվերս է դառնում
Կամ առաջնորդը:

— Արհամարհա՛նքս է:

31. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

VIII

Երդիկի նման՝ բաց են աչքերը,
Բերանս է բացվում մի բան դռան պես,
Բայց նա— ծխի պես— մնում է ներսում
Ու խեղդում տան մեջ բնակվող խեղճիս...

Ճչում է, սակայն... ինչպես քնի մեջ.
Ճիչը դառնում է մի խուլ փնթփնթոց...

Եվ ի՞նչ թափով էլ ինձնից վեր նետեմ
Նա — քարի նման — ներքև է ընկնում...

Ու նմանվում է մի չեղա՛ծ թվի,
Որ չի բաժանվում այլ թվի վրա...

— Այդ... իմ տանջա՛նքն է:

31. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

IX

Հանգիստ չեն տալիս ինձ օր ու գիշեր,
Իմ հոգսը թողած՝
Հոգում ձե՞կ համար...

Լվացարարի տենդով են այրվում,
Ուզում են մաքրել աշխա՞րհը համայն...

Որքան քշում եմ, որ ինձնից վանեմ,
Այնքան գալիս ու պոկ չեն գալիս՝
Մեղրի հոտ առած մեղուների պես...

Միաժամանակ պահակ են ու գող,
Միաժամանակ ծառա են ու տեր,
Միաժամանակ իմն են ու ձերը...

— Այդ... իմ խոհե՞րն են:

18. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

X

Ինչպես խարույկը լույս է շաղ տալիս
Եվ անջատում է գույն ու ջերմություն,
Այդպես էլ ինձնից պոկվում է ծիծաղ,
Թափվում է ժպիտ,
Եվ բարություն է կաթկըթում անվերջ
Իմ դեմքից,
Նաև հագուստի՞ց անգամ...

Ինքըս վերըստին ինձ եմ նմանվում
Ու ճանաչում եմ կրկին ինքըս ինձ.
Զգում եմ, որ ես իմ հորն եմ քաշել,
Եվ ինձ չի եղծել կյանքը ոչնչով...

Որտեղ էլ լինեմ՝
Իմ տանն եմ կգում,
Եվ բաց է սիրտըս՝
Հեռագրատան դռների նման...

Համբույրի պես է նայվածքըս ջերմին,
Խոսքըս՝ համբույրի շարունակություն,
Որից կարող են... մանուկնե՞ր ծնվել...

— Այդ... ես եմ ուրա՞խ:

31. XII. 59
Թիֆլիս

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

XI

Նա թարգմանիչն է ձեր այն (ինչերի՞),
Որ չեն հասցրել անգամ մի՛տք դառնալ,
Այլ ընդամենը շարժում են հոգու,
Խաղ են մկանի
Կամ արյունի եռք...

Նույն ինքը նա է,
Որ լաց է լինում
Խաղալիք ուզող ձեր երեխայի
Անմեղ աչքերով,
Եվ ժպիտ դառնում
Ձեր նորածինի երեսի վրա...

Թեպետ չգիտի ճանփան էլ ձեր տան
Եվ ո՛չ մի անգամ չի եղել այնտեղ,
Բայց ձեվ այնքան է բարեկամ ներքուստ,
Որ նրա վրա նույնիսկ չի հաչի
Ձեր կգոն շունը...

Նա ձեր փոխարեն
Ձեր երակներն է տեսնում քնի մեջ...

— Այդ... ե՞ս եմ որ կամ:

31. XII. 59
Թիֆլիս

ՇԱՐՔԵՐԻՑ
ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻ ՔԻՉ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.

Ա՜խ, իմ մեծ Սերը...

Նա հավասար է
Կորած հույսերիս ճիշտ քառակուսուն
Ու երալանքիս խեղճ մնացորդին...

ՄԻ ՔԻՉ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.

Ա՜խ, իմ մեծ Վիշտը...

Եվ նա իմը չէ,
Այլ բոլո՜ր նրանց,
Ում որդին եմ ես
Եվ կամ թե հայրը:

Ա՜խ, իմ մեծ Վիշտը,
Որ չի բաժանվում ամենքի վրա...

[1959]

Աստծու քարտուղարը

«ԾԽԱՆԻ ԾՈՒԽ» շարքից

ՆԵՐՇՆՉՄԱՆ ՊԱՀԵՐԻՆ

Այս պահերին աշխարհում
Ես հարուստ եմ բոլորից:
Ես բարի եմ մանկան պես
Այս պահերին աշխարհում:
Այս պահերին թվում է՝
Փակ դուռ չկա ինձ համար—
Ուր էլ գնամ՝ կընդունեն,
Եվ չեն մերժի՝ ինչ ուզեմ:
Այս պահերին թվում է,
Որ խողագունդը համայն
Ես կարող եմ մի խոսքով
Լաց լինելու չափ հուզել.
Ես կարող եմ մի խոսքով
Թախծոտ մորը սփոփել,
Իմ մի խոսքով կարող է
Սիրտը սիրով տրոփել.
Իմ մի խոսքով կարող է
Գնալ կինվորը մարտի,
Իմ մի խոսքը կարող է
Մարդ դարձընել տմարդին:
Ես կարող եմ ձեռք բերել
Իմ մի հատիկ մի խոսքով,
Ինչ չեն կարող ձեռք բերել
Ո՛չ արյունով, ո՛չ ոսկով,
Ո՛չ հրդեհով, որ տներ
Ու քաղաքներ է վառում...

Ես կորեղ եմ ամենքից
Այս պահերին աշխարհում...

[1955]

ԹՌՈՒՑԻԿ ԵՐԳԵՐ

ԱՆՊԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Մտքեր խա՞կ, թե՞ հատուն,—
Ո՞ւմ է պետք երգի մեջ:

(Մի կտոր հանածո ոգի է հարկավոր,
Մի պատառ կախարդանք,
Մոգության մի պճեղ,
Մի բացվող փակագիծ,
Անհայտի մի լուծում)...

Շրջում են «ինչու»-ներ՝ էակներ սապատված,
Որ չունեն օթևան ու չունեն դեռ անուն:
Հոգու մեջ տալ անկյուն ու լեցվով մկրտել
Սապատված մի «ինչու»—
Ու երգը կինչի՞...

Հույսեր մե՞ծ, թե՞ ճղճիմ,—
Իսկ ո՞վ է վճռելու:

(Մի կտոր արնածոր տաք միս է հարկավոր՝
Սեփական ձեռքերով իրենից պոկոտած,
Մի սարսուռ օդեղեն,
Մի սարսում ընդերքի)...

Մթության երանգներն առատ են ավելի,
Քան բոլոր մնացած գույները գումարված:
Խուսափուկ խիրտի քղանցքից գեթ կառչել,
Ստվերի վետվետուն քայլվածքը ճանաչել,—
Ու երգը չի՞ կարող չինչել ինքնակամ...

Ի՞նչ անել և ինչպե՞ս.
Հա՞ստ մանել, թե՞ բարակ:

(Լի օրվա երակին պատվաստել կիրակի՞,
Վեճ մղել ծովի՞ հետ,
Ամաչել կրակի՞ց,
Չուշանա՞լ, չշտապե՞լ),—
Եվ այնժամ, օ, հարկավ
Իր պոչին կտնկվի ձվաձև առարկան,
Եվ արփին ափիդ մեջ կդառնա ծվածեղ...

7. X. 61
Երևան

ԱՐՎԵՍՏ

Քամին է երգում ինչ-որ եղանակ,
Որ Բեթհովենին պատիվ կբերեր:

Մութ հորիզոնին աղոտ այգալույս՝
Մի ռեմբրանդյան նորահայտ նկար:

Շեքսպիրին է կյանքը ձեռ առնում՝
Իր ողբերգական դերամաներով...

Իսկ մե՞նք՝ ե՞ս ու դո՞ւ... արվեստ ենք խաղում
Եվ... մի այնպիսի՞ համոզվածությամբ,

Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

20. III. 59
Մոսկվա

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՜ւշ-ո՜ւշ են գալիս, բայց ո՜չ ուշացած,
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված՝
Սերում են նրանք և ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՞ր կարող ապրել քարայրում:

Սերում են նրանք և ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Սերում են նրանք և ա՛յն պատանուց,
Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:

Սերում են նրանք բոլո՜ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թե անե՛ն մտածածն իրենց,
Ի՜նչ փույթ, թե սատկեն ժամանակից շուտ:

Անվտանգ՝ ինչպես հրդեհն արևի,
Անվնաս՝ ինչպես օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետություններին
Մինչևիսկ իրենց կամքի հակառակ

Արքաների հետ խոսում են «դու»-ով,
Եթե, իհարկե, լսում են նրանց,

Իսկ թե չեն լսում՝ մե՛կ է, չե՛ն լռի,
Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՛ հետ:

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

9. X. 61
Երևան

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿՅԱՆՔԸ

Արարատի պես—
Ոտքերը՝ հովտի ջերմությամբ վառած,
Կատարը՝ սառած:

Տիեզերական հրթիռի նման—
Բոցը՝ դեպի ետ,
Գլուխը՝ առաջ:

Շրթերի վրա՝ համրաձայն բառեր,
Իսկ սրտում՝ դղիրդ,
Իսկ հոգում՝ շառաչ...

Թո՛ղ նրա կյանքը մինչևիսկ լինի
Մի շուտամելուկ և կամ հանելուկ,
Միայն թե դառնան խոսքերն էլ... առած...

16. III. 59
Մոսկվա

ԻՆՉՊԵ՞Ս ԹԵ ԲԱԽՏ ՉԿԱ...

Առանց հայելու էլ ես ինձ տեսնել գիտեմ
Ծառաբնի՛ վրա, քո ափի՛ մեջ:
Եվ այդ վայրկյաններին ես ինձ դուր եմ գալիս,
Ինչպես դուր է գալիս ինձ իմ տղան:

Պտտեցնում եմ մատը և... փոխարեն թելի
Մատիս փաթաթվում է երկնի կապույտն ինքը:
Ոտներիս հետ հողն է սիրաբանում,
Եվ խաղողի վազն է ընձյուղ տալիս
Վառվող ծխամորճիս կրակի մեջ...

Ինչպե՞ս թե բախտ չկա, էլ նա ո՞նց է լինում...

Եվ սխալ է, որ մենք վայրկյաններով
Ժամն ենք չափում: Ճիշտը հակառակն է գուցե՝
Կարճ ժամերով չափել վայրկյանները երկար...

Ա՜խ այդ վայրկյանները, որ գալիս են ուշ-ուշ,
Ինչպես մարգարեներն ու հերոսներն այն կենտ,
Որ մի ազգ են փրկում բազկով և կամ խոսքով...

Ու ես մտածում եմ, որ հիրավի
Ժամացույցից պիտի շինել շաքար
Ու լուծելով ջրում՝ ըմպել կում-կում,
Իբրև անքնություն փարատող դեղ:

Եվ հայելուց... պիտի կոշի՛կ կարել,
Որ ոտնատակն անգամ հողը արտացոլի...

Իսկ սեփական անձի արտացոլման համար
Չեպ հայելի պե՞տք է։
Ինձ հայելի պետք չէ։
Ռետինի պես ձգվող վայրկյաններ կան,
Երբ ինձ տեսնում եմ ես առանց հայելու ել՝
Ծառաքնի՛ վրա,
Քո ափի՛ մեջ,
Նաև ինքնահավան ինքնահոսիկ ծայրի՛ն...

30. IX. 61
Երևան

ԱՐՇԱԼՈՒՅՍԻՑ ԱՌԱՋ

Արշալույսից առաջ քունն ավելի խորն է:

Նահանջած են լինում մղձավանջներն արդեն:
Օդը երակներ է տեղափոխում,
Դեռ ձև ու կերպ չառած նոր երակներ պես-պես՝
Ծնված տրրամվայի կրընգոցից մրսկան,
Ողջույնի տեղ հնչող երեխա,ի լացից,
Թարմ բուրմունքից հացի,
Որ լուռ թավորվում
Եվ փակ մեքենայում էլ չի՞ սեղավորվում:

Հիմա հավատում են երակներին
Շատ քչերը կյանքում:
Ես նրանց մեջ չկամ:
Եվ քանի որ չկամ՝
Ինձ խղճում եմ
(Նախանձելի բան չէ խելքի գալը)...

... Արշալույսից առաջ քունն ավելի խորն է,
Բայց մոտիկ է նաև արթնացումը:
— Կբացվի նոր մի օր՝
Ինչպես աչքակապը
(Մանուկ հասակում են պահմտոցի խաղում):
Կբացվի նոր մի օր՝
Ինչպես վիրակապը
(Երեկվա խոր վերքն է սպիացել արդեն):
Ու եթե խոր վերքն է սպիացել արդեն,
Արժի՞ արդյոք հիմա,
Արժի՞ ասել արդյոք,
Որ վերքերը, ճիշտ է, լավանում են,
Բայց դրանից միշտ էլ կրճատվում է մաշկը...

13. XI. 61
Երևան

ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌԸ

Պոկված անտառից՝
Մենակ ու մռայլ,
Մի ծառ է ցցվել բարձունքի վրա:

Ինչպե՞ս չի սիրում անտառը նրան,
Ինչպե՞ս է ծաղրում,
Քրքջում վրան,
Ի՞նչ է թե հսկան
Այս թզուկների
կամքին
ու
կյանքին
Չի՛ կարողանում իրեն ենթարկել,
Ի՞նչ է թե նրանք չե՞ն կարողանում
Իրենց նեղվածքում սրան բանտարկել...

Եվ չի՛ հասկանում անտառը հիմար,
Թե ծառն այդ ինչ է անտառի համար.

Կաղնի՞ն՝
Անտառի կանաչ շանթարգե՛լ...

21. IV. 59
Մոսկվա

ՈՍԿԻՆ ՎԵՐՍՏԻՆ ՈՍԿԻ Է ՄՆՈՒՄ

Շրթերիս վրա խոսքեր են դողում՝
Խոսքեր արտառո՛ց,
Իմաստակրկվա՛ծ,
Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,
Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր:

Ուզում եմ ասել.
— Գթասի՛րտ եղեք,
Եղեք ողորմա՛ծ,
Մարդու նկատմամբ մա՛րդ եղեք, մարդի՛կ:

Ու երբ չգործած մեղքերի համար
Մարդը հայցում է մեղքի թողություն
Ու ներողություն՝
Ոչնչի՛ համար,—
Գոնե գթասիրտ-ողորմած եղեք,
Անարտության մեջ մի՛ եղեք համառ...

Շրթերիս վրա խոսքեր են դողում՝
Խոսքեր արտառո՛ց,
Իմաստակրկվա՛ծ,
Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,
Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր:

Հնացա՛ծ խոսքեր,
Հնացա՛ծ,
Ինչպես ոսկին է հիմա,
Որով աղ ու ծախ արդեն չեն անում,
Սակայն դրանից ոսկին ո՛չ մի տեղ
Երբեք չի դարձել ժանգոտած թիթեղ.

Ոսկին վերջապես ոսկի՛ է մնում...

1. XI. 58
Մոսկվա

ԱՐՄԱՏՆԵՐԸ ՈՒ ՄԱՏՆԵՐԸ

Ա՛յ թե ճանաչել,
Ա՛յ թե իմանալ ընդերքն ու հողը,
Բայց ո՛չ թե ինչ-որ երկրաբանի պես՝
Ծակելով հողի կողը
կամ ողը.
Եվ ո՛չ էլ իբրև ինչ-որ հնաբան՝
Գործի դնելով բրիչ, բահ ու բան.
Եվ ո՛չ էլ անգամ՝
Ինչպես ես գիտեմ իմ հինգ մատները:

Ա՛յ թե ճանաչել ընդերքն ու հողը,
Ինչպես, երևի, հողն են ճանաչում
Լոկ արմատնե՛րը:

28. IV. 59
Մոսկվա

ՄԻԱՆԳԱՄԻՑ

Ասում են, թե միանգամից կյանքում ոչի՛նչ չի կատարվում.
Միանգամից ո՛չ մի կարպետ և ո՛չ մի գորգ չի պատրաստվում,
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից,
Միանգամից ձյուն չի գալիս և չի փչում անգամ քամին:

Մի՛րգ չի հասնում միանգամից, ո՛ւր մնաց թե՝ խելոքանան,
Զո՛ւյգ չեն կազմում միանգամից, ո՛ւր մնաց թե՝ երեքանան:
Միանգամից չեն կշտանում և չեն կգում ջրի կարիք,
Ո՛չ այսօրն է անցյալ դառնում, ո՛չ էլ վաղն է դառնում գալիք:

Այս ամենը ճիշտ է, հարկա՛վ,
Հենց այսպես է, ինչպես որ կա:
Սակայն եթե իմ կյանքի մեջ գեթ հարցնեին մի՛ անգամ ինձ,
Թե ես ի՞նչ եմ գերադասում,
Ի՞նչ եմ ուզում
Ու երազում,
Ես կասեի.
— Ինչ լինում է՝ թող որ լինի միանգամի՛ց...

28. I. 62
Երևան

ԵՎ ՈՒՐԻՇ ՈՉԻ՞ՆՉ

Զորից թռչելիս,
Ժայռից ցատկելիս,
Որպես կենդանի-շնչող արարած,
Նա խեղանդամվում
Ու տնքտնքոցով քարշ տալով ոտը՝
Փոշի է հանում ճանապարհներին...

—Իսկ մենք պալպապես կոչում ենք... քամի՛.
Եվ ուրիշ ոչի՞նչ:

Նա էլ, մարդու պես,
Ունի ամոթի զգացումը նույն,
Դրա համար էլ
Հագուստ է գործում խոտից ու թփից,
Որպեսզի ծածկի իր մերկությունը...

— Մենք ընդամենը կոչում ենք... առո՛ւ,
Եվ ուրիշ ոչի՞նչ:

Առասպելական հսկա մարջաններ,
Որ վկնոց դարձած՝
Զուգում են վիպը պատրշգամբների,
Մի բան էլ ավե՛լ—
Ունեն համ ու հոտ...

— Իսկ մենք կոչում ենք... պղպե՛ղ կամ տաքդե՛ղ.
Եվ ուրիշ ոչի՞նչ:

Զուգված ավապի դեղին կապրոնով
Եվ անձեռագործ նեյլոնով կանաչ՝
Հնչեցնում է նա իր ջինջ սոպրանոն...

— Իսկ մենք պարկապես կոչում ենք... աղբյո՛ւր.
Եվ ուրիշ ոչի՞նչ:

Մի մե՛ծ, երփներանգ յուղաներկ կտավ,
Որ ժամեր հետո փոխվում է հանկարծ
Սև ու միագույն խորանկարի...

— Իսկ մենք կոչում ենք լոկ... օ՛ր ու գիշե՛ր.
Եվ ուրիշ ոչի՞նչ:

Հրա՞շք իսկական,
Կոչում ենք... գլուխ:

Լեցուն գաղտնարա՞ն,
Անվանում ենք... սիրտ:

Մի քայլող աշխա՞րհ,
Մարդ ենք հորջորջում...

Եվ... վա՛յ ինձ ու ձեզ.
Այսքանից հետո
Մենք մեզ կոչում ենք նաև... բանաստե՛ղծ...

18. XII. 59
Թիֆլիս

ԴԻՄԱՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

Քո կյանքը ապարդյուն անցավ.—
Անօգո՛ւտ, իպո՞ւր տեղ կորար,
Ինչպես որ բաց ծովի վրա
Տեղացող անձրևը վարար.
Շահեցիր յոկ ծաղր ու ծանակ՝
Միայնակ ցուցարարի պես.
Ո՛չ հասար, ո՛չ էլ ետ դարձար՝
Անհասցե փակ ծրարի պես...

[1956]

ԼԱՑ ԷԼ ԿԱ, ԼԱՑ ԷԼ

Մեկը լալիս է նորածնի պես՝
Ճչում է, սակայն... արցունքներ չկան:

Մեկն էլ բերանից ծպտուն չի հանում,
Բայց արցունքներն են շիթ-շիթ լճանում:

Մեկն էլ, ինձ նման (գուցե նաև՝ քե՞զ),
Բարձր ճչալու սովոր չէ բնավ,
Եվ արցունքներն էլ աչքից չեն հորդում,
Այլ հոսում են ներս
Ու կիտվում դանդաղ
Չեչաքարի պես ծակծկված սրտում:

14. X. 59
Չանախչի

ՑԱՎՆ Է ՀԱՃԱԽ ԱՌԱՋ ՄՂՈՒՄ

Անհարմար է բոբիկ քայլել,
Այս կոշիկն էլ շատ է նեղում:
Ինչպե՞ս քայլել առանց ուղու,
Այս ճամփան էլ շատ է շեղում:
Դոփել տեղո՞ւմ: Բայց դրանից
Ո՛չ կոշիկը կլայնանա,
Ո՛չ էլ ցավը կմեղմանա...
Ցա՜վն է հաճախ առաջ մղում:

[1956]

ՍԵՎ ԿԱՏՈՒ

Իմ սևության համար դու արևի՛ն դիմիր,
Պայծառության համար՝ ի՛նձ միմիայն,
Իսկ ես պիտի դիմեմ այն հորթ-արջառներին,
Որ չեն դարձել դեռ եզ,
Սակայն պիտի՛ դառնան:
Եվ ասածիս վրա շատ էլ մի՛ միտք արա:
Միտք անելու համար ճակատ չեն համբուրում:
Ճակատն առհասարակ հո համբույրի տեղ չէ.
Մի փորձադաշտ է նա, ուր ցանում են կնճիռ:

Ու երբ միտք եմ անում, որ բյուր դարեր առաջ
Ես քայլեր եմ փոխել շա՜տ ավելի հարմար՝
Չորս թաթերի՜ս վրա,
Պոչի՜ս ուղեկցությամբ,
Ու չեմ փնտրել բառե՜ր,—
այդ պահերին
Ինձ ողբում եմ՝ օտար մեռելի պես,
Հետո էլեկտրական ածելիով
Սափրվում եմ մաքուր ու դուրս գալիս,
Որ հմայքը չափեմ օտար կանանց,
Խոտի աճման համար հարկ վճարեմ աչքով,
Փողոցները կտրեմ՝ առանց «անցումներ»-ի,
Ինքնագլուխ— ապատ սև կատվի՛ պես:

Խեղճ սև կատուները ունեն շա՜տ վատ համբավ.
Մարդ ու մեքենավար նրանց հայհոյում են:
Շատ կուզեի գոնե չհավատալ,
Թե իմ կատվանման անցումներից
Պատահել է գեթ մի ավտովթար...

30. IX. 61
Երևան

ԱՆՏԱՌԻ ՎԵՊ

Ծերունի թեղին ու ջահել թխկին
Թեքվելով իրար
Եվ արև տալով
Իրենց ստվերում դողացող ծաղկին՝
Զրույց են անում,
Մի զրույց անծա՛յր:

Կանաչ բացատից,
Ուր տաք է, պայծառ,
Ոտներս ինձ կրկին թավուտ են տանում:

Ականջս անտառի խոսք ու զրույցին՝
Ես քարանում եմ,
Օ, ո՛չ... կոճղանո՛ւմ:

Դարավոր կաղնին
Ասես մի ինչ-որ երգ է մռմռում կանաչ քթի տակ,
Մի նախնադարյան՝
Բոլորի՛ կողմից մոռացված մի երգ,
Մի ե՛րգ,
Որ գուցե չէր էլ հասցրրել կոչվել երգ,
Մի ե՛րգ՝
Նախամարդկային ինչ-որ բառերով,
Որ տաշված էին,
Բայց ընդամենը քարե կացնի չափ,
Որ տաշված էին,
Եվ բնա՛վ՝ մաշված...

Վիպասանում է անտառը կարծես,
Ասքեր է հիշում,
Որոնք աշխարհում
Երբեք չեն հագել բառե նեղ շապիկ
Ու քայլ չեն փոխել տառե ոտքերով:

Վիպասանում է անտառը կարծես,
Մի վեպ է պատմում,
Մի վեպ հնօրյա՛,
Մի վանդընջակա՛ն-անհա՛յտ առասպել,
Մի ավանդությո՛ւն՝
Արշավի մասին սառցադաշտերի,
Նրանց սպիտակ ահեղ վաշտերի
Նահանջի մասին,
Նահա՛նջ,
Որ անշուշտ նահանջ չէր կոչվում.
Կար ուրի՛շ մի բառ,
Որ ջրհեղեղի հին խաստան ուներ...

Ու լուռ լսում են անտառի որդիք,
Լսում են պապին՝
Աչքերը չռած,
Դունչերը ծռած,
Եվ մամոնտների ահեղ ոտքի տակ
Չեն տեսնում նրա՛ն,
Որ մինչև անգամ դեռ չունի անուն,
Եվ հետո՛,
Հետո՛,
Շա՛տ ու շա՛տ հետո
Պիտի «անա՛ռդ» կոչվի...

Խռոված քամին՝
Հետաքրքրքրված կաղնու վիպումով,
Խռովվածությունն արդեն մոռացած,
Բերնին մի տերև,
Հիմա քարացած
Ականջ է դնում:

Իսկ իմ հոգու մեջ
Զարթնում է հանկարծ անհա՛յտ մի թախիծ,
Մի հպարամյա անանո՛ւն կարոտ,
Որ բազո՛ւմ դարեր քնած է եղել,

Ինչպես մետաղը՝
Որձաքարի մեջ,
Ինչպես կրակը՝
Ատոմի գրկում...

Ու թվում է ինձ.
Ծառերի խորունկ ճեղքերն էլ արդեն
Ճեղքեր չեն բնավ,
Այլ սեպագրեր անհայտ մի լեզվի:

Ու թվում է ինձ.
Այնտեղ, ուր ջուրքից
Գետակի ջուրն է ասես սևանում,
Իրենց ոտերն են հիմա լվանում
Ո՛չ ժայռեր փոչոտ,
Այլ վայրենիներ,
Այն էլ՝ մի ցեղից.
Որ չունի անգամ վերջին մոհիկան:

Ու թվում է ինձ.
Այս լիճը փոքրիկ
Ո՛չ թե պարզապես լճակ է որ կա,
Այլ հենց մոհիկա՛ն՝
Վերջի՛ն մոհիկանն այն սառցադաշտի,
Որ դարեր առաջ եղել է այստեղ...

Ու թվում է ինձ,
Որ այսպես՝
Կանգնած կանաչ բացատում,
Ուր որ է ես էլ, ուժով մի կախարդ,
Արմա՛տ կձգեմ,
Կհագնեմ սաղա՛րթ...

29. IV. 59
Մոսկվա

ԳԻՇԵՐՆ ՈՒ ԵՍ

Գիշերն ունի ամե՛ն բանի թույլտրվություն:
Իսկ ես չունե՞մ:

... Ու ջնջում եմ
Էլեկտրական լամպագրի այն խորհուրդը,
Թե «Շահավետ, հուսատու է փողը պահել դրամարկղում»
(Փող ունենամ՝
Կհասկանամ
Առանց և այդ լամպագրի)...

... Ու բացում եմ
Փակ դռները գիշերային խանութների.
Ընդամենը հարկավոր է ծխելու բան,
Որ կուզեի ինձ վաճառեր
Ա՛յն աղջիկը,
Որի աչքերն ունեն ինչ-որ անորոշ գույն,
Որի անունն անհայտ է ինձ,
Որի սիրտը փակ է իմ դեմ՝
Ինչպես խանութն այս լեփլեցուն,
Եվ ի՞նչ ճաշակ ունի արդյոք,
Ես չգիտեմ,
Բայց կուզեի,
Շա՛տ կուզեի,
Որ նա սիրել կարողանար
Նաև... տգեղ տղամարդու...

Գիշերն ունի ամե՛ն բանի թույլտրվություն:
Իսկ ես չունե՞մ:

... Եվ ասում եմ ա՛յն խոսքերը,
Որ երբևէ չէի կարող ասել կյանքում...

... Բաց եմ անում
Եվ արգելված— հայհոյական բառերն ամեն՝
Իրենց թաքուն պոեզիայով,
Որ կուտակվել է դարեդար...

... **Ներս եմ մտնում ա՛յն դռներից,**
Որ միշտ փակ են եղել իմ դեմ
Ու միշտ բաց են նրա՛նց առաջ,
Որոնց եղածն ու չեղածը ես լա՛վ **գիտեմ,**
Բայց չեմ **ասի նաև այսօր,**
Այսո՛ր,
Երբ ես կարծես ունեմ թույլտվություն...

... Ներս եմ մտնում
Եվ խոսքերիս ա՛յն իրավունքն եմ ես տալիս,
Որ կինն ունի՝
Երբ այդ կինը
Ոչ թե այդեն էլ **չի սիրում իր ամուսնուն,**
Այլն շա՛տ լավ է հասկացել,
Թե չի սիրում ինչի՛ համար:
Ա՛յն կինը, **որ գիտի մի բան**
Եվ չգիտի նրա մի բան,
Նա չգիտի,
Որ աշխարհում
Կարելի է ապրել նաև **առանց սիրո,**
Եվ լա՛վ գիտի,
Որ երբևէ,
Ի՞նչ էլ լինի ու չլինի՝
Անկարող է դավաճանել...

Գիշերն ունի ամե՛ն բանի թույլտվություն:
Իսկ ես **չունե՛մ...**

26. V. 59
Մոսկվա
14. X. 59
Զանախչի

«ԱՍՏԾՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ»

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ **ԾՆՈՒՆԴԸ**

Այն օրն են միայն բանաստեղծ **դառնում,**
Երբ հասկանում են,
Հանկարծ թմբռնում,
Որ իրենց գործը այն շիշն է միայն,
Որ ծով է նետում **նավաստին մեռնող՝**
Փրկություն հայցող տողով մի քանի:
Եվ ժամանակի ծովը քմահաճ
Շիշն այդ երբևէ **ծովափ կհասնի՞...**

31. XII. 61
Երևան

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց թթվածնի:
Սակայն նրանք
Ամեն վայրկյան նա՛խ այրվում են անթթվածին,
Հետո՛ միայն հրդեհվում են՝ քարածխի պես:

Նրանց լացը չի կտրվում
Ամե՛ն տեսակ քաղցրավենիք ստանալով:
Թե լալիս են՝
Ընդերկրյա անցուղո՛ւ պես:

Նրանք նաև ծիծաղում են,
Ու ծիծաղը
Զրնգում է մաքրահնչուն դրամի՛ պես,
Եվ դրանից աշխարհն ինքն է հարստանում,
Բայց ո՛չ իրենք:

Թե քրտնում են՝ ո՛չ ամոթից,
Այլ միմիայն... ապակո՛ւ պես՝
Իրենց ներսի՛ տաքությունից,
Երբ որ... սաստիկ ցուրտ է դրսո՛ւմ:

Ու թե նրանք սուտ են ասում,
Ապա՝ շա՛տ-շա՛տ՝ որսորդի՛ պես,
Ո՛չ ավելի:

Իսկ թե ուրիշ կերպ են ստում՝
Այդ իրե՛նք չեն,
Այլ ծպտված ճարպլկորդիք,
Որ գործում են միայն նրանց անձնագրով:

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց հաց ու ջրի,
Սակայն նրանք
Չեն էլ կարող ապրել միա՛յն հաց ու ջրով...

Անկեղծ ասած՝
Նրանց, իրոք, չնախանձել չի՛ կարելի,
Բայց լինում են և այնպիսի՛ ժամանակներ,
Երբ որ նրանց... պետք է խղճա՛լ:

9. X. 61
Երևան

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԲԱԽՏԸ

Թեկուզ և ձեռքդդ գրչից էլ գրվեն,
Դու, միևնո՛ւյնն է, պիտի՛ որ երգես:
Թո՛ղ չտան ոչ մի լիապորություն,
Դու, մե՛կ է, սուտը պիտի՛ որ հերքես:

Քեզ կույր են կոչում,
Բայց տեսնում ես այն,
Ինչ որ շատերը չե՛ն կարող տեսնել:
Քեզ կաղ են կարծում,
Բայց այնտե՛ղ ես դու,
Ուր նրանք երբե՛ք չեն կարող հասնել:

Բախտի ճամփեքը տարբեր են լինում,
Նա ամեն մեկին տարբեր է սիրում
(Շատ անգամ նույնիսկ ատելությունը
Շուռ տված սիրո պատկեր է կրում):

Հաջողությունը թո՛ղ երես թեքի,
Հաջողությունը թո՛ղ քեզնից տա խույս...
Թո՛ղ նրասք լինեն հաջող որսի շուն,
Իսկ դու կմնաս ձախորդ հետախո՛ւյզ:

Թո՛ղ նրանք լինեն հայտնի թարգմանիչ,
Իսկ դու ուզում ես մնալ վերծանո՛ղ:
Թո՛ղ նրանք լինեն անցավ մանկաբարձ,
Իսկ դու մնում ես կարեվեր ծնո՛ղ:

Թո՛ղ նրանք լինեն դարի մունետիկ,
Իսկ դու մնում ես դարի զաղտնարա՛ն,

Նրա՛նք՝ թեկուզ և ծառայեցընող,
Դո՛ւ՝ ժողովրդի ինքնակամ ծառա՛ն...

... Բախտի ճամփեքը տարբեր են լինում,
Բախտն ամեն մեկին սիրում է տարբեր:
Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած,
Իսկ դու՝ որ քեզնով երբևէ հարբեն...

[1961]

ԵՐԵՍ ՈՒ ԱՍՏԱՌ

Ուռենիները նրա՛ համար են,
Որպեսզի... ցույց տան ջրին ճանապարհ:

Եվ ծուխը, նո՛ւյնպես, նրա՛ համար է,
Որպեսզի... ցույց տա ուղղություն քամուն:

Ծղրիդներն, անշո՛ւշտ, նրա՛ համար են,
Որպեսզի... մամլեն մութն իրիկնային
Իրենց նվագի նո՛ւյն ձայնանիշով:

Եվ արտույտները նրա՛ համար են,
Որպեսզի... իրենց երգով չորացնեն
Շաղն ու եղյամը վաղ առավոտվա:

Իսկ ուշ աշունն էլ նրա՛ համար է,
Որպեսզի...
...Դանդաղ-դանդաղ լայնացնի տարածությո՛ւնը՝
Տերևաթափո՛վ...

Բանաստեղծնե՞րդ:
Նրա համար չե՞ն,
Որպեսզի... այսպե՛ս
Ամե՛ն բան շրջեն աստառի վրա...

23. VI. 65
Երևան

ՔԱՂՑԸ՝ ՔԱՂՑԿԵՂ

Նորի՛ց՝ բառի սո՛վ,
Խոսքի խեղճությո՛ւն:
Ուզում ես խոսել,
Իսկ բառե՞ր... չկա՛ն:

Եվ ինքդ՝ տնկված ոտնաթաթերիդ,
Մի տարօրինակ լրտեսի նման,
Ականջդ ես հպում սրտիդ պատերին,
Ու... հապա՛ր ու մի անկե՛րպ, աննմա՛ն,
Տարտա՛մ ձայներից գլուխդ է պտտում:
Այսպես՝ անտառում ծառե՞րն են փտում,
Թե՞ քարտեզներում գետերն են ստում՝
Խաղալով խշշոց, կարկաչ ու սահանք:

Այսպես՝ մի անքուն գիշերապահակ
Ձայներն է լսում քնած քաղաքի,
Որ շուտով պիտի դառնան ահագին,
Հորդե՛ն-վարարե՛ն անկարգ ու հախուռն՝
Նման... հանճարեղ սևագրության:

Իսկ հիմա... քնած քաղաքն է տխուր,
Քարտեզի վրա գետերն են տխուր,
Աճող ու փտող ծառերն են տխուր,
Եվ նման է դա ա՛յն գեշ դրության,
Երբ խոսքի քաղցը դառնում է քաղցկեղ,
Ու բառի սովը՝ ցավագարություն:

Ո՞ւր ես, հանճարե՛ղ սևագրություն...

13. I. 62
25. X. 62
Երևան

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏ

Ճառագայթային այս ախտը բնավ նո՞ր չէ, բարեկա՛մ.
Նա նորածի՛ն չէ,
Այլ առնվազըն ութ հազար և ութ հարյուր տարեկան:

Այդ ախտով էին տակավին հիվանդ
Հին հելլենացիք, հնդիկները հին:
Եվ Հոմերոսի կուրությունն իրոք այդ ախտից էր հենց:
Եվ այդ նույն ախտով գերեզման իջան
Չե՞ր Նարեկացին, Շեքսպիրը մե՞ր,
Ու բոլո՞ր նրանք, ովքեր թոք ունեն՝
Մեր մոլորակի կիսագնդերի մեծության չափով
Կամ այնքա՛ն մեծ սիրտ,
Որ գրավում է տեղն էլ թոքերի...

Այս ախտով մարդիկ չե՞ն վարակվում, չէ՞,
Այլ վարակված են ծնվում մայրերից:

Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,
Ովքեր յոթ հազար յոթ գույն են տեսնում ծիածանի մեջ,
Ովքեր լսում են
Մոլեկուլների խելահեղ վազքի համանվագը
Ա՛յն մուրճերի մեջ կամ կացինների,
Որոնք մինչևիսկ զնգոց չեն հանում,
Այլ համր են ու լուռ՝ կուռքերի նման...

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր նայում են սնուկ գոմեշին,
Իբրև մի քայլող սև դաշնամուրի,
Որ նվագում է լոկ իրե՛նց համար:

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր ապառաժ անառաջ քարի մեջ
Տեսնում են Ֆորում, տեսնում Զվարթնոց,
Ժայռի կանգվածում տեսնում Աչանտա, Էլլորա, Գեղարդ,
Անգույն կտավին՝ Սրբազան ընթրիք ու Մագթաղինե,
Եվ ամեն անցնող երիտասարդի հոգու խորքերում՝
Մի ննջող Համլետ, արթուն Օթելլո...

Ճառագայթային այս հիվանդությամբ տանջվում են նրա՛նք,
Լոկ նրա՛նք,
Ովքեր մենակության մեջ
Միանգամից են ողջ մարդկության հետ նստում կրույցի.
Լոկ նրա՛նք,
Ովքեր այս Երկրագնդի պտույտն զգում են կրունկո՛վ իրենց
Եվ արմատիքի աճումն զգում են իրենց ափերո՛վ,
Եթե մինչևիսկ իրենց ափերը պահում են օդում.
Լոկ նրա՛նք,
Որոնց չեն կարողանում ո՛չ մի կերպ սիրել
Բոլո՛ր դարերի արքաներն ամեն
Եվ կործանում են սրանց ո՛չ միայն աքսորով, բանտում,
Այլ նաև սրանց պալատ բերելով
Ու... սուտ սիրելով...

Ճառագայթային այս ախտը բնավ նո՛ր չէ, բարեկա՛մ...

15. XI. 63
Երևան

ՀԻՄՆ ՔԱՐԱՆՁԱՎԻ

Մենք դուրս ենք եկել մութ քարանձավից
Միլիո՛ն ու միլիո՛ն տարիներ առաջ:

Մենք դուրս ենք գալիս նո՛ւյն քարանձավից
Ամե՛ն ակնթարթ:

Նո՛ւյն քարանձավն է մեզ հետապնդում
Մեր ներսի՛ց արդեն:

Ու մեր երգածի կեսից ավելին
Նո՛ւյն քարանձավի արձագանքն է հենց:

Մնացած կեսով մենք հիմնն ենք երգում
Նո՛ւյն քարանձավի՝

Անեծքանման խոսքերով այն կույր,
Որոնց իմաստն ենք հասկանում այնքան,

Որքան պառավը՝ իր հմայական խաբնակ խոսքերը,
Որքան երեխան՝ իր խառնիճաղանջ շուտասելուկը...

11. XI. 65
Ջանախչի

ՄԵԾ ՈՒՂՏԻ ՓՈՔՐԻԿ ԱԿԱՆՋՈՒՄ

Ի՞նչ-որ ժամանակ,
Մեկանից առա՛ջ, մեկ անհա՛յտ մարդիկ
Նստել-մտածել ու հորինել են կանապան բաներ.
Այս մեկը՝ անե՛լ,
Այն մեկը՝ չանե՛լ,
Այս՝ համարել ճի՛շտ,
Այն՝ մերժել-վանե՛լ,—
Սահմանել ինչ-որ հերթականություն,
Կոչել պատիվ ու... պարտականություն...

Ու մենք էլ ահա անցնում ենք հանգիստ
Անհեթեթությանց այս թանգարանով,
Եվ ծվատում ենք ո՛չ մեր հագուստը,
Այլ հոգի՛ն մեր խեղճ,
Որի հատակում
Կա անտանելի նույնպիսի մի բան,
Ինչպես ավազը՝ մեր կոշիկի մեջ,
Ինչպես սուր փուշը՝ մեր եղունգի տակ:

Եվ անց է կենում
Երգապնակի շրջագծային խալի վրայով
Ասեղը կյանքի՝
Կորկելով միշտ նո՛ւյն
Ու մի՞շտ տանջալից ա՛յն եղանակը,
Որ վաղո՛ւց արդեն անհեղինակ է,
Բայց համարվում է
Անառարկելի հեղինակություն...

Եվ մի արտառո՛ց,
Շատ տարօրինա՛կ ու տա՛ք ցանկություն

Հալածում է ինձ
Ու հետապնդում օրը ցերեկով.
Ես կամենում եմ (և ձե՛ր փոխարեն)
Ո՛չ թե լոկ մոռալ կամ թե գռմռալ,
Այլ գապանի պես մռնչա՛լ ապդու՝
Մռութը դրած այս քարի՞ն արդյոք,
Թե՞ այս նորաձև կլոր սեղանին:
Ու չե՛մ կարեկցում... արհամարհո՛ւմ եմ
Ա՛յն թշվառական կենդանիներին,
Որոնք «ընտանի» պիտակն են կրում,
Իրենց կարծիքով՝ իբրև ուսադիր,
Իր իսկ կարծիքով՝
Իբրև խոր խարան խայտառակության:
Դուք նախընտրում եք վիթխարի ուղտի՞ն:
Իսկ ես լրջորեն նախապատվում եմ
Նույնիսկ մկա՛նը, առնետի՛ն անգամ,
Որոնք ընտանի չեն դարձել ցայսօր...

Ու երբ քնի մեջ մղձավանջային
Ձեզ առնետները կրծոտեն սիրով,
Դուք՝ արթնանալով՝ մի պահ մտածեք,
Թե արժի՞ արդյոք դարեր շարունակ
Քնել մե՛ծ ուղտի փոքրի՛կ ականջում...

14. XI. և 20. XI. 63
Երևան

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորի՛ց մեջքս խոսեց Ֆրանսիացին...
Եվ ակամա, նորի՛ց, ես չանսացի
Իմ պապերի ձայնին՝ խոհեմությա՛ն,
Հա՛յր Սուրբ Խոհեմության,
Որին պիտի
Հիմա խոստովանեմ իմ մեղքերը:

Հա՛յր Սուրբ, ես կուզեի կյանքի՛ս գնով
Ջնջել «կգույշ» բառը:
Մեծ մե՞ղք է սա:

Հա՛յր Սուրբ, ես կուզեի դարձնել կանոն
Անկանոնությունը:
Մեծ մե՞ղք է սա:

Կարելի չէ՞, Հա՛յր Սուրբ, որ ոտքերը,
Գեթ ոտքե՛րը լինեն ինքնագլուխ,
Գեթ ոտքե՛րը, Հա՛յր Սուրբ, ո՛չ գլուխը...
Թե՞ մեծ մեղք է դա էլ:

Եվ մահի չափ հոգնած մի կա՛ռչ պահի
Կարելի չէ՞ արդյոք «մարդ եմ» բառին
Չհագցընել ո՛չ մի նեղ ածական...
Թե՞ մեծ մեղք է դա էլ:

Հա՛յր Սուրբ, եթե մարդը հավատացյալը չէ,
Որտե՞ղ պիտի նա իր մեղքը խոստովանի:

Խո՛ս-տո՛-վա՛-նո՛ւ-թյա՛ն եմ կարոտ, Հա՛յր Սուրբ՝
Ներվե՛լու գնով
Եվ բանադրվելո՛ւ:

Որտե՞ղ խոստովանեմ
Եվ ո՞ւմ խոստովանեմ,
Հա՛յր Սուրբ Խոհեմություն...
... Ո՛չ սուրբ և ո՛չ էլ հայր...

14. VII. 63
Երևան

ՄԻԱՅՆԱԿ ԶԲՈՍԱՆՔ

Հիմարացած ու վերացած, խեղճ ու վսեմ՝
Կանգնել եմ ես այս պարպերես երկնքի դեմ
Ու նայում եմ՝
Հորթուկի պես
Եվ կամ քրմի՝
Լիությունից թեթևացա՜ծ.
Եվ... հավատում եմ աստծուն:

Ձեռքըս գցում այս ծռմռված առվի վզից
Ու ձգելով-բարձրացնելով գլխիցըս վեր՝
Ստեղծում եմ մի պսպղուն աղեղ-կամար,
Որ չի՜ փլվի,
Քանի դեռ ես չեմ կամեցել:
Մոտեցնում եմ հետո երկու ափըս իրար՝
Ծափ տալու պես,
Եվ՝ հնապանդ իմ ափերի այդ շարժումին՝
Քարափները գալի՜ս իրար,
Միանում են իրար անձայն...
Եվ ինքըս ինձ հավատալով՝
Է՛լ աստծուն չե՜մ հավատում:

Ափս եմ քսում հողի դեմքին,
Անբաղաձայն
Ու նախնական մի կենտ բառ եմ ասում նրան,
Ու նա— շոյված՝ կատվի նման— մեջքը ցցում
Եվ իր երկար պոչն է շարժում՝ գետի տեսքով:
Ու ես կրկին հիմարացած և ինքնագոհ՝
Շոյելու պես ապտակում եմ
Այս պարպերես լուռ երկնքին

Ու ժպտում եմ՝
Մանուկի պես
Եվ կամ մոգի՝
Նորից լցվա՜ծ-լրիվացա՜ծ...
Եվ... հասկանում եմ ստրծուն:

8. XII. 62
Երևան

ԱՆՕԳՈՒՏ ՓՆՏՐՏՈՒՔ ԿԱՄ ԵՐՋԱՆԻԿ ԳՅՈՒՏ

Ա՜խ, իպուր է,
Շա՜տ իպուր է որոնումը այն ամենի,
Ինչ իր անցած ուղիներում
Կորցրել է մարդկությունը,
Որի բոլո՜ր գրպանները
Վաղո՜ւց մաշված-ծակծկված են:
Ու բարի է հողը՝ պառավ մամիկի՛ պես.
Ինչ որ կորավ՝
Անմիջապես նա պահում է ու թաքցնում
Իր փեշի տակ մամիկային
(Ծածկաբերան մի խոռոչում,
Փոշու ներքո,
Սառույցի մեջ հավերժական,
Մինչև անգամ ածխի շերտում)...
Իսկ անփույթ են ճամփաները՝
Պառանո՜ւ պես
(Ինչ որ կորավ՝
Շուտ կորչում է կորցնողի ի՛ր խակ ոտքի,
Մեքենայի անիվ-ակի,
Ձիու-ջորու սմբակի տակ,
Նույնիսկ ամպի սևանվար-պատճենի մեջ՝
Ա՛յն ստվերում,
Որ հինավուրց հափշտակիչ-ավազակ է)...
Եվ իպուր է,
Չէ՜, իպուր է որոնումը ա՛յն ամենի,
Ինչ դարավոր իր ճամփեքին կորցրել է
Մարդկությունը,
Որի բոլո՜ր գրպանները
Վաղո՜ւց մաշված-ծակծկված են...

Ու երջանիկ է իսկապես,
Բախտավոր է նա՛ միմիայն,
Որ դարավոր ճամփաների
Ինչ-որ մի նեղ խաչմերուկում՝
Ամենի՞ն չփնտրելով,
Այլ ակամա-հանկարծակի
Հեգ մարդկության կորուստներից մեկն է գտնում՝
Արեգակի
Կամ իր աչքի մատնիչ շողի միջնորդությամբ:
Գտնում, սակայն չի թաքցընում,
Այլ տալիս է իր տիրո՛ջը՝
Մարդկությա՞նը,
Վերադարձնում նրա կորած գեղեցկության
Կամ բարության,
Ակնվության և կամ տիրո
Մի նշխարը,
Մի մասունքը:

Միայն այսպես է գտնվում
Հեգ մարդկության կորուստներից ինչ-որ մեկը,
Թե չէ իսկո՛ւր, շա՛տ խղուր է
Ակնկալված և ակնկոր որոնումը ա՛յն ամենի·
Ինչ իր անցած ճամփաներին կորցրել է
Մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղո՛ւց մաշված-ծակծկված են...

4. XII. 64
Երևան

ՃՇՄԱՐԻՏ ԵՐԳԸ

Ճշմարիտ երգը ծնվում է,
Ինչպես կրակը կենքի մեջ.
Ետհարվածով ետ է մղում կրակողին,
Իսկ ում դիպավ՝ տեղնուտեղը սպանում է:

11. VII. 61
Մոսկվա

ԾԱՐԱՎ

Նույնիսկ ե՛ս էլ գիտեմ ճառել
Ու խրատել գիտեմ, անշո՛ւշտ:
Սակայն պատիվ ու փառք նրա՛ն,
Ով կարող է հոգի վառել,
Հուրհրատել մեկ վայրկյանում
Երկու անսուտ գոյականով
Եվ անխարդախ բայով երկու:

Զույգ թվերը ե՛ս էլ գիտեմ:
Բայց փառք նրա՛նց,
Ովքեր տիրում են կենտերին,
Տիրում այնպե՛ս,
Որ հեշտությամբ բաժանում են զույգի վրա
Ու քանորդում զույգ ստանում
Առանց մի կենտ մնացորդի:

Մկանն ի՞նչ է, բոլո՛րն ունեն:
Փառք ջղերի՞ն.
Որ լարվում են թեթև քամուց,
Օվկիանոսի և երկնքի առևտրից,
Կանանց երբեք չկրկնվող ուղեծրից,
Մինչև անգամ քաղաքային բառարանից՝
Ա՛յն լվացքից,
Որ չի փռվում այբուբենի կարգ ու սարքով,
Հետք չթողնող ա՛յն այրվածքից,
Որ կոչվում է հիշողություն,
Ա՛յն ասեղի կաղ քայլվածքից,
Որ մաքրությանն է շուկալում հոգին մարդու՝
Անվանելով իրեն գրիչ,
Մաքրությունը՝ թուղթ սպիտակ:

Գրելն ի՞նչ է, ե՛ս էլ գիտեմ:
Փառք ու հարգանք ստեղծողի՞ն,
Որ գալիս է և ապատում
Մեկ... մեկանից,
Մեկ... մեկանից հատում-կատում,
Ապա բերում կրկին զոդում,
Մեկ միացնում նախ... մեկ, հետո... Անհայտի հետ:

Բոլո՞ն այժմ կարդալ գիտեն,
Ուրեմըն փառք... կարդացածը հասկացողի՞ն...

27. VII. 63
Երևան

ԾԵՐԱՆՈՒՄ ԵՆՔ

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբոր պես.
Նկատում ենք մատղաշներին,
Որոնք մեզ չեն նկատում.
Ամեն մի նոր ծանոթություն չի վերջանում էլ սիրով,
Ոչ էլ երգով մի անարվեստ, բայց պոռթկուն ու կրակված...

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Մեր ապլստամբ մտքերն արդեն կա՛մ պատլծվել են մանով,
Կա՛մ իշխանաց իշխան սանրի խեղճ հպատակն են դարձել.
Մեր խռովկան մատներն արդեն դարձել են հեզ ու լսկան,
Իսկ դավադիր մեր ոտքերը՝ ընտանեսեր-տնասեր...

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Մե՛կ օր խմում
Եվ երկո՛ւ օր արդեն խումար ենք ընկնում,
Մե՛կ ժամ քայլում
Եվ երկո՛ւ ժամ խոսում դրա օգուտից
Կամ վնասից,
Եվ ըստ որում խոսում այնպե՛ս լրջորեն,
Կարծես մի մեծ գյուտ ենք արել
Կամ հերքում ենք մի հին գյուտ.
Եվ «բուժվել» կամ «հիվանդություն» բառերն արդեն օրեցօր
Հոլովվում են ու խոնարհվում ավելի շատ և նույնիսկ
Առավել քիչ դժգոհությամբ,
Քան թե թաքուն պարծանքով...

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս,—
Թափառելու ժամ չի մնում,
Չենք հասցընում ձանձրանալ.
Քիչ ենք թախծում մենք անառիթ,
Շատ ենք տխրում առիթով,
Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,
Շատ ենք խորհում, քիչ քնում,
Որովհետև «անքնություն» բառը դարձել է սոսինձ
Եվ ուզում է մեր քրքրված ջղերն իրար կպցընել...

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս,
Ծերանում ենք, սակայն կարծես
Դարձյա՛լ խելքի չենք գալիս.—
Դեռ հիմա՛ էլ կարմանում ենք,
Դեռ կարո՛ղ ենք կարմանալ,
Ժամացույցի սլաքները ետ ենք տալիս մտովին,
Ի՛նչ է թե մեր արդեն չարածն իբրև անենք աշխարհում,
Անկարելի հաղթանակի ելք ենք ճարում ինչ-որ կերպ.
Եղբեմն էլի այս աշխարհն ենք դեռ չափչփում հուսալից
Դոն-Կիխոտի ոտքեր կոչված նո՛ւյն կարկինով ծայրամաշ,
Իսկ երբ մեկը խոր քնի մեջ մեր երակն է կոխկրտում,
Առաջվա՛ պես... առաջվա՛ պես վեր ենք ցատկում ճչալով...

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,
Սակայն... խելքի չե՛նք գալիս...

10. XII. 63
Երևան

ՊԱՀ ԿԱՍԿԱԾԻ

Թե իսկապես հավատացած ես լինեի,
Որ իմ երգը ձեզ կարող է օգուտ բերել,
Ձեզ երգերով բանակի՞ պես կկինեի:
Բայց ի՞նչ օգուտ՝ նստել ինչ-որ երգեր գրել:

Ի՞նչ է երգը. ցաված հոգու մխիթարանք...
Տեղ էլ հասնի՝ չկատարվող ապսպրանք...
Վալերյանի երկու կաթիլ պղտոր հեղուկ...
Թե խայթում է՝ իր իսկ խայթից սատկող մեղու...

Իսկ թե երգը մինչև սնգամ կենք է դառնում,
Ո՞ւր է ձեռքը, որ ինքնակամ կենք է բռնում...

20. IV. 57
Մոսկվա

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն սերունդ
Նախ և առաջ մտածում է լռության մեջ,
Իսկ երբ խոսել է սկսում՝
Բարկացնում է ավագներին
Եվ բարկացնում անկեղծորե՛ն,
Որովհետև... կրտսերը՝ մի՞շտ անհասկացող,
Իսկ ավագը... հասկացող է:

Ավա՜գ ատված,
Մի՞թե իրոք համանիշ են ու համապոր
Հասկացողն ու կասկածողը...

Ամեն սերունդ
Նախ և առաջ մահանում է կասկածելով:

9. XI. 65
Ձանախչի

ՀՈՐԴՈՐ

Դիմավորեցեք... կասկա՞ծը: Նա է
Թակում ձեր դուռը:
Նա է, հենց ի՛նքը:
Դիմավորեցեք և մի՛ վախեցեք,
Ես նրան արդեն ընդունել վաղո՞ւց
Եվ մինչև անգամ ճամփել եմ կրկին:

Դիմավորեցեք նրան ծիսաբա՞ր՝
Նոր ու հնօրյա Տերընդառաջո՛վ՝
Ձեր իսկ կրծքի տակ վառելով խարույկ,
Որպեսզի... եթե ընդմիշտ չչքվի,
Ապա գեթ ճեղքվի մութը ձեր հոգու:
Դիմավորեցեք նրան գեթ հիմա՛,—
Ես նրան վաղո՞ւց ճամփել եմ արդեն:

Դիմավորեցեք... կասկա՞ծը: Ես իր
Ո՛չ մունետիկն եմ, ո՛չ էլ մարգարեն:
Իր երեխտապարտ փրկյա՞լն եմ ես լոկ:
Դիմավորեցե՛ք, քանզի ամենքիս
Լոկ հավա՞տք է պետք, ո՛չ հավատալիք:
Լոկ հավա՞տք է պետք, ո՛չ հավատալիք...

11. II. 63
Երևան
28. VIII. 65
Զանախչի

ԾԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓՆՏՐՈՒՄՆԵՐ

Երգի ստեպում հապար շավիղներ,
Հապար արահետ, ճամփաներ բացում,
Ինչքան սեգ քնար, քանի տավիղներ,
Ինչքան հնչյուններ, մտքեր երապուն:
Բայց այդ բացմուղի լաբիրինթոսում,
Ուղիներում այդ հեշտին ու դժվար,
Ընկած երգերի հերկած ակոսում,
Դարձել եմ ես խոհերի ավար,
Խոհերի առաջ՝ թեքած պարանոց,
Խոհերի առաջ՝ մի նվաստ հոգի,
Խոհերի առաջ՝ խեղճ ու փարանոտ,
Խոհերի առաջ՝ բարդ ու անմեկին...
Կյանքն էլ է այդպես դժվար ու հեշտին
Վերխոյացումով, վարիչումով լի.
Կյանքն էլ ողջույնի և հրաժեշտի
Համբույրներով է անիմանալի.
Կյանքն էլ է նրբին, կյանքն էլ պահանջկոտ,
Կյանքը կարոտ է իր երգը լսել.
Կյանքը պճնված, բայց նաև բոկոտն,
Կյանքը— մշուշոտ, կյանքը— վառ, լուսե...

Ու այդ կյանքն ահա ինչպե՞ս ընդգրկել,
Ծավալը չափել երգի մենկուրով...
Երգերը՝ գրված երգերից գրքե,
Կարո՞ղ են միթե սնձրևաջրով
Օծանել կյանքի դեմքը բացմանիստ,
Պատկերել նրան... դողանջը գոնե,
Որպես ցոլք ու փայլ սփրոել հանգիստ,
Որպես եղածի նկար անգունեղ
Մատներով վարպետ լավ ուրվագծել

Այնպես, որ կյանքը չայլանդակվի,
Որ չխառնվեն բծեր ու գծեր
Եվ կյանքն անկաշկանդ գեթ չըվանդակվի...

Ու դրա համար իմ մանուկ հոգով,
Իմ անվարժ գրչով, թույլ ուժերով իմ,
Իմ հայրենիքի երկնքի ներքո
Պիտի երգեմ նորը բոլորովին:
Պիտի կաշկանդված իմ հոգին սուրա,
Ինչպես հողմը խենթ փոթորկի ժամին,
Թափառի անհաս եզերքի վրա—
Պայծառ գալիքի սեզ ճանապարհին:
Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,
Կյանքի գրկի մեջ... կյանքից գոյացած,
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,
Կյանքի վորությամբ բարձր խոյացած:

Ու դրա համար ծառանամ պիտի
Հին անեծքային օրենքների դեմ,
Որ երգս կապի ծիածան-գոտի,
Որ հոգիս դառնա խնդության եղեմ:
Ու պիտի ջուռ տամ գլուխս հպարտ
Բյուր ճամփաներից, շավիղներից բյուր,
Ինչպես աքսորից փախած թիապարտ,
Թափառումներին տամ հպար համբույր...
Պիտի ջարդոտեմ ամեն մի կապանք,
Ամեն մի շղթա՝ հոգիս կաշկանդող,
Որ կյանքը երգիս մեջ էլ մնա կյանք,
Որ չլինեն տողեր՝ խոհերըս բանտող...
Եվ ահա հոգիս այս հուզումով լի՝
Կանգնած է ահա լուռ ու վարանոտ
Բյուր ճամփաներում անիմանալի,
Քայլելու համար գեթ ուղու կարոտ...

... Հին ճամփաների լաբիրինթոսում,
Որպես գնացող անտես իոններ,

Տենչանքները իմ հեռու են հասում,
Իսկ ես որպես մի խիպսխ պիոներ—
Հոգուս մեջ— ձգտում, գլխիս մեջ— խոհեր,
Շեփորում եմ գոռ հաղթանակի մարշ:
Եվ եթե հանկարծ հրացանը իմ
Դեռ չկրակած անօգուտ պարպի,
Թող այս երգն իմ— հոգուս մտերիմ,
Դառնա իմ հոգու երգը կարապի...

[1941]

ԿԱՍ ՈՒ ՉԿԱՍ— ԱՍՏԾՈՒ ՊԵՍ

Երբ քեզ մենակ ես կգում,
Դու կգում ես քեզ աստված՝
Ո՛չ մի բանով չհաստված
Եվ ոչնչո՛վ չսաստված:
Բայց երբ մենակ ես կգում,
Մենա՛կ-մենա՛կ ես կգում՝
Արարչական արյունդդ
Սառչում է քո տաք բակում.
Քեզ կգում ես խեղճ ու թույլ,
Քեզ կգում ես անկարող,
Քո մեծ բախտով՝ հար դժբախտ.
Եվ անտաղանդ քանքարով...

Դու քեզ մենա՛կ ես կգում,
Եվ ի՞նչ ես դու վերջապես.
Աստծու նման դու և կա՛ս,
Եվ դու չկա՛ս՝ աստծու պես...

25. X. 55
Մոսկվա

ԱՄԵՆՔԸ ԻՐԵՆՑ ԲԱԽՏԻՑ ԵՆ ԴԺԳՈՀ

Ամենքը իրենց
Բախտից են դժգոհ
Եվ ոչ թե խելքից:

Իսկ ես, տե՛ր աստված,
Կրակն եմ ընկել
Իմ խելքի ձեռքից:

Խելք ունենայի՝
Վաղուց էի ես
Կարգին մարդ դարձել—

Ես կարող էի
Սենյակ տալ վարձով,
Եվ ոչ թե վարձել:

Խելք ունենայի՝
Ինչ հարկավոր է,
Ես այն կանեի.

Եթե հաստ է պետք՝
Բարակը որն է,
Հաստ կմանեի:

Խելք ունենայի՝
Ինչ հարկավոր է,
Ես այն կերգեի,

Տեղն ընկած տեղը
Տեղի կտայի,
Ինձ կըհերքեի:

Ու կլինեի
Ոչ դեմ, ոչ էլ թեր,
Այլ ոսկե միջին:

Գլուխը քարը.
Թող էժան լիներ,
Միայն... շատերին
Գէղեցիկ թվար:

Հերն էլ անիծած.
Թող ներկված լինի,
Միայն թե դուր գա,
Խաբվեն-հավանեն:

Գրողի ծոցը.
Թող որ սուտ լինի,
Միայն թե կույր-կույր
Պաշտեն-դավանեն...

... Ում էլ հարցընես՝
Խելքից չէ դժգոհ,
Այլ միայն բախտից:

Անաստված աստված,
Ինչու ես տվել
Անխելքի բախտ ինձ...

8. V. 58
Մոսկվա

Անտա՞ռն է արդյոք
Իմ կրծքով շնչում,
Թե՞ ես եմ կորչում
Անտառի շնչում,
Անտառի շնչում
Ամենածավա՜լ:

Սակայն այս հարցով
Ես ինձ չեմ տանջում:
Եվ արժե՞ միթե,
Երբ գիտեմ, որ ես
Կարող եմ հիմա
Կոճղի պես լռել,
Քամու պես հևալ,
Ծառի պես ծվալ,
Թփերի նման
Մեղմիկ սվսվալ.
Անտառի նման՝
Շաչե՜լ.
Շառաչե՜լ,
Անտառի նման՝
Տնքա՜լ, հառաչե՜լ.
Անտառի նման՝
Ահեղ բարկանա՜լ.
Ու թե մերկանա՜լ՝
Տերևաթափից—
Անտառի նման
Երբեք չամաչել...

23. IV. 59
Մոսկվա

ԵՐԳՈՂ ՆՅՈՒԹԸ

Եվ ի՞նչ ես դու:
Զարմանալի՜ երևույթ ես...

Երբ չես երգում՝
Եթե անգամ
Մարմարակերտ այուն ու մույթ ես՝
Ուսիդ չկա
Կամա՛ր, ճակա՛տ.
Փլատակված սարավույթ ես:

Զարմանալի՜ երևույթ ես:

Երբ չես երգում՝
Լոկ շնչելու
Կամ մնջելու,
Լոկ տանջվելու
Կամ տանջելու,
Սովորական սովորույթ ես:

Հե՛նց երգեցիր՝
Նույնն ես կարծես,
Բայցևայնպես տեղն ու տեղը
Մի՛շտ նորույթ ես:

Երբ չես երգում՝
Ոտեր առած մի ձանձրույթ ես,
Միս-ոսկորի քայլող կուլտ ես,
Եվ ո՛չ խեժ ես,
Ո՛չ ավիշ ես.
Քո իսկ հոգուն կպած ձյութ ես:

Հե՛նց երգեցիր՝
Դու ուրի՛շ ես.
Միանգամի՛ց գեղեցկացած,
Ո՛չ թե մարդ ես,
Այլ կախա՛րդ ես,
Մո՛գ ես,
Դյո՛ւթ ես:

Հենց երգեցիր՝
Ասեն-չասեն,
Ուզեն-չուզեն՝
Թո՛ղ որ փոքրը,
Բայցևայնպես դարձյալ գյուտ ես...

Դու պարզապես... երգող նյութ ես,
Երգող նյութ ես...

24. IV. 59
Մոսկվա

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծառե՞ր ու ծառե՞ր—
Ծառե՞ր հնացած,
Ծառե՞ր նորացած,
Նորակա՞կմ ծառեր,—

Եվ հողն է թվում
Քիչ առաջ հանգած հսկա վառարան:

Ով մանկությունից
Հավվագյուտ խոսքի որսորդ է դարձել,
Հիմա՝
Անտառում անխոս ման գալիս,
Մի՞թե մի վայրկյան չի կարող կարծել,
Թե շուռ է տալիս
Մի յուրատեսակ հսկա բառարան:

Բառեր ու բառեր,—
Բառեր հնացած,
Բառեր նորացած,
Նորակակմ բառեր...

29. IV. 59
Մոսկվա

ՀՈՂԸ ՀԱՅԵԼԻ

Ձեվ հող թվացող այս հողը համայն
Կարծես ինձ համար
Դարձել է հիմա
Ամալգամից կուրկ— նո՛ր մի հայելի,
Որին նայելիս
Տեսնում եմ այնտեղ
Գլխիվայր շրջված—շուռ եկած անտառ—
Եվ ամեն մի ծառ
Մի ծառ չէ կարծես,
Այլ ծառ է երկո՛ւ.
Ծառ կոչված մի գունդ հողին է բակված,
Իսկ արմատների կակված այլ մի գունդ՝
Հողի մեջ սուկված—
Նույնքա՛ն ճյուղավոր,
Որքան ճյուղ ունի նույն ինքը ծառը...

Ու պարզ է թվում ամեն ինչ հիմա:
Մի՛ հարց է, որ դեռ պարզ չէ ինձ համար.
— Այս արմատնե՞րն են
Խոտ ու ծառերի անդրադարձումը,
Թե՞ արմատների անդրադարձումն են
Խոտ ու ծառերը...

1. V. 59
Մոսկվա

ԻՆՉ ՈՂ Է ԱՐԴՅՈՔ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ

Ինձ ո՞վ է արդյոք հովանավորում,
Ո՞րն է իմ աստղը,—
Շատ եմ միտք արել:

Հավանական է՝
Այն Սիրիուսը,
Որ Տիեզերքում
Տեղաշարժվում է ծուռ ու մուռ ծիրով,
Ուռ՞ր ու մոլո՞ր,
Սակայն մնում է միշտ հավատարիմ
Իր անցած ճամփին,
Նույնն է կրկնում...

19. XII. 59
Թիֆլիս

ԱՌԱՆՑ ՀԱՆԳԵՐԻ, ԲԱՅՑ ՍՐՏԻ ՉԱՓՈՎ

Եվ իմ գողթնեցի պապերի նման
Ես պիտի գրեմ առանց հանգերի,
Ինչպես խոսում են մարդիկ իրար հետ,
Ու եթե չափով՝
Լոկ նրա՛ համար,
Որ սրտիս նման խոսքս էլ տրոփի...

[1959]

ՆԵՐՇՆՉՄԱՆ ՊԱՀԻՆ

Իսկ երբ մենակ եմ քայլում դաշտերով
Ու միայն ես եմ ինձ կրուցակից՝
Ստորերկրյա անտես ջրերի
Վեճն ու աղմուկն եմ պարկորոշ լսում
Եվ նույնիսկ տեսնում նրանց փրփուրը...

[1959]

ԱՆԿՈՒՄՆԵՐՈՎ ԵՄ ՎԵՐԵՎ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

Ես թուրման կոչված աղավնու նման
Անկումներով եմ բարձրանում վերև՝
Ուրախացնելով գուցե շատերին,
Որ իմ հերթական անկումը տեսնում
Եվ ամեն անգամ հաշվում են դա վերջ,
Բայց ոչ թե սկիզբ մի նոր վերելքի...

[1959]

ԶԳԱՅՈՒՆ ԳԼԽԱՐԿ

Իսկ երբ գարունն է մոտենում հեռվից,
և այնքա՜ն հեռվից,
Որ դեռ լուր չունի մատնիչ օդն անգամ,
Ես դա կգում եմ... իմ ականջներո՜վ
Եվ մինչև անգամ... գլխարկո՜վ իմ հին:

[1959]

ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԵՐ

Ցանկություններից,
Որ կոչվում են իղձ,
Բաղձանք
Ու անուրջ,
Երազ
Ու փափագ,—
Ցանկություններից մահացու խոցվել,
Վիրավորվել եմ ես քանի՜ անգամ:
Վիրավորվել եմ ես քանի՜ անգամ
Եվ բուժման տարվել մի հիվանդանոց,
Որտեղ գթության քույր է դարձել ինձ
Ճերմակ խալաթով Դատողությունը...

Ա՜խ, այդ գթության քույրերը...
Նրանց
Երախտապարտ եմ իմ ամբողջ հոգով,
Իմ ամբո՜ղջ սրտով հարգում եմ նրանց,
Բայց, ավա՜ղ, երբեք սիրել չեմ կարող,
Եթե մինչևիսկ շատ են գեղեցիկ...

[1959]

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱԽԸ

Ես ի՞նձ համար չեմ վախենում.
Կուկե՞ք՝ վաղն էլ ընկնեմ-մեռնեմ:

Վախենում եմ ջրի՞ համար
Եվ ջրային խճանկար ա՛յն քարերի,
Որոնք, ինչպես բիբերի շուրջ,
Ասես դառնում սպիտակուց
Ու ցոլանք են տալիս ջրին:
Վախենում եմ նրա՞նց համար.
Վախենում եմ,
Որ միգուցե հետքս նաև իրե՞նց տանեմ...

Վախենում եմ նաև հողի՞, հողի՞ համար՝
Մենախոսող ա՛յն մեծագույն ողբերգակի,
Ում «Լինել թե չլինելը» այսօր արդեն բարձր է հնչում
Մինչև անգամ թեթևսոլիկ քամո՛ւ բերնով,
Որ վարակված ու վարակիչ ամպ կարող է քշել-բերել,
Մշտածիծաղ-կնգուն ձայնով և անձրևի՞,
Որ կարող է անմեղորեն օդհա՛ս փռել՝
Մանուկների երակներում արյունը ջուր դարձընելով:

Քանի ես կամ՝
Թվում է, թե հողը դեռ չի՞ կործանվելու,
Թե չէ՝ կուկե՞ք... այս վայրկյանիս ընկնեմ-մեռնեմ...

Վախենում եմ, որ գնալիս հետս աստղերի ցոլքը տանեմ
Եվ աչքերի գիշերական ու ծովական խորքը տանեմ,
Կաքավների «կղա»-ն, երգի «լո-լո»-ն տանեմ,
Հեռախոսի կարոտ ցրող «ալլո»-ն տանեմ,
Մարդու հոգի կտցահարող աղջկական քելքը տանեմ,

Քարանձավի և փակուղու ելքը տանեմ,
Տանեմ մարդու կե՞նքը միակ՝
Խե՛լքը նրա,
Ու նա մնա անկե՞ն-անկո՞ր
Այս սասանվող հողի վրա՝
Մենախոսող ա՛յն մեծագույն ողբերգակի,
Ում «Լինել թե չլինելը» լսո՞ղ է պետք,
Գոնե լսո՛ղ, լսո՞ւմ եք ինձ, գոնե լսո՛ղ...

Վախենում եմ սրա՛ համար, թե չէ՝ կուկե՞ք
Ձեր աչքի դեմ ընկնեմ-մեռնեմ այս վայրկյանիս...

22. X. 62
Երևան

ԽԻՂՃԸ ԵՎ ԻՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԻՄԱԿԸ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐՈՂ ԷՐ ԿԱՏԱՐՎԵԼ ՆԱԵՎ ԱՐԹՄՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Նա լուռ ներս եկավ և ասաց... աչքով.
— Այդ ես եմ՝ խի՜ղճը:

Նա եկավ այնպես, ինչպես գալիս է.
Ոչ թե տան դռնի՜ց, այլ լուսամուտի՜ց:
(Խիղճը երբևէ դռնից չի մտնում):

ԵՍ

Եկել ես՝ նստիր:
Ամենից հարմար աթոռը իմ տան
Այս ճոճաոանն է:

ԽԻՂՃՍ

Որովհետև նա իր ճոճոոցով
Հիշել է տալիս, որ դեռևս կա՞մ:

ԵՍ

Ո՜չ: Որովհետև նա չի հասկանում,
Թե ի՞նչ բան է այդ «որովհետև»-ը,
Իսկ դու հենց լոկ այդ «որովհետև»-ն ես
Եվ ուրիշ ոչի՜նչ:

(Բաց պատուհանից ներս խուժեց Ավտոբուսը՝ Տրամվայի հետ և մի ճչացող Երեխայի ուղեկցությամբ, և իսկույն էլ դուրս թռավ բակին նայող պատշգամբից՝ Տրամվայը դեռ թողնելով սենյակիս մեջ, իսկ ճչացող Երեխային՝ պատուհանիս գոգին):

ԵՍ

Մի քիչ սպասիր,
Որ տրամվայն էլ դուրս թռչի.
Թե չէ քեզ վատ եմ լսում:

ԽԻՂՃՍ

Իսկ երեխային, շո՜ւտ արա, ներս առ.
Չէ՞ որ այստեղ եմ ե՜ս, հասկանո՞ւմ ես:

ԵՍ

Երեխաների հարցում, դու գիտե՜ս,
Քո այստեղ լինելն ու չլինելը
Միշտ ավելորդ է եղել ինձ համար:

(Տրամվայն էլ դուրս առղաց պատշգամբից, իսկ ճչացող Երեխային տարավ Մայրը, որ դուրս պրծավ Հացի խանութից):

ԵՍ

Ինձ դու չես թողնում կարգին գործ անեմ:
Ասա՜, իմ վերջը ի՞նչ պիտի լինի:
Եվ ի՞նչ եմ դեռ ես.
Ինչ-որ մի քոսո՜տ վարչության անդամ
Եվ մինչև անգամ ո՜չ վարչության պետ:

ԽԻՂՃՍ

Ես մեղավոր չեմ, որ պատուհանդ
Երկաթե ճաղեր կամ վանդակ չունի,
Ու ես կարող եմ ներս ու դուրս անել:
Երկաթե ճաղերն ու վանդակները
Լինում են, գիտես, և քնարաձև:
Ճաղե՜ր պատրաստիր,
Եվ... չեմ մտնի ներս.
Օ՜դ չեմ, որ մտնեմ ճաղերի միջով,
Մանավանդ օդն էլ հիմա համարյա
Զրկվել է ինձնից:

(Օղը շրխկոցով բացեց պատուհանիս օդանցքը՝ հիշեցնելով, որ ինքը քնած չէ, և որ իր հետախուզությունը հիանալի է աշխատում):

ԽԻՂՃՍ

Հը՞, տեսա՞ր. չէ՞ որ ես ասում էի,
Որ հարկավոր է ճաղեր պատրաստել:

ԵՍ

Ի՞նքս եմ պատվերներ ընդունում, ի՞նքըս:
Իսկ դու չես թողնում՝ պատվեր կատարեմ:

(Նորից մի Ավտոբուս ներս ցատկեց և մի քանի վայրկյան կայանելով սենյակումս՝ քուռակի պես կռաց, ուղիղ ականջներիս տակ):

ԽԻՂՃՍ

Մեքենայական այս հաճախակի այցերը և այս
Մեքենայացված կռոցները քեզ
Մի՞թե ավելի քիչ են խանգարում,
Քան թե ես, այո՞:

ԵՍ

Ես ժամանակի սերմն ու ծնունդն եմ,
Ջավակն օրերի:
Իսկ դու շարունակ քարով ես կարդում,
Աստվածաշնչյա՞ն հինավուրց քարով:
Եվ քո գրաբար խոսքերից արդեն փոշոտված եմ ես
Եվ որտեղ որ է ցեցոտվեմ պիտի:

ԽԻՂՃՍ

Բայց ինձ գցել են նուսնիակ շան առջև,
Եվ անգամ շո՞ւնը
Չի կարողացել ինձ ուտել, հաբա :

ԵՍ

Իսկ մարդիկ, կարծեմ, քեզ ուտում են հեշտ
Եվ լավ էլ մարսում:

ԽԻՂՃՍ

Բայց դու... մա՛րդ չես դու,
Թեպետ և ունես կաղապար մարդու:

ԵՍ

Իսկ քո կարծիքով ես... ի՞նչ աղբ եմ ես:

(Այս խոսքիս վրա Խիղճս ցատկեց ճռճռան աթոռին, ինչպես դա լինում է վատ խաղացված լավ կատակերգության մեջ, և ձեռքը մեկնելով ինձ՝ ճռճռան աթոռից էլ ճռճռան ձայնով ոգեց).

ԽԻՂՃՍ

Դո՛ւ... գիտե՞ս, դու այն անքնությունն ես,
Որից խուսափել չեն կարողանում մինչևիսկ նրանք,
Որ ինձ ուտում են և լա՛վ էլ մարսում:
Չգիտե՞ս. դու այն նմանությունն ես,
Ինչից չի կարող խույս տալ վավակը,
Որ քանի գնում՝ այնքան ավելի
Նման է դառնում իր հորը, մորը,
Պապին կամ քեռուն,— այդ միևնույնն է:
Իսկ երկրագունդն էլ իր վրա չունի
Միջօրեական-հորիզոնական կոչված գծերը:
Մե՛նք, մե՛նք ենք քաշել այդ գիծ ու միծը,
Որ... չմոլորվենք:
Դո՛ւ... այդ գծե՛րն ես:

(Ուզեցի կարմանքս հայտնել, բայց նա շարունակեց՝ փչացած ձայնապնակի պես).

Դո՛ւ... բնավ դո՛ւ չես:
Դու պարզապես իմ հավատարմատար-դեսպանն ես միայն
Անիշխանության այն դղյակներում,

Որտեղ իշխում են
Ինձանից կրկված ու վերծվածները:
Դու, եթե կուզես, դու իմ լրտեսն ես չկարտավորված,
Չվարձակալված իմ գործակալը,
Անաշխատավարձ իմ թղթակիցը,
Իմ... անապակի ակնոցը նաև:
Դու, եթե կուզես, պատանդն ես նրա՞նց՝
Ինձանից կրկված ու վերծվածների՞,
Նրա՞նց պատանդն ես, ի՞մ ձեռքերի մեջ.
Թե քեզ սպանեմ՝
Նրանք կմեռնեն անծուխ-անժառանգ:
Դո՛ւ... դո՛ւ... դո՛ւ...

ԵՍ

Ե՛ս... ե՛ս...

(Ու բարկությունից այլևս բառ չգտա: Ամենադժվար բանը «ես» ասելն ու շարունակելն է: Ուստի ակամա «ես»-ը թողեցի ու բռնեցի «դու»-ն: Ու չնկատեցի, որ պատասխանիս մեջ ոչ մի նոր բան չասացի, այլ պարզապես խղճիս ասածը շրջեցի իրեն վրա).

ԵՍ

Դո՛ւ... հենց դու ի՛նքդ ես... իմ գործակա՞լը...
Եվ իմ... լրտե՞սը...
Եվ իմ... ակնո՞ցը...
Դո՛ւ... դո՛ւ ես պատանդ իմ ձեռքերի մեջ.
Ուզեմ՝ կխեղդե՛մ... կփոխանակե՛մ... կծախե՛մ... կը՛... կը՛...

(Գոռացի և արթնացա, որովհետև՝ ինչպես քիչ հետո հասկացա՝ սենյակս էր մտել ու խրխնջում էր այս անգամ ոչ թե Ավտոբուսը, այլ դռանս էլեկտրական զանգը: Դեռ դուռը չբացած՝ կռահեցի, որ եկել են կանչելու... վարչության նիստի. կարևոր հանձնարարություն են տալու...):

8. XII. 62
Երևան

ԽԵՂՃ ՈՒ ԽՂՃՈՎ

Խե՞ղճ ու անխի՞ղճ իմ սիրելի,
Այսուհետև միշտ թպրտա
Հկոր ձեռքում ամենասուրբ այն կորության,
Որ բառերի ցուցակի մեջ կոչվում է «խիղճ»:
Եվ թպրտա երջանկորեն՝
Քեզ կգալով երանելի:

Ես՝ ի ծնե երանելիս,
Երանի եմ տալիս և քե՛զ,
Եթե պիտի այսօրվանից գերի ընկնես
Ու չապատվես,
Ու չուզենաս գեթ մի վայրկյան
Ազատվել այդ սակավադեպ գերությունից:
Այնժամ միայն կհասկանաս քո ջղերով,
Թե կա մի տեղ, ուր խրատը ձանձրալի չէ,
Եվ քարոզն էլ չի սպանում երգ ու տաղին:
Այնժամ միայն դու դիտապատ քո մազերով կհասկանաս
Ճառագայթի շիտակությունն ավանդական,
Նաև նրա նմանությունն ասեղի հետ:
Եվ քանի որ թելն է մտնում ասեղի մեջ,
Ոչ թե ասեղը թելի մեջ.
Եվ քանի որ գալարվողը թելն է միայն,
Ոչ ասեղը.
Եվ քանի որ, եթե պետք է,
Ասեղով են ծակում, ոչ թե նրա թելով,—
Ուրեմն այսօր և հավիտյան թող ասեղը կոչվի և խիղճ,
Իսկ, սիրելի՛ս, խե՞ղճ սիրելիս,
Դու մի՛ հոգա թելի համար.
Թելը կգա, քեզ կգտնի,
Ինչպես մեղքն է մարդուն գտնում...

[illegible] Երկ. ժող. 3 [illegible]ով, հ. 1

Եվ դրանով դու չես դառնա
Ու չես կոչվի երբեք Դերձակ:
Դու կդառնաս ու կկոչվես Արվեստագետ,
Որ մի հոգնած-ակնիվ պահի
Կարող է և իջնել... խրատ տալու ցածրությանը,
Որովհետև այդ ցածրության լայնածավալ արոտներում
Եթե անգամ ծիլ է տալիս,
Ավա՛ղ, արմատ չի հաստատվում խիղճ ասվածը:
Թե քո ջղերն այդ արմատի մասանոթներն են տարած
Ու երբևէ չեն քաղհանվի
Ու չեն լինի արմատախիլ,
Ուրեմըն այժմ և հավիտյան երանի՜ քեզ,
Իմ խղճով ու խեղճ սիրելի...

7. VII. 63
Երևան

ԵՍ, ՈՐ ԵՍ ՉԵՄ

Չգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի.
Ես նորից իմ տեղը դարձա՝
Որքան էլ հեռու գնացի:
Հապա՛ր խոչ ու քարեր կային
Իմ անցած ճանապարհի մեջ,
Կար սև ցավ
Ու կարմիր արյուն
Ամեն խոչ, ամեն քարի մեջ:
Ոտ տալով՝ գետին փռեցին,
Ջարդեցին իմ կողն ու քիթը.
Բայց նույնիսկ իմաստո՛ւն դարձած՝
Մնացի նո՛ւյն միամիտը.
Գնացի նո՛ւյն ճանապարհով
Ու եկա նո՛ւյն ճանապարհով...

Չգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի:
Իրենց բիրտ արարմունքներով
Ինչքա՛ն էլ մարդիկ վանեցին,
Ինչքա՛ն էլ սուր արմունկներով
Կողերիս հոգին հանեցին,
Նրանց դեմ ես քեն չարեցի,
Հաշտության եզրեր ճարեցի՝
Մտնելով իմ հին դերի՛ մեջ.
Մնացի ընկե՛րը նրանց,
Բարեկամն ու մտերի՛մը...

Թվում է՝ դավաճանեցի
Սերերիս իմ ամբողջ կյանքում՝
Իմ ապրած վաթսուն դարի մեջ:
Բայց սուտ է.
Իմ ամբողջ կյանքում
Ես եղա ու միշտ մնացի

Էլի նո՞ւյն հավատարիմը:
Գեղեցի՛կն իր տեսքը փոխեց,
Մինչդեռ ես մնացի նո՛ւյնը՝
Գեղեցիկ մերկություն պաշտող
Հայ ծնված միենույնհոյնը,
Որ իր կարճ—անցողիկ կյանքում՝
Իր ապրած վաթսուն դարի մեջ,
Մի՞շտ մնաց իր պաշտամունքի՝
Իր սիրո հավատարիմը...

... Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ,
Պարզապես ցավի ծառան եմ,
Որից ես թակվո՞ւմ եմ-թակվո՞ւմ՝
Փոշոտված գո՞րգ, թե թաղքի՛ պես:
Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ.
Պարզապես այն կացարանն եմ,
Որտեղ մեծ Սերն է բնակվում
Եվ կողպեք չունի դռանը.
Գերկգա կանգածաղկի՛ պես՝
Դուռն ինքն է բացվում ու փակվում...

21. III. 64
Դիլիջան

ԻՄ ԿՏԱԿԸ



«ԾԽԱՆԻ ԾՈՒԽ» շարքից

ՈՐԴՈՒՍ

Ինձ հետ լինի, թե առանց ինձ, իմ բալիկս, կմեծանաս,
Իմ օգնությամբ, թե առանց ինձ, դու երբևէ կհասկանաս,
Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին,
Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին:
Ինքս էլ խրատ կարդացողին ոչ հարգում եմ, ոչ հանդուրժում,
Տափակ դե սուր քարոզներից ինքս էլ եմ միշտ, տղաս, խորշում:
Ու թե հիմա, իմ բալիկը, ես քո գլխին ճառ եմ կարդում,
Ապա միայն նրա համար, որ շատ հաճախ կյանքում մարդու
Եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը,
Բայցևայնպես քիչ չի ապդում նաև ընտրած ճանապարհը:
Գուցե քեզ հետ նույնը լինի, որ պատել է հաճախ ինձ է՛լ.
Հաճախ, շուրջըս աչք ածելով, այն մարդկանց եմ ես նախանձել,
Որոնց կյանքը հեշտ է անցնում— ասես կյա՞նք չէ, այլ խաղուղի՝
Անխոչընդո՛տ և անարգելք, քանոնի պես հա՛րթ ու ուղիղ.
Դպրոց, հետո ինչ-որ մի ԲՈՒՀ, մի ապդեցիկ վանգահարող,—
Եվ տաք տեղն է ապահովված... Այսպես ապրել դու չե՞ս կարող:
Չէի ուզի, որ քո կյանքը հարթ խաղուղու նման լիներ:
Դու մի՛ անցիր ասֆալտ ճամփով, գերադասիր ճամփա՛ շինել:

Դու սիրո հետ միշտ հաշտ ապրիր, բայց խույս մի տա տառապանքից:
Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից:
Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ ավելի են պնդանում,—
Ապաքինված սիրտը հետո գալիք ցավը հեշտ է տանում:
Ա՜խ, մի՛ նվա: Հայրդ երբեք չէր հանդուրժում նվաղողին...

Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքդ ցողիր
Ու քո ճամփան շարունակիր: Թո՛ղ որ լինի նա քարքարոտ,
Բայց քո հոգում եթե լինի բարո՛ւ, լավի՛, սիրո՛ կարոտ,
Դու չե՛ս հոգնի, դու կքայլես, կբարձրանաս դու սարն ի վեր:
Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թևեր:

Ակնիվ եղիր ամեն ինչում— ո՞վ է կյանքում սովից մեռել:
Ճշտի համար աքսոր չկա— ստի հանդեպ ինչո՞ւ լռել:
Իսկ մեր շուրջը դեռ կան մարդիկ, որ երբ պետք է՝ մեջք են ծռում,
Երբ որ պետք է՝ հոհոռում են, պե՞տք է՝ ժպտո՛ւմ, պե՞տք է՝ լռո՛ւմ,
Պե՞տք է՝ իրենց մատն են տնկում... Դու մի եղիր կյանքում տհաս՝
Դու հասկացիր հենց այս գլխից, մի մոռացիր երբեք, տղա՛ս.
Ակնածությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ շուռ տաս,—
Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ-ութ գունեղ աստառ...

Մի՛ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. «Զախորդ օրեր... կուգան-կերթան»...
Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդդ հասիր...
Մի՛ տրտնջա, բայց և կյանքը գրքի նման դու մի կարդա,
Գրքի նման՝ քեզնից հեռու, ինչ-որ օտար մարդկանց մասին...
Հպարտ եղիր, բայց ոչ գոռոզ (դատարկ մարդն է գոռոզանում,
Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր կանգնանում):
Հորդ նման հպարտ լգա, որ ոչ մեկի տուն չես քանդել,
Ոչ մի ակնիվ խոսք չես կտրել, ոչ մի ակնիվ միտք չես բանտել,
Որ շիտակ ես քայլել կյանքում և լռել ես եթե հաճախ,
Ապա միայն նրա համար, որ առևտուրը մանրածախ

Հաճախ միայն կիսի-բիսի կանգուլակ է նետել շուկա,
Իսկ դու կուրկ ես կիսի-բիսուց, կեղծ դրամ էլ մոտը դնա...

Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել:
Դու փոքր ես դեռ: Երբ մեծանաս, դառնաս արդեն հասուն
ջահել,
Խորհուրդներն իմ և՛ հնացած, և՛ ավելորդ թվան գուցե—
Կյանքում այնժամ էլ չլինեն նման բացեր, նման խոցեր:
Է՛հ, տա աստված: Ես էլ կյանքում ուրիշ ոչինչ չեմ երազում
(Կույրը, տղաս, ինչպես գիտես, երկու աչք է միայն ուզում):
Խորհուրդներն իմ թող հնանան... Ծաղիկն է լոկ այդպես
մեռնում,
Երբ ամռանը ծառի վրա հասուն միրգ է արդեն դառնում:
Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխալ,
Հանուն վաղվա ճշմարտության թող որ այսօր լինեմ սխալ...

24. II. 55
28. I. 56
Մոսկվա

«ԱԿԱՆՋԴ ԲԵՐ ԱՍԵՄ» շարքից

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԵՍ ՀԱՅՐ ԵՄ

Երբ անլուսընկա ու պարզ երկընքում
Աստղաբներ են երևում նորից՝
Բնակալներով իրենց հատ ու կենտ
Կամ թխսկան հայցող ձվակույտերով.
Երբ իր սև կաթով գիշերը բարի
Շեկ լուսաբացն է մայրաբար սնում,—
Կրկին խոսում է հայրությունն իմ մեջ:

Աշխարհի բոլո՛ր որբ մանուկներին
Որդեգրելու այն միտքը կպչուն,
Որ սուրընձվել է իմ հիմար սրտին
Ու դարձել նրա թաղանթը երկրորդ,
Այդ միտքը նորի՛ց-կրկի՛ն-վերըստի՛ն
Ճչում է իմ փակ երակների մեջ:
Ուզում եմ, որ ինձ «հայրիկ ջա՛ն» կանչեն
Աշխարհի բոլո՛ր-բոլոր՛ ծայրերից:
Ուզում եմ, որ գան,
Թղթերըս խառնեն,
Քաշեն մատերըս,
Նստեն ծնկներիս,
Պաչպըչվենք ամուր,
Եվ պարզ նկատեմ
Իմ իսկ սեփական նմանությունը
Բոլորի՛ դեմքին,
Շարժուձևի մեջ—
Շեկ լինեն, թե թուխ,
Աղջիկ, թե տղա...

Ես կասկած չունեմ,
Որ եթե հանկարծ գա մի հարցասեր
Եվ ինձ՝ քնածիս,

Ինչպես որ հարկն է դեռ չարթնացրած՝
Հարց տա,
— Ի՞նչ ես դու ամենից առաջ,—

Ես կասկած չունեմ,
Որ դեռ չարթնած,
Դեռ քունը գլխիս.
— Ամենից առաջ ես հա՜յր եմ,— կասեմ..

19. XII 59
Թիֆլիս

ՈՒ ԵԹԵ ՀԱՅՐ ԵՄ...

Ու եթե հայր եմ ամենից առաջ,
Ինչպե՞ս չխոսեմ կավակներիս հետ,
Նրա՜նց հետ,
Ովքեր եկել են արդեն,
Առավել՝ նրա՜նց,
Ովքեր պիտի գան:

Հոգնած խրատից,
Քարոզից կպված՝
Ես հարգալից եմ նայում կտակին,
Թերևս— ո՜վ գիտի— լոկ այն պատճառով,
Որ դա արվում է կյանքում մե՛կ անգամ,
Ինչպես ես՝ հիմա:

Եվ այն, ինչ որ ես ուզում եմ ասել,
Գիտեմ շա՜տ վաղուց,
Եվ այնքա՜ն վաղուց,
Ինչքան շաբաթվա օրերը գիտեմ
Կամ ամիսների անունը:
Սակայն
Այսօր եմ ուզում և պիտի ասեմ,
Քանզի հույս ունեմ, թե այսօր դուք ինձ
Կարող եք լսել թեկուզ և այնպես,
Ինչպես լսում են անձրևի ձայնը,
Քամու հոգնդը,
Աղմուկն անտառի—
Ուզած թե չուզած,
Կամա-ակամա...

19. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

ԻՄ ԿՏԱԿԸ

1.

Այս ահեղ դարը ինքը ինձ ծնեց
Եվ... քանի՞ անգամ կործանել ջանաց,
Բայց— կեցցե՞մ թող ես
Ու թող նա՛ կեցցե—
Չկարողացավ կործանել:

Ջանաց
Իր ա՛յն աչքաբաց բիճերի ձեռքով,
Որ նրա աչքի յուղն էին կերել
Եվ ուզում էին ինձ՝ հարապատիս,
Խորթ ցույց տալ նրան...

19. XII. 59
Թիֆլիս

2.

Ա՜խ, այդ բիճերը,
Որ ծեր են ծնվել...

Զավակը՜ս,
Հիմա ես նրանց առաջ
Նույնիսկ, ակնի՜վ խոսք, ինձ վատ եմ զգում:
Ինձ վատ եմ զգում,
Որ չարացել եմ ես նրանց վրա,
Որ թշնամի եմ համարել նույնիսկ,
Մինչևիսկ ատել:

Սխալվել եմ ես:
Հիմա նրանցից
Շնորհակալ եմ, անկեղծ եմ ասում:
Շնորհակա՜լ եմ:
Չէ՞ որ ինձ համար
Լավ է, որ նրանք կան ու կլինեն:
Չէ՞ որ հենց նրանց ծերության ֆոնին
Զահելությունն է շեշտվում-ընդգծվում:
Լավ է, որ կյանքում հաղթել են նրանք:
Լավ է, նույնքան էլ արդարացի է:
Ախար ամեն մեկն ունի իրավունք
Գոնե մի՜ անգամ կյանքում հաղթելու:
Հերթը նրանցն է—
Թող հաղթեն այսօր,
Բայց չէ՞ որ վաղը դու ես հաղթելու
Կամ քեզ նմանը:

Եվ ճիշտ են, ճիշտ են բոլո՜ր աշխարհում—
Քսո՜ւն, տխմա՜րը, խե՜ղճը, սրիկա՜ն:

Կյանքում ամե՞ն մարդ,
Կյանքում ամե՞ն ինչ
Ունի իրավունք
Արդարացնելու իր գոյությունը:

Եվ որտեղի՞ց բերք,
Թե պարարտանյութ չպիտի լինի:
Ի՞նչ ապաքինում,
Թե չի եղել ցավ,
Թե ախտ չի եղել:
Ի՞նչ վերածնունդ,
Եթե չի եղել մահացու դադար:

Երջանկությունն էլ չէ՞ որ հենց այն է,
Որ չկար երեկ և այսօր հասավ...

19. XII. 59
Թիֆ.

ԻՄ ԿՏԱԿԸ

Երբ բարկացած եմ՝
Նրանց վանում եմ,
Բայց ինչպե՞ս պիտի վանվեն ինձանից,
Եթե ես հիմա այնտեղ եմ գնում,
Որտեղ գալու են և բոլոր նրա՛նք—
Իրե՞նց ոտքերով,
Թե՞ որդիների, թոռան ոտքերով,
Մի՞թե նույնը չէ:

19. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

4.

Գնում եմ—
Հպա՛ռտ
Եվ ինքնավստա՛հ,
Սակայն կա մի տեղ,
Որտեղ— քա՛ջ գիտեմ—
Խեղճանալու եմ ես ինքըս մի օր,
Հենց որ քո գլխին ինձ դարձնեն մահակ.
Խեղճանալու եմ—
Եվ ո՛ւր էր գոնե ուժեղի կողմից:

Խեղճանալու եմ... խեղճերի ձեռքով:

Եվ գիտե՞ս ինչպե՛ս:

19. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

5.

Ուժեղին հետո մահակ են սարքում:
Ուժեղն ի՞նչ անի— խեղճերն են սարքում:
Մահակ են սարքում՝ ուժեղի գլխին,
Բայց այն ուժեղի, որ նոր է եկել:

Դու, հարապա՛տըս, որ գալու ես դեռ,
Պաշտպանի՛ր հորըդ,
Որ չխեղճանա խեղճերի կողմից:

Եվ դա կարող ես անել շա՛տ դյուրին:

Հենց որ ինձանից խարապսն շինեն՝
Մեջք ու թիկունքիդ,
Հենց որ քո գլխին ինձ դարձնեն մահակ,
Հենց որ խուփ դարձնեն քո բերնին,
Գիտցի՛ր,
Որ դո՛ւ ես կյանքում իմ հարապատը,
Որ իմը դո՛ւ ես,
Հենց դո՛ւ ես ու կաս,
Ու եթե հայրըդ ապրելիս լիներ,
Կյանքում կլիներ քեզ հետ միասին՝
Ընդդեմ խեղճերի,
Որ իմ անունով
Հիմա ջանում են բերանըդ փակել:

20. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

6.

Դու ինձ խեղճերից պաշտպանի՞ր, տղա՛ս,
Պաշտպանիր դու ինձ՝
Ինձ չկրկնելով
Եվ չքայլելով իմ հետքով ծանոթ,
Ինձ—եթե կուզես—ժխտելո՛վ անգամ:

Ինձ չկրկնելով— և միայն այդպե՛ս
Կխոսես դու իմ հարազատ ձայնով:

Սեփական շավիղ բացելով միայն
Բանուկ կպահես իմ բացած ուղին:

Եվ ինձ ժխտելով՝
Ինձ կհաստատես:

20. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

7.

Եթե ուզում ես հորդ հասկանալ
Ու լինել նրա հարազատ որդին՝
Մոռացի՛ր ընդմիշտ,
Թե կա քերթություն,
Թե կա դպրություն,
Գրականություն:

Կա կյա՛նք,
Կա լեզո՛ւ,
Եվ պիտի, տղա՛ս,
Նաև խոսելու ցանկություն լինի,
Բայց մի ցանկությո՛ւն,
Որ անխուսափ է՝
Ջուր խմելու պես,
Անառարկելի՝
Որպես հրաման,
Անխուսափելի՝
Ինչպես լինում է
Մպի բուսնումը,
Աճը եղունգի:

20. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

8.

Այն, ինչ կոչվում է գրականություն,
Դեսպանատո՞ւն չէ,
Որ կգա՛ս-խորհե՛ս-մտածե՛ս մի բան
Եվ այլ բան ասես:

Իսկ դու դեսպա՞ն չես,
Այլ պատգամավո՞ր:

Ու եթե նույնիսկ դեսպան ես՝
Ապա
Դեսպան ես... կյանքի՞—
Որքան այսօրվա,
Առավել վաղվա՞...

20. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

9.

Եթե ուզում ես հասկանալ դու ինձ՝
Ներս մտիր անտառ և ականջ արա:
Որքա՞ն ձայներ կան՝ բոլո՞րը տարբեր:
Եվ բազմահազար ձայնատերերից
Նույնիսկ գեթ մեկին բնավ չի տանջում
Ինչպե՞ս ձայնելը—

Նրանք կարող են լոկ այսպես ձայնել,
Եվ ոչ այլապես...

20. XII. 59
Թիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

10.

Գիտե՞մ
Ես էլ եմ գնալու շուտով,
Ուր որ է, այո՛, գնալու եմ ես,
Բայց չե՞մ կորչելու:

Դառնալու եմ ձեր... առողջությունը:

20. XII. 59
Թիֆլիս

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Աստվա՞ծ ձեզ հետ...

Իսկ թե իրոք աստված չկա,
Ձեզ հետ լինի թող երկի՛նքը՝
Իր փոփոխման անմեռ ոգով.
Գյուտի երկա՞ր-երկա՞ր ցավը՝
Կարճ, բայց կարծը իր խնդությամբ.
Արդարության կաղ նժույգը՝
Ճշմարտության իր խթանով.
Փոքրիկների պատվերն անմեռ
Ու Մեծերի մեծ ստվերը
Ձեզ հետ լինի...

30. X. 65
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կապմողի կողմից 5

ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ

«Մեր բախտը» շարքից

Մասիսները 8

«Սովետական իմ Հայաստան» շարքից

Իմ հայ ժողովուրդ 14

Դու քո խաղողի նման ես եղել 16

«Ծխանի ծուխ» շարքից

Հայաստան 17

Իմ ժողովրդին 19

Դու այսպես ես եղել 21

Հպարտ եմ ես 22

Անքնություն 23

Հանդիպում 25

Կարոտ 30

Մոր ձեռքերը 32

Բալլադ լույսի մասին 34

Նորից երգում, մորմոքում է 38

«Հարկ հոգեկան»

Երգ եռաձայն

Առաջին ձայն 39

Երկրորդ ձայն 40

Երրորդ ձայն 42

Մայրենի լեզու 44

Խուք հավատիքի 47

Շարքերից դուրս բանաստեղծություններ

Անխորագիի 53

Կոմիտասի դիմանկարի առջև 57

Մինչև անգամ մեր ձկները 61

Քիչ ենք, բայց հայ ենք 62

Հայոց լեզու 65

Վահագնին 70

Հայուհիները 73

ԵՂԻՑԻ ԼՈՒՍ

Նորօրյա աղոթք 76

Առավոտ լուսո 78

Լույս կվարթ 80

Զայնիվ երկրորդ առ տեր կարդամ. 83

Լուսավորության չգիտեմ ինչը 85

Վառեցեք լույսերը 87

Ճակատամարտ պատի հետ 88

Աշխարհի հին սպիները 90

Խարույկ սառույցի վրա 92

Աշխարհին մաքրություն է պետք 94

Ամպոտ եղանակ 96

Թախծի երկարությունը 99

Գիշերամուտ 102

Նամակի փոխարեն 104

Պարապություն 107

ԴԻՄԱԿՆԵՐ

Միաչքանին 112

Միոտնանին 113

Հարբեցողը 114

Խեղկատակը 116

Ծաղրածուն 117

Խաղալիք սարքողը 120

Դիմակահանդեսի գլխավորը 125

Իրերի բնությունը

Մասն Ա

Իրերի դեմքն ու դիմակը 129

Մասն Բ

Իրերի բարությունն ու չարությունը 131

Մասն Գ

Իրերի դատն ու դատաստանը 134

ԴԱՐԱԿԵՍԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

«Դարակեսի պարգևները»

Դիմակների փոփոխություն հօգուտ անդիմակություն 142

Դարակեսի հիմնը 145

Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին 152

Հիվանդություն 157

Անտարբերություն 159

Աշխարհ... Աշխարհ... 161

Սխալ խոսք սխալի մասին 162

Կայանալիք պբոսանք 165

Ճամփեզրի խոտը 169

Աշնանային վալս 170

Հպանցիկություն 172

Անորոշություն 173

«Ծխանի ծուխ» շարքից

Մարդ էլ կա մարդ էլ 176

Շարքերից դուրս բանաստեղծություններ

To be or not to be (լինել, թե չլինել) 179

Անհասցե բացիկ 185

Անտարբերության թշնամի 186

Պիտի 187

Ծառերի օգնությամբ 188

Հակը 190

Պատրանքի պատանքը 194

ՈՂՋՈՒՅՆԻ ՔՄԱՑՔՆԵՐԸ

Բարև 198

Բարի լույս 201

Բարի աջողում 203

Բարի օր 207
Բարի իրիկուն 210
Բարի գիշեր 211
Բարի գալուստ 213
Բարի ճանապարհ 215

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

«Սիրո ճանապարհը» շարքից

Չոր մասրենու մի հին չափար 220
Ախ, ես գիտեմ, չէիր սիրում 221
Հիմա, երբ ողջը անցած է թվում 222

«Նույն ճամփով» շարքից

Անբաժան է քեզնից 224
Իրարից հեռու 225
Ահա նորից գիշեր 226
Իսկ ի՞նչ անենք 227
Սիրտս կոտրվեց 228
Անկեղծ ասած 229
Չես հարցնում 231
Սարսափում եմ ես լոկ հիմա 232
Տան երակը 233
Ես քո մասին... 235
Ո՞նց սուտ ասեմ 236
Վաղվա խնջույքում 237
Գիտե՞ս, սիրելիս 238
Գալիս ես, գալիս... 239
Թող լինի այնպես 240
Վերհուշ 241
Անծանոթուհուն 243
Սիրտս նման է 245
Ինչ մնաց 246
Մի մոռացիր 247
Երականքի գինը 248
Ես այնպես հեշտ էի տարվում 249
Կամ հեռացիր, կամ արի 250

«Նույն հաւցեով» շարքից

Դու 251
Քո պատճառով 253
Առաջին սերը 254
Վերջին սփոփանք 255
Ո՞ւր է գիշերը հապարմեկերորդ 256
Աթիկայաբար 258
Գլխապտույտ 259
Նոր ծանոթություն 262
Գարնան հրահրմամբ 265
Անջատում 268
Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը 270
Երբ աչքերն են սառում... 271
Հանգստացրու ինձ 273
Պատահաբար են պատահում կյանքում 276

«Նորից չեն սիրում, սիրում են կրկին»

Սերը 277
Նորից չեն սիրում, սիրում են կրկին 279
Հագուստով ծնվածը 281
Հորիզոնական անուն 283
Սուրճի գավաթի դիմաց 285
Ավելորդ անհավատություն 287
Բարեխոս եղիր իմ և իմ միջև 289
Կարոտի տարրալուծումը 291
Այսպես չեն սիրում 293
Դռան կանգի առաջ 295
Իրիկնամուտ 297
Ագահության գինը 299
Զգոնականության նոր ասիմանումը 301
Հպատակի խոռվությունը 302
Բեռան ներքո 305
Արգելանոց 307
Միամտության խաղը 309
Անապասելի փոթորիկ 311
Գտնված միավորը 313
Ճամփորդություն դեպի ետ 315
Օդահան կանգի տակ 318
Օտար սիրո այբուբենը 320
Աննամակ ծրար 323
Դու մի հարցրու 325
Սիրո փոխարեն 327
Սովորական հրաշք 329
Նյարդի թրթիռը 331
Տաքսիների հանգրվանում 333
Հաւարակ պահանջ 335
Փակիր աչքերդ 337
Կեղծ անցաթղթով 339
Փղկարար թվաբանություն 341
Աստծու քարտուղարը 344

Շարքերից դուրս բանաստեղծություններ

Ձողում 346
Մեկանից մեկը 348
Քարե հյուրը 349
Հավերժ ներկան-բացական 350
Նեսգիշերային բնանկար 351
Ցտեսություն 353
Բարով տեսանք 356
Մնաս բարև 358
Անահիտ 361
Կորչի հիշգաբթին 363
Երջանկության նոր չափանիշ 365
Երկկենցաղ կենցաղ 366

ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԵՋ

Իբրև սկիզբ 370
Խոստովանում եմ 372
Հանգստանում եմ 373
Ուզում եմ 375

Փառաբանում եմ . . . 378
Կարծում եմ . . . 380
Նախանձում եմ . . . 381
Ինքս ինձ հերքում եմ . . . 382
Ծնվել եմ . . . 384
Մեռնել . . . 385
Երապում եմ . . . 386
Ապրել . . . 388
Երգել . . . 390
Մի պահ կղջում եմ . . . 394
Գովերգում եմ . . . 395
Հյուրասիրում եմ . . . 397
Հայտարարում եմ . . . 400
Ատում եմ . . . 402
Չեմ հարգում . . . 404
Վիճում եմ . . . 406
Սարսռում եմ . . . 409
Հիանում-հրձվում եմ . . . 410
Ենթադրում եմ . . . 412
Խոստովանում եմ . . . 413
Կարդում եմ . . . 417
Ծախում-առնում-բաշխում եմ . . . 418
Գժվում եմ . . . 421
Դիմում եմ պահանջելու պես . . . 422
Արդարացնում եմ . . . 425
Հավատում եմ . . . 426
Տխրում եմ . . . 429
Մխիթարում եմ . . . 430
Խանդում եմ . . . 434
Դառնում եմ . . . 435
Զարմացնում եմ . . . 438
Աղաչում եմ . . . 439
Երկմտելով հաստատում եմ . . . 441
Ողբում եմ . . . 442
Հրավիրում—ուրախանում եմ . . . 445
Մի պահ մեծամտում եմ . . . 451
Խուսափում եմ . . . 452
Գոյություն ունեմ . . . 455
Պատկերացնում եմ . . . 456
Հպարտանում եմ . . . 457
Ժխտում եմ . . . 460
Հրաժարվում եմ . . . 462
Վախենում-սարսափում եմ . . . 463
Քրտնում եմ . . . 465
Հիմարաբար խոստովանում եմ . . . 468
Ներում եմ . . . 469
Մեղանչել-կղջում եմ . . . 471
Խնայում եմ . . . 473
Աղմկում եմ . . . 474
Զարմանում եմ . . . 476

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

Տաքն ինչ իմանա . . . 478
Ինչ էլ որ անես . . . 478
Մեղուն ինքն էլ չգիտե . . . 479

Դու ինքն քեզ տաքանում ես . . . 479
Լինում է այսպես էլ կյանքում . . . 480
Ինչ անենք . . . 480
Հեշտ բան չէ, ջանս . . . 481
Սարն ի՞նչ գիտե . . . 481
Եթե անգամ այնպես փայլես . . . 482
Ախ, ինչպե՞ս է, որ չի հոգնում . . . 482
Իսկ այս տիպը . . . 483
Այս տի՞պը: Քո ասանը լակում . . . 483
Բեղերը քեզ քիչ են թվում . . . 484
Սա տուն չի շինել . . . 484
Թե նա մի քիչ վատ է զգում . . . 485
Նրա ձեռքը բան չի ընկնում . . . 485
Բա՞խտ է հարկավոր . . . 486
Նա այնքան ջահել է դեռ . . . 486
Նա դուրս է տալիս . . . 487
Դուք հիշում եք . . . 487
Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար . . . 488
Ինչ ասեմ խելքդ . . . 488
Իմաստուն էր, բայց շատ ձգեց . . . 489
Թե ասես. «Մասս վարունգ է» . . . 489
Աչք մտնողը աչքի ընկավ . . . 490
Աչք մտնելու համար նա մի հատ է . . . 490
Զյունը ի՞նչ է իմանում . . . 491
Ինքը հոպոպն է հոտած . . . 491
Ախ, արդեն ականջ է ծակում . . . 492
Եթե ասեմ . . . 492
Թե ինձ այրեց . . . 493
Մի ամի՞ս է, թե՞ մի տարի . . . 493
Դո՛ւ ես ձգում . . . 494
Հովիտը ինքս տվեցի . . . 494
Թե ինձ համար ինչ է պահված . . . 495
Նույն հին վանքն է . . . 495
Իմ սրտի սյունը . . . 496
Մաղի մեջ . . . 496
Ես բռնել ուզեցի . . . 497
Տանը լինեմ, լինեմ մայթում . . . 497
Հիմար ժպիտով . . . 498
Ուրիշ ես դառնում ամեն օր . . . 498

ԱԿԱՆՋԴ ԲԵՐ ԱՍԵՄ

Հայտնություն . . . 500
Հանդգնել ասել . . . 502
Քայլող հիշողություն կամ վառվող արյուն . . . 503
Սիրում եմ սիրել . . . 504
Անհարց պատասխան . . . 505
Վառարանի առաջ . . . 506
Անմեկնելի զգացում . . . 507
Հափշտակվելս . . . 508
Զգայախաբություն . . . 509
Անվնաս խորհուրդ . . . 510
Ուրույն հնամոլություն . . . 511
Նահանջ տարվա պես . . . 512

Սրտի ցավով . . . 513
Անշնորհակալ մասնագիտություն . . . 514
Մատնիչ ցանկություն . . . 516
Գաղտնաբացություն . . . 517
Թաքուն երազանք . . . 518
Հիասթափվելս . . . 519
Վարդերի կարմիր ճիչն եմ ես լսում . . . 520
Իմ կաթնելբայրը . . . 521
Երկունքի մեջ . . . 523
Ներշնչման պահին . . . 524
Անմեղ-մեղավոր . . . 525
Փոստային լեկվով . . . 526
Ուղտի օրինակով . . . 528
Առանց աստառի . . . 529
Ավազը՝ հովով . . . 530
Իմ անելիքը . . . 531
Արթնացնող ժամացույց . . . 532
Ամենավայրի սպանությունը . . . 533
Ոչ առանց ցավի . . . 534
Համրիչ եմ դարձել . . . 535
Ապատությունը . . . 536
Ես չեմ շտապում . . . 537
Ես չեմ որոնում . . . 538
Ռետին չեմ—թուղթ եմ . . . 539
Հավատո հանգանակ . . . 540
Ամբողջովին դրոտված եմ . . . 541
Մի խորունկ գաղտնիք . . . 542
Պիտի ծանակվեմ . . . 543
Հուսահատության պահեր . . . 544
Ջրերի լեզուն . . . 545
Անկոչ հայրը . . . 546
Անվերնագիր . . . 547
Անձրևային սոնատ . . . 548
Վերնագիրը վերջում . . . 552
I . . . 553
II . . . 554
III . . . 555
IV . . . 556
V . . . 557
VI . . . 558
VII . . . 559
VIII . . . 560
IX . . . 561
X . . . 562
XI . . . 563

Շարքերից դուրս բանաստեղծություններ

Մի քիչ թվաբանություն . . . 563
1 . . . 564
2 . . . 556

ԱՍՏԾՈՒ ՔԱՐՏԱՐՈՒՂԱՐԸ

«Միանի ծուխ» շարքից . . . 556
Ներշնչման պահերին . . . 567

Թռուցիկ երգեր

Անպայման պայման . . . 567
Արվեստ . . . 569
Վարք մեծաց . . . 570
Բանաստեղծի կյանքը . . . 572
Ինչպե՞ս թե բախտ չկա . . . 573
Արշալույսից առաջ . . . 575
Միայնակ ծառը . . . 576
Ոսկին վերստին ոսկի է մնում . . . 577
Արմատները և մատները . . . 578
Միանգամից . . . 579
Եվ ուրիշ ոչի՞նչ . . . 580
Դիմանկարի առջև . . . 582
Լաց էլ կա, լաց էլ . . . 583
Ցավն է հաճախ առաջ մղում . . . 584
Սև կատու . . . 585
Աստառի վեպ . . . 586
Գիշերն ու ես . . . 589

«Աստծու քարտուղարը»

Բանաստեղծի ծնունդը . . . 591
Բանաստեղծները . . . 592
Բանաստեղծի բախտը . . . 594
Երես ու աստառ . . . 596
Քաղցը՝ քաղցկեղ . . . 597
Ճառագայթային ախտ . . . 598
Հիմն քարանձավի . . . 600
Մեծ ուխտի փոքրիկ ականջում . . . 601
Խոստովանություն . . . 603
Միայնակ կբոսանք . . . 605
Անօգուտ փնտրտուք կամ երջանիկ գյուտ . . . 607
Ճշմարիտ երգը . . . 609
Ծարավ . . . 610
Ծերանում ենք . . . 612
Պահ կասկածի . . . 614
Սերունդների հերթափոխությունը . . . 615
Հորդոր . . . 616

Շարքերից դուրս բանաստեղծություններ

Փնտրումներ . . . 617
Կաս ու չկաս—աստծո պես . . . 620
Ամենքը իրենց բախտից են դժգոհ . . . 621
Անտառն է արդյոք . . . 623
Երգող նյութը . . . 624
Հոգեբանություն, թե ստուգաբանություն . . . 626
Հողը՝ հայելի . . . 627
Ինձ ո՞վ է արդյոք հովանավորում . . . 628
Առանց հանգերի, բայց սրտի չափով . . . 692
Ներշնչման պահին . . . 630
Անկումներով եմ վերև բարձրանում . . . 631
Զգայուն գլխարկ . . . 632
Գթության քույրեր . . . 633
Բանաստեղծի վախը . . . 634
Խիղճը և իր մարդկային դիմակը . . . 636

Խեղճ և խղճով 641
Ես, որ ես չեմ 643

ԻՄ ԿՏԱԿԸ

«Ծխանի ծուխ» շարքից
Որդուս 646
«Ականջդ բեր սաեմ» շարքից
Ամենից առաջ ես հայր եմ 649
Ու եթե հայր եմ 651
«Իմ կտակը» 652
2 653
3 655
4 656
5 657
6 658
7 659
8 660
9 661
10 662
Օրհնություն 663

ՍԵՎԱԿ ՊԱՐՈՒՅՐ ՌԱՖԱՅԵԼԻ,
Երկերի ժողովածու 3 հատորով, հատոր առաջին

СЕВАК ПАРУЙР РАФАЕЛОВИЧ. Собрание сочинений в 3-х томах, том первый. (На армянском языке), Издательство «Советакан грох». Ереван, 1982

Խմբագիր՝ *Ա. Ս. Քիշոյան*, նկարիչ՝ *Լ. Հ. Մանասերյան*, գեղ. խմբագիր՝ *Գ. Խ. Գյուլամիրյան*, տեխ. խմբագիր՝ *Ս. Մ. Սիմոնյան*, վերստուգող սրբագրիչ՝ *Օ. Ղ. Թերպյան*

ИБ 3731
Հանձնված է շարվածքի 9. 06. 1982 թ.: Ստորագրված է տպագրության 3. 12. 1982 թ.: Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Թուղթ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Մնացականյան»: 35,28 պայմ. տպ. մամ. 21,7. հրատ. մամ.+1 ներդ.: Պատվեր՝ 1641: Տպաքանակ՝ 50 000: Գին՝ 2 ռ. 50 կոպ.:
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65:
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.